

\* ՅՈՎՍԷՓ ԿՏՈՅԵԱՆ \*

ՆՈՐ

ԱՍՊԱՐԷՉ

ԿԱՍ

ԴՐԱՄԱՏԱՆ ~

ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆԻ

—

==== Կ. ՊՈԼԻՍ ====



336.41

493

ՅՈՎՍԷՓ ԿՏՈՅԵԱՆ

# ՆՈՐ ԱՍՊԱՐԷԶ

Կ Ա Մ

## ԴՐԱՄԱՏԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՔ

oooooooooooo

A II 37951

Յանձնարարելի այն երեսասարգաց, որոնք կը ցանկան Պաննան մենել եւ կամ անոց, որոնք թլպէս հոն կը ծառայեն, բայց կը փափաքին իրենց ծանօթութիւնները նոյնացնել եւ կամ առհասարակ այն անոր ժառանգ, որոնք մօտէն կ'ուզեն տեսնել իր արմատաց զործնակեցոյն :



Կ . ՊՈՒԼԻՍ

1915

Յղագր. Պէտիտոն Եզրաց, Ղալաթիս



## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

---

Առասպելներ կան, որոնք յանախակի կրկնուելով նշմարութեան երեւոյթ մը ստացած են եւ գրեթէ առածի տեղ անցած, սակայն զանոնք բնաբան ընտրելը կամ անոնցմով առաջնորդուիլը միշտ աղիտաբեր եղած է :

Այս առասպելներէն է ահա այն ընդհանրացած կարծիքը, թէ դրամասան մը մէջ պատճօնավարելու համար սկսնակ մը մասնաւոր գիտելիքներու պէտք չունի, *հոն կը սորվեցնեն* :

Այս խոտոր քիւրիմացութեան զոն գացող եւ իրենց փորձովը եւ ապագայովը տուժող երիտասարդներու թիւը Եւրոպայի մէջ լեզեռն է : Պէտք է խոստովանիլ որ այս սխալ կարծիքին հաւանական երեւոյթ մը տուած է նաեւ սա իրողութիւնը . ելմական մեծ հաստատութիւնները միշտ պէտք ունենալով մեծ բուռով պատճօնեաներու շատ անգամ կը գոհանան իրենց ստորին աշխատութեանց համար այնպիսի սկսնակներով, որոնց մտաւորական պատարը հեռու է ծանր ըլլալէ, որով երկկուան անկասար կամ միջակ ուսում ունեցող եւ բոլորովին անփորձ դպրոցականը այսօր իր այցեւոմսին վրայ կը սպէ . « *Պաշտօնեայ այսինչ դրամասան* » տիտղոսը :

Յանախակի կրկնութեանց սեղի շատու համար. իւրաքանչիւր անգամ աղբիւրի յիշատակութիւնը զանց պիտի առնենք :

Կայ ուրիշ կէս մ'ալ զոր կ'ուզենք խոստովանիլ անմիջապէս, անխուսափելի քննադատութեանց իբրեւ կանխիկ լուսաբանութիւն. նիւրին արդիականութիւնը պատճառ եղած է որ, ինչ ինչ բառերու հոմանիւր չգտնալով բռնադատեալ յօրինած ենք շարք մը բառեր զորս, ստակոյս չկայ, պիտի փութանք սրբագրել երբ սոյն նիւրին վրայ մեզմէ առաջ գրողները կամ հեղինակներ հանին լաւագոյնները յայտնել :

Գիրք շինելու մարմաշը չէ անուշտ որ մեզ մղեց ներկայս հրապարակ հանելու եւ գուցէ այս սկար փորձն ալ չկատարէինք երէ « *Բիւզանդիոն* » Օրաթերքի մէջ ազնուորէն հիւրընկալուած մեր յօդուածներու ընթերցողն երբ զայն չթելադրէին մեզ :

Հրապարակի եւ առհասարակ մեր հայրենիքին մէջ դրամական հաստատութեանց ծառայող եւ ընդհանուր պատշտօնեաներուն փոքր փոքրամասնութիւնը կազմող Հայոց թիւը երէ յաջողինք գոնէ մասամբ մը աւելնալուն սատարել, մեր նպատակին հասած կ'ըլլանք :



ԱՌԱՋԻՆ ՄԱՍ



ՆՈՐ ԱՍՊԱՐԷՉ

ԿԱՄ

ԳՐԱՄԱՏԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՒՆՔ





Ա .

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԵՒ ԴՐԱՄ -

ԱՆՈՆՑ ԴԵՐԸ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ -

ԴՐԱՄԱՏԱՆ ԳՈՐԾԵՐԸ :

Հաճելի է նկատել որ արդի լեզուներուն մէջէն միայն մերն է որ սրանքայի անուան մէջ իսկ կը խտացրնէ անոր ստուգարանութիւնը , զայն յորջորջելով Դրամատուն : Իսկապէս գրամատունը գրամին տունն է , գրամը հոն կը մտնայ և կ'ելլայ , ինչպէս տանտէրը իր բնակարանը : Դրամը սրանքային թէ սլառճառն է թէ նարատակը , թէ սկիզբն է և թէ վախճանը . գրամը գրամատան համադրակից է :

Պանքա և բոլորական լեզուներուն մէջ կը նշանակէ՝ սեղան , ասիկայ անշուշտ անոր համար որ Միջին Գարու մէջ Իտալիոյ զանազան քաղաքները լուծայափոխներ սնդանի մը չուրջը նստած գրամ փոյս կուտային տակտի մը փոխարէն : Գուցէ այս բացատրութիւնը նախկին Յայնեքէն կամ Հոսովայեցիներէն անցած ըլլայ . որովհետեւ անոնք ալ սնդանի մը չուրջը բոլորած , զանազան գրամներ կը փոխէին ժողովուրդին :

Պիանակահաններ շատ աւելի հետուն կը տանին պան-  
քայի ծագումը, այն է մինչև Փիւնիկեցւոց ատենները,  
որոնց և կը վերագրեն արդէն փոխանակագիրներու  
գիւտը ( lettre de change ) : Ըստ ինքեան արդի դրա-  
մատանց նախահայրը կարելի է համարել այն առաջին  
դրամատէրը, որ իր ընկերոջ փոխ դրամ տուած է, շահի  
մը փոխարէն և որովհետև դրամը առեւտուրի միջոց մըն  
է, շատ հուց ի վեր, ուրեմն կրնանք ըսել որ դրամա-  
տունը նոյնքան հին է որքան առեւտուրը : Աւելին ըսենք.  
պանքան առեւտուր մ'է. սպացոյց՝ արդի առեւտրական  
օրինագիրքը ( code de commerce ) որ կը թուէ դրամա-  
տան գործողութիւնները, հաստատելու համար որ, անոնք  
առեւտրական գործառնութիւններ են :

Սակայն հակառակ այն անվիճելի աջակցութեան որ  
պանքան կը նուիրէ վաճառականութեան և ճարտարար-  
ւեստին, հակառակ այն բաղմամբիւ ծառայութեանց, որ  
ան կը մատուցանէ հանրութեան, պանքան առեւտուրի  
ճիւղ մ'է, որ ցարգ շատ քիչ լուսարանուած է մանաւանդ  
անոնց որ սերտ և յաճախակի յարաբերութեան մէջ չեն  
անոր հետ :

Եւ ասիկա շատ հասկնալի է : Երբ մէկը խանութ  
մը կը մանէ, իսկոյն կը դիտէ իր շուրջը վաճառակա-  
նութեան նիւթ եղող առարկաները. մինչդեռ պանքա մը  
այցելած միջոցին ոչինչ չնշմարեր, եթէ ոչ իրենց գրու-  
թեան վրայ գլխիկոր պաշտօնեաններ, կամ աջ ու ձախ  
թղթեր փոխադրող սպասաւորներ և կամ ճարպիկօրէն  
դրամներ համրող և դիզող դանձապահներ : Ռամբիլը չի  
կրնար ըմբռնել որ կարելի է վաճառականութիւն ընել  
առանց ապրանքի և կամ թէ կարելի է դրամ շահիլ

միայն գրամով և չափազար կը սխալի, գրամը պանքա-  
յին ապրանքն է, այնպէս ինչպէս մանիֆարթուրան կամ  
արմտիքը անոնց վաճառականներուն ։

Ան՝ գրամ է որ կը ծախէ կամ կը գնէ, վարձու-  
կուտայ կամ ի պահ կ'ստանայ, կը փոխէ, կը դանձէ  
և կը վճարէ, ըլլայ հրապարակի վրայ, ըլլայ աշխարհի  
ո և է հետաւոր անկիւնը իր անհուն յարարութեանց  
չնորհի ։

Դրամատան գերն և ազդեցութիւնը այնքան մէծ է  
որքան գրամինը . իսկ վերջինիս նշանակութեանը վրայ  
ծանրանալն պարզապէս աւելորդ է ։ Ստակը միշտ պատ-  
ւոյ առարկայ եղած է հնուց ի վեր, այն աստիճանի որ  
նախնեաց ոմանք գրամական գործառնութեանց համար  
յատկացուցած են իրենց ամենաթանկագին վայրերը՝  
տաճարները . Գրիստոնէութիւնը որ ի միջի այլոց կիրքերը  
չափաւորելու առաքելութիւնն ունի, ուղեց իր հիմնար-  
կութեան թուականներուն կիրք մը տեսնել ժողովրդեան  
ընական հակումին մէջ գէպի հարստացում, և անոր ա-  
ջարկեց բազդատութեան և ընտրութեան եզր մը, այն է  
ժառայել կամ Ստուծոյ կա՛մ Մամոնային ։ Սակայն ար-  
դի քաղաքակրթութիւնը յաջողեցաւ այնպէս ընականոն  
ընթացք մը տալ գործին որ Մամոնան դարձաւ գործիք  
մը բարօրութեան և կատարելութեան ։

Հոս վերջացնելով այս ակամայ շեղումը, սկսինք  
գննել մի առ մի գրամատան առօրեայ զբաղումը կազմող  
գործառնութիւններն ։

Տեսանք որ Դրամատուն շահագործելը վաճառա-  
կանութիւն ընել է թէ՛ իսկապէս և թէ՛ օրինապէս իբր  
առարկայ ունենալով Դրամը ։ Վերջինս, տարակոյս չկայ,

միւս բոլոր ապրանքներու նման ենթակայ է «առաջարկի եւ խնդրանքի» բնական օրէնքին . այսինքն այն գերբնական ոյժին որուն հետեւանօք ապրանքի մը գինն այնքան կը բարձրանայ որքան անկից գնելու ցանկացողներ գրանուին եւ ընդհակառակն այնքան դէպի անկում կը ձգտի որքան աւելի անկից ծախողներ երեւան գան : Ասիկայ հիմնական ճշմարտութիւն մ'է զոր պանքայի պաշտօնեայ մը պէտք է միշտ ամուր պահէ իր միտքին մէջ եւ որ ապագային պիտի լուսարանէ իրեն զրամատանց մէջ այնքան ստէպ լուսած հետեւեալ բացատրութիւնները թէ՛ « դրամը հազուագիւտ է » կամ « դրամը սուղ է » կամ « դրամը առատ է » կամ « դրամը ւժան է » եայլն :

Դրամատան գործողութիւններն երկու տեսակ են . կանխիկ եւ ապառիկ : Այսինքն գործողութիւններ՝ որոնց փոխարժէքը խսկոյն եւ եթ կը վճարէ կամ կը գանձէ եւ անոնք որոնց փոխարէնը ի հաշիւ կ'անցընէ իր սոմարներուն մէջ մերձաւոր կամ հեռաւոր ապագայի մը վճարելու կամ գանձելու համար :

Ասոնց մանրամասնութեանց մէջ դեռ չմտած տեսնենք նախ եւ առաջ թէ՛ առհասարակ ինչ գործողութիւններ կ'ընէ պանքան : Նախ մի առ մի թուենք յետոյ առանձին անդրադառնալով իւրաքանչիւրին վրայ, մեկնենք անոնց խկութիւնը :

Ուրեմն զրամատանց խիական գործերն են .

Ա. — Ի պահ ընդունիլ վաճառականութեան, ճարտարարուեստի, ինչպէս նաև անհատներու տրամադիր զրամագլուխները :

Բ. — Ի պահ աննէլ ամեն տեսակ արժէթուղթեր :

Գ.— Դրամ փոխ սալ իր քով գրաւ տրուած արժեթուղթերու, ապրանքի և երբեմն ալ անշարժ կալուածի փոխարէն:

Դ.— Իր մօտ աւանդ դրուած արժեթուղթերու կըտրօնները ժամանակին չկտրել, գանձել և տիրոջ հաշւոյն անցնել:

Ե.— Իր քով աւանդ գտնուող կամ գրաւ դրուած և կամ ապահովագրութեան համար իրեն հաղորդուած վիճակաւոր թղթոց թիւերը ապահովագրել:


Զ.— Այդ թիւերն իւրաքանչիւր վիճակարկութեան քննել, որպէսզի եթէ շահով կամ ավօրօքի ելած են, ժամանակին գանձէ:

Է.— Կտրօնները լրացած արժեթուղթերուն նորագումները կատարել հրապարակի և արտասահմանի մէջ:

Ը.— Պետութեանց և ընկերութեանց յանձնարարութեամբ անոնց թուղթերուն կտրօնները վճարել ժամանակին:

Թ.— Գնել և ծախել ամէն տեսակ արժեթուղթ թէ իր սեփական և թէ յաճախորդներու հաշւոյն, ըլլա՛յ տեղական, ըլլա՛յ օտար սակարաններու մէջ:

Փ.— Առեւտուրի և ճարտարարուեստի ստեղծման և ծաւալման սատարել կամ անոնց բաժնեթուղթերուն (action) և պարտաթուղթերուն (obligation) ստորագրելով և յետոյ զանոնք իրենց յաճախորդներուն ծախելով և կամ պարզապէս իր գրասենեակը և շատ անգամ ալ իր հեղինակութիւնն ու ազդեցութիւնը անոնց արամադրութեան ներքե զնելով ստորագրութիւնը զիրացնելու համար:



ժԱ. — Վաճառականներու կամ առանձին անհատներու միջնորդ մը ըլլալ անոնց վճարումները կամ գանձումները կատարելու համար :

ժԲ. — Ստար երկիր կամ գաւառները դրամ փոխադրել, չէ՞ք քաշելով և կամ թղթատարի, հեռագրի և հեռախօսի միջոցաւ :

ժԳ. — Զանազան տէրութեանց դրամները, թղթադրամը, ինչպէս նաև ոսկի և արծաթ և ուրիշ թանկագին իրեղէններ առնել և ծախել :

ժԴ. — Յաճախորդաց յանձնարարութեամբ, զանազան ապրանքներ գնել արտասահմանէն և ներմուծել և կամ արտասահման յղել վաճառման համար :

ժԵ. — Ճամբորդներուն վարկագիրներ տալ ( Lettre de crédit ), որպէս զի անոնք արտասահման եղած միջոցնին կարենան փող հայթայթել իրենց գնումներուն կամ պէտքերուն համար :

ժԶ. — Մուրհակներ և ուրիշ վաճառականական թուղթեր զեղչել :

ժԷ. — Արտասահմանի վրայ պարտամուրհակներ գնել և ծախել :

ժԸ. — Առեւտրականներու և արհեստաւորներու վարկեր բանալ, ըլլայ երաշխաւորութեան մը փոխարէն ըլլայ առանց երաշխիքի, բացէն ( crédit en blanc ) :

ժԹ. — Իրեն յանձնուած կամ իր զեղչած ստեւտրական մուրհակներուն գանձումը կատարել ամէնուրեք :

Ի. — Պողպատէ արկղիկներ վարձու տալ ( Safes ) :

Ի՛կ. — Տէրութեան և ընկերութեանց հաշւոյն տուր-  
քեր գանձել հանրութենէն:

Ի՛ն. — Կառավարութեան մասնաւոր արտօնութեամբ  
թղթադրամներ հանել:

Ի՛ո. — Կառավարութեան կամ քաղաքապետութիւն-  
ներու փոխատուութիւններ ընել:

Ի՛ր. — Ժամանակին չվճարուած պարտամուրհակները  
բողոքագրել ( բրոքքսօ ընել ), սնանկութիւն հռչակել  
տալ, սնանկութենէ մնացած գումարին բաժանման  
մասնակցիլ, Են. Ելն. Ելն:





## Բ.

ԴՐԱՄԻ ԱՒԱՆԴ (Dépôt) —

ՉԷՔԸ ԵՒ ԻՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ՉԷՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ —

ՀԱՇՈՒԱՅԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՍԵՆԵԱԿ (Clearing house) —

ՓՈԽԱՐԷՆ, ԿԱՄ ՊԱՇԱՐ (Provision)

Տեսանք թէ՛ որքան բազմաթիւ են և բազմազան դրամատան գործողութիւնները, փորձենք ուսումնասիրել զանոնք իրենց կարեւորութեան տեսակէտով :

Նախ պէտք է դիտել որ Պանքայի մէջ անկարելոր գործ չկայ. ո՛ր և է աշխատութիւն պէտք է վերջին ծայր լրջութեամբ և զգուշութեամբ կատարուի, որովհետե խնդիրը միշտ դրամի շուրջը դառնալով, ո՛ր և է սխալ մեկնութիւն կամ անզգոյշ քայլ միշտ նիւթական և յաճախ բարոյական վնաս կարող է հասցնել հաստատութեան և հետևաբար պատճառ եղող պաշտօնէին :

Դրամատան մէջ գլխաւոր տեղ մը կը գրաւէ այն

ծիւղը որ կ'զբազի աւանդի այսինքն դրամագրութիս ի պահ ընդունելու գործով: Եթէ հարեւանցի ակնարկ մը նետուի դրամատուններու հրատարակած ամսօրեայ հաշուեկշիռներուն վրայ, պիտի տեսնուի որ հոն ի պահ յանձնուած գումարները միլիոններու կը հասնին: Ապացոյց մը եւս այն անհուն վստահութեան զոր ներկայիս անոնք կը վայելեն հանրութեան կողմէն:

Այդ վստահութիւնը սակայն կոյր հաւատք մը պէտք չէ, որ ըլլայ դէպի ո՛ր և է կլմտական ձեռնարկ անխտիր, այլ պէտք է արտայայտութիւնն ըլլայ հաւատարմութեան մը այնպիսի հիմնարկութեան մը հանդէպ որ տարիներու ընթացքին մէջ իր ամբութեան և լրջութեան մէկէ աւելի ապացոյցը տուած ըլլայ: Իր դրամը պանքան պահելու սովորութիւնն որ քաղաքակիրթ երկրներու մէջ արդէն ընդհանրացած է, մեր մէջ ալ սկսաւ հետզհետէ տարածուիլ. պէտք եղած ծաւալն հոս ալ անշուշտ պիտի ստանայ օր մը, երբ ուամիկը վերջնականապէս համոզուի թէ իր դրամը հոն, այսինքն պանքայի պողպատեայ արկղներուն մէջ — որոնք գիշեր ցորեկ անզաղար հսկողութեան և պահպանման տակ են — աւելի ապահով է քան թէ իր դրպանին մէջ կամ իր տան մէկ անկիւնը:

Երկու կերպ կարելի է դրամ ի պահ դնել. 1<sup>0</sup>. Որոշ ժամանակամիջոցէ մը առաջ ետ չուզելու պայմանաւ. 2<sup>0</sup>. Ուզած օրն ամիջապէս ետ առնելու նպատակաւ:

Դրամատունները եթէ իրենց յանձնուած դրամները տեղ մը կզպած պահէին անշարժ, ինչպէս կարելի է կարծել առջի բերան, « ի պահ դնել » բացատրութենէն խարուելով, ասկից առաջ գայիք օգուտը շատ աննշան

պիտի բլլար. այս պարզ է: Ուստի պանքաները իրենց յանձնուած դրամները ոչ միայն չեն պահեր այլ իրենց սեպհականին պէս կը գործածեն և կը շահագործեն: Ահա այս շահէն մաս մ'է որ կը յատկացնեն դրամատիրոջ « Տոկոս » անուան տակ: Ինականաբար այդ տոկոսը այնքան աւելի բարձր կ'ըլլայ որքան աւելի երկար ատեն մնայ դրամը պանքայի տրամադրութեան տակ, որովհետեւ վերջինս այսպէսով միջոց կ'ունենայ զայն երկար պայմանաժամով վճարելի գործերու յատկացնելու և նստեալաբար աւելի սուղ գինով գործածելու, ինչպէս պիտի տեսնանք իր կարգին:

Ասոր համար է որ պանքաներն առաջին ձևով տրուած դրամին աւելի մեծ տոկոս կուտան: Կան մանաւանդ դրամատուներ, որ երկրորդ ձևով ձգուած դրամադրխին ոչ մէկ տոկոս չեն տար. անոնք կը մասնեն որ այն ծառայութիւնը, զոր կը մատուցանեն յաճախորդին գրեթէ ամէնօրեայ վճարումները և գանձումները կատարելով, կ'արժէ այդ տրուելիք գոյզն տոկոսի փոխարէնը: Աւելին կայ. Անգլիոյ մէջ որ արդի ձևով դրամատանց հայրենիքն է, կան պանքաներ, որ եթէ տարւոյն վերջը յաճախորդի մը գործերն որոշ շահ մը ձգած չ'ըլլան - օրինակ՝ խրաքանչիւր քաշած շէքին վրայ երեք դրուշ - անոր կ'առաջարկեն կամ հաշիւը գոցել կամ գործերը շատցնել:

Արդէն երկրորդ ձևը՝ այոխնքն դրամը ուղած ատեն անմիջապէս ետ առնելու պարագան, կը կայանայ պարզապէս դրամատուներ իբր գործակատար ծառայեցնելու մէջ. բան մը որ շատ ձեռնտու է վաճառականաց, գործարանատէրերու և առհասարակ բոլոր գործի մարդոց, որոնք

ո՛չ ժամանակ և ո՛չ ալ կարելիութիւն ունենալով իրենց գանձութիւնները և վճարութիւնները անձամբ կատարելու, գանձանք կ'ընեն պանքաներու միջոցաւ:

Վերջիններս ալ ծայր աստիճան գիւրացուցած են իրենց գործելու կերպը:

Հիմայ, միջնագարեան խտալական Պանօններու պէս չեն պահանջեր որ դրամը տուողը և դրամը ստացողը միասին ներկայանան վճարում մը կատարելու համար իրենց գրասենեակը, և ոչ ալ Ամսթէրտամի և Համպուրկի մեծ ծիրօ-պանօններու հին ժամանակները ըրածին նման կ'ստիպեն որ դրամին տէրը անձամբ կամ պատուիրակի մը ձեռքով նամակ մը բերէ, իր դրամը գանձելու կամ երրորդի մը վճարել տալու համար:

Այժմ հնարուած է « չեք »ի գրութիւնը որ նախ Անգլիա մուտ գտած է և անկից ալ հետզհետէ բոլոր ազգերու մէջ տարածուած:

Ի՞նչ է ուրեմն չեք:

Չեքը գրութիւն մ'է, որուն միջոցաւ յաճախորդը կը հրամայէ պանքային վճարել իրեն կամ երրորդի մը, իր անձխտելի սեպհակախոսութիւնը եղող և հոն իր ազգս տրամադրութեանը սակ գտնուող գումար մը:

Երբ ընդգծած կէտերուն վրայ առանձին ուշադրութիւն դարձնելը անհրաժեշտ է, չեքի մասին յստակ գաղափար մը կազմելու և ապագային ուրիշ համանման թուղթերու հետ չչփոթելու համար: Որովհետև չեքը, արդի քաղաքակրթութեան ամենանուրբ գիտերէն մին, զեռ ատեն չունեցաւ պարզուելու հանրութեան առջև իր

բոլոր յատկութիւններովը, կան մինչև անգամ գործի մարդիկ որոնք զայն փոխանակագրի հետ կը շփոթեն:

Եւ սակայն խնդիրը վերջին ծայր պարզ է, եթէ նկատի առնուի սա տարրական սկզբունքը, թէ՛ չէ՛ր հնարուած է պարզապէս իր սեփական դրամը պանքայէն դիւրութեամբ ետ ստանալու համար. ուրիշ ոչինչ:

Սակայն զանձման գործիք մ'է լոկ, փոխանակագիր չէ. ընդհակառակն չէր փոխանակագրին սխալմ թշնամին է:

Իսկապէս փոխանակագիրը, ինչպէս իր կարգին պիտի տեսնենք, վարկի, ապառիկի գործիք մ'է, մինչդեռ չէր՝ կը սոսկայ վարկէ. ան ապառիկ շնորունիր, ոչ միայն, այլ կը պահանջէ որ գրամը հատուցուի իսկոյն եւեթ, առանց այլեայլի և ամբողջովին:

Այո՛, չենք բեր որ, ինչ ինչ պարագաներու մէջ այս երկու թուղթերը — չէր և փոխանակագիրը — իրարու հետ նմանութիւն չունին. բայց նմանութիւնը « նոյնութիւն » կամ հաւասարութիւն չի նշանակեր:

Երկու եզրայր կարող են իրարու յար և նման ըլլալ, մինչև անգամ երկուորեակ ըլլալ բայց բնութեամբ իրարմէ որքան մեծ տարբերութիւն կրնան ունենալ:

Աննենք ուրեմն չէի օրինակ մը և ջանանք քննել զայն մանրամասնօրէն:

Կ. Պոլիս, 15 Յունիս 1915

Օ. Ա. 1000

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՍՏՈՒՆ

Կ. Պոլիս

Վճարեցե՛ք ( այսինչի՛ն ) կամ անոր հրամանին հազար Օսմանեան ոսկի:

( ստորագրուրիւն )

Ինչպէս սոյն նմոյշէն կը տեսնուի, չե՛ք մը հետեւեալ կէտերը կը պարունակէ.

1<sup>0</sup>) Այն քաղաքը ուրկէ քաշուած է:

2<sup>0</sup>) Թուական (Ֆրանսայի մեջ կամ Ֆրանսայի վրայ փաշուած չեֆերուն մեջ պէ՛տ է թուականը ամբողջովին տաւերով գրուի փոխանակ թուանշանով. օրինակ՝ *Տասնըհինգ Յունիս 1915*):

3<sup>0</sup>) Վճարելի գումարը թուանշանով գրուած:

4<sup>0</sup>) Վճարող գրամատան կամ անհատին անունն ու հասցէն:

5<sup>0</sup>) Վճարելու հրաման:

6<sup>0</sup>) Դրամը ընդունելիք անձին անունն ու մականունը (եթէ սակայն «կրողի» ի նպաստ չէ փաշուած):

7<sup>0</sup>) Վճարելի գումարը տաւերով գրուած:

8<sup>0</sup>) Ատորագրութիւն՝ քսան փարանոց (մագքու) գրոյմի վրայ:

Առաջին հինգ կէտերը, ինչպէս նաև եօթներորդ և ութերորդը այնքան պարզ են որ մեկնութեան չեն կարօտիր, վեցերորդին վրայ կ'արժէ որ քիչ մը ծանրանանք:

Չե՛ք մը կարելի է վճարելի ըլլալ, փաշողին անուան կամ անոր հրամանին և կամ պարզապէս կրողին (սուփորտէր): Առաջին պարագային, Այն միայն կարող է ստանալ գրամը որուն անունը արձանագրուած է չեֆին մէջ. ուրիշի մը չի կրնար փոխանցել, որովհետև փոխանցման ձեւակերպութիւնները շատ են, կնճռօտ ու ժամանակի կարօտ. ուստի այս ձեւով չեֆերը հազուադէպ են:

Երկրորդ պարագան որ սովորական է և գրեթէ ընդհանուր, կը կայանայ զրամը ընդունելիք անձին անուան քով կամ անոր հրամանին բառերը աւելցնելուն մէջ: Այս ձեակերպութիւնը անհունապէս կը դիւրացնէ զրամի գանձումը, որովհետեւ չեֆին տէրը այլ ևս ստիպուած չէ անձամբ ներկայանալու, ան իր սեփականութիւնը կրնայ փոխանցել երրորդի մը սա ալ չորրորդի մը ևւայն, պարզապէս չեֆին ետին « Այսինչին հրամանին վճարեցիք » գրելով և ստորագրելով:

Երբ չեֆին – ինչպէս նաև փոխանակարին – ետեւ տեղ չմնայ փոխանցմանց համար անոր կը փակցուի թերթ մը *Ballonge* (անուամբ որուն երեսի կողմը գրուած է «*Ballonge* այս ինչ չեֆին – կամ փոխանակարին ») թիւ . . . Ոսկի . . . վճարելի – այս ինչ թուականին – քաղաքը . . . . քաջողը . . . . և վճարելիք անձը . . . . » իսկ ետեի կողմին վրայ կը շարունակուին փոխանցումները:

Կայ երրորդ պարագայ մ'ալ որ թէպէտ և առջի բերան շատ յարմար կ'երեայ, բայց ունի մեծ անպատեհութիւն մը որ զայն գրեթէ անգործածելի կը դարձնէ, այն է «*կրող*» ի ի նպատտ չեֆը: Վերջինս անտարակոյս շատ յարմար է անով որ փոխանցման համար ուէ գրութեան պէտք չկայ, պարզապէս ձեռքէ ձեռք անցնելով սեպհականութիւնն ալ կը փոխանցի, բայց կորսուած պահուն զայն գանձողը կամ գողցողը առանց դժուարութեան կրնայ գանձել: Թէպէտ և հարկ անհրաժեշտ է զրամը ստացած պահուն ստորագրել և թուական գնել չեֆին ետեւ, բայց դժուար չէ գուշակել, թէ խարդախիչը իր իսկական անունը չէ որ կը գնէ նախ, իսկ յետոյ զրամը գանձելու

համար, ներկայացողը կարող է ինքը ճուղուպրիսթի մը շահատակութեան զոհ գացած ըլլալ:

Ձեներու գործածութեան մէջ խարդախութեանց, ըստ կարելոյն, առաջքը առնելու համար Եւրոպայի մէջ, մանաւանդ Անգլիա սովորութիւն մը մուտք գտած է՝ որուն երբեմն հոս ալ կ'հանդիպինք, այն է՝ Ձեները կերպով մը անպարկէշտութեանց դիմ պատուաստել, ճիշտ այնպէս ինչպէս կը պատուաստեն կենդանի մը կամ բոյս մը ու է արտի դէմ: Անշուշտ, ինչպէս աս' բոլորովին անվրէպ դարման մը չէ հիւանդութեանց դէմ, բայց մեծապէս կը թուլացնէ անոնց արդիւնքը, նոյնպէս ալ նա՛մ մէն խարդախութեանց և զոգութեանց առաջքը չի կրնար առնել, սակայն ըստ կարելոյն կը զժուարացնէ:

Ահա թէ ի՛նչ բանի մէջ կը կայանայ սոյն ձեւակերպութիւնը:

Ձեֆին երեսի կողմը երկու զուգահեռական գիծեր կը քաշուին իրարմէ մէկ մաստ հեռաւորութեամբ և անոնց մէջտեղը կա՛մ դատարկ կը ձգուի, կամ « Եւ Լճկ. » բառերը կ'աւելցուի և կամ Գրամատան մը անունը կը գրուի: Առաջին երկու պարագային դրամը կարող է գանձել անպատճառ դրամական հաստատութիւն մը, իսկ երկրորդ պարագային միմիայն անունը հոն արձանագրուած պանքան: Այս տեսակ չեֆերուն Անգլիոյ մէջ crossed check անունը կուտան:

Վաճառաչահ մեծ քաղաքներու մէջ պանքաները օրական ահագին քանակութեամբ չեֆեր կ'ունենան իրենց պաշտօնակցաց վճարելու դամ անոնցմէ գանձելու: Եթէ հարկ ըլլար գանձնք ուղղակի ներկայացնել գանձման, նախ՝ ահագին վակոններով հնչիւն դրամի պէտք պիտի

ունենային, իսկ երկրորդ՝ մեծ ժամանակի կորուստ պիտի ըլլար. բան մը, որ իրենց ոչ մէկ կերպով ձեռնառու չէ: Ուստի իրենք քանացած են գտնել այս դժուարին կացութեան ելքը նոյն ինքն չեֆին մէջ. ահա թէ ինչպէս: Իւրաքանչիւր պանքա պաշտօնեայ մը կը զրկէ ամէն օր որոշեալ ժամուն, Հաւուեյարդարութեան Սենեակ (Clearing house) կոչուած հաստատութիւն մը, ուր ան կը փոխանակէ իր պաշտօնակցին հետ իրար վրայ քաշուած չեֆ կամ ուրիշ թուղթեր, իսկ տարրերութիւնը կ'անցնի իւրաքանչիւր պանքային պետական դրամատան մէջ ունեցած հաշուոյն պարտքին կամ պահանջին:

Այս հաշուեյարդարութեան կարեւորութեան վրայ գաղափար մը տալու համար, յիշենք որ միայն 1-նոտոնի մէջ 1906 թուականին այսպէսով իրարու մէջ մաքրուած հաշիւներու գումարը հասած է 12,711,334,000 սղէրլինի:

Ձեք ուրեմն ուրիշ բան չէ եթէ ոչ իր սեփական դրամն անիջապէս՝ ետ ստալու միջոց մը. ասկէ կը հետևի որ ան՝ միմիայն « ի սէս » վճարելի կրնայ ըլլալ:

Օրէնքը՝ զեղծումներու առաջքն առնելու համար, չեֆի վճարումը յապագեցնելու նպատակաւ եղած ո՛ր և է համաձայնութիւն անվաւեր և չեղեալ կը նկատէ: Եւ քանի որ չեֆը ի տես, այսինքն ներկայացած բոպիին ամիջապէս և ամբողջովին վճարելի է, զայն ընդունելութեան (acceptation) ալ կարելի չէ զրկել: Ահա տարրերութիւն մը ևս չեֆի և փոխանակագրի միջև: Վերջինին համար, ինչպէս պիտի տեսնենք, հարկ է նախ ներկայացնել վճարելիք անձին, որպէս զի ան ընդունի այդ պարտքը— փոխանակագրի երեսի կողմը անկիւն մը

« կ'ընդունիմ » բառը, թուական և ստորագրութիւն ղենելով — և յետոյ որոշ պայմանաժամէ ետքը ներկայացընել վճարման համար: Մինչդեռ չեքի պարագան այդպէս չէ, եթէ վճարող անձին կողմէ անժխտելի կերպով պարտք և փոխարէն կամ պաշար (provision) չ'ըլլայ, չեք իր գոյութեան սկզբնապատճառը կը կորսնցնէ:

Ասիկա այնքան կարեւոր կէտ մ'է որ օրէնսդիրն առանց տրամադիր դրամի չեք քաշողը պատասխանատուութեան կ'ենթարկէ, հետեւեալ պատճառաբանութեամբ:

Նախ խարերայութեան համար, չեք առնող անձին հաւատացնելով որ այլուր դրամ ունի, մինչդեռ չ'ունի, իսկ երկրորդ խարդախութեան համար հանդէպ պետական զանձուն, որովհետեւ փոխանակագիր տալու տեղ — որ համեմատական գրոշմաթուղթի ենթակայ է — չեք մը տուեր է որ միայն 20 փարայի գրոշմ կ'ուզէ: Նոյնպէս զանձային տեսակէտով պէտք է մեկնել Ֆրանսական օրէնսդրութեան այն տրամադրութիւնն որ կը պահանջէ չեքին ներկայացումը (զանձման հարմար) ամենաուշը հինգ օրուան մէջ, եթէ միեւնոյն քաղաքին վրայ է, և ութ օրուան մէջ, եթէ տարբեր քաղաքի վրայ քաշուած է:

Օսմանեան օրէնսդիրը, որ Ֆրանսական բարքերէն շատ բան որդեգրած է, այս կէտը զանց առած է, անշուշտ նկատի ունենալով մեր հաղորդակցութեանց դժուարութիւններէն առաջ գալիք անկարելիութիւնը:

Արդէն Եւրոպայի մէջ ալ ամէն տեղ միեւնոյն սովորութիւնները չէ որ կը տիրեն այս մասին և շատ ստէպ կը հանդիպինք չեքերու, որոնց վրայ « վաւերական է 1

կամ 2 եւրն. ամսուան համար »ի նման ազգաբարութիւններ տպուած են :

Այս դիտողութիւնը պէտք չէ սակայն շփոթել ուրիշ արձանագրութեան մը հետ որ երբեմն կը գտնուի չեֆերու վրայ և որ զանոնք անվաւեր կ'ընէ, կը փճացնէ, ինչպէս «Ֆիլօքսէրաս»ն խաղողը, այն է « վճարեղի միւսիայն այսինչ թուականէն ետքը », և այլն :

Գերմանիոյ և Աւստրիոյ մէջ չեֆերուն համար հետեւալ բանաձևը ընդունուած է՝ « ի տես վճարեղիք այս չեֆին փոխարէն եւ մեր առնելիֆէն, եւրն. եւրն. » : Ամերամասնութիւններ են ասոնք, որ արդէն չեֆին ստուգարանութեան միջոցին բացատրեցինք :

Պանքաները սովորութիւն ունին իրենց պաշտօնակցաց վրայ քաշուած չեֆերը առանձին նամակով մը իրարու ծանուցանելու և այդ դրութիւնը ստանալէն վերջը վճարելու յաճախորդին ներկայացուցած չեֆը : Ասի սակայն օրէնք մը չէ այլ դրամատանց ներքին մէկ կանոնը, որ շատ զարտուգութիւններ ունի :

Հոս առիթը ներկայացու մասնանշելու ազիզ սովորութիւն մը, որ դժբախտաբար մուտ գտած է մեր հրատարակին վրայ, Ամերիկայի և գաւառներու հետ դործող քանի մը տուներու մօտ. ասոնք չեֆին ազգին ուշանալը պատրուակելով կամ անոր յզումը դիտամամբ ուշացնելով վճարումը կը ջանան օրերով յետաձգել առկաը չահելու համար : Եւ կամ իրր թէ առանց նամակի չեֆը վճարելու կը դիջանին, բայց քանի մը դահեկան կը կտրեն չեֆը գանձելու ներկայացող շատ անգամ խ'ողձ ու կրակ աշխատաւորներէն :

Աւելորդ է ըսել որ այդ զեղծումը տեղի չէր ունենար եթէ բողոքագրի ( Protêt ) գործողութիւնը այդքան տաղտկալի և սուղ չ'ըլլար և գանձողը փոխանակ ամէն զոհողութիւն յանձն առնելու, ուղղակի օրէնքի պաշտպանութեան դիմէր :

Սօսքերնիս, տարակոյս չկայ, օտար դրամով քաշուած չէքերու մասին չէ, որոնք տեղական դրամի կը վերածուին վճարման ժամանակ, եթէ հակառակ տրամադրութիւն չեն պարունակեր :

Ձե՛ք մը կորսուած պահուն ի՞նչ պէտք է ընել զայն գանձել կարենալու համար : Ահա պարագայ մը, որ բաւական ստէպ կը ներկայանայ և շատ անգամ թիւրիմացութեան և դժգոհութեան պատճառ կ'ըլլայ պարզապէս յաճախորդին դրամատանց գործելակերպին անտեղեակ ըլլալուն հետեւանօք : Պարզենք .

Յաճախորդը կը ներկայանայ դրամատուն և կը յայտարարէ թէ իր այսինչ թուականին այսինչ քաղաքի վրայ առած չէր կորսուած է և կ'ուզէ կրկին չէ՛ք մը կամ անոր փոխարէնը ստանալ : Բայց եթէ չէ՛քի տիրոջ համար խնդիրը այդքան պարզ է, դրամատան այնքան ալ դիւրին չէ : Վերջինս խկոյն և եթ կ'իմացնէ թէպէտ իր թղթակցին, սոյն կորուստը և կը խնդրէ անկէց չի վճարել չէ՛ք եթէ ներկայանայ, բայց ստով չկրնար բաւականանալ, որովհետեւ չէ՛ք մը փոխանցուած կրնայ ըլլալ երրորդի մը չորրորդի մը և ըն. և ուրիշ դրամատուն մը վճարած կրնայ ըլլալ. ուստի նա կը պահանջէ որ յաճախորդը իրեն երաշխաւորութիւն մը ստորագրէ հետեւեալ ձևով .

« Ստորագրեալս ( անուն, մականուն, հասցե ) ներկայիւս կը յայտարարեմ որ այսինչ բուականին ձեր ինձ տուած այսինչ թիւ եւ այսքան ոսկիի չեմ կորսնցուցի: Կը խնդրեմ զայն չեղեալ նկատել, կը խոստանամ ձեզ վերադարձնել եթէ ձեռքս անցնի եւ հասուցանել ձեզ եթէ ո եւ է պատճառով երրորդի մը վնասուած ըլլար անոր փոխարժեքը: Ձեզ զերծ կը կացուցանեմ ո եւ է հետագոտրեմեկ եւ պատասխանատուութեմեկ որ կրնայ առաջ զալ սոյն չեմ կորուստէն: Այս երաշխաւորութիւնը վաւերական է օրէնքի պահանջած ժամանակամիջոցի ամբողջ տեւողութեան համար:

(Թուական, ստորագրութիւն)

*Դրամատունը իր յաճախորդներուն իրր դիւրութիւն իր արկղէն փող քաշելու համար չեմ տեսար մը կուտայ, ուր արդէն գլխաւոր կէտերը տպուած են, բայց որովհետեւ հոս ալ կորուստ կամ գողութիւն կրնայ պատահիլ իրեն, հետեւեալ բանաձեւը ստորագրել կուտայ:*

*« Ստորագրեալս ստացած եմ այսինչ պանքայէն այսքան չեմնոց թիւ . . . . Էն . . . տեսար մը: Ներկայիւս յանձն կ'առնեմ կրել սոյն չեմերուն կորուստէն կամ անհետացումէն յառաջ գալիք ո եւ է հետեւանք: »*

*Ձէքի մասին այսքանով կը բաւականանանք, որովհետեւ եթէ ամէն մանրամասնութիւններու մէջ ուզենք մտնել, հատորներ գրել հարկ կ'ըլլար, բան մը որ մեր համեստ նպատակէն դուրս է:*

Դնենք միայն 16/29 Ապրիլ 1914 թուականը կրող առժամեայ օրէնքին պատճէնը սրով օսմանեան օրէնագիրը մինչև ցարդ չեֆի մասին օրինագիրքի մէջ եղած պակասը լրացուց .

ՅՕԴ. Ա. — Չեֆը կը պարունակէ՝

- 1<sup>0</sup>. — Չեֆ բառը արձանագրուած գրութեան մէջն իսկ :
- 2<sup>0</sup>. — Որոշ գումար մը վճարելու պարզ հրաման մը :
- 3<sup>0</sup>. — Վճարող անձին անունը :
- 4<sup>0</sup>. — Վճարելի տեղւոյն անունը :
- 5<sup>0</sup>. — Չեֆի քաշուած տեղն ու թուականը :
- 6<sup>0</sup>. — Չեֆը քաշողին ստորագրութիւնը :

ՅՕԴ. Բ. — Այն թուղթը որուն մէջ նախորդ յօդուածին ճշդած կէտերէն մին պակսի չեֆի արժէք չունի բացի հետեւեալ նախատեսուած պարագաներէն :


Մասնաւոր յիշատակութեան մը բացակայութեան պահուն այն վայրը որ ցուցուած է վճարող անձին անուան քով կը նկատուի իբր վճարելի տեղ և միևնոյն ատեն վճարող անձին բնակավայրը :


Չեֆ մը որուն վճարման տեղը չէ նշանակուած, կ'ենթադրուի՝ իւր ծագման վայրը վճարելի :

Երազման վայր չպարունակող չեֆը, ստորագրուած

կը նկատուի այն տեղը որ նշանակուած է քաշողին ա-  
նուան քով: Անհրաժեշտ չէ որ չիւք մը տեղէ մը ուրիշ  
տեղի վրայ քաշուած ըլլայ:

ՅՕԴ. Գ. — Չիւք միայն այնպիսի անձի մը վրայ  
պէտք է քաշուի որ քաշողին տրամագրութեան տակը  
դրամ ունենայ և մասնաւոր կամ լոկալայն համաձայ-  
նութեան մը բերմամբ չիւք վճարելու ստիպուած ըլլայ:





Գ.

ԱՐԺԵԹՈՒՂԹԵՐ — ՀԱՍԱԹՈՒՂԹ, ԲԱԺՆԵԹՈՒՂԹ,  
ՊԱՐՏԱԹՈՒՂԹ ԵՒ ԱՆՈՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ —  
ԲԱԺՆԵՏԷՐ, ՇԱՀԱԲԱԺԻՆ —  
ՊԱՀԱՆՋԱՏԷՐ, ՏՈԿՈՍ ԵՒ ԻՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ —  
ԵՐԵՐՈՒՆ ՊԱՐՏԲ:

---

Արժեքուղթ, ինչպէս անունն ալ կը վկայէ, թուղթ մ'է որ կ'արժէ, որ արժեք ունի: Ասիկա տեսակ մը ընկալագիր է, զոր աէրութիւնը կամ ընկերութիւններ կուտան, որոշ նպատակի մը համար իրենց ստացած զբրամին փոխարէն:

Արժեթուղթերը երեք կարգի կարելի է բաժնել.  
Ա.— Հասարուղթ, Բ.— Բաժնեքուղթ, Գ.— Պարտարուղթ:  
Երբոր Պետութիւն մը ստիպուած է ընել այնպիսի ծախսեր, որոնք իրեն եկամուտէն վեր են, նա փոխ կ'առնէ պէտք եղած զբամը անհատներէ, որոնք այսպէսով իրեն պահանջատէրերը կ'ըլլան: Ասոնց կուտայ

իրենց ասնելիքը ներկայացնող վաւերագիր մը, որուն հաստիքարեր թուղթ կամ պարզապէս հասարուղը անունը կուտան ( Rente ), կառավարութիւնը իր պարտատէրերուն կը վճարէ տարուէ տարի որոշ տոկոս մը, մինչև որ պարտքէն ազատի զրամագլխին ամբողջովին վճարմամբը :

Հաստիքները կ'ըլլան կրողին, անուանական կամ խառն :

Առաջինները՝ որուն քով որ գանութին, անոր ստացուածքը կը համարութին և սեփականութիւնը կը փոխանցի պարզապէս ձեռքէ ձեռք անցնելով, առանց գրաւոր ձեւակերպութեան : Տոկոսը կը գանձուի հետեւեալ կերպով . Արժեթուղթին ծայրի մասերը, քառանկիւն փոքրիկ շրջանակներու մէջ տպուած են գանձելի տոկոսին քանակը և պայմանաժամը . այդ շրջանակները, որոնց կտրօն ( coupon ) անունը կուտան, կը կտրութին վճարօրին և կը ներկայացուին ուր որ անկ է, գանձման համար .

Առվորաբար հաստիքները հինգ տարուան համար կտրօններով կը տպուին . այս պայմանաժամէն ետքը հին թուղթերու փոխարէն նորերը կը տրութին դարձեալ հընգամնայ կտրօններով :

Երկրորդ տեսակ, այսինքն Անուանական հարաբուղիքները ( nominatif ) անոնք են, որոնց վրայ պարտատէրերուն անունն ու մականունը արձանագրուած են : Ասոնց փոխանցումը կը կատարուի պետական գանձին գրաւոր գիւմում ընկելով և Մայր Տոմարին մէջ հին սեփականատիրոջ անունն տեղը նորինը արձանագրել տալով :

Անուանական արժեթուղթ մը ծախելու համար անոր տէրը պարտի նախիր խալուխիւնը պաշտօնապէս վաւերացնել տալ :

Տոկոսի վճարումը նախորդէն անով կը տարբերի որ սա կտրօն չունի . պայմանաժամին՝ հարկ է նոյն ինքն արժեթուղթը ներկայացնել Պետական դանձուն կամ անոր նշանակած հաստատութեան որ թուղթին ետեւի կողմը կնիք մը կը դնէ խրաքանչխր վճարումը կատարած պահուն :

Երկրորդ տեսակը , այսինքն՝ Խառն հասարուղիք , այսպէս կը կոչուի , որովհետեւ անուանական ըլլալով հանդերձ եռամսեայ կտրօններ ունի 10 տարուայ համար , որոնք կը գանձուին միեւնոյն ձեւով , ինչպէս կրողին հասաթուղթերը :

Հասաթուղթերը , որոնց պէտեւական քուղիք ալ կ'ըսեն սովորաբար , կրնան ըլլալ մշտնջենական կամ շիջանկի :

Առաջինին համար զրամագլխի վճարման *à la* է պայմանաժամ տրուած չէ , մինչդեռ երկրորդը որոշ պայմանաժամով մը արտագրուած է :

Հանրային պարտուց Մայր Տոմարին մէջ արձանագրուած պարտքերէն զատ , կան երկիրներ , ուր Պետական գանձը երբ զրամի պէտք ունենայ , արտաստվոր հասոյթներ կ'ստնդձէ արտագրելով տեսակ մը գանձամուրհակներ ( bon ) , որոնց վճարօրը սուսեւ կամ նուազ հետեւ է ե որոնց եկամուտը կախում ունի առ հասարակ սոյն պարտքին կնքուած միջոցին հրապարակի դրութեանէն : Այս գանձամուրհակները կը կազմեն երկրին ( Dette flottante ) Երկուսն պարտք :

Ա. Թոպէրդ-Միլի *La Grammaire de la Bourse*

գրքին մէջ հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընէ Պետական  
Թուղթերու վրայ .

« Մեր Ֆրանսական պետական բուրժեշու հաս-  
 « տատարութիւնը եւ լրջութիւնը ամենուն յայտնի է, բայց  
 « ցաւալի է որ Տերութիւնը որ վաճառականները կ'ստիպէ  
 « տարեկան վաճառացուցակ եւ հաշուեկէիռ կազմել ,  
 « ինքր ո՛չ ցուցակ ոչ ալ հաշուեկէիռ կը պատրաստէ :  
 « Իր տնտեսականութիւնը կը կայանայ վարչական ծախ-  
 « սերը եւ հասոյքները գրելու մեջ , այսինքն , բռնելու  
 « տեսակ մը խոհանոցի գիրք՝ որ « պիւսժէ » կը կոչուի  
 « եւ որուն վերջնական հաշուեկէիռը մեզ ուրիշ բան  
 « չի յայտնէր, բայց երբ հասոյքները նախատեսուած  
 « քանակը անցած եւ կամ անկէ պակաս են եւ քէ բու-  
 « արկուած ծախսերը հմտաբար կարգադրուած , վնա-  
 « րուած եւ ստուգուած են : Ամէնը այս է : Ո՛ւր է  
 « Ֆրանսայի հարստութիւնը . անե՛լու վրայ է այն քէ  
 « պակսելու : Ի՞նչ կ'ըլլան բնկերական հարստութեան  
 « զանազան տարրերը , աղէկ մասակարարուած են  
 « արդեօք . անոնցմէ ոմանք անհետացած չեն . ասոնք  
 « բոլոր չեն ըսուիր : Անտարակոյս, կազմակերպութեան  
 « նմոյշի տեղ չի կրնար ծառայել հաշուականութիւնը  
 « Տերութեան մը որ միեւնոյն ժամանակ քէ մասակարար  
 « է քէ արուեստագործ , քէ հողագործ քէ անասնաբոյծ,  
 « քէ փոխադրութեանց ձեռնարկիչ , քէ վաճառական ,  
 « քէ դաստիարակ , քէ ապահովագրող եւլն. եւլն. որ կը  
 « շինէ , կը մտակէ , կը բուռէ, կը փոխադրէ , կը դաս-  
 « տիարակէ , կ'ապահովագրէ , կը ծախէ եւ կը գնէ ա-  
 « ռանց կարենալ ըսելու արժեգինը իր գործած, ծախած  
 « բուռած , շինած եւ փոխադրած իրերուն , առանց

« կարենալ արդարացնելու իր պահանջը եւ իր պարսֆր  
 « վերլուծական հաշիւներու եւ ընդհանուր հաշուեկրե-  
 « ռի մը միջոցաւ որոնք հասարակաց հարսութեան  
 « խտացումն են . հոն « Անձանօթ » մը կայ զոր ապա-  
 « զայ պիւսնեները պէտք է գտնեն :

« Օտար պէտական քուղբերը դասելու համար  
 « պէտք է նախ տեղեկանալ քե՛տ տուեալ պետութեան  
 « պիւտժէն ի՞նչպէս կը փակուի, հաւասարակշռութեամբ  
 « քե՛տ բացով . վերջին պարագային պէտք է նայիլ քե՛տ  
 « ի՞նչ է բացին ֆանակը բաղդասմամբ պիւտժէին հա-  
 « սոյթներուն եւ քե՛տ բացը ինչի հետեւանք է , պիւտժի  
 « սովորական ծախսերո՞ւ քե՛տ արտասովոր եւ արդիւնա-  
 « տուր ծախսերու :

« Այս ընելու համար տեղեկութիւններու , դժուար  
 « աղբիւրներու դիմելու հարկ չկայ , բաւ է բաղդասել  
 « իրարու հետ նախընթաց տարիներու պիւտժէները : Բո-  
 « յոր այն երկիրներուն մեջ , ուր բացը երբայով կը  
 « նուազի . կարելի է իբր ապահով տեղ ընդունիլ որ  
 « փոխառութիւնները արդիւնաբեր ձեռնարկներու գոր-  
 « ծածուած են :

« Եւ փոխադարձաբար բոլոր այն երկիրները ուր  
 « բացը երբայով կ'անի (*ինչպէս Ռուսաստան*) կարելի է  
 « առանց սխալած ըլլալու վախի , ընդունիլ քե՛տ փո-  
 « խառութիւնները ծառայած են միայն փակելու Տե-  
 « տութեան եկամուտներուն մսխումներէն բացուած  
 « ծակերը :

« Վերջին տարիները գրեթէ օտար պէտական փո-  
 « խառութիւն տեղի չունենար առանց « մասնաւոր »

„ կոչուած երաժիշտաւորութիւններու , արտօնութիւններու  
 „ գրաւներու , եւ այլն : Մասնաւոր սուրբեր . երկա-  
 „ բուղոյ մեծաւորհներ , ամեն տեսակ եկամուտի աղբիւր  
 „ մեկիկ մեկիկ գրաւ դրուեցան ստորագրողներուն :

„ Կան տեղութիւններ , ինչպէս Պարսկաստան , ուր  
 „ պիտժէի եկամուտ մը չէ մնացած որ ո եւ է փոխա-  
 „ ռութեան մը կամ ո եւ է դրամասան կանխավճարի  
 „ մը իբր երաժիշտաւորութիւն տուած չ'ըլլայ :

„ Շահեկան է ուրեմն իմանալ քե ի՞նչ է այս  
 „ գրաւներուն արժէքը : Որպէսզի գրաւ մը կատարեալ  
 „ ըլլայ ըստ Ֆրանսական օրենքին պէտք է՝

„ 1.- Գրաւ դրուած իբր պարտաւորոջ ձեռքը յանձ-  
 „ նուած ըլլայ :

„ 2.- Գրաւով պարտք տուող պահանջատէր իրաւունք  
 „ ունենայ ստիպելու որ իրեն առնելիքը այս գրաւին  
 „ վրայէն վճարուի :

„ 3.- Պարտատէրն չկարենայ գրաւը ետ ստանալ  
 „ մինչեւ որ իր պարտքը ամբողջովին չվճարէ :

„ 4.- Վերջապէս երբ պարտատէրն չվճարէ , գրաւը  
 „ կարելի ըլլայ ծախել ինչ ինչ ձեւակերպութիւններ  
 „ կատարելով :

„ Արդեօք այս բոլոր պայմաններուն համապա-  
 „ տասխան են տեղութեանց տուած գրաւները հանդէպ  
 „ պարտատէրերու :

„ Նախ եւ առաջ այս վերջին պայմանը իրական-  
 „ նութեան մեջ դժուար է ի գործ դնել : Իսկապէս նա-

„ ւահանգիստի մը մասը կամ պետութեան մը մեռա-  
 „ շնորհը ծախելը , կտն կարասիք ծախելու չի նմանիր  
 „ նախ պէտք է գնող մը գտնել եւ շատ քիչ մարդիկ կան  
 „ որոնք ցանկութիւն ունենան գնելու երկարուղւոյ գի-  
 „ ծեր կամ այսինչ գաւառին հողային տուրքին ենթա-  
 „ դրական գանձման իրաւունքը : Յետոյ , եւ հոս է եւ  
 „ մեծ դժուարութիւնը , դեռ բարապաններ եւ միջազ-  
 „ գային ուսիկան զինուորներ չկան պետութեանց իրենց  
 „ յանձնառութիւնները յարգել տալու համար :

„ Երբեմն Մեծ Տերութեանց ներդաշնակութիւն  
 „ կոչուածը կարող է խօսքը բնթանօրին յանձնել երբ  
 „ պարտաւոր ծովային մասնասուներ ունի , զորս կա-  
 „ րելի է գրաւել : Գործողութիւնն արդէն բաւական  
 „ պարզ է եւ սովորաբար ամենաչնչին նաւային ցոյց  
 „ մը կը բաւէ ամէն բան կարգի կանոնի մտցնելու հա-  
 „ մար :

„ Այսու հանդերձ այս միջոցին վրայ շատ յոյս  
 „ պէտք չէ դնել , որովհետեւ երբ կառավարութիւնները  
 „ չեն վարանիր շարժել նաւատորմիդներ , պաշտպանե-  
 „ լու այն ինչ որ դիւանագէտները արժանապատու-  
 „ րիւն կը յորջորջեն , անոնք նոյն բանը չեն ըներ երբ  
 „ խնդիրը իրենց հպատակներուն նիւթական շահերուն  
 „ վերաբերի :

„ Այսպէս ուրեմն , առաջին կէտ , կարելի չէ կա-  
 „ արեալ նկատել տերութեան մը կողմէ տուած գրաւը  
 „ քանի որ ան գրեթէ միշտ անգրաւելի է երբ ոչ իրա-  
 „ ւամբ գոնէ գործնականապէս :

« Միւս պայմաններ կը լրանա՞ն երբեմն : Շաս  
 « քիչ անգամ :

« Հանրային Պարսուց յանձնաժողովներու կազ-  
 « մակերպութիւնը անուշ կարելո՞ր քալ մը եղաւ  
 « լուրջ գրաններու հաստատման շաղիկ մէջ . սակայն  
 « յանձնաժողով կայ , յանձնաժողով ալ կայ . օրինակ՝

« Յունական եւ Եգիպտական յանձնաժողովները  
 « մեծ վստահութիւն կը ներշնչեն . իրենց անդամները  
 « առանց Տերութեանց հաւանութեան չեն կրնար ըն-  
 « ռուիլ եւ մասակարարելու կոչուած եկամուտները իրենց  
 « նպատակէն դուրս չեն կրնար գործածուիլ : Իսկական  
 « երաշխաւորութիւնը հոն եւրոպական ազգերու հա-  
 « մերաշխութեան մէջ է :

« Օսմ. յանձնաժողովն ընդհակառակը պարզապէս  
 « արժեքազրկներու տեսքուն ներկայացուցութիւն մ'է որ  
 « ազնուաբար շնորհուած է Սուլթանին կողմէ , այնպէս  
 « որ պետութիւնները չկարենան միջամտել այլապէս  
 « բայց երէ իրենց խորհուրդներովը :

« Սերպիոյ յանձնախումբին գալով , ան շատ  
 « վատքար է , կարելի է ըսել քէ՛ ան գոյութիւն չունի  
 « սերպիական օրէնքով հաստատուած , ան՝ պարզապէս  
 « ելմական նախարարութեան մասնանիւղ մ'է որ օրին  
 « մէկը կրնայ ջնջուիլ նոյնպէս սերպ օրէնքով մը :

« Նոյնը պիտի ըսենք բոլոր պետական այն փո-  
 « խառութեանց համար , որոնց գրան են մատուցուիլ ,  
 « երկարուղիներու , անտաններու , հանքերու տուրք ելն .

« Արդէն ազգայն դրամական վիճակ ունեցող տե-

« րութիւններն են որ ստիպուած են մասնաւոր գրաւներ  
 « ներկայացնել :

« Հոնսուրասի կառավարութիւնը այս տեսակին  
 « մեջ մեզի ցոյց տուած է ինչ որ կարելի է :

« Այս տեսութիւնը չորս հինգ տարուան մեջ գրաւ  
 « տուաւ զրեքէ իր բոլոր ունեցածը, հողեր, երկաթուղի,  
 « անտառ , հանք , ամէն բան : Սակայն ասիկա արգելի  
 « մը չեղաւ որ նա երկու երեք տարի ետք դադրեցներ իր  
 « արտաքին պարտքերուն վրայ ո եւ է վճարում : Ահա քե  
 « ինչ էր արժէքը այն մասնաւոր գրաւներուն որ իր  
 « ներկայացուցիչները այդքան շատ յօրէն շնորհած էին  
 « ստորագրողներուն : Այս պատմութեան բարոյականն  
 « այն է - ինչպէս պիտի ըսէր լաւ առակախօս մը -  
 « որ ժանտախտէն զգուշանալու պէս պէտք է հեռու կե-  
 « նալ այն փոխառութիւններէն , որոնք մասնաւոր  
 « գրաւներ ունին եւ պէտք չէ ստորագրել երբ բոլորովին  
 « ապահով չ'ըլլայ որ անհրաժեշտ զգուշութիւններ  
 « ձեռք առնուած են , ո եւ է խաբէութեան զոն չ'ըլլա-  
 « լու համար :

« Տեսութեան մը ելմտական յաջող կացութիւնը եւ  
 « իր անցեալին ցոյց տուած պարկեշտութիւնը ամենա-  
 « լաւ գրաւականն է որ նա կարող է տալ իր պահանջա-  
 « տերներուն , ասիկա նոյնքան նշանակալից է ազգերու հա-  
 « մար որքան անհասներու վերաբերմամբ :

*Այս երկար մէջբերումն մեր նիւթին համար այն-  
 « քան օգտակար դատեցինք որ չէինք կրնար զանիկա զանց  
 « առնել :*

*Վաճառականութիւնը սոսկ անհատներու անձնական*

միջոցներով չի կատարուիր. ան գրեթէ միշտ սեզի կու-  
նենայ ընկերական սյփերու օժանդակութեամբ:

Ընկերութիւն կը կոչուի ըստ առեւտրական օրի-  
նագրքի, միութիւնը զանազան անձերու որոնց նպատակն  
է վաճառականական գործերով շահ՝ ձեռք բերել և մէ-  
ջերնին բաժնել:

Ընկերութեան կարեւոր գերին և հանրութեան մա-  
տուցած անհուն ծառայութեանց վրայ ծանրանալը աւե-  
լորդ է. ամենուս յայտնի է որ առանց այն խոշոր գրա-  
մադրութիւններուն, որ միայն ընկերութիւնը ի վիճակի է  
հայթայթելու, անկարելի պիտի ըլլար կատուցանել և  
շահագործել շարք մը հակայ աշխատութիւններ, որոնց  
վրայ մտածելն անգամ գլխի պտոյտ կը պատճառէ մար-  
դուս. օրինակ՝ երկաթուղի շինել և բանեցնել, նեղուց-  
ներ բանալ, հանքեր փորել, և ին. և ին:

Ընկերութիւններն ալ իրենց կարգին, զրամադրութիւն  
կազմել կարենալու համար, զայն շատ մը հաւասար և  
զիւրամասշտի մասերու կը բաժնեն: Այս մասերուն հա-  
մապատասխան քանակութեամբ կը տպուին վաւերա-  
թուղթեր, ուր ստորարար արձանագրուած կ'ըլլան ըն-  
կերութեան կազմական կանոնադրին գլխաւոր կէտերը՝  
տիտղոս, նպատակ, պայմանաժամ, գործունէութեան  
չրջան, զրամադրութիւն քանակ, բաժնեղին, թիւ, թուական  
ստորագրութիւնք և ին. և ին:

Այս վաւերագրութիւնը կը կոչուին բաժնեքուղի,  
և անոնց սեփականատէրը՝ բաժնեհատ:

Հասարակութիւն և բաժնեթուղթի մէջի տարբերու-  
թիւնը մեծ է:

Առաջինը, ինչպէս տեսանք, տէրութեան փոխարուած դրամին մը ապացոյցն է, մութնակ մը պետական պարտքը ներկայացնող, որուն համար տարեկան որոշ տոկոս մը կը վճարուի:

Մինչդեռ երկրորդը կը ներկայացնէ ոչ թէ փոխատուութիւն մը, այլ իբր *skt* գործին մասնակցող ընկերոջ բաժինը. ասոր համար ալ սովորաբար տոկոսի խօսք չի կրնար ըլլալ:

Սովորաբար կ'ըսենք որովհետեւ կան հազուադէպ պարագաներ ուր ընկերութիւններ տոկոս կուտան իրենց բաժնեատէրերուն, բայց ասիկա բացառութիւն մ'է: Ընդհանուր կանոնը հետեւեալն է: Եթէ տարւոյն վերջը ընկերութիւնը իր հաշուեկշիւը շահով փակէ, բաժնեատէրը անկից կը ստանայ իր բաժնեթուղթերուն համապատասխան մասը՝ ժահաբաժինը ( *dividende* ), իսկ եթէ տարւոյն վերջը շահ չգոյանայ և կամ կորուստ տեսնուի բաժնեատէրը ոչինչ կը ստանայ:

Ասիկա այնքան պարզ է որ այդ մասին երկարելը չարժէր: Բաժնեթուղթերը կրնան ըլլալ կրողին կամ անուանակալ: Առաջին տեսակը, որ գրեթէ մեծամասնութիւնն է, կրողին՝ այսինքն ս'րուն ձեռքը գտնուի անոր սեփականութիւնը կը համարուի, իսկ շահաբաժինը — եթէ կայ — կը գանձուի կարծններու միջոցաւ: Ամէն ընկերութիւն, տարակոյս չկայ, միևնույն աստիճանի վճարեր իր շահաբաժինը: Անոնցմէ խրաքանչխրը իր տարեկան գործունէութեան վերջերը սովորական ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բաժնեատէրերը, անոնց ներկայացնելու համար հաշուեկշիւը, ընկերութեան հաշիւ-

ներուն ամփոփումը և այն որոշումները զորս ի հարկին պէտք է տալ ընկերութեան յաջողութեան նպաստելու համար: Ահա այս ժողովը կ'որոշէ բաժնետէրերու տրուելիք շահարաժինին քանակն ու վճարօրը, աւելի ճիշդը՝ կը հաստատէ արդէն ընկերութեան վարչական ժողովին կողմէ եղած տրամադրութիւնները: Վարչական ժողովի անդամները, տարակոյս չկայ, բաժնետէրեր են իրենք ալ և ընդհանուր ժողովի կողմէն որոշ ժամանակի համար ընկերութեան գործերը վարելու նպատակաւ ընտրուած:

Երբեմն ընկերութիւններու բարգաւաճ դիրքը իրենց կը թոյլատրէ կանխատեսեալ բաժնեզինէն մաս մը վճարել տարուան ընթացքին և ընդհանուր ժողովէն առաջ: Աս կը կոչուի մասնավեար (acompte) և կը կատարուի կործններուն վրայ դրօշմ մը դնելով:

Անուանական բաժնեթուղթք կտօն չունին, շահարաժինը կը վճարուի բացարձակապէս թղթին սեփականատիրոջ կամ անոր օրինաւոր փոխանորդին. ստոնց գնումը և վաճառումը բարդ ձևակերպութեանց ենթակայ ըլլալով, բազդատարար այս տեսակ բաժնեթուղթերը աւելի սակաւ են:

Անգլիոյ մէջ անուանական բաժնեթուղթերու տէրերը իրենց շահարաժինը կը ստանան դրամատան մը վրայ իրենց հրամանին քաշուած չեֆերով, այնպէս որ պէտք անգամ չունին նեղութիւն քաշել վճարօրը իմանալու, գանձման ներկայանալու, և չն, բան մը որ անշուշտ իր մասնաւոր հրապոյրը ունի:

Բաց ի սովորական բաժնեթուղթերէ՝ կան նաև տեսակ մը արժեթուղթեր, որոնց առանձնաւորհեալ բաժ-

ԳՆԵՐՈՒՊԻ անուանը կուտան, action privilégiée կամ action de priorité: Ասոնք առաջիններուն վրայ քանի մը առաւելութիւններ ունին: Իսկապէս կան պարագաներ, ուր անհրաժեշտ է ձեռնարկին յաջողութեան սիրոյն կարգ մը բաժնետէրեր ուրիշներէն առաջ վարձատրել. ասոնք օրինակ մը:

Մէկը գիւտ մը կընէ և զայն շահագործելու համար միջոց շունենալով կ'ուզէ ընկերութիւն մը կազմել. ձեռնարկին յաջողութիւնը, անշուշտ, կախում ունի գիւտին ունեցած նշանակութենէն. դրամատէրերը կը վարձանին, ուստի ասոնց վստահութիւն ներշնչելու և իրենց քսակին բերանը բանալ տալու համար, գիւտին հեղինակը իրենց հետեւեալ առաջարկը կ'ընէ:

« Դուք առանձնաւորօրէն բաժնեւորներ պիտի ունենաք. այսինքն մեր ընկերութեան գոյանալիք շահէն նախ եւ առաջ հարիւրին այսօրն ձեզի պիտի տրուի, եւ մնացածը՝ եթէ աւելնայ, պիտի բաժնուի սովորական բաժնետէրերուն, որոնց մէջ պիտի ըլլամ եւ ես »:

Շատ ընկերութիւններ այս տեսակ բաժնեթուղթերու կը պարտին իրենց մէկ դժուար բոպէին դրամ գրտնելու կարելիութիւնը: Աւելցնենք նաև որ ասոնք համահաւասար իրաւունք ունին բաժնետէրերու ընդհանուր ժողովներու մէջ:

Տեսակ մ'ալ կայ որուն ֆրանսերէն՝ action de jouissance կամ action de dividende կ'ըսեն, և որուն մենք առ ի չգոյէ լաւագոյնի, գլխավնարեալ բաժնեւոր պիտի ըսենք. այսինքն բաժնեթուղթ, որուն սեփականատէրը ընկերութենէն զանձած է իր ժամանակին դրամա-

գլխի կազմութեան համար իր բերած գումարը: Բացա-  
տրենք միտքերնիս: Երբ ընկերութիւն մը շահարեր է,  
զգոյշ բաժնետէր մը պէտք չէ որ իր բոլոր շահարածինը  
իր պէտքերուն ծախսէ. ան պէտք է ջանայ անկէ մաս  
մը խնայել իրր պահեստ սե օրերու կամ պարզապէս իր  
դրած գրամագլուխը վերակազմելու համար. սակայն շատ  
քիչ են թուով այնպիսի հեռատես բաժնետէրեր. ուստի  
ընկերութիւնը կ'ընէ անոնց համար ինչ որ իրենք իրենց  
չպիտի ընէին կամ չպիտի կրնային ընել. ան ամէն տարի  
իր զուտ շահէն մաս մը կը յատկացնէ իր բաժնեթուղ-  
թերուն գրամագլխին հատուցման. հատուցումը սովորա-  
բար վիճակահանութեամբ կ'որոշուի, և թիւք ելած  
բաժնետէրը իր բաժնեթուղթին փոխարէն կը ստանայ  
անոր վրայ տպուած գրամագլուխը. բայց որովհետե նա  
չի դադրիր ընկերութեան մասնակցութենէ, ուստի կը  
ստանայ անկէ ուրիշ թուղթ մը որ կրողին է և շահա-  
բաժնի իրաւունք ունի, և որ կը կոչուի, ինչպէս ըսինք  
գլխավճարեալ բաժնեթուղթ:

Ընկերութիւններէն ոմանք, իրենց կազմութեան  
սատարողներուն ի վարձատրութիւն, անոնց տեսակ մը  
թուղթեր կուտան՝ հիմնադրի բաժին անուան տակ, որով  
ասոնք որոշ իրաւունքներ կը ստանան հանդէպ ընկե-  
րութեան, ինչպէս են զուտ շահուն չափով մը մասնակցիլ  
ապագայ ստորագրութեանց ժամանակ մասնաւոր առա-  
ւելութիւններ ունենալ, և ըն.:

Հիմնադրի բաժիններուն վրայ ո՛ր և է գումարի յի-  
շատակութիւնն իսկ չ'ըլլար:

Բաժնեթուղթերու վրայ այս համառօտ տեսութե-

նէն ետքը անցնինք արժեթուղիներու երրորդ ճիւղին՝ պարսաքուղիքերու քննութեան :

Ջանացինք համառօտակի պարզել թէ ընկերութիւն մը քանի կերպով կարող է դրամ հայթայթել : Խօսեցանք բաժնեթուղիներու, առանձնաշնորհեալ և գլխավճարեալ բաժնեթուղիներու, հիմնադրի բաժիններուն վրայ : Տեսանք որ ասոնք բոլորն ալ էապէս փոփոխուն հասոյք բերող թուղիներ են, քանի որ դրամատուն մը, երկաթուղի մը, նեղուց մը, լուսարայխութեան, ջրաբայխութեան, փոխադրութեան, ապահովագրութեան, և ընկերութիւն մը կամ ու է ճարտարարուեստ մը աւելի կամ նուազ շահ կը բերէ ժամանակին և տեղւոյն համեմատ, մանաւանդ թէ պարագաներու բերմամբ կարող է և վնաս կրել : Կը հետեւի որ բաժնեթուղի մը անպատճառ հասութարեր թուղի մը չէ երբեմն պարզապէս անհաս թուղի մ'է, ո՛չ մէկ հասոյք չտող թուղի մը :

Կարծուածէն աւելի են դժբաղդարար այն բաժնեթուղիները, որոնց տարեկան եկամուտը զերօ է և սեփականատէրերը լաւագոյն ապագայի մը յուսով կը տարուբերին երկար տարիներ, մինչև որ երբուն ընկերութիւնը հալի և անհետանայ հիւժախտաւորի մը նման :

Ասոր համար, այն զգուշութիւնն և խոհամութիւնն որ հասարակութիւն մասին յանձնարարեցինք, տասնապատիկ աւելի կը պահանջուի բաժնեթուղիներուն վերաբերմամբ :

Դրամատէր մը ու է բաժնեթուղիի ձեռք չի զարկած, պէտք է լաւ ուսումնասիրէ ընկերութեան կացու-

թիւնը ներկային և անցեալին մէջ և վերջնական որոշում չտայ մինչև որ համոզում չգոյացնէ թէ՛ ան իսկապէս մաքուր ձեռքերու մէջ կը գտնուի և թէ՛ դրամը արդիւնաբեր և օրինական միջոցներով կը շահագործուի :

Ընկերութիւններն ունին ուրիշ միջոց մ'ալ դրամագլուխ ճարելու, որուն կը դիմեն սովորաբար, երբ հրապարակի վիճակը չներէ նոր բաժիններ հանելու և իրենց ձեռնառու բաժնետէրերուն թիւը աւելցնել :

Անոնք այն ատեն պարտաւորուի կ'արտադրեն, ճիշտ այնպէս, ինչպէս տեսանք պետութեան համար, երբ նա հասարակութեան միջոցաւ փոխատուութիւն կը կնքէ :

Կան դրամատէրեր, որոնք ցանկալով հանդերձ իրենց վստահած մէկ ընկերութեան դրամական աջակցութիւն ընել, կ'ուզեն միեւնոյն ժամանակ, ըստ կարելւոյն սահմանափակել իրենց պատահական վտանգները : Անոնք պայման մը կը դնեն՝ չնասնակցիլ ընկերութեան ռէկ վնասներուն, հետեւաբար անոնք չեն կրնար օգտուիլ և անոր շահերէն, բաժնետէր չեն, այլ պարզ պահանջատէրներ, որ կը շատանան լոկ իրենց փոխ տուած դրամին որոշ վարձք մը ստանալով :

Փոխ դրամ առնողը, ըստ օրինի, պարտի վճարել դրամագլուխ և տոկոս, որոշ և կանխաւ սահմանուած պայմանաժամին, ասոր համար ալ այդ պարտքը ներկայացնող վաւերագիրը կը կոչուի պարտաւոր :

Պարտաւորութեան վրայ տպուած են սովորաբար փոխատուութեան գլխաւոր պայմանները, ինչպէս են թուղթին արտադրման գինը, հատուցման քանակը, եղա-

նակը , ժամանակը , տոկոսաչափը , վճարօրը , թիւ , թուական , ստորագրութիւնք , և ըն :

Միայն ընկերութիւնները չեն որ այս դրութիւնը կ'որդեգրեն դրամ հայթայթելու համար , Պետութիւնը ինքը , գաւառային վարչութիւններ , քաղաքապետութիւններ , և ըն . նոյնպէս և խիստ շատ անգամ փոխառութիւններ կը կնքեն :

Պարտաթղթոց արտադրման գինը , այսինքն այն գումարին քանակը որ տպուած է անոնց վրայ , միատեսակ չ'ըլլար , սովորաբար ընկերութիւնք թէ՛ փոքր և թէ՛ մեծ գումարներու համապատասխան թուղթեր կը տպեն զանոնք ըստ կարելւոյն բոլոր ցանկացողներուն զիւրամատչելի դարձնելու համար :

Պարտաթուղթերը առհասարակ կրողին են և տոկոսները կը գանձուին կտրօններու միջոցաւ :

Ընկերութիւնները իրենց պարտքերուն դրամագրւելսը կը վճարեն տարեկան մէկ կամ աւելի վիճակահանութեամբ :

Այս հատուցման միջոցին երբեմն առաջին ելած թուին , մեծ գումար մը յատկացուած է ըստ կազմական օրինադրի : Այդ տեսակ թուղթերուն վիճակաւոր պարտաւորներ ( obligations à lot ) կ'ըսեն : Ասոնք կառավարութեանց , գաւառային վարչութեանց , քաղաքապետութեանց և մէկ քանի կալուածական պանքաներու կամ շոգեկառքի ընկերութեանց յատուկ են : Ընկերութեան մը բաժնետիրոջ և պահանջատիրոջ միջև գտնուած տարբերութիւնը այնքան էական է որ գուցէ աւելորդ չ'ըլլայ անգամ մը դեռ շեշտել :

Բաժնեւեկերը ընկերութեան սեռն է, մասնակիցը, վիճակակիցը, աղէկ օրերուն ուրախակիցը, սեղանակիցը և սև օրերուն վշտակիցը: Բաժնետէրերը ընտանիքի մը համահաւասար անդամներն են:

Իսկ պահանջատերը, ընդհակառակը, ընտանիքին հետ ու է յարարերութեան մէջ չզտնուող և անոր նիւթական օգնութիւն մը ընող օտար մ'է. ան իր առնելիքը գիտէ ուրիշ ոչինչ:

Նա կը ներկայանայ որոշ ժամուն, իր տոկոսը գանձելու կամ իր դրամագլուխը պահանջելու, առանց հոգ ընելու թէ՛ պարտատէրը ինչ դրութեան մէջ է, և սա ստիպեալ է ամէն բանէ առաջ իր պահանջատէրերուն առնելիքը գոհացնել:

Այս սկզբունքը սակայն ոմանք չափազանցութեան կը տանին՝ կարծելով թէ ինչ որ բաժնեթուղթ է, վտանգաւոր է և խուսափելի և թէ նախընտրելի է պարտաթուղթը որ թէպէտ փոքր, բայց ապահով եկամուտ ունի:

Սխալ և երեւակայական դատողութիւն է այս, որովհետև եղած են հարիւրաւոր ընկերութիւններ, մինչև անգամ քաղաքապետութիւններ և կառավարութիւններ որոնք յոռի վարչութեան մը շնորհիւ իրենց դրամագլուխը չկարենալ վերադարձնելէ զատ, չնչին տոկոսն անգամ ի վիճակի չեն եղած վճարել և հասարակ խանութպանի մը պէս սնանկութիւն հռչակած են: Ուստի պարտաթուղթ կայ, պարտաթուղթ ալ կայ. յաջողութեան գաղտնիքը կը կայանայ անոնց մօտենալէն՝ առաջ տեղեկանալուն մէջ տուեալ ընկերութեան ելմտական կացութեան և վարիչներուն բարոյական վարկին:

Պարտաթուղթերն ալ ունին իրենց առանձնաշնորհ-  
 եաշները, ինչպէս բաժնեթուղթերը, որոնք այդպէս կը  
 կոչուին ( oblig. privilégiée կամ de priorité ), որովհետեւ  
 սովորականներէն աւելի մի քանի երաշխաւորութիւններ  
 կը ներկայացնեն :

Կան տեսակ մը պարտաթուղթեր ալ մանաւանդ  
 Ռուսաստանի մէջ, որոնք կը կոչուին Գրաւարուղթեր  
 ( Lettre de gage ) : Ասոնք տոկոսաւոր վաւերաթուղթեր  
 են Հողային պանքաներու կողմէ արտադրուած իրենց քով  
 գրաւ դրուած հողերու երաշխաւորութեամբ :

Այս գրաւաթուղթերու յատկութիւնները միեւնոյն  
 են, ինչ որ տեսանք ընկերութեանց պարտաթուղթերուն  
 համար : Ասոնք կրողին են և երբեմն ալ կ'առնեն պար-  
 գեւաւոր գրաւաթուղթի ձև ( Lettre de gage à lot ) :

Ինչպէս բաժնեթուղթերը, նոյնպէս և պարտաթուղ-  
 թերը կրնան ըլլալ ամբողջովի կամ մասամբ վճարեալ :  
 Ընկերութիւնն եթէ իր գրամագլխին ամբողջութեան մի-  
 անգամայն պէտք ունենայ, ան կը պահանջէ որ բաժ-  
 նետէրը կամ պահանջատէրը միանուազ վճարէ իր բաժ-  
 նին կամ իր փոխատուութեան փոխարժէքը : Բայց երբեմն  
 ալ կը պատահի որ ընկերութիւնը տուեալ բոպէին իր  
 ամբողջ գրամագլխին պէտք չունենայ, այն ատեն մաս-  
 նաւոր ցուցակի մը համաձայն, որ ստորագրութեան ժա-  
 մանակ լրագիրներու մէջ արդէն հրատարակուած կ'ըլլայ,  
 մասնակի վճարումներով կը գանձէ բաժնեթուղթերու  
 կամ պարտաթուղթերու փոխարժէքը :

Արժեթուղթերու հակիրճ տեսութիւնը հոս վերջա-  
 ցնելով, անցնինք անոնց գրամատուներու հետ ունեցած  
 անհուղթիւններուն :



Դ.

ԱՐԺԵԹՈՒՂԹԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

( Service des Titres )

---

Պանքաներու մէջ մասնաւոր գրասենեակ մը յատկացուած է ի սպահ կամ գրաւ դրուած արժեթուղթերու գործողութեանց համար : Ընտ հաստատութեանց մէջ ընկալեալ գործելակերպը հետեւեալն է .

Յաճախորդը իր իբր աւանդ տուած թուղթերուն հետ միասին յայտարարութիւն մը կը ներկայացնէ՝ ուր մանրամասն նշանակուած են արժեթղթոց քանակը , տեսակը , թիւերը , կտրօններու վճարօրը կամ թիւը , թուական , ստորագրութիւն և հասցէ :

Պաշտօնեան կ'ընդունի զանոնք և յաճախորդին ներկայութեանը կը համրէ , կը քննէ , կը բազդատէ յայտարարութեան պարունակութեան հետ և ամէն բան համաձայն և կանոնաւոր գանելէ վերջը մտից քերթ մը ( fiche d'entrée ) կը պատրաստէ որ գրեթէ յայտարարութեան պարունակութիւնը ունի առանց թիւերու :

Արժեթուղթերը, յայտարարութիւնը, մտից թերթը կը յանձնէ պահապան պաշտօնէին ու երկաթեայ սենեակի մը մէջ կը նստի և պողպատեայ դարաններ ունի իր տրամադրութեան տակ: Սա կրկին անգամ կը քննէ, կը զննէ և կատարեալ համաձայնութիւնը ստուգելէ յետոյ իր տումարին մէջ կ'արձանագրէ սոյն մուտքը բոլոր թիւերովը:

Անցողակի ըսենք որ պահապան պաշտօնէին այս տումարը մեծ օգտակարութիւն ունի. արժեթղթոց հատուցման և վիճակահանութեան ցուցակները այս գիրքին վրայէն կը բաղդատէ, բան մը որ ահագին ժամանակի խնայողութիւն մ'է:

Պահապան պաշտօնեան (le conservateur) արժեթուղթերը ստանալուն, յաճախորդին յայտարարութեան վրայ ( ընկալեալ ) կնիքը կը դնէ և մտից թերթն ալ ստորագրելով զանոնք կը վերադարձնէ Արժեթղթոց սենեակը ( Service des Titres ):

Հոս կը պատրաստեն Ստացագիրը ( Récépissé ) զոր տնօրէններուն ստորագրել տալէ և անոր յատուկ ընդօրինակութեան տոմարի մը մէջ մամլոյ տակ պատճէնը առնելէ վերջը կը յանձնեն յաճախորդին: Վերջինս ստացագիրը ընդունելուն ի վկայութիւն կը ստորագրէ անոր դրամատան մօտ մնացած կիսուն մէջ:

Ստացագիրը անուանական է և կը պարունակէ հետեւեալ կէտերը. անուն, մականուն, բնակավայր, արժեթուղթերու քանակը, տեսակը, թիւերը, կտրօններու վճարօրը, քաղաք, թուական, ստորագրութիւնք:

Բաց ի այս էական կէտերէն՝ որոնք անհրաժեշտ են

դրամատուհները սովորութիւն ունին ստացագիրներու վրայ տպելու զանազան տեղեկութիւններ կամ ազդարարութիւններ, որոնց գլխաւորները հետեւեալներն են.

1<sup>0</sup> Արժեթուղթերը ետ կարենալ առնելու համար սոյն ստացագիրը պէտք է ստորագրեալ վերադարձուի:

2<sup>0</sup> Արժեթղթոց կտրօնները վճարօրէն 15 օր առաջ կ'անջատուին և ժամանակին գանձուելով յաճախորդին հաշւոյն կ'անցնին:

3<sup>0</sup> Գրամատուհը վիճակահանութեանց և հատուցմանց ցուցակները կը քննէ և եթէ ելած թիւեր կան, իմաց կուտայ, բայց առանց պատասխանատուութեան՝ մոռացման կամ սխալման պարագային:

4<sup>0</sup> Արժեթուղթերը ծախել ցանկացող յաճախորդը պարտի վաճառման հրամանագրի հետ վերադարձնել սոյն ստացագիրը, ստորագրեալ:

5<sup>0</sup> Ստացագրի սեփականատէրը ներկայացած միջոցին անմիջապէս ետ կը ստանայ իր թուղթերը, բաւկան է որ սոյն վաւերագիրը ստորագրուած վերադարձնէ. բայց եթէ թուղթերը ստանալու համար ուրիշ մը զրկէ, պարտի անօր մասնաւոր նամակ մը տալ՝ թուղթերը այն անձին յանձնելու արտօնութեամբ.

6<sup>0</sup> Եթէ ստորագրութեան կամ ներկայացող անձին մասին տարակոյս մը ծագի, անհրաժեշտ է որ ընդունողը իր խիղճութիւնը հաստատել տայ դրամատան:

7<sup>0</sup> Եթէ թուղթերէն մաս մը կ'ուզուի ետ ստանալ, այն ատեն հարկաւոր չէ սոյն ստացագիրը ստորագրել,

դրամատուներ ինքը կ'արձանագրէ թուղթերու մասնակի ելքը ստացագրին վրայ և յաճախորդէն առանձին ընկալագիր մը առնելով, անոր կը յանձնէ արժեթուղթերը :

8<sup>0</sup> Սոյն ստացագիրը բացարձակապէս անուանական է և կարելի չէ զայն ս'չ փոխանցել և ոչ ալ վաճառել :

9<sup>0</sup> Դրամատուներ պատասխանատու չէ հարկեցուցիչ պատճառներու ( force majeure ) կամ ժողովրդական ապստամբութեան հետեւանօք եղած ո և է կորուստի համար :

Այս և ստոր նման պայմաններ դրուած են դրամատան շահերը ո և է պատահականութեանց դէմ սպահովելու համար : Դրամատուները ընականաբար ի պահ դրուած արժեթուղթերու համար յաճախորդին բան մը վճարել կուտան իբր պահապանութիւն ( droit de garde ) որ կը գանձուի տարեկանը կանխիկ :

Դրաւ դրուած թուղթերու համար պահավարձք սովորութիւն չկայ պահանջելու, որովհետեւ արդէն պանքան իր փոխ տուած դրամին տոկոսը կը ստանայ : Այսու հանդերձ եթէ յաճախորդը իր թուղթերուն փոխարժէքին գոնէ մէկ քառորդը փոխ չվերցնէ, նա կը ստիպուի վճարել սովորական պահավարձքն ալ :

Դրաւ գնելու ձեւակերպութիւնները գրեթէ նման են աւանդ գնելու գործողութեան, սա տարբերութեամբ որ յաճախորդը բաց ի վերոյիշեալ յայտարարութենէն, պարտի գրաւագիր մը ստորագրել ( Contrat d'avance )

Դրաւագիրը կը պարունակէ բոլոր այն զգուշութեան միջոցները զոր պանքաները, տարիներու շրջանին

մէջ իրենց տեսած շատ մը զեղծումներու և խաբեբայութեանց հետեւանօք, անհրաժեշտ դատած են ձեռք առնել:

Տարակոյս չկայ որ պարկեշտ մարդիկ չեն վախնար զայն աչքերնին գոց ստորագրելէ:

Արժեթղթոց պաշտօնեան ստացագիրը պատրաստած միջոցին միաժամանակ մնտուկին հրամանագիր մ'ալ կը գրէ և տնօրէններուն ստորագրել կուտայ, յաճախորդին վճարելի դրամին համար: Վերջինս դրամը կ'ստանայ ընկալագրով մը կամ չէքով մը:

Գրաւ դրուած թուղթերը և առհասարակ ո և է արժեթուղթ ետ արուած միջոցին, տարակոյս չկայ, պաշտօնեան պէտք չէ գոհանայ միմիայն ստացագիրը ստորագրուած ետ ստանալով, այլ նախ պէտք է սպասէ որ յաճախորդը իր պարտքը տոկոսներով հանգերձ հատուցանէ:

Մեծ պանքաներու մէջ աւանդ կամ գրաւ դրուած թուղթերու քանակը և գործողութիւնները այնքան բազմաթիւ են որ առանձին առանձին ճիւղեր հաստատուած են իւրաքանչիւրին համար:

Դրամատունը սակայն չէգոք շտեմարան մը չէ և իր դերը արժեթուղթերը պահելով չի վերջանար, նա իրաւասութիւն ունի նաև իր կամ յաճախորդներուն հաշուոյն թուղթեր գնել և ծախել, սակարանի գործողութիւններ ընել (Opérations de bourse): Տեսնենք ուրեմն թէ ինչ է Սակարանը:



Ե.

ՍԱԿԱՐԱՆԸ — ԲԱՐԻՉԻ ՍԱԿԱՐԱՆԸ =

ԻՐ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ

ԱՐԺԵԹՈՒՂԹԻ ԳՈՐԾԱԿԱԼ (Agent de change)

Սակարանը, ընդհանուր առմամբ, այն վայրն է ուր կը հաւաքուին կառավարութեան վերին հսկողութեան ներքե, վաճառականները, նաւապետները, արժեթղթի գործակալները (agents de change), միջնորդները եւնամէն օր — բաց ի կիրակի և տօն օրերէ — նշանակելու համար փոխանակագրի, ապրանաց, ապահովագրութեանց նաւավարձքի, ցամաքային կամ ծովային փոխադրութեանց գինները, ինչպէս նաև շաքարեղէն կամ ուրիշ թուղթերու նոյն օրուան արժէքը:

Այս ժողովներուն գերն է զիւրացնել գործողութիւնները, առաջարկը և խնդրանքը իրարու մօտեցնելով, այսինքն ծախողը և գնողը իրարու հետ հաղորդակցութեան մէջ գնելով:

Սակարանի սկզբունքը այնքան հին է որքան նոյն

ինքն վաճառականութիւնը . սակայն գիտնականները կանոնաւոր սակարանի մը առաջին հետքերը նախկին Յու-նաստանի մէջ նշմարած են , որուն սովորութիւնները դարերու ընթացքին յեղաշրջուելով և բարեփոխուելով , այսօրուան կատարելագործուած կերպարանը ստացած են :

Մեզ համար , սակայն , առ այժմ կարելորը սակարանին պատմականը չէ , այլ անոր ներկայ կազմակերպութիւնը :

Մենք պիտի ուսումնասիրենք Բարիզի սակարանը , որ Լոնտոնի և Պերլինի հետ աշխարհիս կարելորագոյններէն է և հետզհետէ տիեզերական հռչակ մը ստանալու վրայ է :

Սակարանը երկու մասէ կը բաղկանայ , մին , որ կը կոչուի պարզապէս Սակարան ( Bourse ) , յատկացուած է սոսկ արժեթուղթերու և փոխանակագրերու առուծախին , որ մեր ներկայ ուսումնասիրութեան նիւթն է , իսկ միւսը՝ - որուն Գաղղիացիք երբեմն Bourse du commerce կ'ըսեն՝ վերինէն զանազանուելու համար , որ Bourse de commerce կը յորջորջուի ըստ օրինի - Առևտրական սակարանը , որ կը զբաղի վերը յիշուած միւս բոլոր գործողութիւններով : Արժեթուղթերու Սակարանները իրենց ամենօրեայ գործողութեանց միջոցին տեղի ունեցած բոլոր գիները կը հրատարակեն պաշտօնաթերթի մը միջոցաւ , որ սակացոյց (cote) կը կոչուի : Սակարանի մէջ տեղի ունեցած առուծախի քանակին հսկայ աճման մասին զազափար մը կազմելու համար , բաւ է հարեւանցի ակնարկ մը նետել զանազան տարեշրջաններու մէջ լոյս տեսած սակացոյցներու վրայ :

1789ի Բարիզի սակարանին մէջ արժեթուղթերու քանակը ընդ ամէնը եօթի կը հասնէր . 1819ին արդէն 20

էր: Այս քանակը կամաց կամաց կ'աւելնայ մինչեւ որ կը հասնի 1852 տարին՝ ուր ճարտարարուեստը շինարար զարգացումով մը ծնունդ կուտայ բազմաթիւ արժեթուղթերու, որոնց թիւը կը հասնի 126ի: Այս թիւը կ'եռայատկի մինչեւ 1869 և եօթնսպատիկը կ'ըլլայ 1882ին, իսկ այսօր՝ միայն Բարիզի մէջ գործառնութեանց նիւթ եզող արժեթուղթոց գումարը հազարը կ'անցնի:

Մենք հոս կը գտնենք ձեռնարկներու ամենաճոխ դանազանութիւնը. Պետական թուղթեր, քաղաքապետական և գաւառային պարտաթուղթեր, վարկի ընկերութիւն, ապահովագրական ընկերութիւն, երկաթուղիք, ջրանցքներ, հանքեր, մետաղագործութիւն, կազ, ելեկտրական ընկերութիւն, և շն. և շն.:

Ի՞նչ է այս արժեթղթոց Բարիզի հաւաքածոյին արժէքը: Անկարելի է որոշել իբր հիմ բռնելով սակացոյցը որովհետև բազմաթիւ թուղթեր արձանագրուած չեն հոն պաշտօնապէս, ուրիշներ ալ մասամբ մը օտարներու ձեռքը կը գտնուին. նոյնպէս կարելի չէ հիմնուիլ ժառանգութեանց պարագային գանձուած տուրքերու վրայ, քանի որ կրողին թուղթերուն մեծ մասը այդ տուրքին ենթակայ չեն:

Եկամուտի վրայ դրուած չորս առ հարիւր տուրքն անգամ շատ անկատար արդիւնք մը կուտայ. այսու հանդերձ այս վերջինն է որ ճշմարտութեան կը մօտենայ որքան կարելի է:

Ըստ 1903ի պիւտժէին, Գաղղիոյ մէջ շարժուն գոյքի վրայ դրուած տուրքը երեք տեսակ է հետևեալ չափով՝

4 <sup>0</sup> / <sub>10</sub> եկամուտի վրայ դրուած տուրք	Փր.	82,192,000
Փոխանակման տուրք ( <i>Droit de transmission</i> )	»	52,487,500
Դրոշմի տուրք ( <i>droit de timbre</i> )	»	33,090,500
Ընդհ. գումար	»	<u>167,770,000</u>

Այս չորս առ հարիւր տուրք եղող 82,192,000 Ֆրանքը կը ներկայացնէ 205,480,000 Ֆր.ի եկամուտ մը, ընդունելով որ դրամագլխի վերածելու միջին սակը ըլլայ  $3\frac{1}{2}$ , ինչ որ իսկականէն աւելի վար է, կը գտնենք 58 միլիաոի դրամագլուխ մը. պէտք է ասոր վրայ աւելցնել 26 միլիաո գաղ. հասաթուղթերը, որոնք տուրքէ զերծ են: Բայց այս չէ ամէնը, կան շատ մը արժեթուղթեր, որոնք եկամուտի տուրք չեն վճարեր. օրինակ՝ օտար պետական թուղթերը, դրոշմի բաժանորդ չգրուած օտար ճարտարարուեստական թուղթեր և վերջապէս այն ահագին քանակութեամբ անգլիական արժեթուղթերը, որոնց շահարածիները, ինչպէս տեսանք, կը վճարուին Լոնտոնի վրայ չեֆերով:

Ո՞րչափ կայ այդ օտար թուղթերէն: Ո՞ր Լէօն Սէյ 1870ի տուգանքին վճարման վրայ իր գրած տեղեկագրին մէջ կ'ըսէ որ այն թուականին արտասահմանէն ֆրանսացւոց վճարուած կտրօններուն գումարը կը հասնէր 600էն 700 միլիոն ֆրանքի, տարեկան: Ընթացիկը որ ցարդ դրութիւնը նոյնը մնացած ըլլայ և թէ՛ նոր ներմուծումները վաճառումներու, մահերու և ուրիշ գէպքերու պարսպը լեցնելու ծառայած ըլլան, ներելի է կարծել որ Գաղղիացւոց պատկանած և տուրքէ զերծ և-

դած օտար պետութեանց թուղթերու գումարը կը հասնի 20 միլիառի :

Այս քսան միլիառը աւելցնելով վերոյիշեալ 58 միլիառ տուրքի ենթակայ թուղթերու և նոյնպէս վերը ակնարկուած 26 միլիառ գաղ. հասաթթուղթերու վրայ, կ'ունենանք 104 միլիառի գումար մը :

Այս թիւը խոշոր է, բայց չափազանցուած չերեւար քանի որ արդէն 1881ին Անգլիոյ մէջ նոյնանման արժեթղթոց վրայ եղած քննութիւն մը 87 միլիառի կը հասցնէ Անգլ. ժողովուրդին պատկանող շարժուն գոյքին քանակը : Արդ 1881էն ի վեր անգլիական շարժուն հարըստութիւնը ապահովարար պէտք է աւելցած ըլլայ գոնէ 15 միլիառ, քանի որ Գերմանիոյ մէջ 32 տարւոյ չըջանին մէջ 25 միլիառի յաւելում մը առաջ եկած է :

Անգլիոյ և Ֆրանսայի մէջ անտեսական զարգացումը Գերմանիայէն ետ շմաց, ուստի յանդգնութիւն չ'ըլլար հաստատելը որ եթէ 120 միլիառ հաշուի շարժուն գոյքերու (valeurs mobilières) վրայ դրուած Ֆրանսական դրամագլուխը, ճշմարտութեան բաւական մօտեցած կ'ըլլանք :

Բարիզի Սակարանի թուղթերու քանակին վրայ ցայտուն գաղտփար մը տալու համար կ'ըսեն որ եթէ անոնք իրարու վրայ դիզուին, երկրագունտը չըջապատելու չափ երկար ժապաւէն մը կը ստացուի :

Ահաւասիկ Սակարանի ամենօրեայ գործառնութեանց նիւթը : Տեսնենք սոյն մեքենային շարժելակերպը :

Սակարանի կազմակերպութեան ուսումնասիրու-

թեան ձեռնարկելէ առաջ կ'ուզենք երկու խօսք ըսել անոր հանրային կեանքի վրայ ունեցած բարոյական և նիւթական ազդեցութեան վրայ:

Մեր մէջը, սակարանի խառնաշփոթ կազմը մէկ կողմէն, հոն գործող կամ գործողութեանց մասնակցողներու ապիկարութիւնը և երբեմն ալ անպարտաճանաչութիւնը միւս կողմէն պատճառ եղած են որ, սակարան բառը յոռի իմաստ ստացած է և գրեթէ խաղատան մը հոմանիշը դարձած է: Անէծք չկայ որ անոր գլխուն չկարգան, « հեռո՛ւ սակարանէն » կը պոռան բարեկամներու, « այսինչը իր բոլոր կարողութիւնը հոն կորսնցուց » ամուսնական կարգադրութիւններ կը խզուին հարսնցուին պարզապէս « նեանածդ պօրսան կը խաղայ եղեր » ըսելով: կրակը կը վառի հոն, կը սորվեցնեն տղայոց մի գալչիք անոր, կ'այլրիք:

Չեն մտածեր որ կրակը միայն հրդեհ և կործանում չի նշանակեր, նա օգտակար կերպով գործածուելով մեզ կը տաքցնէ կամ ջուրը եռացնելով շոգի առաջ կը բերէ որ բիւրաւոր գործարաններու միակ անհրաժեշտ ազդակն է: Այդ ինքնակոչ բարոյագէտները չեն մտաբերեր որ իրէնք այդպէսով կը գտուին ճամբորդի մը գրութեան մէջ որ շոգենաւին պատահական ընկղմելէն վախնալով, առ հասարակ ճանապարհորդութենէ կը հրաժարի:

Սակայն հակառակ բարոյագէտներու ազդարարութեան, սակարանի գործողութիւնները, իրերու բնական բերմամբ, օրէ օր աւելի լայն ծաւալ ստանալու վրայ են:

Երբ մարդ գիտէ գիներու առօրեայ ելուէջերը, ինչպէս նաև ատեն ատեն տեղի ունեցած ցնցումները և

տեղեկանայ անոնց զրդապատճառներուն, սա եզրակացութեան կը հասնի որ սակարանին մէջ, խաղատուները պատահածին ճիշդ հակառակը, տրամաբանութիւնն է որ կ'իշխէ գրեթէ միշտ. անոնք որ ուզած են մօտենալ սակարանին տրամաբանութեան օրինաց հակառակ և առանց նախնական ուսումնասիրութեան, որպէս թէ թըղթախաղի սեղանի մը շուրջը նստէին, ատոնք եղած են իրենց անփորձութեան շնորհիւ, ելմտական աղէտներու մեծագոյն զոհերը:

Ուստի, սակարանը հեռու է անորոշ և զիպուածական խաղերու վրայ յենած չէնք մը ըլլալէ. նա ընդհակառակն երկրի մը անտեսական և քաղաքական աստիճանը ցոյց տուող գործիք մ'է, տեսակ մը ջերմաչափ, որուն ելուէջները նոյնքան ենթակայ են ուսումնասիրութեան որքան սովորական ջերմաչափինը:

Ո և է զէպք որ զոյգն ինչ կը շահագրգռէ հանրութիւնը, իսկոյն իր ցոլացումը կը գտնէ սակացոյցին մէջ (cote) շատ անգամ արդէն զէպքին նախազգացուած միջոցին:

Որպէզպութեան հաւաստիք մը կամ պատերազմի սպառնալիք մը, ժողովրդեան վստահութիւնը վայելող կառավարութեան կազմութիւնը կամ անկումը, այս կամ այն դաշնակցութեան կնքումը կամ խզումը, վեհապետի մը ամուսնութիւնը, հիւանդութիւնը կամ մահը, կամ ո և է ուրիշ քաղաքական ուրախատիթ կամ տխուր զէպք, վաճառականական գործոց առատութիւն կամ անչարժութիւն, հունձքերու առատութիւն կամ սով, արտածման

յաւելում կամ նուազում, հրապարակի վրայ դրամի առատութիւն կամ սղութիւն, մեծ փոխառութեան մը յաջողութիւնը կամ ձախողուածքը, լաւ կամ գէշ պետական պիւլտօժէ մը և չն. այդքան պատճառներ են սակարանի գիներու բարւոքման կամ անկման:

Գիներու այս յաճախակի փոփոխումէն առաջ եկած առօրեայ տարբերութիւնները շահագործելը, որուն մէջ ռամիկը պարզապէս խաղամոլութիւն մը կը տեսնէ, եւրոպացիք գիտութեան մը վերածած են, որուն շահադիտութիւն (speculation) անունը կուտան:

Այս կը կայանայ արժեթուղիները գնելու և ծախելու է՛ն յարմար բողէն գուշակելուն մէջ. բան մը որ, սակայն, լուրջ ուսումնասիրութեամբ կ'ըլլայ:

Շատ անգամ դրամատէրեր, իրենց առուծախին մէջ, կ'առաջնորդուին պարզ ներշնչումով մը կամ հետուէն հետու իրենց լսած մէկ լուրի մը վրայ յենլով. ասիկա, աւելորդ է ըսելը, գործելու բանաւոր ձեւը չէ: Այո՛, բախտի կոյր զուգադիպութեամբ մը, ներշնչումը՝ երբեմն ձխարչաւներու ժամանակ յաջող արդիւնք մը կուտայ, բայց սակարանի մէջ, նա վերջին ծայր ապիկար խորհրդատու մ'է: Գալով լուրերու մատուցած ծառայութեան, նախ՝ այդ լուրը մինչև մեզի հասնիլը կարող է իր դերը կատարած ըլլալ և անկից օգտուած ըլլան արդէն այնպիսի անձինք, որոնք տեղեակ են այլապէս կարեւոր իրադարձերու և ոչ թէ չորս հովերուն նետուած ըսի ըստներու: Երկրորդ՝ փորձուած և բնական բան մ'է որ եթէ մէկը գիպուածի մը կամ բարձր բարեկամութեան մը շնորհիւ գաղտնիք մը ձեռք անցուցած է որ սակացոյցը կարող

է յեղաշրջել, նա իր գիտցածը առջի եկողին չի պատմեր :  
 Նա կամ իրեն կը պահէ և կամ իր յաճախորդներուն կը  
 հաղորդէ :

Յանձնարարելի է ուրեմն լուրջ դրամատէրերու,  
 իրենց սակարանի գործողութիւնները կատարել իրենց  
 դրամատան հետ խորհրդակցելէ յետոյ և անոր միջոցաւ,  
 որովհետեւ սովորաբար վերջինս իր դիրքին և ազդեցու-  
 թեան շնորհիւ և ստէպ ամենազգուարին և հասարակ  
 անհատին անմատչելի ազբիւրներէ կը քաղէ տեղեկու-  
 թիւններ, որոնք մեծապէս կրնան օգտակար ըլլալ շա-  
 հադիսութեան :

Այս երկար փակագլիծը ստիպուած էինք բանալ, փա-  
 րատելու համար այն անարդար հեգնութիւնը, զոր հա-  
 սարակութիւնը կը տածէ դէպ ի օգտաշատ և պատուաւոր  
 հաստատութիւն մը, որպիսին է սակարանը : Անցնինք հի-  
 մա վերջինիս ներքին կազմակերպութեան :

Արժեթուղթերու առուծախին մէջ կարելի եղած  
 զեղծումները անհետացնելու և գործողութեանց վրայ հըս-  
 կել կարենալու համար, կառավարութիւնը անոնց մե-  
 նաշնորհը տուած է, Գաղղիոյ մէջ, արժեթուղթի գործա-  
 կալ ( agent de change ) կոչուող պաշտօնական և պա-  
 տասխանատու անձնաւորութեանց, որոնք Բարիզի մէջ  
 70 են թուով և որոնց միութիւնը կը կոչուի կայսն ( par-  
 quet ) կամ Բարիզի Արժեթուղթի Գործակալներու Ըն-  
 կերութիւն : Գործակալները՝ ելեւմտական նախարարին  
 առաջարկովը և Հանրապետութեան Նախագահին հրովար-  
 տակովը անուանուած պետական պատասխանատու պաշ-  
 տօնեաներ են : Անոնք ունին իրենց Ընկերակցութեան

Սենեակը (chambre syndicale), որ կազմուած է մէկ սինտիկոսէ (syndic) և վեց օգնականներէ որոնք կը ընտրուին տարին անգամ մը, սովորաբար Գեկտեմբերի մէջ տեղի ունեցած գործակալներու ընդհանուր ժողովին կողմէ: Ընկերակցութեան Սենեակի պաշտօնն է ի միջի այլոց, հակել որ իր անդամները չչեղին օրէնքով սահմանուած ներքին վարչական կանոններէ և գլխաւորաբար ամենօրեայ սակարանի մէջ եղած գործողութեանց գինները քննել և պաշտօնական սակացոյցը խմբագրել:

Գործակալները ամէն օր սակարան կը հաւաքուին ճիշդ կէս օրին և այնտեղ կը մնան մինչև ժամը երեքը — բաց ի Յուլիս և Օգոստոս ամիսներէն ուր սակարանը ժամը երկուքին կը գոցուի եթէ հաշուեյարդարութեան (liquidation) օր չէ —: Այս երկու կամ երեք ժամուան միջոցին է որ պաշտօնապէս կը գործէ սակարանը, որուն բացումն ու փակումը մէյմէկ զանգակի հարուածով կը ծանուցուի ներկաներուն: Գործակալներու յատկացուած ժողովատեղին եօթը մասնաճիւղի բաժնուած է ներկայիս հետեւեալ կերպով:

Ա. Կայանի կեղրոն (corbeille du parquet) որ այսպէս կը կոչուի կողովի մը ձեւը ունենալուն համար, ուր գործակալները անձամբ պարտին պարապիլ պայմանաժամով (à terme) առուծախերով: Այս մասնաճիւղին մէջ գործակալները բնաւ իրաւունք չունին գործերը իրենց պաշտօնէին յանձնելու, անոր մուտքը բացարձակապէս իրենց վերապահուած է օրէնքով:

Բ. Այս ճիւղը յատկացուած է զուտ կանխիկ գոր-

ծողութեանց ( opérations au comptant ), գործակատար պաշտօնէին անունն է commis au comptant :

Գ. Սոյն ճիւղին մէջ տեղի կ'ունենան միմիայն ֆրանսական հաստիքութեան պայմանաժամով գործողութիւնք. հոս՝ գործակատար պաշտօնէին անունն է *assesseur aux rentes* :

Դ. Չորս առ հարիւր Սպանիական Արտաքին պարտախաղիք :

Ե. Երեք առ հարիւր Բօրթուկալի Արտաքին Պարտք Ա. Բ. Գ. Դ. սեռի, չինգ առ հարիւր Սերպիական Պարտք 1902ի, Սելանիկ-Պոլիս Երկաթուղւոյ պարտախաղիք, Չմիւռնիս-Քասապա Երկաթուղւոյ պարտախաղիք չին և նոր, Ռիօ-Թինիթօյի բաժնեխաղիք :

Զ. Բարիզի Ստորերկեայ Երկաթուղւոյ բաժնեխաղիք, Բարիզի Ելեքտրական Թրամուէյի և Երկաթուղւոյ ընկ. բաժնեխաղիք, Ռուսական-Ֆրանսական Երկաթուղւոյ և Թրամուէյի Լ'նկերսիեան բաժնեխաղիք, Անտալուզի, Հիւսիսային Սպանիոյ և Սարակոսի Երկաթուղւոյ բաժնեխաղիք :

Է. 4 <sup>0</sup>/<sub>0</sub> Սերպ Հաստիքիք, Օսմանեան պետական թուղիք, Օսմանեան Միացեալ 4 <sup>0</sup>/<sub>0</sub>. Օսմ. Միսսիսոսի բաժնեխաղիք :

Գործակալն, ինչպէս նաև իր պաշտօնեան, պարտին իրենց գործողութիւնները կատարել բարձր և հասկնալի ձայնով և արձանագրել զանոնք Լ'նկերսիեան Սենեակի կողմէ՛ զրոյմուած տեսարակի մը մէջ, որ վէճի մը պարագային իբր փաստ կը ծառայէ :

Օրէնքը բացարձակապէս կ'արգիլէ գործակալներուն, բացի սակարանէն, դուրսի գործով մ'ալ զբաղիլ, վաճառատան մը կամ զբամատան մը պաշտօնեայ ըլլալ և կամ ուրիշ և է շահարեք կամ պատուակալ ձեռնարկներու մասնակցիլ. նա պարտի ինքզինքը նուիրել ամբողջովին սակարանին. այս անհրաժեշտ պայմանաւ է որ իրեն տրուած է մենաշնորհը. իր միակ վարձատրութիւնը պէտք է ըլլայ յաճախորդին տալիք այսքան առ հարիւր միջնորդչէքը, ուրիշ ոչինչ:

Գործակալներուն խստիւ արգիլուած է ուրիշներուն խորհուրդներ տալը. անոնք իբրև չէզոք մեքենաներ՝ պարտին կատարել միմիայն իրենց յանձնուած առուծախի հրամանները:

Օրէնքը գործակալներու համար պարզ անանկութիւն (faillite) չ'ընդունիր, իրենց յանձնարարութեանց զանցառութեան մը պարագային, զանոնք կը նկատէ իբրև խարդախ սնանկներ (banqueroutier):

Հակառակ կէս դարէ ի վեր սակարանի գործողութեանց ստացած հսկայ ծաւալին, Արժեթուղթի Գործակալներու (agent de change) թիւը մնացած է անփոփոխ (70): Ասոր պատճառը սա է որ նախ առհասարակ մենաշնորհի մը տէրերը տրամադիր չեն ըլլար իրենց իրաւունքը ուրիշներու ալ փոխանցելու և հաւանական է որ Գործակալներու Ընկերութիւնը (parquet) տարիներու ընթացքին մէջ խոչնդոտներ յարուցած ըլլայ նոր անդամներու ընդունելութեան դէմ: Բայց աւելի բանական կը թուի սա պատճառը. — Արժեթուղթի Գործակալ մը ըլլալու համար շատ մը լաւ յատկութիւններու հետ անհրա-

ժեշտ կը պահանջուի, մէկ երկու միլիոն ֆր. կարողութիւն մը, պայման մը որ բնականաբար շատ քիչերու մատչելի է:

Այս պարագաներուն հետեւանքով ներկայ գործակալներու զբաղումներն ալ այնքան խճողուած են որ իրենց նիւթականապէս անկարելի եղած է բոլոր գործերուն հասնիլ, որով շատ զբամատէրեր ստիպուած են իրենք վնասուել, առանց միջնորդի, իրենց ընելիք գործողութեանց հակամասը ( contre-partie ):

Եւ որովհետեւ օրէնքի ոչ մէկ տրամադրութիւնը կ'արգիլէ երկու հոգւոյ ուղղակի համաձայնութեամբ ( contrat direct ) գործ մը ընել, ուստի, իրերու հարկեցուցիչ բերմամբ, կայանի լուռ թոյլտուութեամբ, և կէս պաշտօնական գոյութեամբ մը ծնունդ առած է հաստատութիւն մը, որ նոյնպէս կը պարսպի արժեթղթերու առուծախով նրքանցի ( coulisse ) համեստ յորջորջման տակ:

Նրբանցքը, որուն Ազատ Հրապարակ կամ Պանքայի Հրապարակ ալ կ'ըսեն, ( marché libre, marché en banque ) երեք ինքնուրոյն և իրարմէ անկախ Լճկերակցութեանց զուգընթաց գործունէութեան ասպարէզն է:

Այս Լճկերակցութիւնները հետեւեալներն են.

1<sup>0</sup> — Հասաթուղթոց Սեղանաւորներու Լճկերակցութիւն ( Syndicat des banquiers en rente ) որ կը գործէ միմիայն Գաղղ. հասաթուղթերով: Անդամները սակարան կուզան ժամը 11 <sup>3</sup>/<sub>4</sub> ին և հոն կը մնան մինչև ժամը 4: Ծիշդ կէսօրին կ'որոշեն հասաթուղթերու օրուան առաջին գինը, անկախ՝ կայանի ( parquet ) տուած գիներէն, իսկ ժամն 3 <sup>1</sup>/<sub>2</sub> ին երեկոյեան թերթերուն կը հաղորդեն վերջին գինը:

Այս Լճակերակցութիւնը նշանաւոր է անով որ հասթղթոց (rente) շահադիտութիւնը հոս կեդրոնացած ըլլալով, կարելոր դեր մը\* կատարած է և կը կատարէ պետական թղթոց գիներուն վրայ:

2<sup>0</sup> — Պայմանաժամով Մախուած Թղթերու Անդանաւորաց Լճակերակցութիւն (Syndicat des banquiers en valeurs à terme), որ կը զբաղի մի միայն կայանի մէջ մուտք չգտած արժեթղթերով, կէս օրէն մինչև ժամը երեք, երբեմն ալ մինչև չորս, Լոնտոնի հետ կատարուած շահադիտական գործողութիւններու պատճառաւ:

Ինչպէս անունն ալ կը վկայէ, այս հրապարակի վրայ գնուած կամ ծախուած արժեթղթերը որոշ պայմանաժամէ մը ետքը կը վճարուին կամ կը յանձնուին:

3<sup>0</sup> — Կանխավճար Արժեթղթերու Անդանաւորաց Լճակերակցութիւն (Syndicat des banquiers en valeurs au comptant):

Այս խումբը, որուն հաւաքատեղին է նախորդին աջակողմը, կը գործէ ժամը 12 1/4 էն մինչև երեք, նիւթունենալով պաշտօնական սակացոյցի մէջ չընդունուած արժեթուղթերը. իրեն բնաբանն է այսօր կանխիկ, վաղը ապառիկ:

Այս երեք խմբակցութեանց ալ անդամներուն թիւը սահմանափակ չէ. անոնք կրնան աւելնալ կամ պակսիլ գործերու քանակին համեմատ:

Շատ անգամ նրբանցորդը (coulissier) ինքը չի կատարեր գործերը, այլ, իր պատասխանատուութեան ներքև, կը յանձնէ իր պաշտօնէին՝ տեսակալին, որուն

(tenez de carnet) անունը կուտան այն տեսրին համար, ուր կ'արձանագրէ նա իր ծախած կամ գնած թուղթերը և որ վէճի մը պարագային իրբև փաստ կը ծառայէ:

Տեսանք սակարանի ներքին կազմութիւնը և հոն գործող գերակատարները. հիմա ջանանք հակիրճ տեսութիւն մը ընել առուծախի տեսակներուն և ձևերուն վրայ:

Արժեթուղթերը կարելի է երկու կերպ ծախել՝ կանխիկ և ապառիկ կանխիկ առուծախը (marché au comptant) համաձայնութիւն մ'է, որուն հիման վրայ վաճառողը իսկոյն եւ եք կը յանձնէ գնողին իր ծախած արժեթուղթերը, անկից գանձելով անոնց փոխարժէքը:

Իսկոյն եւ եք բացատրութիւնը սակայն բառական իմաստով առնելու չէ, որովհետև ինչպէս տեսանք, սակարանը հաւաքոյթն է գործի մարդոց որոնք կը ժողովուին միեւնոյն տեղը յարմարագոյն կերպով խորհրդակցելու համար իրենց առևտուրին կամ ճարտարարուեստին վերաբերեալ գործերու վրայ, ուրիշ խօսքով ամէն տեսակ առուծախի համաձայնութիւնները կնքելու համար: Բնականաբար ծախողը իրեն հետ իւր ծախած ապրանքը կամ արժեթուղթերը սակարան չի բերեր ինչպէս նաև գնողը իւր գրամները հետը չի կրեր: Կանխիկ ծախուած թուղթերու յանձնման օրը որոշուած է սակարաններու ներքին կանոնագրով:

Բոլոր Եւրոպական սակարաններուն մէջ այդ յանձնման օրը գործողութեան երկրորդ իսկ երբեմն ալ 3դ. կամ 4դ. օրն է: Օրինակի համար Պերլինի մէջ կարելի է համաձայնիլ (per morgen) այսինքն երկրորդ օրը

յանձնելի կամ ( per einige Tage ) երեք չորս օր վերջը  
յանձնելի :

Բարիդի մէջ կարելի է մինչև 7 օր ուշացնել կան-  
խիկ ծախուած թղթերու յանձնումը : Բեղրոկրատի մէջ  
ամենաուշը պէտք է յանձնել 3դ. օրը առանց հաշուելու  
գործողութեան օրը ինչպէս նաև տօնի օրերը : Երբևմն ,  
երկուստեք համաձայնութեամբ , կարելի է մինչև 14 օր  
երկարել , հետևոր քաղաքներէ կամ արտասահմանէ ծա-  
խուած թուղթերու ժամանումը զիւրացնելու համար :

Ապառիկ առուծախը ( marché à terme ) գոր-  
ծողութիւն մ'է , որուն միջոցաւ համաձայնութիւն մը  
կը գոյանայ ծախողին և գնողին միջև թուղթերու արժէ-  
քին և յանձնելի օրուան շուրջը : Ապառիկ առուծախը  
երկու ձև ունի , այն է հաստատուն և քնկանելի :

Հաստատուն գործողութիւնը ( marché ferme ) այն  
համաձայնութիւնն է , որով թէ՛ ծախողը և թէ՛ գնողը  
համահաւասար պարտականութիւն կը ստանձնեն , մին՝ ո-  
րոշ պայմանաժամի մը որոշ գնով մը արժեթուղթերը  
յանձնելու , միւսն ալ՝ փոխարժէքը վճարելու :

Բեկանելի գործողութիւնը ( marché à prime ) , ո-  
րուն ազատ առուծախ ալ կ'ըսեն , կը կապէ միայն վա-  
ճառողը և ազատ կ'արձակէ գնողը , այնպէս որ վերջինս  
տուեալ պայմանաժամին ուղէ կ'ընդունի արժեթուղթերը ,  
ուղէ կը մերժէ : Այս իրաւունքին համար վերջինս երկուս-  
տեք որոշուած գումար մը , տեսակ մը փոյ կը վճարէ ,  
որ առաջնոյն սեպհականութիւնը կը դառնայ , եթէ վճա-  
րօրին գնողը հրաժարի արժեթուղթերն ընդունելէ : Այս

վերջին ձեւին շնորհիւն է որ Եւրոպայի մէջ շահագիտութիւնը գրեթէ ընդհանուրին մատչելի եղած է :

Ապառիկ գործողութեան մը կնքման ատեն վաճառողը կրնայ չուեննալ իւր ծախած թուղթերը և գնողն ալ չուեննալ անոնց համապատասխան գրամը :

Այս բանը պէտք չէ զարմանք պատճառէ, որովհետեւ իր տրամադրութեան տակ գտնուած ժամանակամիջոցին մէջ ծախողը ատեն ունի գնելու իւր վաճառած թուղթերը, ինչպէս նաև գնորդն ալ իր գնած թուղթերուն գրամը պատրաստելու :

Արդէն այս գործողութեանց հիմը կը կազմէ այն հաշիւը որ իւրաքանչիւր ոք կ'ընէ իր գնած կամ ծախած թղթոց գիներու փոփոխմանց վրայ : Ծախողը կը յուսայ որ մինչև իր յանձնելիք օրը անոնք կ'իյնան և ինքը աւելի աժան ձեռք կը բերէ . այսինքն նա շահագիտութիւն կ'ընէ անկման վրայ ( spéculer à la baisse ) : Իսկ գնորդն ալ կ'ակնկալէ որ մինչև իր յանձն առնելիք օրը այդ թղթոց գինը կը բարձրանայ և ինքը աժան գնով սուղ ապրանք մը առած կ'ըլլայ . սա ալ ուրեմն կը գործէ գէպ ի բարձրացում ( spéculer à la hausse ) : Եթէ ծախողին յոյսերը իրականանան և թուղթերու գիները իյնան, այն ատեն նա կը գնէ զանոնք աւելի աժան գինով քան ինչ որ ինքը ծախեց և տարբերութիւնը կը ներկայացնէ իր շահը իսկ գնորդին համար ալ կորուստ մը քանի որ սա ստիպուած է ընդունիլ ապրանք մը աւելի սուղ քան ինչ որ նոյն օրը կարող էր գնել :

Եթէ ընդհակառակը գնորդին յոյսերը իրականանան այսինքն թղթոց գիները բարձրանան, այն ատեն, նա կը

ստանայ աժան գնով ապրանք մը, որուն գինը նոյն օրը աւելի սուղ է և տարբերութիւնը իրեն համար կը ներկայացնէ իւր շահը մինչդեռ ծախողին ալ կորուստը, քանի որ սա ստիպուած է թուղթերը կանխորոշ գնով յանձնելու համար նոյն օրուան սուղ գիներովը հայթայթել :

Ապառիկ գործողութիւնները երկու գլխաւոր դասակարգի կարելի է բաժնել, ըսինք .

1<sup>0</sup> Մովորական ապառիկ գործեր կամ հաստատուն առուծախ ( *marché ferme* ) :

2<sup>0</sup> Բեկանելի ապառիկ գործեր կամ պարզեւաւոր առուծախ ( *marché à prime* ) : մասնանշեցինք այս երկու դասակարգերու մէջը եզած տարբերութիւնը, այն է մինչդեռ հաստատուն առուծախի մէջ երկու կողմն ալ ստիպեալ են որոշ պայմանաժամի մը, մին՝ որոշ գնով մը արժեթուղթերը յանձնելու, միւսն ալ փոխարժէքը վճարելու, պարզեւաւոր առուծախի մէջ, ընդհակառակը, մէկ կողմը միայն իրաւունք ունի, որոշ գումար մը վրձարելով ( պարզեւ - *prime* ) հրաժարիլ գործողութեան կատարումէն ամբողջովին կամ մասամբ :

Տարակոյս չկայ որ այս երկու ձևերէն երկրորդն է որ աւելի քիչ վտանգաւոր է քանի որ մշտաւր սահմանափակուած է պարզելի քանակով :

Ըսինք որ պարզեւաւոր կամ բեկանելի առուծախը իրաւունք կուտայ պարզելը վճարող կողմին բեկանել իւր յանձնառումը և չառնել կամ չտալ որոշեալ պայմանաժամին գնուած կամ ծախուած թուղթերը : Արդ,

որովհետև պարզեւը վճարողին կորուստը սահմանափակ է մինչդեռ զայն ընդունող կողմին հաւանական կորուստը կրնայ անսահման ըլլալ, սովորութիւնը կը պահանջէ որ պարզեւէն անկախ, գիներուն վրայ ալ փոքր տարբերութիւն մը վճարուի պարզեւ ստացող կողմին: Այս տարբերութիւնը կը կոչուի *écart des primes* և այնքան աւելի զգալի է որքան աւելի շատ ըլլայ թղթերու բարձրացման հաւանականութիւնը:

Տարակոյս չկայ, գնորդը որ պարզեւ մը կուտայ, կը յուսայ որ գիները այնքան պիտի բարձրանան որ *écart des primes*ը և պարզեւը ծածկելէ վերջը իրեն ալ շահ մը պիտի ձգեն. ապա թէ ոչ իրեն համար աւելի ձեռնտուկ ըլլար թուղթերը սովորական ապագիկ առուծախով գնել:

Առնենք օրինակ մը.

Ենթադրենք որ զրամատէր մը Ա. ծախէ Բ.ի պարտաթուղթեր 99  $\frac{0}{10}$  էն և պարզեւ տուող կողմն ալ ինքը ըլլայ 1  $\frac{0}{10}$  շախով և համարելով որ պայմանաժամին թուղթերու գինը 96ի ինկած ըլլայ, Բ.նչ պիտի ընէ Ա.

Նա իսկոյն և եթ 98  $\frac{0}{10}$ էն պիտի գնէ կանխիկ և պիտի յանձնէ Բ.ին 99  $\frac{0}{10}$  որով պիտի շահի հարիւրին 1  $\frac{1}{2}$  որուն 1  $\frac{0}{10}$  իբրև պարզեւ զեղչելով զուտ շահ պիտի մնայ իրեն  $\frac{1}{2}$   $\frac{0}{10}$ .

Եթէ ընդհակառակը պարզեւը (prime) Բ. վճարած ըլլայ, այն ատեն մեր օրինակին մէջ, վերջինին աւելի ձեռնտու է հրաժարիլ, որովհետև այլապէս պիտի ստանայ 99  $\frac{1}{2}$ ի թուղթ մը զոր նոյն օրը 1  $\frac{1}{2}$   $\frac{0}{10}$  աւելի աժան կարող է գանել հրապարակի վրայ:

Եզրակացնելով ուրեմն ըսենք.

Եթէ պարզեւը տուողը գնորդն է, իւր շահը այնքան աւելի շատ է որքան աւելի թղթին արժէքն իւր գնած գինէն բարձրանայ, որով և թուղթերը ժամանակին քաշելու պէտքն ալ ակնբեր է իրեն համար:

Ընդհակառակը, եթէ պարզեւ տուողը՝ ծախողն է, իւր շահը այնքան աւելի է որքան գիները իյնան. ուստի և իր թուղթերը յանձնելէ հրաժարելու պէտքը բացայայտ է:

Պէտք է գիտնալ սակայն, որ սովորաբար պարզեւ տալու իրաւունքը վերապահուած է գնողին:

Կայ տեսակ մ'ալ պարզեւաւոր գործողութիւն, որուն սրեչլաժ (stellage) անունը կուտան և որ կը կատարուի հետեւեալ կերպով:

Երկու կողմերէն մին որոշ պարզեւ մը վճարելով, իրեն կը վերապահէ իրաւունքը մինչև որոշ պամանաժամ մը անխտիր ճաշ կամ առնել կանխորոշ գնով մը տուեալ արժեթուղթերը. այսինքն ներկայանալ իրրև վաճառող այսինչ գնով կամ իրրև գնող այսինչ գնով:

#### Օրինակ՝

Յունուար 1 ին Օսմ. Արևել. Երկաթ. Տոմսակները կ'արժէին 250 Ֆր.: Տիար Ա. համաձայնեցաւ Տիար Բ. ի հետ անոր վճարելի, տոմսի գլուխ 1 Ֆրանքի փոխարէն 15 օրուան համար ունենալ հետեւեալ իրաւունքը. Յունուար 15ին կամ յանձնել Բ. ին 100 տոմսակ 248 Ֆրանքէն

և կամ ընդունիլ Բ. էն 100 տոմսակ 252 Ֆրանքէն:

Եթէ այդ թուականին տոմսակներու գինը 248էն

վար է, օր. 246է, տարակոյս չկայ Ա. ը պիտի յանձնէ տոմսերը պայմանաժամին զանոնք հրապարակէն կանխիկ 246ի գնելով որով տոմսի գլուխ վճարելի 1 ֆրանք պարգեւը զեղչելով պիտի մնայ իբրև շահ 100 ֆրանք:

Եթէ ընդհակառակը Յունուար 15ին գիները բարձրացած ըլլան օր. 256ի. տարակոյս չկայ որ Ա. ը պիտի նախընտրէ իբրև գնորդ ներկայանալ և Բ. էն ստանալ թուղթերը 252 էն, ըստ պայմանագրի, զոր՝ օրուան գնով (256) ծախելով զուտ շահ պիտի ունենայ, պարգեւը զեղչելէ ետքը 300 ֆրանք:

Երկու պարագային ալ Բ. ստիպեալ է իր ընդունած պարգեւին հետեւանօք, ըստ պայմանագրութեան, Ա. ի պահանջածը կատարել այսինքն ընդունիլ իրմէ կամ տալ անոր 100 տոմսակ: Իր դրութիւնն ալ պիտի ըլլայ հետեւեալը.

1<sup>0</sup>.— Տոմսակներու գինը ինկած է 246ի. և Ա. կը յանձնէ զանոնք 248էն: Տարբերութիւն՝ 2 ֆրանք որմէ զեղչելով իր արդէն դանձած պարգեւը (1 ֆրանք) կը մընայ իրեն զուտ մնաս 100 ֆրանք:

2<sup>0</sup>.— Տոմսակներու գինը բարձրացած է 256ի և Ա. կը պահանջէ զանոնք 252էն: Տարբերութիւնն է 4 ֆրանք ուսկից զեղչելով պարգեւը (1 ֆր.) կ'ունենանք 300 ֆր. զուտ մնաս:

Եթէ պարգև վճարողը բաց ի վերոյիշեալ պարագաներէն այսինքն թէ վաճառող և թէ գնող ըլլալու իրաւունքէն իրեն վերապահէ նաև բոլորովին հրաժարելու իրաւունքը, այդ գործողութեան Գերմանացիք Եկրայր Պարգեւաւոր Առուծախ (Zweischneidiges Praemien-

geschaeft) կ'ըսեն պարզ սքեղածէ զանազանելու համար:

Սքեղածի գործերը շատ կարելուոր հանգամանք մ'ունին թէպէտ և աւելի շահադէտներու կողմէ կը կիրարկուին քան թէ դրամատէրերու. օրինակ՝

Դրամատէր մը որ իւր թղթապանակին մէջ 100 հատ Օսմ. Ապահով. Լնկ. բաժնեգին ունի զոր ժամանակին 5ական ոսկիի առած է. կ'ուզէ զանոնք ծախել բայց ոչ 7էն վար, մինչդեռ ներկայիս անոնց գինն է 6 օսմ. ոսկի: Կամ կուզէ անկից 100 հատ դեռ գնել իր նախկին գինովը (5ով): Դրամատէրը իւր այս մտադրութեամբը սքեղած մէ որ կ'ուզէ ընել, որովհետեւ երկու պարագային ալ իւր դիրքը նպաստաւոր է: Եթէ 5ով գնէ, իւր դրամը արդիւնաւոր կերպով շահագործած կ'ըլլայ, իսկ եթէ 7ով ծախէ, իւր թղթապանակի թուղթերը շահաւոր կերպով վաճառած կ'ըլլայ:

Ինչ մը տարբեր կերպով մը ներկայանայ երկասյր պարգեւաւոր առուծախը, որուն մէջ ըստ ինքեան դերակատարները ոչ թէ երկու այլ երեք են: Իսկապէս՝ Ա. Բ. Էն, պարգև մը վճարելով, բաժնեթուղթեր կը գնէ, իր գնումէն ի պահանջել հարկին հրաժարելու իրաւունքով, և միւսնոյն ժամանակ այն արժեթուղթերը կը ծախէ երրորդի մը Գ. ի նոյնպէս պարգև մը վճարելով և յանձնումէ հրաժարելու իրաւունքը իրեն վերապահելով՝ հետեւաբար Ա. առաջին պարագային իրրե գնող կը ներկայանայ իսկ երկրորդին իրրե ծախող:

Հոս՝ ինչպէս պարզ սքեղածի մը պարագային, եթէ թուղթերը բարձրանան, Ա.՝ Բ. Էն մէկ կողմէն կը պահանջէ անոնց յանձնումը և միւս կողմէ կը հրաժարի

Գ.ին հետ կնքած գործէն: Իսկ եթէ բաժնեթուղթերը իյնան, այն ատեն Ա. կը հրաժարի Բ. էն թուղթերը քաշելէ, բայց Գ. ին կը յանձնէ ծախսած թուղթերը: Եւ վերջապէս եթէ գիները անփոփոխ մնացած են, Ա. երկու կողմէն ալ կը հրաժարի:

Հետեւաբար երկսայր գործողութեան ինչպէս նաև սրեղլածի մէջ Ա. կը շահի միմիայն գիներու զգալի փոփոխումները, Բ. կը շահի ի վար, Բ. կը շահի ի վեր. բաւ է որ այդ տարբերութիւնները իւր տալիք պարգեւէն աւելի Բ. ըլլան:

Բ.ի և Գ.ի շահերն ալ բոլորովին հակառակը կը պահանջեն այսինքն գիներու կայունութիւնը, գրեթէ անշարժութիւնը:

Ապառիկ գործողութիւնք կը կարգադրուին այսինքն կ'իրագործուին պայմանաժամին. գնորդը թուղթերը կ'առնէ և դրամը կուտայ կամ պարգեւը կը ստանայ կամ կը վճարէ. ծախողն ալ, իր կարգին թուղթերը կը յանձնէ կամ պարգեւը կը վճարէ կամ կը գանձէ:

Այս կարգադրութիւնը կը կոչուի հաշուեյարդարութիւն (liquidation) և տեղի կ'առնենայ սովորաբար ամսոյն վերջին օրը (per ultimo) կամ ամսոյն կիսուն հանգիստ օրը (per medio): Այսպէս Գերմ. սակարաններուն մէջ բոլոր ապառիկ գործերը ամսավերջին կը կարգադրուին. Ֆրանս. և անգլիականներուն մէջ մաս մը արժեթղթոց համար սովորութիւն է per ultimo ուրիշ մասի մը համար ալ per medio գործել:

Ինչպէս տեսանք, սակարանի ապառիկ գործողու-

թեանց կարգադրութիւնը տեղի կ'ունենայ հաշուեյարդարութեան օրը . երբեմն շահադէսը ( spéculateur ) ինչ ինչ պատճառներով կ'ուզէ յետաձգել այդ օրը որովհետեւ բան մը որ կը սպասէր և չ'իրականացաւ, կը յուսայ որ հետեւեալ հաշուեյարդարութեան օրը տեղի կ'ունենայ : Օրինակ՝ նա կը սպասէր թղթերու անկում մը և անոնք չ'ինկան բայց անայլայլ իր կարծեացը մէջ, նա կոտի դաշտէն չ'ուզէր հեռանալ և գործողութիւնը կ'ուզէ շարունակել մինչև յաջորդ հաշուեյարդարութեան օրը , այս ժամանակամիջոցին ակնկալելով իւր սպասած անկումը :

Նմանապէս շատ ստէպ կը պատահի որ , գնորդը որ գիններու բարձրացում մը կ'ակնկալէր , կը պնդէ իւր կարծեացը մէջ հակառակ որ թուղթերը ինկած են և ինքն ալ չ'ուզէր գործը կարգադրել մինչև յետագայ հաշուեյարդարութիւնը :

Տարակոյս չկայ որ , թէ ծախողը և թէ գնողը կարող էին իրենց նախկին գործողութիւնները մաքրել և նորերը կնքել , բայց ասոր համար հարկաւոր է դրամ , բան մը որ շահագէտներուն քով միշտ չգտնուիր : Ուրեմն ինչպէս պէտք է գործեն : Ահա թէ ինչպէս . նախ ըսենք որ այդ նախնական գործին շարունակութիւնը , որ ըստ ինքեան պարզ փոխառութիւն մ'է , կը կոչուի Րէթօր ( report ) գնորդին կողմէ իսկ Տէթօր ( déport ) վաճառողին կողմէ :

Եթէ գնորդն է որ կ'ուզէ յետաձգել կարգադրութիւնը՝ ( բըրօր ընել ) , այն ատեն նա երրորդի մը Գ . ի կը ծախէ կանխիկ այն թուղթերը որ ինքը ծախողէն պէտք էր ստանալ և անմիջապէս Գ . էն ապառիկ կա կը գնէ նոյն թուղթերը : Այսպէսով նախ առաջի գործողութիւնը կարգադրած կ'ըլլայ քանի որ իր տեղը Գ . ծախողէն կը քաշէ

Թուղթերը, երկրորդ իւր Թուղթերէն զրկուած չ'ըլլար, քանի որ հետեւեալ հաշուեյարդարութեան կը ստանայ զանոնք Գ.էն: Օրինակ՝ Ա. Յունուար 1ին պարտի ընդունիլ Բ.էն 100 բաժնեթուղթ Իւնիոնի Այլարի Ընկերութեան հաար 5 ոսկիէն. բայց այս իրեն ձեռնտու չի նկատելով (ենթադրենք որ Յունուար 1ին գինը անփոփոխ, 5 մնացած ըլլայ) զանոնք Գ.ին կը ծախէ կանխիկ 5էն, պայմանաւ որ նա փետրուար 1ին վերադարձնէ իրեն 5.10էն:

Այսպէսով Գ. կ'ընդունի Բ.էն անմիջապէս Ա. և Բ.ի միջև գործողութեան առարկայ եղող Թուղթերը (որով առաջին մասը կարգադրուած կ'ըլլայ) իսկ փետրուար 1ին Ա. ևս կը ստանայ զանոնք Գ.էն 5.10էն (այսպէսով երկրորդ մասն ալ կարգադրուած կ'ըլլայ):

Ուրիշ խօսքով Գ. 10 դրուշ վարձք է որ կաննէ Ա.ին ըրած փոխատուութեան և թղթոց պահպանման համար այս վարձքը կը կոչուի *րըքօրի գին* (prix du report):

Րըքօրի գինը միշտ միււնոյնը չ'ըլլար, նա կը փոխուի արժեթղթի տեսակին և յատկութեան համաձայն: Չափազանց անկայուն Թուղթերը (այսինքն անոնք որոնց գիները յաճախակի ելուէջներու ենթակայ են) ինչպէս նաև անոնք որոնց համար զնոգները հաղուագիւտ են, շատ աւելի սուղ րըքօրի գիներ կ'ունենան քան թէ, քիչ թէ շատ կայուն վիճակ ունեցող արժեթուղթերը:

Տքօրը, ինչպէս ըսինք, միււնոյն բանն է ինչ որ րըքօրը, սա տարբերութեամբ որ նա՝ վաճառողի կողմէ կը գործադրուի, այսինքն այն անձին կողմէ որ գիներու անկման վրայ շահադիտութիւն կ'ընէ (speculer à la baisse):

Օրինակ՝

Ա. Յունուար 1ին պարտի յանձնել Բ.ի 100 բաժ-

նեթուղթ Իւնիօն 5 ոսկիէն, բայց այդ թուականին նեթադրենք զինն է 5.10 այնպէս որ եթէ նոյն օրը կարգադրէ, թղթի գլուխ 10 դրուչ պիտի կորսնցնէ. կարծելով որ մօտաւոր սպագայի մը անոնք կ'իյնան՝ կը զիմէ երրորդ անձի մը Գ.ի որուն հետ համաձայնելով Բ.ին յանձնել կուտայ 100 բաժնեթուղթ 5էն (կարգադրութիւն առաջին մասին) պայմանով որ Ա.՝ Փետրուար 1ին վերագարձնէ զանոնք Գ.ին 4.80էն:

Ի՞նչ է հոս Ա. և Գ.ի գիրքը:

Եթէ թուղթերը Փետրուար 1ին իսկապէս իյնան օրինակ՝ 4.50ի. Ա. կը գնէ արժեթուղթերը այս զինով և կուտայ Գ.ին 4.80էն և կը շահի թուղթի գլուխ 30 դրչ. մինչդեռ առաջին հաշուեյարգարութեան եթէ կարգադրէր կը կորսնցնէր 10 դրուչ:

Եթէ ընդհակառակը Ա.ին յոյսերը ի գերեւ ելլան և գիները բարձրանան օրինակ 5.50ի՝ այն ատեն Ա. կը պարտաւորուի այս գնով գնել և տալով Գ.ին, ըստ պայմանագրի 4.80էն կը կորսնցնէ թուղթի գլուխ 70 դրուչ, փոխանակ 10 դրուչի զոր պիտի կորսնցնէր եթէ ամիս մը առաջ հաշիւը մաքրէր:

Գալով Գ.ին՝ ասոր շահերն ալ բոլորովին հակառակը կը պահանջեն. Յունուար 1ին Ա.ի խնդրանօք նատուա Բ.ին արժեթուղթեր 5 ոսկիէն զանոնք նոյն օրը 5.10էն գնելով, որով նա արդէն առջի օրը թուղթ գլուխ 10 դրուչ կորուստ մը յանձն առաւ: Եթէ Փետրուար 1ին գիները իյնան 4.50ի՝ այն ատեն Ա. իրեն պիտի վերագարձնէ թուղթերը 4.90էն որով նա կ'աւնենայ նոր կորուստ մը թուղթ գլուխ 40 դրուչ:

Եթէ սակայն գիները բարձրանան Փետրուար 1ին

5.50ի՝ այն ատեն Գ. ստանալով թուղթերը 4.80էն, թուղթ գլուխ 70 դրուչ շահ մը կ'ունենայ որմէ զեղչելով իւր նախնական վնասը 10 դրչ. իրեն կը մնայ զուտ շահ 60 դրուչ:

Բըրօրը և Տեքօրը, տարակոյս չկայ, մեծ օգտակարութիւն ունին սակարանին համար, մանաւանդ փոքր շահադէտներու, որոնց միջոց կուտայ զիմադրելու բարդի առաջին անհաճոյ հարուածին, բայց և այնպէս շատ անգամ պատճառ կ'ըլլայ մեծ ֆրախներու միեւնոյն գործին շուրջը անհամար բըրօր և տեքօր ընողներ համախմբելով:

Սակարանին վրայ մեր հակիրճ տեսութիւնը կը վերջացնենք նետուեալ մի քանի ֆրանսերէն դարձուածքներու բացատրութեամբ, որոնք դրամատան մէջ բաւական սաէպ կը լսուին:

Réponse des primes կ'ըսուի այն օրը (հաշուեյարդարութեան նախօրեակը), ուր գնողը պէտք է պահասիւսն մը տայ ծախողին թէ նետուեալ օրը թուղթը պիտի ընդունի՞ թէ ոչ: Առաջին պարագային, այսինքն եթէ ընդունի, կ'ըսեն lever une prime, իսկ եթէ հրաժարի՝ abandonner une prime: Հետուեալ օրը, ուր գործողութիւնները կը կարգադրուին և իրենց վախճանին կը հասնին, կը կոչուի հաշուեյարդարութեան օր (liquidation):

Դրամատան զանազան գործողութիւնները թուած միջոցնիս տեսանք ի միջի այլոց Սակարանի վերաբերեալ գործերը, և հարեւանցի կերպով ալ ծանօթացանք Պօրտայի կաղձակերպութեան հետ: Յայտնի է որ վերջինս պիտի չ'ունենար իր հսկայ նշանակութիւնը գործերու աշխարհի մէջ, առանց դրամատան օժանդակութեան, և ինչպէս որ մեքենայ մը առանց շողիի կամ ուրիշ շարժիչ ուժի մը չի բանիր, նոյնպէս ալ Սակարանը կայուն երկաթի նման պիտի ժանգոտէր, եթէ պանքաները հոն աւօրեայ ամուսր չը հասցնէին, այսինքն գնելու կամ ծախելու հրամաններ չի տեղացնէին:

ՍԱԿԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՆՅ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

Գրամատունը, Պօրսայի գնումներն ու վաճառումները կատարելու համար, այդ գործերու յատուկ սպասարկութիւն մ'ունի իր յաճախորդներուն տրամադրութեանը տակ: Այս ճիւղը, իր վերջին ծայր կարեւորութեան հետեւանօք, փորձառու և աչքարաց պաշտօնեաներու պէտք ունի, որովհետեւ հոս ամենաչնչին սխալ մը կարող է հաստատութիւնն անակնկալ վնասներու ենթարկել: Առնենք օրինակ մը: Յաճախորդ մը 50 հատ Թրամվայի Լ'նկբաժնեթուղթ գնելու հրաման կուտայ հասը 30 ոսկիէն, նոյն օրուան գինն ալ 29 ոսկի է: Ինչպէս կը տեսնենք, գործողութիւնը կարելի է, բայց պաշտօնեան սխալմամբ փոխանակ գնելու, « ծախել » կ'արձանագրէ իր տոմարին մէջ և այնպէս ալ կը փոխանցէ արժեթղթի գործակալին, վերջինս ալ նոյն օր պատահած բարձրացման մը հետեւանօք, կը յաջողի ծախել զանոնք հասը 33 ոսկիէն: Գիները շարունակելով բարձրանալ, նոյն իրիկունը կը հասնին 35 ոսկիի: Շատ հաւանական է որ սխալը մէջտեղ ելած բողբոջին սակարանը արդէն գոցուած ըլլայ, բայց մենք ենթադրենք հակառակը, լաւագոյն պարագան. ի՞նչ կը մնայ Պանքային ընել իր վնասը միևնաձայն վերածելու:

համար: Նախ՝ ետ գնել 50 հատ բաժնեթուղթ, զոր պէտք էր ծախել. ենթադրելով որ յաջողի ընել զայն հատը 35 ոսկիէն, սա կ'ընէ արդէն հարիւր ոսկւոյ վնաս մը: Եւտոյ՝ պարտի գնել 50 հատ իր յաճախորդին տալու համար (հատը 30 ոսկիէն տալու պայմանաւ) անոնք ալ ենթադրենք որ յաջողի գնել 35էն՝ 250 ոսկիի վնաս մ'ալ սա կ'ընէ. որով կ'ուշենայ ընդհանուր վնաս 350 ոսկի:

Մեր ընտրած օրինակը, հետու է չափազանցութիւն մ'ըլլալէ, մենք մեր ասպարէզին մէջ ասկից չատ աւելի զարմանալիները տեսած ենք: Ուստի ո ե է թիւրխմացութեան տեղի չտալու համար հարկաւոր է հետեւեալ կէտերը նկատի առնել:

1<sup>0</sup> — Բերանացի ե հետեւաբար հեռախօսով ո ե է հրաման չ'ընդունիլ, այլ միշտ հրամանները գրաւոր կերպով պահանջել:

2<sup>0</sup> — Գրաւոր հրամաններու մէջ կրճատումներ չ'ընդունիլ, որպիսիք են 10 թրամվայ կամ 50 Պոստմի ելն. այլ պահանջել որ թուանշաններուն քով տառերով ալ գրուած ըլլայ ե արժեթղթին անուանակոչութիւնը կատարեալ ըլլայ, որովհետեւ միեւնոյն ընկերութիւնը կարող է ուշենալ զանազան տեսակ թուղթեր՝ բաժնեթուղթեր, գլխավճարեալ բաժնեթուղթեր (jouissance), առանձնաշնորհեալ բաժնեթուղթեր, պարտաթուղթեր, եւլն.:

3<sup>0</sup> — Գնելիք կամ ծախելիք թուղթերու վերջնական գիւնը: Շատ անգամ յաճախորդն իր դրամատան կը ձգէ ուզած գնովը գնելու կամ ծախելու իրաւատութիւնը, այն ատեն փոխանակ գին մը որոշելու « au mieux » բա-

որ կը գնէ որ կրճատումն է au mieux de mes intérêts բաշատութեան, այսինքն իմ շահերուս ամենահամապատասխան կերպով :

4<sup>0</sup> — Պայմանաժամ մը, այսինքն եթէ հրամանն այն օրն, ու եւ է պատճառու, կարելի չըլլայ կատարել, քանի՞ օր դեռ զայն վաւերական պահել :

Շատ պատճառներ կան հրամանի մը նոյն օրը չի կատարուելուն : Հրամանը կարող է Սակարանին փակումէն ետքը հասած ըլլալ, որոշուած գինը կարող է նոյն օրուան գիներէն տարբեր ըլլալ, կամ նոյն օրն այդ արժեթուղիները գնել կամ ծախել ցանկացող չի գտնուի, եւլն. :

5<sup>0</sup> — Եթէ հրամանն արտասահման պէտք է զրկել, հարկաւոր է որոշ կերպով յայանել թէ գրաւոր պէտք է փոխանցել չգայն թէ հեռագրով. վերջին պարագային, պարզ հեռագրով թէ ստիպողական (urgent) :

6<sup>0</sup> — Վերջին եւ կարեւորագոյն կէտ մը, որուն շատ անգամ ուշադրութիւն չի դարձներ սկսնակ պաշտօնեան, այն է թէ հրամանագիրը ստորագրուած ըլլայ :

Սակարանի վերաբերեալ նամակները իրենց հասած միջոցին կ'արձանագրուին յատուկ տոմարի մը մէջ հետեւեալ մանրամասնութիւններով : Գնման պարագային՝ հրամանին հասած օրը, նամակին թուականը, յաճախողին անունն ու մականունը, գնուելիք թղթոց քանակն ու տեսակը, գնման համար սահմանեալ վերջին գինը, վաւերականութեան պայմանաժամը, գնման թուականը,

յաճախորդին հաշիւ գրկուած թուականը: Բաց ի այս սխնականերէն, այդ տոմարը ունի սխնակ մը « դիւտորութեանց » յատկացուած ուր կը գրուին զանազան օգտակար տեղեկութիւնք. օրինակ՝ զնուած քուղքերը պահել յաճախորդին ծրարին մէջ. զնուած քուղքերը դրկել քրդրասարով այսինչ ֆաղաքը այսինչին, զնուած քուղքերը այսինչ դրամասան յանձնել, եւ ըն.:

Աւելորդ է ըսել որ գնուած կատարելէ առաջ պաշտօնեան պարտի նախ ստուգել թէ՛ տուեալ յաճախորդը կարճ է այդ գործողութիւնը կատարել, այսինքն իր ընթացիկ հաշուոյն մէջ առ այդ բաւական դրամ ունի՞:

Վաճառման պարագային՝ կ'արձանագրուին՝ հրամանին հասած օրը, նամակին թուականը. յաճախորդին անունն ու մականունը, ծախսկիք թղթոց քանակն ու տեսակը, վաճառման համար սահմանեալ վերջին գինը, հրամանին վաւերականութեան պայմանաժամը, կատարման թուականը, յաճախորդին հաշիւ գրկուած թուականը, եւ ըն.:

Իրտողութեանց սխնակին մէջ՝ հետեւեալ ծանօթութիւնները կը գրուին, քուղքերը հանել յաճախորդին ծրարէն, կամ քուղքերուն մէջէն այսինչ քիւերը ծախել, ծախուելէն վերջը դրամը այսինչ տեղ դրկել, եւ ըն. եւ ըն.:

Թէ՛ գնման և թէ՛ վաճառման պարագային դրամատունը յաճախորդին նախ ազգ մը կ'ուղարկէ, գործողութիւնը ծանուցանող և յետոյ երրորդ գնուած թուղթերը յանձնուին կամ ծախուած թուղթերը քաշուին, վերջնական հաշիւները կը գրկէ: Իրամատունը իւրաքանչիւր գործողութեան համար կը գանձէ երկու տեսակ վարձք, միջնորդիկ (courtage) զոր կը հատուցանէ գործակալին և յանձնարարագին (commission) որ իր աշխատութեան վարձատրութիւնն է:

Այս և ուրիշ ծախսեր ( գրոշմ, տուրք, և ըն.) գըն-  
ման ատեն, տարակոյս չկայ, ընդհանուր գումարին վրայ  
կը բարդուին, իսկ վաճառման գումարէն կը զեղչուին:

Սակարանի սպասարկութեան գլուխը չի փակած, մի  
քանի օրինակ տանք այն զեկոյցներէն որ իւրաքանչիւր  
գործողութեան համար, գրամատունը սովոր է զրկել իւր  
յաճախորդաց:

### ԿԱՆԽԻԿ ԳՆՄԱՆ ՀԱՇԻԻ

Կ. Պոլիս 1 Մայիս 1915

Տիար Գրիգոր Նազարէթեան

Աստ

Պատիւ ունինք ծանուցանելու, որ Ձեր Ապրիլ 28  
թուակիր հրամանին համաձայն, այսօրուան Ղալաթիոյ  
սակարանին մէջ գնեցինք Ձեր հաշւոյն

10	Օսմ. Ապահ. Լճի. բաժնեթուղթ	5.—		50.—
	Միջնորդչէք		0.10	
	Յանձնարարագին		0.10	0.20
	Լճի. Օ. Ո.			<u>50.20</u>

զոր կ'անցնենք Ձեր հաշւոյն պարտքին, այս օրուան  
արժեզինով ( valeur ):

Յարգանք

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

## ԿԱՆԵԻԿ ՎՍՃԱՌՄԱՆ ՀԱՇԻԻ

Կ. Պոլիս 1 Մայիս 1915

Տխար Երուանդ Քիւրքճեան

Աստ

Պատիւ ունինք ծանուցանելու, որ Ձեր Ապրիլ 28  
թուակիր հրամանին համաձայն, այսօրուան Ղալաթիոյ  
սակարանին մէջ ծախսեցինք Ձեր հաշւոյն

10	Օսմ. Ապահ. Լճնկ. բաժնեթուղթ	5.—		50.—
	Միջնորդչէք		0.10	
	Յանձնարարագին		0.10	0.20
	Լճնկ. Օ. Ո.			<u>49.80</u>

զոր կ'անցնենք Ձեր հաշւոյն պահանջին, այսօրուան արժե-  
զինով:

Յարգանք

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Այս երկու օրինակներէն կը տեսնենք որ գնման  
ատեն ծախքերը կը բարդուին գնոյն վրայ, մինչդեռ վա-  
ճառման պարագային կը հանուին: Պարզեւաւոր ապառիկ  
գործողութիւններուն համար որոնք պայմանաժամին կը  
կարգադրուին հաշիւները միեւնոյն ձեւը կը կրեն:

Այն պարզեւաւոր ապառիկ գործողութիւնները որոնք  
պայմանաժամին չեն կարգադրուիր այլ պարզապէս գի-  
ներու տարբերութիւնները վճարելով կամ գանձելով տե-  
ղի կ'ունենան հետեւեալ ձևով կ'որոշուին:

## ՊԱՐԳԵՒԱՒՈՐ ԳՆՈՒՄ

Բան.	Տեսակ	Գին	Ժախֆ	Քրանֆ.
10	բ. Սեւանիկի պանքայի (Պարգև 7 ճր.)	100		70.—
	Միջնորդչէք 1 <sup>0</sup> / <sub>100</sub>		1.—	
	Յանձնարարագին 1 <sup>0</sup> / <sub>100</sub>		1.—	2.—
	Ընդհ. ֆր.			72.—

զոր կ'անցնենք Ձեր պարագին, այսօրուան արժեզինով:

## ՊԱՐԳԵՒԱՒՈՐ ՎԱՃԱՌՈՒՄ

Բան.	Տեսակ	Գին	Ժախֆ	Քրանֆ.
10	բ. Սեւանիկի պանքայի (պարգև 7 ճր.)	100		70.—
	Միջնորդչէք 1 <sup>0</sup> / <sub>100</sub>		1.—	
	Յանձնարարագին 1 <sup>0</sup> / <sub>100</sub>		1.—	2.—
	Ընդհ. ֆր.			68.—

զոր կ'անցնենք Ձեր պահանջին, այսօրուան արժեզինով:

Այս օրինակներու մէջ զիտակի կէտը այն է թէ՛ ծախսերը գործողութեան օրուան գնոյն վրայ կը հաշուուին և ոչ թէ պարգևի գնոյն:

ԱՊԱՌԻԻԿ ԳՆՈՒՄ

Բարիկ 17 Մայիս 1915

Տեար Երուանդ Պէճիտեան

Կ. Պոլիս

Ներկայիւս պատիւ ունինք ծանուցանելու, որ Ձեր Մայիս 1 թուակիր հրամանին համաձայն, գնեցինք Ձեր հաշւոյն 25 բաժնեթուղթ Գրէտի Լիոնէի 1070 ֆրանքէն, Մայիսի վերջի պայմանաժամով, որոնց վերաբերեալ հաշիւը մասնաւոր գրութեամբ պիտի ստանաք ժամանակին:

Յարգանօք

ՔՐԻՏԻ ԼԻՕՆԷ

Ծանօթ.— Այս նամակը պարզապէս կը ծառայէ յաճախորդին տեղեկացնելու, իր հրամանին կատարումը, բուն հաշիւը կը զրկուի իրեն հաշուեյարդարութեան երկրորդ օրը:

Այժմ ցոյց տանք Պոլսոյ սակարանէն առնուած Արժեթղթի գործակալի հաշուեյարդարութենէն նմոյշ մը:

## ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՇԻՒ

*1 Օգոստոս*

ՊԱՐՏՔ

Կ՞. Օ. միաց.	Ար. երկր.	Գին	Գումար 0. Ո.
500		88.125	440.625
500		87.900	439.50
	40	<i>Քր.</i> 194.—	341.44
200		87.550	175.10
200		86.350	172.70
100		86.200	86.20
100		85.775	85.775
100		85.350	85.35
	10	<i>Քր.</i> 187.25	82.39
	10	<i>Քր.</i> 176.25	77.77
100		82.950	82.95
100		80.550	80.55
900		82.—	738.—
		<b>Միջնորդչեֆ</b>	2.72
2800	60	<i>Օ. Ո.</i>	2891.07

*Տիար Յովսէփեան պարտի ուրեմն իւր Յուլիս ամսոյն*

*Ծանօթ.—Պողոսյ հրապարակին մէջ, ինչպէս կը տեսնենք,*

## ՏԻԱՐ ՅՈՎՍԷՓ ՅՈՎՍԷՓԵՍՆԻ

1914 ին

ՊԱՀԱՆՋ

Կ°. Միացլ.	Ար. երկր.	Գին	Գումար Օ. Ո.
500		84.125	420.625
500		82.—	410.—
500		81.625	408.125
500		81.825	409.125
200		81.400	162.80
300		81.375	244.125
300		81.50	244.50
	60	Փր. 172.—	454.08
		Հառուեկեիւ	137.69
2800	60	Օ. Ո.	2891.07

անյաջող շահագիրառութեան հետեւանօք Օսմ. Ոսկի 137.69

Ֆրանքին հաստատուն գինը (cours fixe) 4.40 է:

Բարիզ, 2 Յունիս 1915

## Տիար Երուանդ Պէճիտեան

Կ. Պոլիս

Ներկայիս կը ծանուցանեմք Ձեզ, որ Ձեր Մայիս 1 թուակիր հրամանին համաձայն, ինչպէս արդէն մեր 17 Մայիս գրութեամբ յայտնած էինք, գնեցինք Ձեր հաշւոյն, Մայիսի վերջը յանձնելի՛

25	բ. Գրէտի Լիոնէի	1070		26750.—
	Միջնորդչէք 1 <sup>0</sup> / <sub>100</sub>		26.75	
	Յանձնարարագին 1 <sup>0</sup> / <sub>100</sub>		26.75	
	Տուրք 0.05 <sup>0</sup> / <sub>100</sub>		1.35	54.85
	Ֆինք.			<u>26804.85</u>

զոր կ'անցնենք Ձեր հաշւոյն պարտքին, Մայիս 31 արժեզինով: Արժեթուղթերը կը պահենք Ձեր արամագրութեան տակ:

Յարգանք  
ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ:

## Է.

ՋԵՂՉ — ՓՈՒԱՆԱԿԱԳԻՐԸ ԻԲՐԵՒ ՋԵՂՉԻ

ԱՌԱՐԿԱՅ — ՊԱՐՏԱՄՈՒՐ ՀԱԿ — ՕՍՄԱՆԵԱՆ,  
ԵՒ ԳԱՂՂԻԱԿԱՆ ՕՐԻՆԱՅ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

Պանքաներուն ի պահ դրամ ընդունելուն պատճառը բացատրած առեմնիս, արդէն ակնարկեցինք « Զեղչ » ին, առանց անունը տալու: Լսինք որ, Գրամատունն իրեն յանձնուած գումարներն իր սեփականին պէս կը գործածէ և կը շահագործէ, պայմանաժամով վճարելի գործերու յատկացնելով զանոնք: Արդ, պայմանաժամով վճարելի գործերն են, նոյն ինքն զեղչի վերաբերեալ հաշիւները: Իսկապէս զեղչել առևտրական թուղթ մը կամ, ինչպէս ռամիկը կ'ըսէ « պօնօ կոտրել » ուրիշ բան չէ, բայց եթէ վճարել այսօր անոր փոխարէնը, որոշ պայմանաժամէ մը գանձելու համար զայն: Այս գործողութեան « զեղչ » կոչուելուն պատճառն այն է որ Պանքան թուղթին փոխարժէքը վճարած պահուն վար կը դնէ, կը զեղչի իրեն ի նպաստ, հարիւրին այսքան տոկոս մը: Տարակոյս չկայ որ, այս տոկոսին սակը զգալապէս բարձր է դրամ ի պահ դնող յաճախորդներու վճարուած տոկոսէն: Զեղչի գործածանութիւնք դրամական հաստատութեանց առանցքն են և անոնց արդիւնաբերութեան կենսական աղբիւրը. ուստի բնական է որ անոնց վրայ մասնաւոր հոգածութեամբ մը ծանրանանք: Առևտրական թուղթն որուն պօնօ, ֆաւպիսալ կամ մուրհակ կ'ըսեն անխտրաբար, սովորական պարտամուրհակէ մը այն տարբերութիւնն ունի որ մինչդեռ

վերջինը զուտ անձնական յանձնառում մ'է անխոխան-  
ցելի, առաջիններն առեւտուրի մէջ ձեռքէ ձեռք կը շրջին  
չստ անգամ թղթադրամի նման: Տեսնենք օրինակով  
մը .— Պարտամուրհակ՝

Յառաջիկայ Մայիս մեկին պարտիմ վնարել Տիար  
Յրուանդ Սամուէլեանի հարիւր Օսմ. Ոսկի զոր այսօր  
փոխ առի իրմէ :

Ա.ՆՈՏՈՆ Գ. ԹՈՐՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, 25 Դեկտ. 1914

Ուրեմն պարտամուրհակը գրաւոր յանձնառում մ'է,  
ստորագրուած պարտատիրոջ մը կողմէ, որով սա կը  
խոստանայ վճարել պայմանաժամին որոշ գումար մը:  
Նա զուտ անձնական է, և վճարօրին մուրհակը միայն  
Տիար Սամուէլեանի կամ անոր օրինական ներկայացուց-  
չին կողմէն գանձելի է, հետեւաբար երրորդի մը փոխան-  
ցելի չէ: Որպէս զի այս մուրհակը փոխանցելի ըլլայ,  
այսինքն առեւտրական թուղթի վերածուի, անհրաժեշտ  
է որ, վերի օրինակին մէջ, Տիար Սամուէլեանի անուն  
կցուի « կամ անոր հրամանին » բացատրութիւնը, ճիշտ  
այնպէս ինչպէս տեսանք շէքերու մասին խօսած ատեն-  
նիս: Կայ առեւտրական թղթի ձեւ մ'ալ՝ փոխանակա-  
ղիրը ( lettre de change կամ traite ), որ ամենայնաճախ  
գործածուածն է և կարելի է ըսել վաճառականութեան հիմն  
է: Սա գրութիւն մ'է որով պահանջատէրն իր պարտա-  
տիրոջ կը հրամայէ վճարել, պայմանաժամը լրանալուն  
որոշ գումար մը երրորդ անձի մը: Օրինակ՝

## ՏԻՍՐ ԱՆՏՕՆ Ք. ԹՈՐՈՍԵԱՆ

## 4. Պոլիս

Յառաջիկայ Մայիս մեկին, այս փոխանակագրի փոխարեն, հաճեցե՛ք վճարել Տիար Անճրիկ Աչքունեանին կամ անոր հրամանին հարիւր Օսլ. Ոսկի: Փոխարժեքը ապրանքով ստացած ենք:

Ք. ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԵՂԻՍԱՐՔ

Զմիւռնիա, 24 Փեկտեմբեր 1914

Փոխանակագրի ուսումնասիրութեան լաւագոյն կերպը օրինագիրքը թղթաանէն է, կ'ըսեն ներսպացի գրողները. ուստի մենք ալ հետեւինք իրենց:

Յօդուած 70. — Փոխանակագիրը տեղէ մը ուրիշ տեղի վրայ կը քաշուի: (Այս յօդուածը Գաղղ. օրինագրքին 110րդ յօդուածին կը համապատասխանէ սա տարբերութեամբ որ վերջինը 7 Յունիս 1914էն ի վեր կը պարունակէ հետեւեալ պարբերութիւնն ալ . . . կամ տեղէ մը մինչնայն տեղւոյն վրայ):

Փոխանակագիրը կը պարունակէ հետեւեալ կէտերը. Թուական, վճարելի գումարը, վճարող անձին անունը, դրամի վճարօրն եւ վճարուելիք Տեղը, փոխանակագրի փոխարեն ընդունուած առարկան (հնչիւն դրամ, ապրանք, հաճիւ կամ ուրիշ եղանակ):

Փոխանակագիրը կարող է քաշուած ըլլալ երրորդ անձի մը կամ նոյն ինքն պահանջատիրոջ հրամանին: Եթէ մի քանի օրինակ արտադրուած է, պէտք է յիշատակել:

Յօդ. 71. — Փոխանակագիր մը կարելի է քաշել անհասի մը վրայ եւ վճարելի ընել երրորդի մը բնակավայրը: Կարելի է քաշել երրորդի մը հրամանաւ եւ անոր հաշւոյն: (Այս յօդուածը նոյնուրեամբ Զրանսական 111րդ յօդուածն է):

Յօդ. 72. — Պարզ խոստումներ կը համարուին բոլոր այն փոխանակագիրներն ուր անորոշ կերպով նշանակուած են անուն կամ տիտղոս կամ ընկալալայր, կամ իրենց ֆաշուած տեղերն եւ կամ վճարելի տեղերը :

( Ընդգծեալ մասերը կը պակսին այս յօդուածին համապատասխան ֆրանս. 112րդ յօդուածին մէջ :

Փոխանակագիրը միեւնոյն ձեռագրով գրուած ըլլալը կարեւորութիւն չ'ունի, բաւական է որ ստորագրուած ըլլայր Այս վերջին կէտը խիստ կարեւոր է, որովհետեւ անստորագիր թուղթ մը, տարակոյս չի կայ, զուրկ է ո՛ր եւ է արժէքէ : Այս՛, եթէ փոխանակագիրը քաշողին ապագրեալ թղթերուն վրայ գրուած է, իրեն նրամանին եւ սա ալ ետեւը ստորագրած է փոխանցման համար, դատարանը կարող է փոխանակագիրը վաւերական համարել բայց եւ այնպէս, լաւագոյն է գործը միշտ սկզբան կանոնաւորել, երբ կարելի է :

Օսմ. կայսրութեան մէջ, ինչպէս նաեւ ի Ֆրանսա, անհրաժեշտ չ'է որ « փոխանակագիր » բառը անպատճառ գործածուի, թղթին այդ հանգամանքը տալու համար ( ինչպէս է Ռուսիոյ, Գերմանիոյ, Իտալիոյ, Ռումանիոյ եւ ուրիշ մի քանի երկիրներու մէջ ), թուղթը նոյն օրինական իրաւասութիւնները կը վայելէ, եթէ փոխանակագրի տեղ կոչուած ըլլայ ուրիշ հոմանիշ անուամբ մը օրինակ քամպիալ կամ պօնօ կամ մուրհակ, եւն :

Օրէնքը կը պահանջէ որ գրամը վճարելիք անձին անունը պարունակուի փոխանակագրի մէջ, ինչպէս նաեւ տեղւոյն անունը, ուր որ գրամը պիտի վճարուի : Հոս ուշադրութեան արժանի կէտ մը կայ, եթէ փոխանակագիրը քաշուած է հանրածանօթ անձի մը վրայ, կարեւո-

բութիւն չ'ունի անոր հասցէն դնել կամ չի դնելը, բայց պէտք է նկատի առնել վճարուելիք քաղաքը, օրինակի համար սոսկ Տիար Միքայէլ Ալէմշահեան, կարելի է բաւական սեպուիլ, ենթադրենք, Տրապիզոնի կամ Նիկովիդիոյ համար, բայց անբաւական ըլլալ է. Պոլսոյ կամ Զմիւռնիոյ համար:

Եթէ փոխանակագիրը այնպիսի անձի մը կամ հաստատութեան մը վրայ քաշուած է որ մի քանի բնակավայր կամ մի քանի ճիւղ ունի միեւնոյն քաղաքին մէջ, թուղթը պէտք է ներկայացնել գլխաւոր հաստատութեան: Եթէ առեւտրական տուն մ'է որ զանազան խանութներ ունի, պէտք է տանիլ հոն՝ ուր գրասենեակը ու դրամարկղը կը գտնուին: Այս հասցէի ճշգրտմը մեծ կարեւորութիւն ունի դրամատան համար իր զեղչած կամ գանձման համար ստացած թղթերուն վերաբերմամբ. որովհետեւ, պայմանաժամը լրանալուն՝ եթէ հասցէի անբաւականութեան հետեւանքով պօճօն չ'վճարուի, դրամատունը կարող է պատասխանատուութեան ենթարկուիլ իրբեանուղղակի պատճառ սոյն կորուստին:

Ուստի զեղչի ճիւղի պաշտօնեան պարտի թէ՛ հաստատութեան և թէ՛ յաճախորդին շահերուն պաշտպանութեանը համար հսկել, որպէսզի փոխանակագրերու բոլոր կէտերը կանոնաւոր ըլլան: Եթէ անոնք միեւնոյն քաղաքին մէջ վճարելի են, հասցէները մէկիկ մէկիկ քննել և ստուգել, իսկ եթէ ուրիշ քաղաքի վրայ են, պէտք է ուշ դնել, որ քաղաքին վրայ տարակոյս չ'մնայ. օրինակ՝ Կրբեք չ'ընդունիլ միմիայն Տ. Պօղոս Միմիտեան յԱղեխանըրիւս, որովհետեւ այս անուամբ քաղաք կայ թէ՛ Եգիպտոսի, թէ՛ Իտալիոյ և թէ՛ Ռուսաստանի մէջ:

Օսմ. Առեւտր. Օրինագրքի 70րդ. ինչպէս նաև Ֆրանս. 110րդ յօդուածին մէջ հակասութիւն մը կայ, զոր հարկէ մասնանշել: Հոն՝ ինչպէս տեսանք, նախ՝ կը պահանջուի որ փոխանակագիրը յիշատակէ, փոխարեւ ընդունուած առարկան, հնչուի գրամ, ապրանք, և այլն. յետոյ՝ աւելի հետուն, կ'ըսուի թէ՛ փոխանակագիրը կարող է փաշուած ըլլալ երրորդ անձի մը կամ նոյն ինքն պահանջատիրոջ, այսինքն քաշողին հրամանին: Արդ, այս վերջին պարագային ինչպէ՞ս կարելի է որոշել ընդունուած փոխարէնը քանի որ առողջ ու անողը միեւնոյն անձն է: Այս տարօրինակ երեւոյթին մեկնութիւնն իրաւագէտները չի կրցան տալ և թողլով որ ինքն օրէնագիրը զայն լուսարանէ ապագային, իրենք առ այժմ փոխուստի ելք մը հնարած են որ ընդհանուրին կողմէ կը դործածուի, այն է փոխարժեքը յիս կամ ի մեզ ( valeur en moi կամ en nous ) նախադասութիւնը կը դնեն, որ առանց բան մը նշանակելու, պարզապէս օրէնքին քմահաճոյքին նիւթական գոհացում մը տալու բնոյթը ունի:

Օրէնքը կը պահանջէ որ եթէ փոխանակագիրը մի քանի օրինակ քաշուած է, այդ բանը յիշատակուի խրաքանչիւր օրինակի մէջ՝ և այդ կ'ըլլայ հետեւեալ ձևով:

Եթէ 1 օրինակ է՝ « Հաճեցէք վճարել այս միակ փոխանակագրին փոխարէն, և ըն. » :

Եթէ երկու օրինակ է՝ « Հաճեցէք վճարել այս առաջին փոխանակագրին փոխարէն ( եթէ երկրորդն արդէն վճարուած չէ ) և ըն. » :

« Հաճեցէք վճարել այս երկրորդ փոխանակագրի փոխարէն ( եթէ առաջինն արդէն վճարուած չէ ) և ըն. » :

Եթէ 3 օրինակ է՝ « Հաճեցէք վճարել, այս առաջին փոխանակագրի փոխարէն ( եթէ երկրորդն ու երրորդը վճարուած չեն ) և չն . » )

« Հաճեցէք վճարել, այս երկրորդ փոխանակագրի փոխարէն ( եթէ առաջինն ու երրորդը վճարուած չեն ) և չն . » )

« Հաճեցէք վճարել, այս երրորդ փոխանակագրի փոխարէն ( եթէ առաջինն ու երկրորդը վճարուած չեն ) և այլն . » )

Այսպէս, ո ե է պօճօյի մը հանդիպած ատեննիս անոր քանի օրինակ ըլլալը իսկոյն կը հասկնանք : Ի՞նչ է սակայն փոխանակագրոց մի քանի օրինակ գրուելուն նպատակը կամ օգուտը :

Եթէ փոխանակագիրը գանձման համար հեռու տեղ պիտի չ'ըրկուի կամ միեւնոյն երկրին մէջ վճարելի է, տարակոյս չկայ, մի քանի օրինակ չի գրուիր, մէկ հատը կը բաւէ . բայց եթէ վճարելի քաղաքը շատ հեռու է քաշուած տեղէն և մանաւանդ ծով կայ երկուքին մէջտեղը, այն ատեն լաւագոյն է որ փոխանակագիրը մի քանի օրինակ քաշուի : Նախ՝ եթէ օրինակ մը ճամբան դիպուածով կորսուի, միշտ ձեռքը կը մնան միւս օրինակները . երկրորդ՝ ենթադրենք որ փոխանակագրի կրող մը զայն պարտատիրոջ ընդունադրութեան ( acceptation ) զրկեց, ինչպէս որ իրաւունք ունի ընելու, վճարման մասին աւելի ասպահովութիւն գոյացնելու համար . եթէ մէկ օրինակ ըլլայ, նա պարտաւոր է սպասել թուղթին վերագարծին, ո ե է գործ մը ընելու համար . բան մը որ ահագին ժամանակի կորուստ է : Մինչդեռ ինքը առաջին օրինակը կը յղէ պարտատիրոջ, իսկ երկրորդը ( որուն

վրայ կ'արձանագրէ ( « առաջինը զրկուած է ընդունելութեան » նախադասութիւնը ) իր ցանկութեան համաձայն կը ծախէ կամ կը փոխանցէ, կամ զբաւ կը դնէ, եւն. :

Յօդ. 73. — Պաշարը կամ փոխարէնը ( provision ) պէտք է ըլլայ քաշողին կողմէ կամ անոր կողմէն, որուն հաշւոյն որ փոխանակագիրը քաշուած է, առանց որ ուրիշի հաշւոյն քաշողը դադրի, ատոր համար, անձնապէս պատասխանատու ըլլալէ հանդէպ փոխանցողներուն ( endosseur ) կամ միայն կրողին :

Այս յօդուածը բառ առ բառ ֆրանսական 115րդ յօդուածն է :

Յօդ. 74. — Անհրաժեշտ է որ փոխանակագրի վճարօրին՝ այն անձն որուն վրայ քաշուած է, պարտական ըլլայ անոր, որուն հաշւոյն քաշուած է գումար մը որ հաւասարի գոնէ փոխանակագրի փոխարժէքին :

( Ֆրանս. 116րդ յօդուածը ընդգծուած բառերուն տեղ կը պարունակէ պաշար կայ, երբ... բառերը )

Յօդ. 75. — Ընդունելութիւնը պաշարի գոյութիւն կ'ենթադրէ. նա փաստ մ'է փոխանցողներուն հանդէպ փոխանակագրի վրայ ընդունելութիւն ըլլայ թէ ոչ, միմիայն քաշողն է որ ստիպեալ է ապացուցանել, ուրացման մը պարագային, որ անոնք, որոնց վրայ փոխանակագիրը քաշուած է, պաշար ունէին վճարօրին. եթէ ոչ, նա պարտի երաշխաւորութիւն տալ, եթէ մինչև անգամ բողոքագրութիւնը ( protêt ) որոշեալ պայմանաժամէն ետքն ալ տեղի ունեցած ըլլայ :

Այս յօդուածներուն մեկնութեան համար երկու ազգրիւրի գիմնեցինք : Մին՝ J. Ruotte, կ'ըսէ,

« Այս յօդուածներն այնքան պարզ են և զիւրա-  
 « հասկնալի, որ աւելորդ է անոնց վրայ երկարել: »

Միւսը P. Lepeltier՝ « Այս յօդուածներն անոնցմէ են  
 « որոնք մինչև հիմա ամենէն շատ մեկնութիւններու և  
 « քաշքշուքներու տեղի տուած են իրենց մտութեան  
 « պատճառաւ: »

Ինչպէս ընթերցողն ալ կը տեսնէ, խնդիրն այդքան  
 ալ պարզ չէ և մենք ակամայ երկրորդ հեղինակին հա-  
 մակարծիք ըլլալու ստիպուած ենք, մանաւանդ որ սնան-  
 կութեան մը պարագային, օրինակի համար փոխանակա-  
 գրի կրողն ինչ իրաւունքներ ունի պաշարի կամ փո-  
 խարեկնի վերաբերմամբ, անկարելի եղաւ մեզ հասկնալ:

Յօդ. 76 / 118 (\*). — Փոխանակագրի մը քաշողը  
 և փոխանցողները, համերաշխ պատասխանատուներ են  
 ընդունելութեան և վճարօրին ալ, հատուցման մասին:

Յօդ. 77 / 119. — Ընդունելութեան մերժումը կը  
 հաստատուի պաշտօնական թղթով մը որ կը կոչուի բո-  
 ղոքագիր անընդունելութեան (Protêt faite d'acceptation):

Յօդ. 78 / 120. — Բողոքագրի իրենց իմաց տրուած  
 պահուն՝ փոխանցողներն ու քաշողը փոխադարձաբար  
 ստիպեալ են երաշխաւորութիւն տալու, փոխանակագրին  
 վճարօրին հատուցումը ապահովելու համար, և կամ,  
 պարտին վճարել զայն, ինչպէս նաև բողոքագրի ծախ-  
 քերը և պօսօյիս անվճար մնալուն հետեւանօք եղած ու-  
 րիչ ծախսերը (rechange): Երաշխաւորութիւնը, ըլլալ

(\*) Յառաջիկային պատահելիք նմանօրինակ բիւերուն առա-  
 ջինը Օսմ. օրինագրքի յօդուածն է, իսկ երկրորդը Գաղղիական:

քաշողին ըլլայ՝ փոխանցողին կողմէ տրուած, միմիայն անոր հետ համերաշխ է (solidaire), որուն օգտին որ տրուած է:

Յօդ. 79 / 121.— Ով որ փոխանակագիր մը կ'ընդունի (accepte), զայն վճարելու պարտականութիւնը կը ստանձնէ, ընդունողը չի կրնար իր ընդունելութենէն զերծ մնալ, մինչև անգամ եթէ պարտատէրը (fauteur) իր ընդունելէն առաջ և առանց իր գիտութեան, սնանկացած ըլլայ:

Յօդ. 80 / 122.— Փոխանակագրի մը ընդունելութիւնը պէտք է ստորագրուի, կ'ընդունի՞մ բառը գնելով: Ընդունելութեան 'պէտք է թուական գնել, եթէ փոխանակագիրը տեսօրէն այսքան օր կամ ամիս վերջը վճարելի է: Այս վերջին պարագային ընդունելութեան վրայ թուականի պակասը, փոխանակագիրը իր թուականէն սկսեալ որոշ պայմանաժամին գանձելի կը դարձնէ:

Յօդ. 81 / 123.— Ընդունողին գանուած քաղաքէն տարբեր տեղ մը վճարելի փոխանակագրի մը ընդունելութիւնը կը բնորոշէ այն վայրն ուր հատուցումը պիտի կատարուի կամ գանձման համար գիմումները տեղի պիտի ունենան:

Յօդ. 82 / 124.— Ընդունելութիւնը պայմանաւոր չի կրնար ըլլալ, բայց փոխանակագրի մը գումարէն նուազ գումարի մը համար կրնայ տրուիլ: Այս պարագային պօնօջին կրողը պարտի միայն տարբերութեան համար բողոքագիր մը հանել տալ:

Յօդ. 83 / 125.— Փոխանակագիր մը խկոյն և եթ

պէտք է ընդունիլ կամամենաուշը ներկայացումէն 24 ժամ  
 ետքը : Այս պայմանաժամէն ետքը, եթէ ան՝ ընդու-  
 նուած կամ ո՛չ, չի վերագարձուի, զայն պահօղը՝ կրողին  
 հանդէպ վնասուց հատուցման կը դատապարտուի :

Յօդ . 84 / 126 . — Անընդունելութեան բողոքի ժա-  
 մանակ ( protêt faite d'acceptation ) փոխանակագիրը  
 կրնայ ընդունուիլ երրորդի մը կողմէ, որ կը միջամտէ  
 քաշողին կամ փոխանցողներէն մէկուն ի նպաստ : Այս  
 միջամտութիւնը կը յիշատակուի բողոքագրին մէջ և մի-  
 ջամտողին ստորագրել կը տրուի :

Յօդ . 85 / 127 . — Միջամտողը ստիպեալ է իր մի-  
 ջամտութեան մասին անյապաղ տեղեկութիւն տալ այն  
 անձին, որուն ի նպաստ որ միջամտած է :

Յօդ . 86 / 128 . — Միջամտութեամբ եղած ընդու-  
 նելութենէն ետքն ալ, փոխանակագրի մը կրողը կը շա-  
 բունակէ վայելել բոլոր այն իրաւունքներն որ ունի հան-  
 դէպ քաշողին և փոխանցողներուն, փոխանակագրի վճա-  
 րողի կողմէն չ'ընդունուելուն հետեւանօք :

Յօդ . 87 . — Փոխանակագիրը կարելի է քաշել՝

Ա . — Ի տեսն ( à vue ) վճարելի :

Բ . — Տեսօրէն մէկ կամ մէկ քանի օր ետքը վճարելի :

Գ . — Տեսօրէն մէկ կամ մէկ քանի ամիս ետքը վճարելի :

Դ . — Թուականէն մէկ կամ մէկ քանի օր ետքը  
 վճարելի :

Ե . — Թուականէն մէկ կամ մէկ քանի ամիս ետքը  
 վճարելի :

2. — Սահմանեալ օր մը վճարելի :

է. — Նշանակուած օր մը, ինչպէս տօնի մը կամ տօնավաճառի մը վճարելի :

Յօդ. 88 / 130. — Ի տես փոխանակագիրը, իր ներկայացման օրը վճարելի է :

Յօդ. 89 / 131. — Տեսօրէն մէկ կամ մէկ քանի օր ետքը վճարելի, տեսօրէն մէկ կամ մի քանի ամիս ետքը վճարելի ( և ըստ Ֆրանս. օրինաց ) տեսօրէն մէկ կամ մէկ քանի առեւտրական ամիս ( usance ) ետքը վճարելի թղթոց վճարօրը կը ճշդուի ընդունելութեան թուականէն կամ անընդունելութեան պարագային բողոքագրի թուականէն :

Յօդ. 90 / 133. — Տօնավաճառի մը մէջ վճարելի փոխանակագրին վճարօրը տօնավաճառի փակման նախօրեակն է, իսկ եթէ տօնավաճառը մէկ օր տեսէ, նոյն օրն է :

Յօդ. 91 / 134. — Եթէ փոխանակագրի մը վճարօրը պաշտօնական տօն օրի մը հանդիպի, նախընթօրը վճարելի է :

Յօդ. 92. — Շնորհք ( grâce ), երախտիք ( faveur ), սովորոյթ ( usage ) կամ տեղական սովորութիւն ( habitude locale ) անուան առկ ու է վճարման յապաղումները չնչուած են :

Յօդ. 93 / 136. — Փոխանակագրի մը սեփականութիւնը կը փոխադրուի Փոխանցմամբ ( endossement ) :

Յօդ. 94 / 137. — Փոխանցումը թուական կը կրէ,

փոխարէն ստացուած առարկան կը յիշէ, և կը պարու-  
նակէ այն անձին անունն որուն հրամանին որ կ'անցնի:

Յօդ. 95 / 138.— Եթէ փոխանցումը նախընթաց  
յօդուածի արամադրութեանց համաձայն չէ, ան սեփա-  
կանութիւնը չի փոխադրեր՝ Նա՝ այն ատեն պարզ փոխա-  
նորդագիր մ'է (procuration):

Յօդ. 96 / 139.— Հրամաններու վրայ հին թուա-  
կան դնելը խտախ արգիլեալ է և կեղծարարութեան պատ-  
ժոյն ենթակայ:

Յօդ. 97 / 140.— Ամէն անոնք որ փոխանակագիր մը  
ստորագրած, ընդունած կամ փոխանցած են, համերաշխ  
պատասխանատու են քաշողներուն հանդէս:

Յօդ. 98/141.— Փոխանակագրի վճարումը կարելի է,  
ընդունելութենէն և փոխանցումէն անկախ երաշխագրով  
մը (aval) ապահովել:

Յօդ. 99 / 142.— Այս երաշխաւորութիւնը կը սըր-  
ուի երրորդի մը կողմէ, նոյն ինքն փոխանակագրի վրայ  
կամ առանձին գրութեամբ: Երաշխագիր տուողը համե-  
րայիս (solidaire) պատասխանատու է ճիշդ այնպէս,  
ինչպէս քաշողն ու փոխանցողները, եթէ սակայն մէջեր-  
նին հակառակ համաձայնութիւն մը գոյացած չէ:

Յօդ. 100 / 143.— Փոխանակագիր մը պէտք է վը-  
ճարուի անոր մէջ նշանակուած գրամին տեսակով:

Յօդ. 101 / 114.— Խարդախութեան պարագային  
պայմանաժամէն առաջ փոխանակագիր մը վճարողը վճար-  
ման վաւերականութեան մասին պատասխանատու է:

Առեւտրական դատարանին կը պատկանի որոշել թէ և՛ զամ վճարումը վաւերական է թէ ոչ :

Յօդ. 102/145. — Այն որ կը վճարէ փոխանակագիր մը իր պայմանաժամին առանց օրինական արգելքի (opposition), վաւերականօրէն ազատուած կ'ենթադրուի :

Յօդ. 103 / 146. — Փոխանակագրի մը կրողը կարելի չէ ստիպել որ պայմանաժամէն առաջ անոր վճարումն ընդունի :

Յօդ. 104 / 147. — Փոխանակագրի մը երկրորդ, երրորդ, չորրորդ եւն. օրինակին փոխարէն եղած վճարումն այն ատեն միայն վաւերական է, երբ տուեալ օրինակը յիշատակէ թէ սոյն վճարումը միւս օրինակներուն իրաւունքը կը ֆնջէ :

Յօդ. 105/158. — Փոխանակագրի մը երկրորդ, երրորդ, չորրորդ եւն. օրինակը վճարողը եթէ ետ չի ստանայ իր ընդունելութիւնը կրող օրինակը, օրինապէս ազատեալ չէ :

Յօդ. 106 / 149. — Վճարման դէմ օրինական արգելք (opposition) ընդունելի է միմիայն փոխանակագրի կորստեան կամ կրողին անանկութեան պարագային :

Յօդ. 107 / 150. — Ընդունելութիւնը չի կրող (non-accepté) փոխանակագրի մը կորստեան պարագային, անոր սեփականատէրը կրնայ վճարում պահանջել, երկրորդ, երրորդ, չորրորդ եւն. օրինակը ներկայացնելով :

Յօդ. 108 / 151. — Եթէ կորսուած փոխանակագրին վրայ ընդունելութիւն կար, երրորդ եւն. օրինակով վճարում պահանջելու համար անհրաժեշտ է առեւտրական

դատարանի վճիռ ստանալ և երաշխաւորութիւն տալ :

Յօդ. 109/152. — Ընդունելութիւն կրող կամ չի կրող փոխանակագրի մը կորստեան պարագային եթէ անոր սեփականատէրը չի կարենայ ներկայացնել 2րդ . 3րդ . 4րդ . եւ ըն . օրինակը , կրնայ կորսուած փոխանակագրին վճարումը պահանջել և ստանալ , Առևտրական Դատարանին առջև , իր տոմարներուն միջոցաւ , իր սեփականութիւնն ապացուցանելով և երաշխաւորութիւն մը (caution) տալով :

Յօդ. 110 / 153. — Նախորդ յօդուածներու հիման վրայ եղած դիմումէն ետքը , վճարումի մերժման պարագային , կորսուած փոխանակագրի տէրը իր իրաւունքները կարող է պահպանել բողոքման թուղթի մը միջոցաւ ( acte de protestation ) : Այս թուղթը պէտք է գրուի կորսուած փոխանակագրի վճարօրին հետեւեալ օրը և պէտք է հաղորդուի քաչողին և փոխանցողներուն բողոքագրի զեկուցման յատուկ հետեւեալ պայմաններուն և օրերուն մէջ :

Յօդ. 111/154. — Կորսուած փոխանակագրի տէրը՝ երկրորդ օրինակ մը ձեռք ձգելու համար , պարտի դիմել իր անմիջական փոխանցողին որ պարտական է ի սպաս գնել իր անունն ու միջոցները իր փոխանցողին հանդէպ . այսպէս փոխանցողէ փոխանցող ելլելով կը հասնի մինչև փոխանակագրին քաչողին : Բոլոր ծախքերը կորսուած փոխանակագրի տիրոջ կը պատկանին :

Յօդ. 112 / 155. — 108րդ . և 109րդ . յօդուածներուն մէջ պահանջուած երաշխաւորութեան պարտականութիւնը երեք տարիէն կը լրանայ , եթէ այդ ժամանակամիջոցին

մէջ, ոչ մէկ գիմում կամ դատական հետապնդում տեղի չ'ունենայ :

Յօդ. 113/156. — Փոխանակագրի մը գումարէն եղած մասնավճարները քաշողներու կամ փոխանցողներու պարտքի թիթեւացում մ'է : Կրողը պարտի փոխանակագիրը թողոյնք անվճար մնացած գումարին համար :

Յօդ. 114 / 157. — Դատաւորները ոչ մէկ պայմանաժամ չեն կրնար շնորհել փոխանակագրի մը վճարման համար :

Յօդ. 115 / 158. — Բողոքեալ փոխանակագիր մը կրնայ վճարուիլ, քաշողին կամ փոխանցողներէն միոյն ի նպաստ միջամտողի մը կողմէն : Միջամտութիւնն ու վճարումը պէտք է արձանագրուին բողոքագրին մէջ :

Յօդ. 116/159. — Միջամտութեամբ փոխանակագիր մը վճարողը՝ կը տիրանայ կրողին իրաւունքներուն և կ'ենթարկուի անոր պարտականութեանց, կատարուելիք ձեւակերպութեանց մասին :

Եթէ միջամտութիւնը քաշողին ի նպաստ կատարուի, ատով բոլոր փոխանցողները պատասխանատուութենէ կ'ազատին :

Եթէ փոխանցողներէն միոյն ի նպաստ եղած է, իրմէ վերջն եկող փոխանցողները կ'ազատին :

Եթէ փոխանակագիր մը վճարելու համար՝ քանի մը հոգի միջամտեն, գումարին էն մեծ մասը վճարողին նախապատուութիւն կը արուի : Եթէ սակայն այն անձն ուզէ վճարել, որուն վրայ ի բնէ քաշուած է փոխանակագիրը և որուն չ'ընդունելուն պատճառաւ բողոքագրուած՝ այն ատեն սա՛ կը նախընտրուի բոլոր միւսներէն :

Յօդ. 117.— Եւրոպայի հողամասէն կամ կղզիներէն ինչպէս նաև Ափրիկէի հիւսիսային ափունքէն քաշուած, և Օսմանեան կայսրութեան մէջ, ըլլայ ի տե՛ս ըլլայ տեսօրէն մէկ կամ մի քանի օր կամ ամիս վերջը հատուցանելի փոխանակազրի մը կրողը պարտաւոր է ա՛նոր վճարումը կամ ընդունելութիւնը պահանջել, թուականէն սկսեալ վեց ամսուան միջոցին մէջ, ապա թէ ոչ կը կորսնցնէ իր իրաւունքները ոչ միայն փոխանցողներուն՝ այլ և քաշողին հանդէպ, եթէ վերջինս փոխարէնը պատրաստած էր:

Այս պայմանաժամը մեկ տարի է այն փոխանակազրերու համար, որոնք քաշուած են Ափրիկէի Արեւմտեան ծովեզերքէն մինչև Բարեյուսոյ Գլուխի հրուանդանը, այս վերջինս ալ մէջը հաշուելով: Նոյնպէս մէկ տարի է այն փոխանակազրերուն համար, որոնք քաշուած են Ամերիկայի հողամասէն կամ կղզիներէն ինչպէս նաև Հնդկաստանի հողամասէն կամ կղզիներէն և կամ ո՛ր և է հեռու երկրէ մը:

Մինչոյն հետեանքները կ'ունենայ Օսմանեան երկիրներէ և հրապարակներէ քաշուած ի տես կամ մի քանի օր կամ ամիս ետքը, արտասահման վճարելի փոխանակազրի մը կրողը եթէ հատուցում կամ ընդունելութիւն չ'պահանջէ վերոյիշեալ պայմաններուն մէջ, համապատասխան հեռաւորութեանց համեմատ:

Վերոյիշեալ պայմանները կը կրկնուին պատերազմի պարագային: Այս տրամադրութիւնները սակայն ար-

գելք չեն կրնար հանդիսանալ տարբեր համաձայնութեանց՝ որ կարող են կնքել իրենց մէջ կրողը, քաշողը կամ մինչև անգամ փոխանցողները » :

Այս յօդուածը թէպէտ և հիմնովին կը տարբերի իրեն համապատասխան ֆրանսական 160րդ. յօդուածէն, բայց այս կէտը մեզ համար գործնական կարելորութիւն մը չ'ունենալով զանց կ'առնենք տարբերութիւնները մի առ մի մատնանշելը :

Յօդ. 118 / 161. — Փոխանակագրի մը կրողը պարտի անոր հատուցումը պահանջել վճարօրին :

Յօդ. 119 / 162. — Վճարման մերժումը պէտք է հաստատուի վճարօրին հետեւեալ օրն իսկ՝ փաստաթուղթի մը միջոցաւ, որուն բողոքագիր անունը կուտան : Եթէ այդ օրը պաշտօնական տօնի օր մ'է, բողոքը կը կատարուի հետեւեալ օրը :

Յօդ. 120 / 163. — Կրողը չի կրնար բողոքը զանց ընել ո՛չ անընդունելութեան բողոքագրի մը արդէն տեղի ունենալուն պատրուակաւ և ոչ ալ մահուան կամ սնանկութեան պատճառաւ այն անձին, որուն վրայ քաշուած է փոխանակագիրը : Փոխանակագրի պայմանաժամէն առաջ ընդունողին սնանկութեան պարագային կրողը կարող է անմիջապէս բողոքել տալ և հետապնդում ի գործ դնել :

Յօդ. 121 / 164. — Անվճար-բողոքեալ փոխանակագրի մը կրողը կրնայ իր օրինական հետապնդումը կատարել կամ անհատաբար քաշողին և փոխանցողներէն խրաքանչիւրին դէմ և կամ հատաբար փոխանցողներուն և քաշողին դէմ : Ընդհանր իրաւունքը կը վայելէ փոխան-

ցողներէն իւրաքանչիւրը քաշողին և իրմէ առաջ գտնուող փոխանցողներուն հանդէպ :

Յօդ. 122 / 165. — Եթէ կրողը անհատաբար հետապնդէ այն անձն որմէ առած է փոխանակագիրը ( cédant ), պարտի վերջնոյս զեկուցանել բողոքը, և եթէ չի վճարէ, զայն դատի քաշել բողոքագրի թուականէն սկսեալ 15 օրուան մէջ, եթէ անոր բնակավայրին հեռավորութիւնն ոտքով մէկ օրուրնէ աւելի չէ : Եթէ աւելի հեռու ըլլայ, այն ատեն պայմանաժամն իւրաքանչիւր օրուան համար երեքական օր կ'աւելնայ :

Յօդ. 123 / 166. — Թուրքիայէն քաշուած և Թուրքիոյ հողամասէն դուրս կղզիները կամ հեռավոր երկիրները կամ արտասահման վճարելի փոխանակագիրներն որոք բողոքուին, Թուրքիա բնակող քաշողներն ու փոխանցողները կը հետապնդուին հետեւեալ ժամանակամիջոցներուն մէջ :

Կիպրոսի, Կրէտէի և Սրչիպելոզոսի միւս կղզիներուն համար երկու ամսուան մէջ, Եգիպտոսի, Ադիքսանդրիոյ և իր ենթակայ վայրերուն համար չորս ամսուան մէջ, Թունուզի, Տրիպոլսոյ և Ալժերիոյ համար հինգ ամսուան մէջ, Եւրոպայի օտար գաւառներուն համար չորս ամսուան մէջ, Ափրիկէի, Ամերիկայի և Արեւելեան Հնդկաստանի համար մէկ տարուան մէջ : Պատերազմի պարագային վերոյիշեալ պայմանաժամերը կը կրկնապատկուին :

Յօդ. 124 / 167. — Եթէ փոխանակագրի կրողն իր հետապնդումը կատարէ հաւաքաբար փոխանցողներուն և քաշողին դէմ, ան անոնց իւրաքանչիւրին հանդէպ կը

վայելէ նախորդ յօդուածներուն մէջ նշանակուած պայմանաժամը: Փոխանցողներէն խրաքանչիւրն ալ իր կարգին միեւնոյն իրաւունքը ունի գործելու թէ՛ անհատաբար և թէ՛ հաւաքաբար միեւնոյն ժամանակամիջոցին մէջ: Իրենց համար պայմանաժամը կը սկսի դատի հրաւերի թուականէն:

Յօդ. 125 / 168.— Վերոյիշեալ պայմանաժամերն անցնելէն վերջը, որոնք նշանակուած են ի տես կամ տեսօրէն մէկ քանի օր կամ ամիս վերջը վճարելի փոխանակագրոց ներկայացման, անվճար փոխանակագրի բողոքին և օրինական հետապնդումի համար, կրողը փոխանցողներու հանդէպ բոլոր իրաւունքները կը կորսնցնէ:

Յօդ.— 126 / 169.— Փոխանցողները նոյնպէս կը զրկուին իրենց իրաւունքներէն՝ իրենց նախորդներուն հանդէպ եթէ վերոյիշեալ պայմանաժամը անցունեն:

Յօդ. 127 / 170.— Միեւնոյն զրկումը կայ կրողին և փոխանցողներուն համար հանդէպ քաշողին եթէ վերջինս ապացուցած է որ փոխանակագրին վճարօրին ինքը փոխարէն (provision) պատրաստած էր: Այն պարագային կրողը միմիայն այն անձին հանդէպ իրաւունք կը վայելէ որուն վրայ որ քաշուած էր փոխանակագիրը:

Յօդ. 128 / 171.— Նախորդ երեք յօդուածոց մէջ յիշուած իրաւունքի զրկումները կը գաղրին կրողին համար, հանդէպ քաշողին կամ փոխանցողներուն, եթէ անոնցմէ մին վերոյիշեալ պայմանաժամէն ետքը ընդունած ըլլայ, ի հաշիւ, իբր փոխարինութիւն և կամ ուրիշ ո՛ր և է կերպով, փոխանակագրի հատուցման յատկացուած դրամը:

Յօդ. 129 / 172.— Անվճար բողոքեալ փոխանակագրի մը կրողը իր հետապնդումէն անկախ կերպով, կարող է Առեւտրական Դատարանի ձեռօք գրաւել իբրև աւանդ, քաշողներուն, ընդունողներուն և փոխանցողներուն շարժուն գոյքերը:

## Ը.

ԶԵՂԶԸ ԴՐԱՄԱՏԱՆ ՄԷՁ —

ՄՈՒՐ ՀԱԿՆԵՐՈՒ ՓՈԽԱՏՈՒՈՒ ԹԻՒՆ —

ԱՐՏԱՔԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԶԵՂԶՈՒՄ —

Տեսանք զեղչի առարկային՝ փոխանակագրի մանրամասնութիւններն օրէնքի տեսակէտով . անցնինք այժմ բուն զեղչի գործողութեանց մեկնութեան, այնպէս ինչպէս անոնք կը կիրարկուին գրամատանց մէջ :

Առեւտրական թուղթերու զեղչը՝ գրամի գործածութեան ամենաշահաբեր ձեւն է, ուստի և պանքաներու գործողութեանց ամենակարեւոր ճիւղը : Գլխաւոր հաստատութեանց հաշուեկշիռներն աչքէ անցընող մը պիտի նշմարէ որ հոն՝ զեղչը միշտ գերակշիռ տեղ մը կը գրաւէ և ընդհանուր գործողութեանց գումարին  $\frac{2}{3}$ ը կը կազմէ :

Եւրոպայի մէջ ամէնուրեք պետական գրամատուներ պաշտօնական զեղչի սակ մը կ'որոշէ իր զեղչած բոլոր թուղթերուն համար, ինչ որ ալ ըլլան անոնց կրած ստորագրութիւնները, սկսեալ ամենաշարուստ գրամատէրէն մինչև ամենայետին խանութպանը : Այս սակը սերտ առնչութիւն ունի մի միայն երկրին գրամական կացութեան

և միջազգային ելևմտական պարագաներուն հետ : Այս պաշտօնական գնոյն վրայ է որ միւս հաստատութիւններն և գործի մարդիկ կը հիմնեն իրենց առօրեայ գործառնութիւններն և այս զեղչի սակով է որ անոնք Փոխանակագինի ( change ) վրայ կը ներգործեն :

Մինչդեռ հոս, Թուրքիոյ մէջ, պետական դրամատունը զեղչի պաշտօնական սակ մը չ'ունի, պայմանները կը փոխուին յաճախորդին համաձայն և իւրաքանչիւր գործողութեան ներկայացուցած երաշխիքներու համապատասխան կերպով :

Միւս դրամական հաստատութիւններն ալ բնականաբար կ'ընթանան միեւնոյն շաղէն : Ուրիշ կերպ ալ արդէն կարելի չ'էր գործել . որովհետեւ մինչդեռ Եւրոպայի դրամատանց զեղչի ներկայացուած թուղթն արդէն ամէն երաշխիք կ'ընծայէ, հոս՝ ընդհակառակը, վտանգներու գնահատումը շատ փափուկ, բարդ և այլազան խնդիր մ'է որ իւրաքանչիւր թղթի համար կախում ունի անձնական և պատահական նկատողութիւններէ :

Անոր համար ալ զեղչի սակը, հոս, իսկապէս դրամի վարձք մը և վտանգներու դէմ ասպահովագին մ'է :

Այլ, եթէ անկարելի է Թուրքիոյ մէջ պաշտօնական զեղչի մասին խօսիլ, բայց և այնպէս, կան սովորաբար միջին սակեր որոնք գործողութեանց իրր ուղեցոյց կը ծառայէն : Այս միջին սակը բնականոն պայմաններու մէջ Կ . Պոլսոյ դրամատանց համար 7էն 9 <sup>0</sup>/<sub>10</sub> է, անոնցմէ դուրս հրապարակի վրայ պարագային համեմատ հարիւրին երկու կամ երեք աւելի բարձր է, իսկ գաւառներու մէջ շատ աւելի բարձր :

Ձեզչի այս միջին սակը , որ զգալապէս աւելի բարձր է Եւրոպայի գիներէն , կը ցոլացնէ առհասարակ անտեսական գրեթէ քրօնիկ տազնապ մը և գործերու անապահովութիւն մը :

Ի՞նչ յատկութիւններ պէտք է ունենայ առեւտր. թուղթ մը պանքաներու կողմէ զեղչուիլ կարենալու համար : Առեւտրական թուղթերը կամ հրամանի յանձնառումները որոնք զեղչման համար կը ներկայացուին , պարտին կրել առնուազն երկու ստորագրութիւն (\*) և իրենց վճարօրն ինկրտուն օրէն անդին պէտք չէ ըլլայ :

Այս պայմանները , ինչպէս կը տեսնենք , մասնաւոր ոչինչ ունին . անոնք բոլոր երկիրներու մէջ ալ համահասար կերպով կը կիրարկուին , մանաւանդ Եւրոպայի մէջ երբեմն երեք ստորագրութիւն կը պահանջեն , օրինակ Պաքիստ Գրանսը :

Պայմանաժամին ամենաուշն 90 օր ըլլալն աւագ կարեւորութիւն ունի մանաւանդ հոն , ուր վաճառականութիւնը մեծ անկայունութեան ենթակայ է :

Վերոյիշեալ երկու ստորագրութեանց մին կարող է սակայն պակսիլ , պայմանով որ անոր տեղ տրուի ուրիշ նիւթական երաշխաւորութիւն մը , օրինակ ապրանք , արժեթուղթ , բեռնագիր (ծովային թէ ցամաքային) կամ ուրիշ ո և է արժէքաւոր առարկայ մը , վարչութեան հաւանութեամբ :

Պարտատիրոջ կամ փոխանցողներէն կամ ընդունողներէն մէկուն անանկութեան պարագային , թուղթը զեղչողը պարտի անմիջապէս դրամատան հատուցանէ

(\*) Այսինքն՝ քաղցիկ ստորագրութիւնը եւ փոխանձուած անձին ստորագրութիւնը :

անոր փոխարէնը կամ երաշխաւորութիւն մը տայ անկարող ստորագրութեան տեղը :

Այս պահանջումն ընդլայնում մ'է օրէնքին հետեւեալ տրամադրութեան . « Հրամանի տոմսի մը ( billet à ordre ) ստորագրողին , փոխանակագրի մը ընդունողին կամ անընդունելի ( non acceptable ) փոխանակագիր արտագրողին սնանկութեան պարագային միւս բոլոր պարտաւորները ( les autres obligés ) ստիպուած են երաշխիք մը տալ վճարօրին հատուցման վերաբերեալ » եթէ անմիջապէս վճարելը չի նախընտրեն » :

Դրամատուներն ստորագրողին , քաշողին կամ ընդունողին սնանկութեամբը չեն բաւականանար , այլ կը պահանջեն նոյնպէս երաշխիք , փոխանցողներէն միոյն սնանկութեան պարագային :

Պանքաներու զեղչի զրկուած պօստները կը քննուին « Զեղչի Յանձնախումբի » մը կողմէ որ կը բազկանայ Տեսչութեան անդամներէ և Տեղեկութեանց Սպասարկութեան գլխաւոր պաշտօնեաներէն :

Տեղեկութեանց Սպասարկութիւնը , որ ամէն երկրի մէջ մեծ գեր ունի կատարելիք , մեր մէջը , ա՛լ աւելի մեծ կարեւորութիւն մը ունի , և իր պաշտօնը շատ աւելի փափուկ հանգամանք մը կը զգենու այն դժուարութիւններու բերմամբ , որոնց ենթարկուած է հոս , ուր անձերու իսկութիւնն անգամ ստէպ դժուար է որոշել :

Զեղչի գործողութիւն մը , առհասարակ , բացի վերոյիշեալ պայմաններէ , չի պահանջեր թղթին ստորագրութիւններուն կողմէ ո՛ր և է մասնաւոր երաշխաւորութիւն : Այս ստորագրութիւններն են որ թղթին կուտան իր ար-

ժէքն և որ ընդունիլ կամ մերժել կուտան զայն Զեղչի Եանձնախումբին կողմէ։ Անգամ մը որ թուղթը հաւանութի, անոր փոխարժէքը կը վճարուի զայն զեղչման ներկայացող անձին, նոյն օրուան սակին համաձայն մինչև վճարօրը մնացած օրերուն տոկոսը վար դնելէ ետքը։ Այս այսպէս է Եւրոպայի մէջ։ Մեր երկրին մէջ սակայն, տնտեսական բոլորովին տարբեր հանգամանքներու և բարքերու հետեւանօք, տարբեր գործելակերպ մը որդեգրուած է դրամատանց մէջ։ Այս վերջինները, զեղչը վերապահելով հանդերձ առաջնակարգ թուղթերուն, որոնք, տարակոյս չի կայ փոքրամասնութիւն կը կազմեն, փոխանակագրոց ստուար մեծամասնութեան համար մուրհակներու փոխաւորութեան (Avance sur Effets) դրութիւնը կը գործածեն իբրև աւելի զգոյշ և նուազ վտանգաւոր։

Դրամատունն իրեն ներկայացուած թուղթերը փոխանակ զեղչի առնելու, իր յաճախորդին զաշնագիր մը ստորագրել կուտայ, որուն փոխարէն իրեն ընթացիկ հաշիւ մը կը բանայ, երաշխաւորեալ զանձնաւ հաւնար իրեն յանձնուած փոխանակագրերով, որոնցմէ ուղածը կ'ընդունի և ուղածն ալ կը մերժէ։ Բացուած վարկի սահմանին մէջ և զաշնագրի պայմաններուն համաձայն, Պանքան յաճախորդին տրամադրութեանը տակ կը դնէ, իրեն յանձնուած թուղթերուն ընդհանուր գումարին հարիւրին 80ը կամ աւելին։ Տարակոյս չկայ որ թուղթերուն ետեւը ստորագրել կը տրուի փոխանցումը դրամատան անուն ասպահովելու համար. գրել տալով հոն՝ փոխարժէքը երաշխաւորութեան հաւնար (valeur en garantie) նախագասութիւնը։

Այս փոխանակագրերն ալ, զեղչի տրուածներուն նման, յանձնախուսմբի քննութեան բովէն կ'անցնին և փորձառութիւնը ցոյց տուած է որ ասոնցմէ շատ քիչերն իրենց վճարօրին անվճար մնացած են, կարելի է, շնորհիւ այն կէտին որ, դաշնագրին մէջ կը պարտադրէ յաճախորդն ապահովելու դրամատունն, ո՛ր և է թերութեան կամ անկանոնութեան և կամ թղթոց անվճար մնալուն դէմ:

Չեղչի վրայ, այս ձեւն ունի առաւելութիւն մը. մինչդեռ զեղչող յաճախորդը ստիպեալ է մինչև վճարօրը մնացած օրերուն տոկոսը միանուազ վճարել և դրամը կանխիկ տտանալ ամբողջովին, այս դրութեամբ անիկա կը քաշէ այնքան դրամ որքան հարկադրէ իր օրական պէտքը և կը վճարէ տոկոս միմիայն իր օգտագործած օրերուն համար: Բացի ասկից, փոխանակագիրերու գանձումներու հետզհետէ կատարուելովն անկից ստացուած գումարները նոյնպէս յաճախորդին պահանջին կ'անցնին, նոյն քանակութեամբ ալ բնականաբար նուազելով իբր աւանդ տրուած պօճօններու գումարը: Այս է սովորական ձեւը մուրհակներու փոխատուութեան. քանի մը փոփոխութիւններ մտցուեցան սակայն, զորս պէտք է նկատի առնել:

Այդ հարիւրին 20 երաշխիքը, որ դրամատունները կը պահանջեն, փոխանակ մուրհակներէ բաղկանալու, կրնայ արժեթուղթերէ կազմուիլ. այն ատեն յաճախորդը կրնայ իր տուած փոխանակագիրներուն հարիւրին հարիւրը տրամադրել: Ասիկա սա առաւելութիւնն ունի որ յաճախորդն այսպէսով, զեղչի համար գործածած դրամէն մաս մը անշարժութեան չի մատնէր, որովհետև փոխարէն դրա-

տուած արժեթուղիներն արդէն զետեղուած դրամ են, և նոր անշարժութիւն մը չեն նշանակեր իրեն համար:

Այս պարագային մուրհակներու փոխատուութիւնն աւելի ևս կը մօտենայ պարզ զեղչի գործողութեան, սա տարբերութեամբ որ, սովորական երաշխաւորութիւններէ զատ, հոս արժեթղթոց գրաւականն ալ կայ հարիւրին 20 կամ աւելի չափով: Երկրորդ տարբերութիւն մ'ալ, ինչպէս տեսանք, սովորը փոխանակ զեղչուելու ի սկզբան, ինչպէս է զեղչի գործողութեան ժամանակ, բոլոր մուրհակներու համագումարէն, ան կը բանի միմիայն իր հաշուոյն վրայ:

Մուրհակներու փոխատուութիւնն, ինչ ձևի տակ ալ ներկայանայ, առերեւոյթս անպատահութիւն մը ունենալ կը թուի, այն է սովորի գործողութեան չի ձգեր այն նրբութիւնը զոր ան կը վայելէ այլուր և որուն շնորհիւ ան կը ցոյացնէ հրապարակի կացութիւնը, կը նախատեսէ նուազումներ և կը մեղմացնէ անոնց տազնապաներու սաստկութիւնը: Բայց տեսանք արդէն որ, թուրքիոյ մէջ զեղչի սակը չ'ունի այն գերակշիռ ազդեցութիւնն որ կը վայելէ այլուր, միջին սակը շատ բարձր է հոս, որպէսզի հարիւրին կէս կամ մինչև անգամ 1 և 2 ելեւէջները կարենան գործողութեանց զգալի փոփոխութիւն մը տալ:

Բնականաբար դրամատանց, վերազեղչողներու հանդէպ կիրարկած, պայմանները հրապարակի վրայ կը հակազդեն, և զեղչի առաջին գործողութեան բանակցութիւններն աւելի կը դժուարացնեն: Զեղչով պարապողը իր յաճախորդին կը հաշուէ բաց ի այն տարբերութենէն որ իրեն կը մնայ իր գանձած և պանքային վճարած տու-

կոնսերէն, նաև այն գրաւին փոխարէնը զոր գրամատունները կը պահանջեն իրմէ, այնպէս որ մուրհակներու փոխատուութեան միջին սակը Յէն 7 հաշուելով և պանքային պահանջած լրացուցիչ գրաւն ալ 20 0/0 համարելով, զեղչի համապատասխան սակը մօտաւորապէս 8էն 9 0/0 կ'ըլլայ:

Այսու հանդերձ մուրհակներու փոխատուութեան սակը զուրկ չէ բոլորովին առածգութենէ: Յաճախորդին ստորագրած դաշնագրին մէջ ի միջի այլոց հետեւեալ պայմանը կայ. « Իմ վճարելիք հարիւրին այսքան տոկոսը մինիւն մը կը ներկայացնէ որ սակայն միշտ Անգլիոյ Դրամատան պաշտօնական սակէն հարիւրին այսքանէն աւելի պէտք է ըլլայ »:

Այսպէս, հաստատելով հանդերձ մինիւն մը, ուսկից վար չի կրնար իջնել գրամատանց հաւանած փոխատուութեանց սակը, և որ կը ներկայացնէ ինչ որ կը կոչուի « տեղական միջին սակ »ը, երբ ելեւմտական հրապարակներու առհասարակ և Լոնտօնի հրապարակն ի մասնաւորի, որմէ կախում ունին օտար հրապարակները, և որ համաշխարհային կացութիւնը կը խտացնէ իր մէջը, կը հարկադրէ զեղչի սակի բարձրացում մը Անգլիոյ Պանքային կողմէ, և այս փոփոխումը կարեւոր ըլլայ, Կ. Պոլսոյ գրամատուններն ալ մեքենաբար կը բարձրացնեն իրենց սակը: Պօլսոներու վրայ փոխատուութեանց գրութիւնը այնպէս ինչպէս բացատրեցինք, ի գործ կը գրուի միայն առեւտրական գլխաւոր կեդրոններու մէջ, ինչպէս Կ. Պոլիս Զմիւսնիա, Պէյրութ, և շն. Ստոնցմէ դուրս, միւս տեղերը, աւելի շուտ սովորական զեղչի գրութիւնը կը կիրարկուի:

Փոխանակագրերու փոխատուութիւնը կ'ենթադրէ կարեւոր և բազմաթիւ գործերու գոյութիւնը որ ծնունդ կուտայ այնպիսի պօսւծներու, որոնք շտկէ չիտակ դրամատանց ներկայացուելու պահուն կարելի է չ'ընդունուէին զեղչի համար:

Հոս ոչազբաւ կէտ մը կայ— Թուրքիոյ մէջ զեղչի միջին սակը այլուր պատահածին ճիշդ հակառակը, աւելի բարձր է պօսւծներու փոխատուութեան սակէն: Վերջինս Եւրոպայի մէջ  $\frac{1}{2}\%$  և  $1\frac{0}{10}\%$  աւելի բարձր է պաշտօնական զեղչի սակէն, որովհետև հոն զեղչը գերազանցապէս նախընտրելի գործողութիւն մ'է, քանի որ այն մանրակրկիտ քննութիւններէ և խիստ պայմաններէ ետքը, որոնց կ'ենթարկուին պօսւծները, զեղչը բոլոր գրաւականները կը ներկայացնէ, հակառակ առերեւոյթ կարելի վտանգներուն, դրամի խտէալ գործածութիւն մ'է, առանց սակայն երկար անշարժութեան մասնելու զայն:

Մինչդեռ մեր մէջ, ընդհակառակն, հրապարակի դիրքին բերմամբ զեղչը նուազ ապահովութիւն կ'ընծայէ, և այս է պատճառն որ տեղական դրամատունները հակում մը ունին ըստ կարելւոյն զեղչը նուազեցնելու, անոնց սակը բարձր պահելով և դիւրացնելու, ո՛ւր որ կարելի է՝ պօսւծներու փոխատուութեան գործերը:

Օսմ. կայս. Դրամատան 1907ի հաշուեկշիռին մէջ գրաւներու վրայ փոխատուութեան (avance sur nantissement) գլխուն մէջ փոխանակագրերու փոխատուութիւնը ունի Օ. Ո. 856,226, որոնց փոխարէն գրաւ ձեռուած են մօտաւորապէս 1,400,000 սկիի պօսւծներ:

Միևնոյն տարւոյն մէջ նոյն դրամատան 15 մաս-

նաճիւղերուն մէջ, ուր այս գրութիւնը կը գործածուի, իրր գրաւ ընդունուած պօստներուն գումարը, վեց միլիոն ոսկիէն աւելի էր, մինչդեռ մնացեալ բոլոր միւս մասնաճիւղերուն համար բուն զեղչի գործողութիւնք եօթնուկէս միլիոնէն անդին չէին անցած:

Ընդհանուին գրաւ ընդունած պօստներուն թիւը 2,478,000ի բարձրացած է (34,000 պօստ), մինչդեռ զեղչեր է ընդամէնը 192,000 ժ. Ո. (2,000 պօստ):

Պօստներու փոխատուութեան հետ մեծ անչուութիւն ունին ընդունելութեան հաշիւները (comptes acceptation): Ահա թէ ինչ բանի մէջ կը կայանան անոնք:

Իրամատուներն իրենց յաճախորդներէն ոմանց արտասահմանի հրապարակներուն հետ ունեցած գործերու կարգադրութիւնը զուրացնելու համար՝ անոնց կը բանան վարկեր ընդունելութեան հաշիւներ, ընդհանրապէս երեք ամսուան միջոցի մը համար: Յաճախորդը իրաւունք ունի տուեալ իրամատան Բարիզի և Լանտոնի կամ ուրիշ քաղաքի մը մէջ ունեցած մասնաճիւղին վրայ քաշելու, առաջուրնէ՛ երկուստեք որոշեալ գումար մը: Ընդունելութիւնը անոնց այս վարկին բացման ազգը ստացած ըլլալով, կ'ընդունին Պոլսոյ յաճախորդներուն կողմէ քաշուած պօստները: Ընդունելութեան հաշիւ մը բացումը խնդրողներէն մեծ մասն արդէն իրամատան մէջ պօստներու փոխարէն հաշիւ ունեցողներ են, որոնք նոր բացուած վարկին փոխարէնն ալ արդէն կ'ապահովեն շատ անգամ պօստներով կամ արժեթուղթերով:

Քաշուած պօնօններու գումարը յաճախորդին ընդունելութեան հաշիւէն, ուր անցած է, կը փոխադրուի վճարօրին՝ իր ընթացիկ հաշուոյն մէջ օրուան չէքի գնոյն համաձայն և պայմանաժամէն 5 օր առաջուան արժեզինով (valeur) : Արժեզին կը կոչուի տոմարակալութեան մէջ այն օրը, ուրկից կը բանի տոկոսը :

Այս գործողութիւնն ունի առաւելութիւն մը, այն է յաճախորդին դրամ կը հայթայթէ աւելի ձեռնառու պայմանաւ : Արդարեւ, դրամատուններն այս գործողութեան համար կ'առնեն երեք ամսուան համար հարիւրին  $\frac{1}{4}$  յանձնարարագին ինչ որ տարին կ'ընէ  $1 \frac{0}{10}$  արդ, այդպէսով արտասահման ընդունադրուած պօնօնները հեշտութեամբ կը վաճառուին 2էն 3ի զեղչի սակով, որով յաճախորդն իրեն պէտք եղած դրամը կը ստանայ հարիւրին 3—4 տոկոսով, մինչդեռ եթէ պօնօններու վրայ պարզ փոխառութիւն մը ընէր, իրեն առ նուազն  $6 \frac{0}{10}$  —  $7 \frac{0}{10}$  պիտի նստէր :

Պանքան ալ, այս գործողութեան մէջ, ունի այն առաւելութիւնը որ կը գանձէ յանձնարարագին մը  $\frac{1}{4} \frac{0}{10}$ , առանց դրամագլուխը անշարժութեան մատնելու, բացի այն օգուտէն որ կը քաղէ փոխանակագիներու տարբերութենէն :

Պէտք է նկատել, սակայն, որ այս հաշիւները շատ և շատ հազուադէպ են, և կը կիրարկուին ամենատաջին կարգի սեղանաւորաց կամ վաճառականաց կողմէ, ու կը կրին բացարձակապէս առեւտրական կերպարանք, որովհետեւ այս ընդունելութեան վարկերուն բացումը կրնայ դրամատան գլխուն վտանգներ բանալ, որոնք շատ ծանր կրնան ըլլալ իրենց բազմազանութեան

հետեւանօք դժուար կացութեան մը միջոցին : Ապացոյց՝ Պոլսոյ 1907—1908ի տաղնապը, որուն միջոցին յայտնուեցան մեծ քանակութեամբ պօնօններ, որոնք հետուէին իսկական գործողութեանց արդիւնք ըլլալէ և որոնք ծառայեցին, պայմանաժամին չ'նորոգուելուն հետեւանօք, միմիայն իրենց արտագրողներն և կրողները կործանելու :

Զեղչի վրայ մեր համառօտ տեսութիւնը պատշաճ կերպով փակելու համար աւելորդ չ'ըլլայ գուցէ աչքէ անցնել անոր հետ առնչութիւն ունեցող հաշիւները : Այս վերջիններս երկու գլխաւոր ձև ունին որոնք հաւասարապէս կը կիրարկուին դրամատանց մէջ՝ « մրտաքին և ներքին Զեղչում » յորջորջման տակ :

Արտաքին զեղչումը ( Escompte en dehors ) կը կայանայ տոկոսը կանխիկ ստանալուն մէջ, այսինքն՝ ինչպէս տեսանք արդէն սովորական զեղչի մասին խօսած ատեննիս, դրամատէրը փոխանակագրին ամբողջութիւնը չի հատուցաներ, այլ մինչև պայմանաժամը մնացած օրերուն համար հարիւրին այսքան տոկոսը վար կը դնէ և մնացեալը կը վճարէ :

Ներքին զեղչումը ( Escompte en dedans ) ընդհակառակը, կը գործածուի այն ատեն երբ դրամատունը փոխանակ զեղչի՝ կը նախընտրէ դիմել մուրհակներու փոխաւորութեան դրութեան, որով ան տոկոսը կանխիկ չի ստանար, այլ կը գանձէ յետոյ կա՛մ մայր գումարի հատուցման միջոցին և կամ տարին մի քանի անգամ, ըստ առանձին համաձայնութեան և մի միայն դրամի օգտագործուած օրերուն համար :

Առաջին ձևը, տարակոյս չկայ, աւելի նպաստա-

որ է գրամատան համար և այն է որ կը նախընտրուի ամէն անգամ որ պարագաները ներեն:

Բացառենք այս երկու ձևերուն միջև գտնուած տարբերութիւնը, օրինակ՝

Զեղչել 2,000 ոսկինոց, տարիէ մը գանձելի, մուրհակ ը'հարիւրին 9էն:

Ա.— Արտաքին զեղչմամբ.— Եթէ հարիւր ոսկին, մէկ տարուան մէջ՝ ինը ոսկի շահ կը բերէ, մէկ ոսկին, միևնոյն ժամանակամիջոցին մէջ կը բերէ հարիւր անգամ նուազ, որ է  $\frac{9}{100}$  և երկու հազար ոսկին՝ կը բերէ 2,000 անգամ աւելի այսինքն  $\frac{9 \times 2,000}{100} = 180$  ոսկի, որով մուրհակին տէրը կը ստանայ  $2,000 - 180 = 1,820$  ոսկի:

Բ.— Ներքին զեղչմամբ.— Այս ձևով գտնելու համար հարկ է հետեւեալ խորհրդածութիւնն ընել. 109 ոսկին հարիւր ոսկիին մէկ տարուան հարիւրին իննով շահագործման ընդհանուր գումարն է. արդ՝ եթէ 109 ոսկի (գրամազլուխ և տոկոս միասին) ստանալու համար տարուան մը մէջ, հարիւրին իննէն, 100 ոսկի հարկ եղաւ զնել, մէկ ոսկի ստանալու համար, պէտք է զնել 100 անգամ նուազ որ է  $\frac{100}{109}$  և երկու հազար ոսկիի համար 2,000 անգամ աւելի,  $\frac{100 \times 2,000}{109} = 0. \text{Ո. } 1,834.86$ . որով վճարելիք տոկոսն է  $2,000 - 1,834.86 = 0. \text{Ո. } 165.14$ : Երկու արդիւնքներն իրարու հետ բազդատելով ( $1,834.86 - 1,820$ ) պիտի գտնենք  $0. \text{Ո. } 14.86$ ի տարբերութիւն մը հնազատ արտաքին զեղչման, որ ուրիշ բան չէ՝ բայց

եթէ Օ . Ո . 165.14ի մէկ տարուան հարիւրին իննէն շահը : Ուրիշ խօսքով , արտաքին զեղչմամբ զրամատունը կը ստանայ ո՛չ միայն իր տուած զրամին շահը , այլ իբր տոկոս վար զրած և չի տուած զրամին շահը , բան մը որ թէև անարդար է , բայց գործածութիւնը այնքան ընդհանուր է որ ամէնուրեք օրինական հանգամանք մը առած է :

Հոս պատեհ առիթն է յիշելու որ , զրամատան պաշտօնեայ մը ո՛րքան արագ կարենայ կատարել տոկոսի հաշիւները , այնքան աւելի ի վիճակի է օգտակար ըլլալու հաստատութեան , որովհետև չկայ վերջնոյս մէջ գործողութիւն մը որ տոկոսի վրայ հիմնուած չ'ըլլայ :

Տեսնենք ուրեմն համառօտակի կերպով թէ տոկոս մը քանի կերպով կարելի է գտնել : Թուաբանական մեկնութիւններու պիտի շմտնենք . այս՝ մեզ շատ հեռուները պիտի տանէր գուցէ և մեր համեստ նպատակէն շեղեցնէր , ուստի մենք մեր ենթադրեալ սկսնակ պաշտօնեայն արդէն անոնց տեղեակ համարելով պիտի գոհանանք միմիայն մէկ քանի անհրաժեշտ տարազներ ( formules ) յիշելով :

Երկու գլխաւոր զրութիւն կայ տոկոսը հաշուելու համար . մին՝ հիմնուած է բաղադրեալ երից կանոնի կամ քիւերու վրայ ( théorie des nombres ) , իսկ միւսը համաքանակ մասերու վրայ ( théorie des parties aliquotes ) :

Թիւերու Դրուքիւն .— Դրամագլուխը կոչենք Դ , սակը Ս , օրերը Օ և շահը Շ , և ընենք հետեւեալ խորհրդածութիւնը . եթէ հարիւր ոսկին մէկ տարուան կամ

360 օրուան մէջ (հաշիւներու դիւրութեան համար ընդունուած է տարին 360 օր համարել) Ս տոկոսը կը բերէ, մէկ ոսկին միեւնոյն ժամանակամիջոցին մէջ, պիտի բերէ հարիւր անգամ նուազ որ է  $\frac{0}{100}$  և մէկ ոսկին մէկ օրուան մէջ, պիտի բերէ 360 անգամ նուազ  $\frac{0}{100 \times 360}$  և Դ ոսկին մէկ օրուան մէջ, պիտի բերէ Դ անգամ աւելի այսինքն  $\frac{0 \times Դ}{100 \times 360}$ , վերջապէս Դ ոսկին 0 օրուան մէջ պիտի բերէ 0 անգամ աւելի այսինքն  $\frac{0 \times Դ \times 0}{100 \times 360}$ : Այս տարազը երկու մասի կը բաժնուի  $\frac{Դ \times 0}{100}$  զոր կոչենք թ այսինքն թիւ (nombre) և  $\frac{0}{360}$  զոր միացնելով կ'ունենանք  $\frac{Թ \times 0}{360}$  որ ինչպէս գիտենք, տոկոսի հաշիւներու քիւերու դրութեան հիմնաքարն է: Տեսականէն անցնինք զործնականին և ենթադրենք հետեւեալ զեղչի ցուցակը, հարիւրին Զէն զեղչելի:

Կ. Պոլիս, 25 Մայիս 1915

Փումար	Վհարոր	օր	Թիւ
0. Ո. 215	— 1915 Յունիս 10	16	34
” 73	” Յուլիս 19	55	40
” 18	” Սեպտեմբեր 3	101	18
” 306	—		
” 2	30 Զեղչ 9 %		
0. Ո. 303	70		92

Անցողակի ըսենք, որ թիւերու արդիւնքին մէջ կոտորակները զանց կ'առնուին:

Յորհրդածութիւն .- Վերոյիշեալ ցուցակին մէջ զրամագլուխները և վճարօրերը արձանագրուած ըլլալով, խրաքանչիւրին առջին մինչև պայմանաժամ մնացած օրերը կը գրենք, յետոյ թիւերը գտնելու համար կը բազմապատկենք օրերը զրամագլխին հետ և կը բաժնենք 100 ով ըստ տարազի թ.  $\frac{9 \times 0}{100} = \frac{215 \times 16}{100} = 34$ :

Բոլոր թիւերը գտնելէն ետքը, կը գումարենք զանոնք, ինչպէս վերի օրինակին մէջ տեսանք և ըստ տարազի  $\frac{9 \times 0}{360}$  կը բազմապատկենք սակի հետ և կը բաժնենք 360ով՝

$$\frac{92 \times 9}{360} = 2,30$$

զոր հանելով զրամագլխոց գումարէն՝ կ'ունենանք զեղեւալ գումարամագլուխը 303,70:

Գործնականին մէջ սակայն, այս բոլոր գործողութիւնները չեն կատարուիր. օրինակի համար՝ մեր ցոյց տուած պարագային մէջ նշանակելի է որ 9ը 360ի 40դմասն է, ուստի բաւական է թիւերու գումարին՝ այն է 92ի չորրորդ մասն առնել որ կ'ընէ 23 և ասոր ալ տասներորդ մասը գտնել որ է 2,30:

Նոյնպէս եթէ՝ սակը հարիւրին 6էն ըլլար, կ'առնէինք թիւերու 6րդ մասը և անոր ալ տասներորդը: Մէկ խօսքով՝ 360ի անկոտորակ բաժանարար (diviseur fixe) մը գտնել և արդիւնքին տասներորդ մասը առնել: Այս է կրճատեալ հաշիւներուն հիմը: Վլխաւոր բաժանարարները հետեւեալներն են.

$$9 \frac{0}{0} = 4$$

$$8 \frac{0}{0} = 4 \frac{1}{2}$$

$$6 \frac{0}{0} = 6$$

$$4 \frac{0}{0} = 9$$

$$3 \frac{0}{0} = 12$$

Ասկը եթէ անկոտորակ բաժանարար չ'ունենայ, նախ կը գտնուի ամենէն մերձաւոր բաժանարարը և անկէջ կը հետեւցուի միւս փնտռուածը. օրինակ՝ եթէ հարիւրին  $1\frac{1}{2}$ էն ըլլայ սակը, կրնանք կա՛մ 3էն հաշուել և կէսը առնել, կամ 6էն հաշուել քառորդը առնել. մէկ խօսքով պէտք է ջանալ ըստ կարելւոյն քիչ գործողութիւնով տոկոսի հաշիւներն ընել:

Համախանակ մասերու դրոսթիւն (Parties aliquotes).— Համաքանակ մասերու դրոսթեամբ տոկոսներու հաշիւը չափազանց պարզ է և հիմնուած է հետեւեալ խորհրդածութեան վրայ: Եթէ, օրինակի համար, 6 ոսկին մէկ տարուան կամ 360 օրուան մէջ հարիւր ոսկւոյ հարիւրին 6էն արտադրած շահն է, մէկ ոսկին պիտի ըլլայ հարիւր ոսկւոյ շահը, վեց անգամ նուազ ժամանակամիջոցի համար, որ է  $\frac{360}{6} = 60$ :

Այս տարազը քննելով, կը տեսնենք որ առեւտրական տարին եթէ բաժնենք տոկոսի սակին հետ, կ'ունենանք հարիւր ոսկինոց դրամագլխի մը 1 ոսկի շահ բերելու համար պէտք ունեցած օրերուն թիւը: Ուրիշ խօսքով՝ գումարի մը հարիւրին վեցէն 60 օրուան շահը գտնելու համար, բաւ է նոյն գումարին հարիւրերորդ մասը առնել, բան մը որ կը կայանայ պարզապէս ստորակէտը տեղափոխելուն մէջ:

Օրինակ՝ 1550 ոսկւոյ, հարիւրին վեցէն, 60 օրուան տոկոսը կ'ընէ 0 . Ո . 15,50 այսինքն գրամադիտուն 100րդ մասը :

Միեւնոյն տրամաբանութեամբ կ'եզրակացնենք որ, ո՛ր և է գումարի մը՝

Հարիւրին	3 էն	120 օրուան տոկոսը		
»	4 էն	90	»	»
»	4 <sup>1</sup> / <sub>2</sub> էն	80	»	»
»	5 էն	72	»	»
»	8 էն	45	»	»

տուեալ գումարին հարիւրերորդ մասն է :

Դրամատան մէջ, ուր ամէն գործողութիւն քիչ շատ տոկոսի հետ առնչութիւն ունի և ուր պէտք է տիրէ time is money բնարանը, այս կրճատեալ հաշիւներու օգուտը ակնեքե է : Տարակոյս չկայ որ անոր առաւելութիւնը միայն վերոյիշեալ թիւերով չի սահմանափակուիր, քիչ մը փորձառութեամբ, պաշտօնեան կարող է հեշտօրէն գտնել ո՛ր և է տոկոս : Օրինակ՝ գտնել 714 ոսկւոյ 100ին 4 էն, 35 օրուան տոկոսը :

Դիտենք որ 714 ոսկւոյ 90 օրուան տոկոսը հարիւրին 4 էն կ'ընէ՝ 0 . Ո . 7,14, իսկ 30 օրուանը անոր երրորդ մասն է ( որ է 2,38 ) որուն վրայ աւելցնելով 5 օրուան տոկոս, որ է վերջինին 6րդ մասը ( 0,40 ), կ'ունեննենանք 0 . Ո . 2,78 :

Միեւնոյն դիտողութիւնը ունինք ընելիք, երբ տոկոսը վերոյիշեալ սակերէն տարբեր է, օրինակ՝ հարիւրին  $1\frac{1}{4}$  հաշուելու համար կը փնտոենք հարիւրին 1 և կ'աւելցնենք իր  $\frac{1}{4}$ ը՝

Հարիւրին  $1\frac{3}{4}$  հաշուելու համար կը փնտոենք հարիւրին 2 և կը հանենք իր  $\frac{1}{8}$ ը՝

Հարիւրին  $2\frac{1}{4}$  հաշուելու համար կը փնտոենք հարիւրին 2 և կ'աւելցնենք իր  $\frac{1}{8}$ ը՝

Հարիւրին  $2\frac{3}{4}$  հաշուելու համար կը փնտոենք հարիւրին 3 և կը հանենք իր  $\frac{1}{12}$ ը՝

Հարիւրին  $3\frac{1}{4}$  հաշուելու համար կը փնտոենք հարիւրին 3 և կ'աւելցնենք իր  $\frac{1}{12}$ ը, և չն՝

Զեղչի մասին մեր հակիրճ տեսութիւնը փակելէ առաջ, քանի մը խօսք ալ ըսենք միջին ժամադրութեան ( *échéance moyenne* ) վրայ որ զեղչման հետ սերտ առնչութիւն ունի և ստէպ կը գործածուի պանքաներու մէջ, մանաւանդ զեղչի ցուցակի զանազան գումարները յաճախորդի հաշուոյն մէջ մէկ գումարով մը անցընելու համար։ Միջին ժամադրութիւն կամ միջին վճարո՞ւմն օրն է, որ կը խտացնէ իր մէջ զանազան թուականներու հատուցանելի դրամագլուխներու վճարօրերը։ Այսինքն, այնպիսի թուական մ'է՛ որուն հիման վրայ զեղչը հաշուելով, կը ստանանք միեւնոյն արդիւնքը, ինչ որ պիտի ստանայինք հաշուելով իւրաքանչիւր դրամագլուխ իր վճարօրով և անոնց ամենուն ըովանդակները գումարելով։ Միջին վճարօրը հետեւեալ կերպով կը զտուի. զեղչի ցուցակին մէջ առաջին վճարօրը իրբև մեկնակէտ բոնելով, իւրաքանչիւր գումար կը բազ-

մապատկուի սոյն թուականին և իր վճարորին մէջ զըտ-  
նուող օրերուն հետ ( ճիշտ այնպէս ինչպէս որ պիտի ը-  
նէինք թիւերը գտնելու համար ), արդիւնքները կը  
գումարուին և ընդհանուր գումարը կը բաժնուի դրամա-  
գլուխներու համագումարին հետ , քանորդը աւելցնելով  
ստաջին վճարորին կը ստացուի միջին վճարօրը : Բա-  
ցատրենք օրինակով մը : Յաճախորդ մը 1915 Յունուար  
2 ի թուականով հետեւեալ մուրհակները կը ներկայացնէ  
դրամատան , զոր վերջինս կը զեղէ 6 0/0 էն : Ո՞րն է  
միջին վճարօրը :

Գումար	Վճարօր	օր	Թիւ
Օ . Ո . 30	1915 Յունուար 9	7	2
” 170	” ” 11	9	15
” 150	” ” 14	12	18
” 300	” Փետրուար 1	30	90
” 180	” Մարտ 2	59	106
” 120	” ” 10	67	80
” 100	” ” 12	69	69
” 1050			
” 6,30	Զեղէ 6 0/0		
<u>Օ . Ո . 1043,70</u>			<u>380</u>


Միջին վճարօրը փնտռելու համար մեր մեկնակէտը պիտի ըլլայ Յունուար 9: Ինչպէս արդէն տեսանք, պէտք է բաղմասպատուել իւրաքանչիւր դումար Յունուար 9 էն մինչև վճարօրը եղած օրերու հետ, որով կ'ունենանք հետեւեալ դումարները՝

30	×	0	=	0
170	×	2	=	340
150	×	5	=	750
300	×	22	=	6600
180	×	52	=	9360
120	×	60	=	7200
100	×	62	=	6200
1050				30450

30,450ը բաժնելով 1,050ով, կը ստանանք 29. ահա այս քանորդը աւելցնելով նախորդ ցուցակին առաջին վճարօրին վրայ (9+29), կ'ունենանք 38 որ կը համապատասխանէ Փետրուար 7ին այսինքն միջին վճարօրին Ուստի, վերոյիշեալ խնդիրը հետեւեալ ձևը կ'առնէ՝ զեղջիօրը նոյնպէս Յունուար 2ը հաշուելով: Օ. Ո. 1050 — վճարօր 7 Փետրուար—օր 36—թիւ 3780— սակ 6 <sup>0</sup>/<sub>6</sub>— արդիւնք Օ. Ո. 6,30: Ինչպէս կը տեսնենք, արդիւնքը միեւնոյնն է, ինչ որ էր նախորդ օրինակին մէջինը:

Շատ անգամ թիւերու բաժանումը դրամագլուխներու հետ ( $30,450:1050=29$ ) ամբողջական թիւ մը չի տար, այլ քովը կոտորակ մ'ալ կ'ունենայ, օրինակ 29,30 կամ 29,72 եւն. այն ատեն սովորութիւն եղած է 0,50է պակաս կոտորակները զանց առնել, իսկ աւելի եղածները մէկ միութիւն հաշուել:

Այս գլուխը փակած միջոցնիս աւելորդ չ'ըլլայ գուցէ անգամ մ'ալ շեշտել այն կարեւորութեան մասին, զոր արագ հաշուելակերպը ունի ելեմտական հաստատութեանց մէջ, մանաւանդ այն նախապատուութեան, որ բնականաբար կը վայելէ կրճատեալ հաշիւներն հետութեամբ ընող պաշտօնեան, իր միւս պաշտօնակիցներուն բազդատմամբ, որոնք թէպէտ և ժրջան և պարկեշտ աշխատաւորներ գուցէ, բայց առանց թուղթի և գրչի կարող չեն գործ մը տեսնել:



Թ .

ՊԱՐՏՈՒՑ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ

ՔԱՄՊԻՑ — ՈՍԿԵԶԱՓ — ԱՒԵԼԱԳԻՆ —

ԶԱՆԱԶԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ



« Քամայից » կամ պարտուց փոխանակութիւն կը կոչուի այն գործողութիւնը որուն միջոցաւ արտաքին կամ միջազգային պարտքեր կը հատուցուին, առանց նիւթական հնչուն դրամի տեղափոխութեան: Առնենք երկու տէրութիւններ, օրինակի համար, Թուրքիա և Զուիցերիա որոնք իրարու հետ առեւտրական յարաբերութեան մէջ կը գտնուին և իրարու շարունակ ապրանք կը ծախեն ու կը գնեն: Ի՞նչ կերպով գնորդ վաճառականը պիտի հասցնէ իր թղթակցին անոր ապրանքին փոխարժէքը: Տարակոյս չկայ, կարելի է պարտքի փոխարէնը եզոզ դրամը ծրարել և թղթատարով զրկել իր պահանջատիրոջ: Բայց այս միջոցը թէ՛ սուղ է և թէ՛ տաղտկալի, ուստի և գրեթէ բոլորովին անտեսուած է վաճառատանց կողմէ: Առնենք այդ միջոցին կը դիմեն միայն՝ երբ ուրիշ ոչ մէկ ճար չ'ունենան, ինչպէս եղաւ, օրինակ, ներկայ համեարտական պատերազմի ծագման օրերը, ուր պանքանի-

բու յարարերութեանց խղման հետեւանօք, նիւթական զրամի առաքումը՝ գանձման կամ վճարումի միակ միջոցը հանդիսացաւ: Փոխանակ ասոր, բաւական է որ Զուխերիոյ, ենթադրենք ժընէվի, Օսմանեան ապրանքի գնորդը յարարերութեան մէջ մտնէ նոյն քաղաքը բնակող և Կ. Պոլսոյ մէջ Զուխերիական ապրանք ծախողին հետ և գնէ անկէ իր առնելիքը ներկայացնող փոխանակագիր մը և զրկէ զայն Կ. Պոլսոյ իր թղթակցին Օսմ. ապրանք ծախող վաճառականին, որ իր կարգին գանձէ զայն Զուխերիական ապրանք գնողէն. այսպէսով եթէ Կ. Պոլսոյ մէջ Զուխերիական վաճառումի գումարը հաւասարի Զուխերիոյ մէջ Օսմանեան ապրանքի վաճառումի գումարին, երկու առեւտրական գործողութիւնք ամբողջովին կարգադրուած կ'ըլլան պարզ « Բամպիօ » ի գործողութեամբ մը առանց զրամի փոխադրութեան:

Բայց իրականին մէջ անշուշտ գործերը այսպէս նախնական վիճակի մէջ չեն ներկայանար: Գրեթէ անկարելի բան մ'է որ Զուխերիոյ մէջ Օսմ. ապրանք առնողը, երթայ, փնտռէ Թուրքիոյ մէջ Զուխերիական ապրանք ծախող մը և գնէ անկէց իր պահանջը: Ահա այս անպատեհութեան առաջին առնելու համար է որ կը միջամտեն պանքաները: Անոնք արտասահմանի վրայ փոխանակագիրներ կը գնեն և կը ծախեն. այսինքն արտասահման առնելիք ունեցողներուն թուղթերը կը գնեն և արտասահման պարտք ունեցողներուն ալ կը ծախեն: Յետոյ պիտի տեսնենք թէ ինչպէս: Առ այժմ, կ'ուզենք քիչ մը երկարօրէն ծանրանալ ֆանկիօի իսկութեան վրայ: Վերը յիշած մեր օրինակին մէջ, մէկ փոխանակագիր մը բաւեց չորս հոգւոյ մէջ երկու գործողութիւն կարգա-

դրելու, որովհետեւ ենթադրեցինք թէ երկու գործերն ալ միեւնոյն կարեւորութիւնը և միեւնոյն վճարօրը ունենան և երկու տէրութեանց դրամական միութեան տարբերութիւնն ալ զանց ըրինք:

Արդ, երկու երկրի մէջ որոնք միեւնոյն տեսակ դրամ չեն գործածեր, մէկուն դրամը միւսին մէջ սոսկ իբրև ապրանք կը նկատուի. օրինակ՝ գերմանական ոսկին (դրամը) Աւստրիոյ մէջ միմիայն իբրև ոսկւոյ կտոր մը կ'ընդունուի, որուն արժէքը 20 մարք չէ, այլ կախում ունի իր ծանրութենէն և արժանքէն (այստ): Եթէ սոյն երկու պետութեանց մէջ իրարու հանդէպ առեւտրական պարտքերու գումարը պահանջներու ընդհանուր գումարին հաւասարի, այն ատեն անոնց մէջի փաւկիօյի գինը կամ փոխանակագինը հաւասար է (au pair), այսինքն, առաջին պետութեան մէջ այն օրուան միւս պետութեան դրամին վճարուած փոխարժէքը, համապատասխան է սոյն դրամին իսկական արժէքին (intrinsèque) և փոխադարձաբար: Եթէ ընդհակառակն, ընդհանուր գումարը այնպիսի արդիւնք մը տայ որ մին միւսին աւելի պարտք ունենայ, պարտական տէրութեան փոխանակագինը պահանջւոր տէրութեան վրայ պիտի բարձրանայ, այսինքն պարտական տէրութեան դրամէն աւելի պէտք պիտի ըլլայ վճարել քան միւս տէրութեան դրամին իսկական արժէքը, և պահանջւոր տէրութեան փոխանակագինն ալ պիտի իյնայ: Այս երեւոյթին պատճառը հասկնալու համար բաւ է յիշել որ այն պարտքերը որ հաշուի փոխարինութեամբ չեն կրնար կարգադրուիլ, պիտի հարկադրուին նիւթական դրամ զրկելու դրութեան դիմել:

Մեկնենք օրինակով մը: Ենթադրենք թէ այսօր

Լեռնամանիոյ և Իտալիոյ վաճառականները իրենց հաշիւները  
 փակելով տեսան որ Իտալիա 10 միլիոն ֆրանք տար-  
 բերութիւն ունի իրրե պահանջ գանձելիք: Ի՞նչ պիտի  
 պատահի: Լեռնամանիոյ վաճառականները իրենց պարտքե-  
 րը զրկելու համար պիտի փնտոեն Իտալիոյ վրայ փո-  
 խանակագիրներ և յանձնառու պիտի ըլլան վճարել աւելա-  
 գին մը ( prime ) ոսկի փոխադրել չհարկադրուելու հա-  
 մար: Այս փոխանակագիրներու գնողները ծախողներէն  
 շատ ըլլալուն, ըստ օրինաց պահանջի եւ առաջարկի,  
 գինները պիտի բարձրանան յաջորդաբար, մինչև որ պա-  
 հանջուած աւելագինը հաւասարի ոսկիի փոխադրութեան  
 ծախքերուն, որովհետև անկէ աւելի բարձրանալուն պէս՝  
 գնողը պիտի նախընտրէ ոսկի զրկել: Իտալիոյ մէջ ալ  
 ճիշդ հակառակը պիտի պատահի: Իտալացի վաճառական-  
 ներ իրենց առնելիքները գանձելու համար Լեռնամանիոյ  
 վրայ փոխանակագիրներ պիտի ուզեն քաշել և ծախել և  
 որովհետև գնողները աւելի քիչ են քան թէ ծախողները,  
 այս վերջիններս յանձնառու պիտի ըլլան աւելագին մը  
 վճարել, որ նոյն օրէնքի հիման վրայ, երթալով պիտի  
 բարձրանայ մինչև որ հաւասարի Լեռնամանիայէն ոսկի բե-  
 րելու ծախքին: Երկու պարագային ալ աւելագինը զրամի  
 փոխադրութեան ծախքերուն մաքսիմումին պիտի հաւա-  
 սարի, որովհետև ամէն ոք կը նախընտրէ փոխանակա-  
 գիր գործածել քան թէ զրամի փոխադրութեան տաղտ-  
 կալի իրադարձութեանց ենթարկուիլ: Արդէն երկու  
 երկրի փոխանակագիրները պիտի ձգտին մեքենաբար հա-  
 ւաստակշռիլ, այսինքն՝ Լեռնամանիոյ գնողներու իրենց  
 պարտքը վճարելու համար յանձն առած վնասը, պիտի  
 ձգտի հաւասարիլ, Իտալիոյ ծախողներուն իրենց պահան-

ջր գանձելու համար յանձն առած զոհողութեան. եթէ այդ հաւասարակչութիւնը յապաղի, երկու երկիրներու մէջ իսկոյն և եթ ծնունդ կ'առնեն շարք մը գործողութիւններ որոնք փոխանակագրական շահադիտութիւն ( arbitrage de change ) անուան ներքև անդադար կը հսկեն այդ տարբերութիւններու անհետացման :

Ըսինք որ, ըստ պահանջի եւ առաջարկի՝ օրինաց փոխանակագիւնները ելուէջներ կ'ունենան, բայց ասոնք կը ձգտին մեքենաբար հաւասարակչութիւնը ինչպէս աշխատեալ ամաններու մէջի ջրի մակերեւոյթը : Սակայն պայման մը կայ, առանց որոյ այդ հաւասարակչութիւնը տեղի չի կրնար ունենալ. այդ է փոխանակելի պարտքերու անմիջականութիւնը : Այսինքն՝ որպէս զի առեւտրական յարաբերութեանց մէջ եղող երկու պետութեանց փոխանակագիւնները հաւասարին, հարկ անհրաժեշտ է որ անոնց իրարու հանդէպ ունեցած պարտքերը անմիջապէս վճարելի և անհետաձգելի ըլլան : Եւ ասիկա շատ բացայայտ է :

Որովհետև, եթէ պարտքի վճարումը ստիպողական և անմիջական չ'ըլլայ, բնական է որ պարտատէրը յարմարագոյն առիթի մը սպասէ իր պարտքը հատուցանելու համար, ինչպէս նաև պահանջատէրն աւելի նպաստաւոր պայմաններու ակնկալութեամբ հետաձգէ իր պահանջին իրականացումը, որով գիներու արհեստական սոյն փոփոխումը և հաւասարակչութիւնը տեղի չ'ունենար :

Գիտենք որ, երկու երկիրներուն փոխանակագիւնը հաւասար է ( au pair ), երբ միոյն դրամը միւսին մէջ իր իսկական գնովն անցնի : Արդ, ինչպէս խմանալ,

տուեալ բոպէ մը, թէ այդ հաւասարութիւնը գոյութիւն ունի՞ թէ ոչ: Խնդիրը շատ պարզ է և այդ հաւասարութիւնն ակնյայտնի կ'երևայ, երբ երկու տէրութեանց դրամական գրութիւնը միատեսակ է. օրինակ՝ Իտալիոյ և Զուիցերիոյ մէջ փոխանակագինը հաւասար կ'ըլլայ, երբ 100 իտալ. ֆրանք կամ լիրէ արժեն 100 զուիցերիական ֆրանք և փոխադարձաբար: Երբ, սակայն, տէրութիւնները տարբեր դրամական գրութիւն ունենան, այն ատեն փոխանակագինի հաւասարութիւնը (pair) գտնելու համար հարկաւոր է փոքրիկ երկից կանոնի հաշիւ մը ընել հետագայ կերպով: Առնենք օրինակի համար Թուրքիա և Իտալիա, որոնց դրամական միութիւնը բոլորովին տարբեր է և ընենք հետեւեալ խորհրդածութիւնը: Գիտենք, որ զ՝. 439,22 սակեղրամ հաւասար է իբրև արժանք (այսր), իբրև ծանրութիւն և հետևաբար իբրև արժէք 100 իտալ. ֆրանքի կամ լիրէի. արդ, ի՞նչ գին պէտք է ունենայ 100 դահեկանը Իտալիոյ մէջ, որպէս զի երկու տէրութեանց փոխանակագինը հաւասար գտնուի: Պատասխան՝ եթէ

$$\text{Ոսկի զ՝. } 439,22 = \text{լիրէ } 100.$$

$$\text{Ոսկի զ՝. } 1 = \frac{100}{439,22} = \text{լիրէ } 0,22767 \text{ և}$$

$$\text{Ոսկի զ՝. } 100 = \frac{100 \times 100}{439,22} = \text{լիրէ } 22,767:$$

Ուրեմն զ՝. 439,22ի գինը 100 լիրէի փոխարէն Թուրքիոյ մէջ և լիրէ 22,767 ի գինը 100 զ՝.ի փոխարէն Իտալիոյ մէջ, այդ երկու երկիրներու հաւասար փոխանակագինն է որ կը կոչուի իսկական հաւասարութիւն (pair intrinsèque) կամ ոսկոյ հաւասարութիւն (pair de l'or) և կամ դրամոց հաւասարութիւն (pair des monnaies):

Մրցակցութիւնը մէկ կողմէն և խրաքանչիւր հրապարակի վրայ տեղի ունեցող առօրեայ գործերը միւս կողմէն, պատճառ կ'ըլլան որ փոխանակագիւնները հետանան այդ հաւասարութիւնէն դէպ ի վեր կամ դէպ ի վար: Այդ հետաւորութիւնը, սակայն, անսահման չէ. ընդհակառակը: Այն տարբերութիւնը որ կը գոյանայ իսկական նաւասարութեան և օրուան փոխանակագիւնի միջեւ, գրեթէ միշտ հաւասար է դէպի տուեալ երկիր մը սակի զբրկելու ծախքերուն և կամ այն սուբլագիւնին (prime) որ պարտաւէր վաճառականը յանձնառու կ'ըլլայ վճարել, ինչպէս արդէն տեսանք, սակի չի զբրկելու համար և պահանջուորն ալ յանձն կ'անու տալ, սակի ներմուծելու հարկին տակ չգանուելու համար: Ահա այս տարբերութիւնն է որ կը կոչուի ոսկեչափի (gold - point) և ի մասնաւորի ներքին ոսկեչափ՝ (gold-point d'entrée) առջին պարագային, այսինքն երբ ոսկին ներսէն դուրս զբրկուելու մասին ըլլայ խօսքը և արտաքին ոսկեչափի (gold-point de sortie) երկրորդ պարագային, այսինքն երբ յարտաքուստ ստանալու մասին ըլլայ խօսքը: Իրտելի է որ այդ երկու ոսկեչափերը իրարու հանդէպ տասանոցի մը պէս կը տարուբերուին, այսինքն երբ մին բարձրանայ միւսը նոյն չափով կ'իջնայ և փոխադարձաբար:

Սակայն պէտք չէ մոռնալ, որ ասիկա այն պետութեանց համար է որոնք բնականոն վիճակի մէջ են և միեւնոյն դրամական ճշգոյրը (étalon) ունին: Օրինակ՝ Ռուսմանիա և Չուիցերիա որոնք բացարձակապէս միեւնոյն դրամական դրութիւնն ունին, և որոնց ոսկիներն անխտիր կ'ընթանան երկու տէրութեանց մէջ ալ: Են-

Թագրենք որ, առեալ բոպէ մը, Զուխցերիա պարտաւոր ըլլայ Ռուսմանիոյ և այդ պարտքին հատուցման համար կատարուած շարունակական ոսկւոյ առաքմանց հետեւանքով Զուխցերիոյ մէջ ոսկին նուազած ըլլայ, այնպէս որ անկարելի ըլլայ այլ ևս հոն ոսկեղրամ գտնել, հրապարակի վրայ: Ի՞նչ պիտի պատահի: — Այն՝ ինչ որ անխուսափելիօրէն տեղի կ'ունենայ, ամէն անգամ որ ապրանքի մը համար աւելի գնորդ ըլլայ քան թէ ծախող, այսինքն կը սուղնայ, Հետեւաբար ոսկին աւելագին մը կ'ստանայ և Ռուսմանիոյ վրայ փոխանակագինը կը բարձրանայ, և ո՛չ միայն մինչև ներքին ոսկեշափր, այլ, կը հեռանայ անկից ալ վեր և ճիշդ այն ծախքին չափ որ հարկաւոր է ոսկեղրամ հայթայթելու համար, որ է աւելագինին չափով:

Տեսանք արդէն որ փոխանակագիններու ելեւէջներու գլխաւոր պատճառը « առաջարկի և պահանջի » առաջ բերած կացութիւնն է և թէ երկրի մը ուրիշ պետութեան վրայ փոխանակագինը այնքան աւելի բարձր է որքան աւելի նա պարտք ունենայ վերջնոյն անյետաձգելիօրէն վճարելի: Օրինակի համար, դիտուած է որ Լոնտոնի մէջ Ոսկեհանքի արժեթուղթերու — որոնք համաշխարհային շահադիտութեան առարկայ են — հաշուեյարդարութեան նախօրեակին, սոյն հրապարակին հետ յարաբերութիւն ունեցող տէրութեանց Անգլիոյ վրայ փոխանակագինը կը բարձրանայ միշտ: Պատճառն: Որովհետև դրամատէրերը իրենց ապառիկ (à terme) գնած ահագին քանակութեամբ արժեթուղթերը ստանալու համար ստիպուած են Լոնտոն անգլ. դրամ հասցնել:

կայ ուրիշ պատճառ մ'ալ որ կ'ազդէ փոխանագի-  
 ներուն վրայ. այդ է՝ երկու տէրութեանց զրամի սակե-  
 րու տարբերութիւնը: Եթէ, օրինակի համար, երկրի մը  
 մէջ զրամի սակը շատ բարձր է և միւսին մէջ շատ ցած,  
 առաջնոյն փոխանակագինը վերջինին վրայ շատ ծախող-  
 ներ պիտի ջուճենայ, հետեւաբար պիտի իյնայ, մինչդեռ  
 երկրորդ երկրին մէջ առաջնոյն վրայ փոխանակագինը  
 շատ անողներ պիտի գտնուի, հետեւաբար պիտի քարձ-  
 րանայ: Ասիկա շատ պարզ է: Առաջին երկրին մէջ  
 ուր զրամագլուխն աւելի շահարեք գործածութիւն մը  
 ունի երկրորդին վրայ, պահանջւորները պիտի ուզեն  
 իրենց զրամն ետ բերել տալ, աւելի նպաստաւոր կերպով  
 գործածելու համար, հետեւաբար փոխանակագինը աւելի  
 շատ ծախողներ պիտի ունենայ [ պիտի իյնայ ]: Ընդհա-  
 կառակն, երկրորդ երկրին մէջ ալ առաջնոյն հանդէպ պար-  
 տաւորները պիտի ջանան իրենց պարտքերը ընդ փոյթ  
 հատուցանել, որպէս զի իրենց երկրի մէջի սակէն աւելի  
 բարձր տոկոսներ վճարելու չի հարկադրուին, ուստի փո-  
 խանակագինն աւելի շատ գնողներ պիտի ունենայ ( պի-  
 տի բարձրանայ ): Այս երկրորդ երկրին մէջ, մանաւանդ  
 թէ, պիտի գտնուին անհասաներ, որոնք առանց պարտք  
 ունենալու, պիտի ուզեն առաջնոյն զրամ զրկել հոնտե-  
 զի բարձր սակէն օգտուելու և իրենց զրամագլուխը առ-  
 ժամանակեայ կերպով հոն զետեղելու համար:

Կան բազմաթիւ ուղղակի կամ անուղղակի ուրիշ  
 պատճառներ ալ փոխանակագիններու վրայ ազդող, բայց  
 անոնց ուսումնասիրութիւնը մեր համեստ ծրագրէն հե-  
 ոու կը տանի մեզ, ուստի նախամեծար կը համարինք

մինչև հիմա ըսածնիս իբրև քամալիոյի տեսականը նկատելով անցնիլ քիչ մ'ալ գործնականին քննութեան :

Առ այդ մեծապէս օգտակար է աչքէ անցընել անցողակի կերպով Եւրոպայի գլխաւոր սակարաններու սակացոյցները :

Սակարանի մասին խօսած ատեննիս, տեսանք արդէն, որ հոն միայն զանազան արժեթուղթերու առուծախը չէ որ կը կատարուի, այլ և քամալիոյի գործողութիւնները : Արդ, ինչպէս արժեթուղթերու, նոյնպէս ալ քամալիոյի գործոց համար պաշտօնական սակացոյց կը տպուի Սակարանի Վարչութեանց կողմէ, ուր ամփոփուած են օրուան գիները և որուն վրայ կը հիմնուին փոխանակագրի միջազգային և շահադիտական յարաբերութիւնք :

Սակացոյցի արձանագրութիւնք երկու տեսակ են :

Ա. — Տեղական զրամական միութիւնն անփոփոխ պահելով, անոր համապատասխան օտար զրամը նշանակել : Սա կը կոչուի անփոփոխ հաշուերակերպ գործածել (*donner le certain*) : Օր., երբ ըսենք թէ Ղալաթիոյ հրապարակին վրայ այսօրուան ֆրանքի գինը 23 է, սա կը նշանակէ անփոփոխ հաշուերակերպ գործածել, որովհետև 1 Օամ. ոսկին անփոփոխ պահուած և փոխարէնը ֆրանսական զրամով նշանակուած է :

Բ. — Օտար զրամական միութիւնն անփոփոխ պահելով, անոր համապատասխան տեղական գինը նշանակել : Այս ալ կը կոչուի փոփոխակի հաշուերակերպ գործածել (*donner l'incertain*) : Օրինակ՝ երբ ըսենք թէ

Բարիզի մէջ Անգլիոյ վրայ փոխանակագինը 25 ֆր. է, սա կը նշանակէ փոփոխակի հաշուեկեաներսզ գործածել, որովհետեւ օտար դրամը, այն է 1 անգլ. ոսկին անփոփոխ պահուած և փոխարէնը ազգային դրամով արտայայտուած է:

Սակացոյցերու ընթերցման չձեռնարկած, մանաւանդ թէ զայն ղիւրացնելու նպատակաւ, աւելորդ չ'ըլլայ գուցէ զանազան երկիրներու մէջ գործածուած դրամական միութեանց յիշում մը որ եթէ գործի մարդոց առհասարակ օգտակար է, դրամատան պաշտօնէին անհրաժեշտ դրամագլուխներէն մին կը կազմէ:

ԱՆԳԼԻՍ.— Դրամական միութիւնը կը կոչուի Սթէրլին կամ Սուվրէն (pound sterling)

1 Սթէրլինը = 20 Շիլին (shilling)

1 Շիլինը = 12 Բէնս (pence)

Երկրին դրամական ճշգոցը միմիայն ոսկի է: Ոչ ոք ստիպուած է 2 ոսկիէ աւելի արծաթ դրամ ընդունիլ: Գալով պզնձէ դրամին, 1 Շիլինէ աւելին կարելի է ըստ օրինի մերժել: Անգլիա ունի հետեւեալ դրամի տեսակները:

Ոսկի՝ 5 Սուվրէն

2 Սուվրէն

1 Կինէ = 21 Շիլին

1 Սուվրէն կամ Սթէրլին

$\frac{1}{2}$  Սուվրէն = 10 Շիլին

Արծաթ՝	5 Շիլլին	կամ	1 թագադրամ (couronne)
	2 <sup>1</sup> / <sub>2</sub> »	»	<sup>1</sup> / <sub>2</sub> թագադրամ
	4 »	»	2 Ֆիորլին
	2 »	»	1 »
	1 »	»	12 Բէնս
	6 Բէնս		
	4 Բէնս		

Պղնձէ կամ նիքէլէ դրամներու յիշատակութիւնը զանց պիտի առնենք:

Թղթադրամ՝ Անգլիոյ Դրամատան (Bank of England) տոմսեր 5, 10, 20, 50, 100, 200, 300 և 1000 Աթէրլիննոց, որոնց փոխարէն վերոյիշեալ Պանքան ոսկի կը հատուցանէ անմիջապէս և անսպայման, ու է ժամանակ:

Անգլիական գաղթաւայրերուն մէջ ալ սոյն դրամները կը գործածուին բացի Հնդկաստանէն, որուն դրամական դրութիւնը հետեւեալն է.

1 Անգլ. ոսկի = 15 Րուբլի ոսկեդրամ

1 Րուբլի = 16 Աննա = Ֆր. 1.65

<sup>1</sup>/<sub>2</sub> » = 8 » = » 0.80

<sup>1</sup>/<sub>4</sub> » = 4 » = » 0.40

<sup>1</sup>/<sub>8</sub> » = 2 » = » 0.20

Այս վերջին չորս տեսակն ալ արծաթ դրամ է: Բացի ասկից, կան Հնդկի կառավարութեան տոմսերը՝ 5, 10, 20, 50, 100, 500, 1,000 և 10,000 Րուբլինոց:

ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ.— Մինչև 1892 զրամական միութիւնը կուլարն կամ Ֆլորին կը կոչուէր և մէկ կուլարնն ալ 100 Բրոյցէր էր. բայց սոյն թուականէն ի վեր կուլարնը կէսի բաժնուեցաւ և Բրօնէ (krone) անուան տակ իբր զրամական միութիւն ընդունուեցաւ :

1 Բրօնէ = 100 Հէլլէր :

Աւստրիա-Հունգարիա ունի հետեւեալ զրամները .  
Ոսկի՝ Քառեակ Տուքադ ( Quadruple ducat ) որ արժէ Ֆրանք 47.40 մօտաւորապէս

Տուքադ = Ֆրանք 11.85

20 Բրօնէ

10 »

16 » = 8 Ֆլորին = 20 Ֆր .

8 » = 4 » = 10 »

Արծաթ՝ Մարիա-Թէրէզիըն — Թալէր = Ֆր . 5.20

2 կուլարն = 4 Բրօնէ = 5 Ֆր .

1 » = 2 »

1/2 » = 1 »

1/4 » = 1/2 » ( 25 Բրոյցէր )

Թղթադրամ՝ 10, 20, 50, 100 և 1000 Բրօնէնոց որոնք երկրին ամէն մասերուն մէջ բռնի չրջարեւութիւն ունին ըստ օրինի : 1 Բրօնէ կ'արժէ ոսկի դահեկան 4 1/2 :

Տարակոյս չկայ, որ մենք իսկական գիները կը գնենք, առանց նկատի առնելու պատերազմի կամ այլ պատճառներով տեղի ունեցած պատահական փոփոխութիւնները :

ՅԲԱՆՍԱ.— Դրամական միութիւնը կը կոչուի Ֆրանք որ կը բաժնուի 100 Սանթիմի և որ կ'արժէ մեր դրամով ոսկի դահեկան 4.40 :

Ֆրանսա ունի հետեւեալ դրամի տեսակները .

Ոսկի՝ 100, 50, 20, 10 և 5 Ֆրանք :

Արծաթ՝ 5, 2, 1 Ֆրանք, 50 և 20 Սանթիմ :

Թղթադրամ՝ 50, 100, 500 և 1000 Ֆրանքնոց և ներկայ պատերազմի միջոցին հանուած 5, 10 և 20 Ֆրանք տը Ֆրանսի տոմսերը, զոր վերջինս ստիպուած է փոխանակել ոսկիով կամ արծաթով, կրողին ցանկութեան համաձայն :

Ֆրանսական դրամական դրութիւնն որդեգրուած է խումբ մը տէրութեանց կողմէ, ( Իտալիա, Յունաստան, Պելժիա, Չուիցերիա ) որոնք 1865ին Լասինական միութիւն անուան տակ, համաձայնութիւն մը կնքած են Ֆրանսայի հետ, որուն շնորհիւ միոյն դրամը, ազատ չրջարերութիւն պէտք է վայելէ միւս պետութեանց մէջ ալ : Ուրիշներ ալ՝ ( Սպանիա, Ռումանիա, Պուլկարիա, Սերպիա ) առանց ուղղակի մասնակցած ըլլալու, յաջորդաբար յարած են սոյն միութեան, իրենց դրամական դրութիւնը, թէպէտ տարբեր անուններու տակ, յարմարցնելով Ֆրանսականին :

Թէպէտեւ, ժամանակի ընթացքին տեղի ունեցած զեղծումներու պատճառաւ, դրամոց մանաւանդ արծաթի, փոխադարձ չրջարերութիւնը բազմաթիւ սեղմումներու ենթարկուած է, բայց և այնպէս՝ ոսկեդրամը ցարդ ազատ

ընթացք ունի Լատինական Միութեան երկիրներու մէջ :

Մի առ մի չի պիտի թուենք վերոյիշեալ ութը պետութեանց դրամներուն տեսակը , քանի որ անոնք ֆրանսականին նման են , պիտի բաւականանանք , պարզապէս , զանազան երկիրներու մէջ Յրանքին և Սանթիսիմին համապատասխան յորջորջումը յիշատակելով :

Իտալիա՝ Լիրա = 100 Չէնթէզիմի .

Յունաստան Տրահմա = 100 Լէփթա .

Պելժիա՝ Յրանք = 100 Սանթիմ .

Զուիցերիա՝ Յրանք = 100 Սանթիմ .

Սպանիա՝ Բէզէթա = 100 Չէնթիմոս .

Ռումանիա՝ Լէյ = 100 Պանի .

Պուլկարիա՝ Լէվ = 100 Սթօթինքի .

Սերպիա՝ Տինար = 100 Փարա :

ԳԵՐՄԱՆԻԱ . — Դրամական միութիւնն է Ռայխսմարք կամ պարզապէս Մարք , որ կը բաժնուի 100 Բֆէննիկի : Երկրին դրամական ճշգոյցը սակի է՝ և ոչ ոք ստիպեալ է 20 Մարքէ աւելի արծաթ դրամ ընդունելու : Դերմանիա ունի հետեւեալ դրամի տեսակները :

Ոսկի՝ 20 Մարք = Կրկին թագադրամ

10   »   = թագադրամ

5   »

Արծաթ՝ 5 Մարք

2   »

1   »

1/2  »

Թղթադրամ՝ 5, 10, 20, 50, 100, 500 և 1000  
Մարքնոց մեծ մասամբ շխախտպանքի տոմսեր, մասամբ  
ալ ութը զանազան գերմանական դրամատանց պանք-  
նօթքներ:

ԹՈՒՐԻՔԻԱ. — Դրամական միութիւնն է Օամ. լի-  
րա կամ ոսկի Մէճիտիյէ որ հաւասար է 100 Դահեկանի  
կամ Ղրուշի, վերջինս ալ 40 փարայի: Օամ. Կայսրու-  
թիւնն ունի հետեւեալ դրամի տեսակները:

Ոսկի՝ 500, 250, 100, 50 և 25 Դահեկան:

Արծաթ՝ 20, 10, 5, 2, 1 և կէս Դահեկան:

Թղթադրամ՝ 1, 5, 50, և 100 ոսկի Մէճիտիյէնոց  
որոնք սովորական ժամանակ Օամ. Դրամատան միմիայն  
կ. Պոլսոյ Մասնաճիւղին կողմէ կը փոխանակուէին ոս-  
կիով, բայց համեարտական պատերազմի միջոցին լոյս  
տեսած օրէնք մը անոնց պարտաւորիչ շրջաբերութիւն  
չնորհեց:

Բայ ի վերոյիշեալ տեղական դրամներէն Կայսրու-  
թեան վաճառաչա՝ քաղաքներուն մէջ, ինչպէս կ. Պո-  
լիս, Զմիւռնիա և շն. օտար ոսկեդրամներն ալ կ'ընդուն-  
ուին ի հնուց ի վեր աւանդաբար: Արծաթ դրամի և ոս-  
կեդրամի միջև ութը առ հարիւր տարբերութիւն մը կայ  
ի նպաստ վերջնոյն: Կան քաղաքներ ալ ուր հաղորդակ-  
ցութեանց զժուարութեան կամ ուրիշ տեղական պատ-  
ճառներով այս համեմատութիւնը կը տարբերի:

ՌՈՒՍԻԱ.— Դրամական միութիւնն է Րուպլի, որուն կողկաստի մէջ Մանէթ ալ կ'ըսեն: Մէկ Րուպլին կ'արժէ 100 կոպէկ և մեր դրամովն ալ ոսկի դահեկան 11<sup>1</sup>/<sub>2</sub>: Ռուսիա ունի հետեւեալ դրամի տեսակները:

Ոսկի՝ էմպէրիալ	1886=10	Րուպլի=40	Ֆր.
Բօլ (այսինքն կէս)	» 1886=5	» =20	»
»	» 1897=15	» =40	»
Բօլ »	» 1897=7 <sup>1</sup> / <sub>2</sub>	» =20	»
10 Րուպլի			
5 »			

Արծաթ՝ 1 Րուպլի		
1/2 »	կամ	Բօլթինա
1/4 »	»	Չէթվէրթաք
20 կոպէկ	»	Տվուկրիվէննիյ
15 »	»	Բալթիննիյ
10 »	»	Կրիվինիկ
5 »	»	Բիաթաչօք

Թղթադրամ՝ 1, 3, 5, 10, 25, 50, 100 և 500 Րուպլինոց Պետական Պանքայի տոմսեր ի տես փոխանակելի:

Համայն Ռուսիոյ մէջ այս դրամներն են որ կ'ընթանան. բացառութիւն կը կազմէ միայն Ֆինլանտիան, ուր կը կիրարկուի ֆրանսական դրութիւնը: Ֆրանքը կը կոչուի Մարքա որ կը բաժնուի 100 Բէննի:

ՍԿԱՆՏԻՆԱԻԵԱՆ ԵՐՐԵԱԿ ԹԱԴԱԻՐՈՒԹԻՒՆՔ.— Տանխմարքա, Շուէա և Նորվեկիա 1872էն ի վեր միննոյն

գրամական միութիւնն ունին որ Բրոնօր ( kronor ) կը կոչուի և հաւասար 100 էօրէյի (ore): Իրենց գրամական ճշգոյցը սակի է. ոչ ոք ստիպեալ է 20 Բրոնօրէ աւելի արծաթ գրամ ընդունիլ: Ունին հետեւեալ գրամի տեսակները .

Ոսկի՝	20	Բրոնօր
	10	»
Արծաթ՝	2	»
	1	» կամ 100 էօրէ
		50, 40, 25 և 10 էօրէ

Թղթադրամ՝ 5, 10, 50, 100, 500 և 1000  
Բրոնօրնոց: Մէկ Բրոնօրը կ'արժէ ֆր 1,39:

ՍՏՈՐԻՆ և ԱՀԱՆԳՆԵՐ ԿԱՄ ՀՈՒԱՆՏԱ.— Դրամական միութիւնն է ֆլօրին = 100 Յէնթ: Կրկնակ ճշգոյց ունի, այսինքն թէ՛ սակի և թէ՛ արծաթ գրամներ համահաւասար կը շրջարեբին: Ունի հետեւեալ գրամի տեսակները .

Ոսկի՝ Կրկին Տուքադ որ կ'արժէ մօտաւորապէս մէկ Օսմ. սակի

Տուքադ = 10 ֆլօրին

Արծաթ՝	2 1/2	ֆլօրին	կամ	Ռիքստալէր
	1	»	»	100 Յէնթ
	1/2	»	»	50 »
	1/4	»	»	25 »
	1/10	»	»	10 »
	1/20	»	»	5 »

Թղթադրամ՝ 10, 25, 40, 60, 80, 100, 200, 300, 500, և 1000 Ֆլորիննոց: Մէկ Հոլանտական Ֆլորինը կ'արժէ մօտաւորապէս ոսկի դահեկան 9:

ՓՈՐԹՈՒԿԱԼ. — Երկրին դրամն է Միլլէյս որ հաւասար է 1000 Րէյսի: Միլլէյսը արժէ շուրջ Ֆր. 5,60: Հազար Միլլէյս կը կոչուի մէկ Քօնթօ, իսկ 1000 Քօնթօ կը յորջորջուի Քօնթօ աէ Քօնթօ: Փորթուկալ ունի հետեւեալ դրամները:

Ոսկի՝	10	Միլլէյս	կամ	1	Քօրօնա
	5	»	»	$\frac{1}{2}$	»
	2	»	»	$\frac{1}{5}$	»
	1	»	»	$\frac{1}{10}$	»
Արծաթ՝	500	Րէյս	կամ	5	Քէսթօն
	200	»	»	2	»
	100	»	»	1	»
	50	»	»	$\frac{1}{2}$	»

Թղթադրամ՝ 10, 20, 50, 100 Միլլէյս ոսկեդրամ: 2500, 5000 Րէյս արծաթ: Բոլոր այս պանքնօթները պարտաւորիչ շրջաբերութիւն ունին 1891էն ի վեր:

Եւրոպայէն դուրս քանակաւ տեսակէտով նշանակութիւն ունեցողը Ամերիկան է և ի մասնաւորի Միացեալ Նահանգները:

Միացեալ Նահանգաց դրամական միութիւնն է Տօլարը որ կը բաժնուի 100 Ցէնթի և կ'արժէ 5 Ֆրանք: Ունի հետեւեալ դրամի տեսակները.

Ոսկի՝ կրկին էկլ	= 20	Տօլար
էկլ (արծիւ)	= 10	»
	5	»
	2 1/2	»

Արծար՝ 1	Տօլար = 100	Յէնթ
1/2	» = 50	»
1/4	» = 25	»
1/10	» = 10	»

Թղթադրամ՝ 1, 2, 5, 10, 20, 50, 100, 500, 1,000, 5,000 և 10,000 Տօլարնոց, կառավարութեան կամ ազգային դրամատուններու կողմէ արտադրուած պանթնօթներ Treasury notes, Unites States notes, Gold Certificates, Silver Certificates և շնանուան տակ :

Ծանօթ.— Պէտք է զգուշանալ զանազան խարդախներու կողմէ Եւրոպայի մէջ ներմուծուած ամերիկեան տեսակ մը տոմսերէ, որոնք թէպէտ և իսկական են, բայց ընթացք և արժէք չ'ունին, չբջարքութենէ շատոնց քաշուած ըլլալուն համար : Զանոնք շատ հեշտ է զանազանել վրայի վերտառութենէն որ փոխանակ United States of Americaի կը կրէ Confederated States of America տիպոսը :

ՔԱՆԱՏԱՆ՝ բաց ի իր Մայր-Երկրին՝ Անգլիոյ դրամներէն՝ կը գործածէ նոյնպէս Միացեալ Նահանգաց դրութիւնը :

Ամերիկայի մնացեալ բոլոր Պետութիւններն ալ ունին Ամերիկեան Տօլարին համարժէք դրամ մը, թէպէտև տարբեր անուան տակ, որ է Բէզօ հաւասար 100 Չէնթալօսի :

Ասիական Տէրութեանց մէջ գրամական տեսակէտով յիշատակի արժանի երեք կայսրութիւն կայ, մին մեր գրացի Պարսկաստանը, երկուքն ալ շարժն և Չինաստան:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.— Թէպէտև իր արտաքին յարաբերութեանց համար կը գործածէ Օսմանեան, Ռուսական և Անգլիական գրամները, բայց ունի իր սեփական գրամը, որ կը կոչուի Թուլման, մօտաւորապէս կէս Օսմանեան ոսկիի արժողութեամբ:

Դրամի տեսակները հետևեալներն են.

Ոսկի՝	Հին Թուման	=	10	Քրան
	կէս	»	=	5
	$\frac{1}{5}$	»	=	2

1879 էն առաջ կոխուած 2 Թուման = Ֆրանք 17.-

1879 էն » » 1 » = » 10.-

1879 ին կոխուած 2 Թուման կամ կրկնակ Աշրէֆի = Ֆրանք 18.-

1879ին կոխուած 1 Թուման կամ Աշրէֆի = Ֆր. 9.-

1879ին կոխուած կէս Թուման կամ Բէնչօզարի = Ֆրանք 4,50

1879ին կոխուած  $\frac{1}{5}$  Թուման կամ Տօճօզարի = Ֆրանք 1,70

Արծար՝ 5, 2, 1,  $\frac{1}{2}$ , Քրաննոց և 3 Շահինոց գրամներ: Մէկ Քրանը կ'արժէ 20 Շահի: Մէկ Շահին մօտաւորապէս 3 Սանդ. Ֆրանս. կ'արժէ:

Թղրադրամ՝ Պարսկաստանի կայս. գրամատան (Imperial Bank of Persia) տոմսեր 1, 2, 3, 5, 10,

20, 25, 50, 100, 500, և 1,000 թուամաննոց, արծաթով փոխանակելի:

ՃԱՌՄՆ. — Երկրին ճշդոցը արծաթ է թէպէտ ոսկի դրամներ ալ ունի, ինչպէս ստորեւ պիտի տեսնենք, բայց ասոնք, զրեթէ ամբողջովին, արտասահման գաղթած ըլլալով, չափազանց հազուագիւտ են և հետեւաբար անագին աւելագին մը ունին երկրին մէջ: Տեղական դրամը կը կոչուի Եէն որ հաւասար է 100 Սէնի:

Ճարոնի դրամի տեսակներն են.

Ոսկի՝	1871 ին կոխուած	20	Եէն = Ֆր.	103.—
	1871 ին	»	10	»
	1871 ին	»	5	»
	1871 ին	»	2	»
	1871 ին	»	1	»

Այս դրամները՝ իրենց վրայ տպուած արժէքին կրկինն ունին Ճարոնի մէջ:

	1897 ին կոխուած	20	Եէն = Ֆր.	51,50
	1897 ին	»	20	» = » 25,75
	1897 ին	»	5	» = » 13,—

Արծաթ՝	1 Եէն = Ֆր.	2,50
	կամ 100 Սէն	
	50	»
	20	»
	10	»
	5	»

Թղթադրամ՝ 1, 5, 10 և 100 Եէննոց:

ՉԻՆԱՍՏԱՆ. — Թէպէտ և ընթացիկ դրամը Թաէլ կը կոչուի ( 100 Սէնթէ բաղկացեալ ), բայց իրականին մէջ այդ անուանով դրամ գոյութիւն չ'ունի: Չինու մէջ ամէն գաւառ, մանաւանդ թէ ամէն կարեւոր քաղաք իր դրամն ունի միեւնոյն Թաէլ անուամբ, բայց իրարմէ բոլորովին տարբեր թէ մեծութեամբ և թէ կշիռքով: Առեւտուրի մէջ Մեքսիկայի Տուարներն են որ կը գործածեն, ինչպէս Ասիոյ շատ մը սեփական դրամ չ'ունեցող ազգեր. իսկ փոքրիկ գործառնութեանց համար պզնձէ և զինկէ պատրաստուած դրամ մը ունին «Բաշ» անուան տակ, որուն արժէքը մօտաւորապէս կէս Սանթիմ է, այնպէս որ վերջինէս 2,000 կտոր հարկ կ'ըլլայ երբեմն 1 Թաէլ վճարելու համար: Աւելորդ է ըսել որ թղթագրամն ալ գոյութիւն չ'ունի Չինաստանի մէջ:

Պարզապէս յիշած ըլլալու համար անուանենք նաև Ափրիկէի մէջ Հապէշիտանը: Սա ոսկեդրամ չ'ունի, ինչպէս նաև թղթագրամ ալ չ'ունի: Կը գործածէ արծաթ դրամներ որոնք են.

Թալարի = Յր. 2,75, կէս Թալարի,  $\frac{1}{4}$  Թալարի,  $\frac{1}{8}$  Թալարի,  $\frac{1}{20}$  Թալարի:

Աշխարհի միւս հողամասերուն և ազգերուն վրայ աւելորդ է երկարել. սաշափը ըսենք որ անոնք մեծաւ մասամբ իրենց պաշտպան Պետութեանց դրամական զբութիւնը որդեգրած են:

Հիմա որ սեղեկացանք զանազան դրամներու յարաբերութեանց, զժուար չէ այլ ևս սակացոյցերու ուսումնասիրութեան ձեռնարկելը: Սկսինք Բարիզի սակացոյցէն որ աշխարհիս կարեւորագոյններէն է: Առնենք օրինակ մը և յետոյ քննենք մանրամասնութիւնները:

## ԲԱՐԻՁԻ ՍԱԿԱՑՈՅՑ

ԳԱՄՊԻՑ	ԶԷՖ, ՎՆԱՐՈՒՄ, Կարն քուղք	ՆԱՄՄԱՆՈՒՄ քուղք	Զեղչի սակ
ԼՈՆՏՈՆ	25.13 — 25.16	25.17 <sup>1</sup> / <sub>2</sub> — 25.20 <sup>1</sup> / <sub>2</sub>	3 %
ԳԵՐՄԱՆԻԱ	122 <sup>11</sup> / <sub>16</sub> — 122 <sup>15</sup> / <sub>16</sub>	122 <sup>3</sup> / <sub>4</sub> — 123	4 %
ՊԵՂԺԻԱ	99 <sup>1</sup> / <sub>8</sub> — 99 <sup>1</sup> / <sub>4</sub>	99 <sup>5</sup> / <sub>16</sub> — 99 <sup>7</sup> / <sub>16</sub>	4 %
ՏԱՆԻՄԱՐՔԱ	137 <sup>3</sup> / <sub>4</sub> — 138 <sup>3</sup> / <sub>4</sub>	137 <sup>3</sup> / <sub>4</sub> — 138 <sup>3</sup> / <sub>4</sub>	5 %
ՍՊԱՆԻԱ	476 <sup>1</sup> / <sub>2</sub> — 481 <sup>1</sup> / <sub>2</sub>	475 <sup>1</sup> / <sub>2</sub> — 480 <sup>1</sup> / <sub>2</sub>	4 <sup>1</sup> / <sub>2</sub> %
ՀՈՒԱՆՏԱ	207 <sup>3</sup> / <sub>8</sub> — 207 <sup>7</sup> / <sub>8</sub>	207 <sup>1</sup> / <sub>2</sub> — 208	3 <sup>1</sup> / <sub>2</sub> %
ԻՏԱԼԻԱ	99 <sup>1</sup> / <sub>2</sub> — 99 <sup>3</sup> / <sub>4</sub>	99 <sup>1</sup> / <sub>2</sub> — 99 <sup>3</sup> / <sub>4</sub>	5 %
ՆԻՆ-ԵՐԲ	513 <sup>1</sup> / <sub>4</sub> — 516 <sup>1</sup> / <sub>4</sub>	512 <sup>1</sup> / <sub>4</sub> — 515 <sup>1</sup> / <sub>4</sub>	5 %
ՆՈՐՎԵԿԻԱ	137 <sup>3</sup> / <sub>4</sub> — 138 <sup>3</sup> / <sub>4</sub>	137 <sup>3</sup> / <sub>4</sub> — 138 <sup>3</sup> / <sub>4</sub>	4 <sup>1</sup> / <sub>2</sub> %
ՓՈՐՔՈՒԿԱԼ	479 — 489	478 — 488	5 <sup>1</sup> / <sub>2</sub> %
ԲԵՂՐՈՒԿՐԱՏ	262 <sup>1</sup> / <sub>4</sub> — 264 <sup>1</sup> / <sub>4</sub>	261 <sup>1</sup> / <sub>4</sub> — 263 <sup>1</sup> / <sub>4</sub>	5 <sup>1</sup> / <sub>2</sub> %
ՇՈՒԷՏ	137 <sup>3</sup> / <sub>4</sub> — 138 <sup>3</sup> / <sub>4</sub>	137 <sup>3</sup> / <sub>4</sub> — 138 <sup>3</sup> / <sub>4</sub>	4 <sup>1</sup> / <sub>2</sub> %
ԶՈՒՑՆԵՐԻԱ	99 <sup>23</sup> / <sub>32</sub> — 99 <sup>27</sup> / <sub>32</sub>	99 <sup>43</sup> / <sub>16</sub> — 99 <sup>5</sup> / <sub>16</sub>	3 <sup>1</sup> / <sub>2</sub> %
ՎԻԵՆՆԱ	104 — 104 <sup>1</sup> / <sub>4</sub>	104 <sup>1</sup> / <sub>8</sub> — 104 <sup>3</sup> / <sub>8</sub>	4 %

Ըսենք անմիջապէս, որ հոս նշանակուած զինները, որոնք միմիայն Բարիզի մէջ տեղի ունեցած առօրեայ գործողութեանց համարատուութիւնն են, այն թուղթերու համար են, որոնց փոխարժէքը օտար զրամներով արտայայտուած է: Բարիզի սակացոյցին մէջ, ինչպէս վերի օրինակէն կը տեսնուի, չորս սիւնակ կայ:

Ա. Քամալիօ.— Այս սիւնակին մէջ կը տեսնենք Պետութեանց կամ իրենց մայրաքաղաքներուն անունը, ինչպէս Լոնտոն, Պելժիա, Գերմանիա եւն. սա կը նշանակէ այդ տեղերու վրայ քաշուած թուղթեր:

Բ. Չեֆ, վնարում, կարն բուրբ.— Այս սիւնակին մէջ կը նշանակուին կարճ պայմանաժամով թուղթեր, այսինքն ի տես վճարելի կամ պայմանաժամ չ'ունեցող թուղթեր:

Գ. Նուամետայ բուրբ.— Հոս ալ կ'արձանագրուին երկար պայմանաժամ ունեցող, այսինքն այնպիսի թուղթեր որոնց վճարման համար առ առաւելն 90 օր կայ:

Դ. Ջեղչի սակ.— Այս սիւնակին մէջ կը գրուին պաշտօնական սակերը այն երկիրներուն, որոնց անուան զիմացը նշանակուած են:

Գիներն առ հասարակ ի տես վճարելի թղթոց համար կը հասկցուին, այնպէս որ, երբ այս զիններով ծախուած թուղթերն որոշ ժամանակ մը ունենան զեռ մինչև իրենց վճարօրը, անոնցմէ՝ գործողութեան թուականէն մինչև պայմանաժամը մնացող օրերուն համար, տօկոս կը զեղչուի և այս զեղչի սակն ալ երկուստեք համաձայնութեամբ չ'ըլլար, այլ սակացոյցի չորրորդ սիւնակի զեղչի սակին համաձայն կ'ըլլայ:

Երկրորդ և երրորդ սխնակին մէջ կը գիտենք որ առաջին գիներն աւելի վար են և վերջիններն աւելի բարձր. սա կը նշանակէ որ սակարանի վերջաորութեան, զնոզները՝ փոքրագոյն գինը կ'առաջարկէին տուեալ թուղթին համար, մինչդեռ վաճառողը՝ բարձր գինը կը պահանջէր, իրականը՝ որ միջազգային գործողութեանց ալ իբրև հիմ կը ծառայէ, այս երկու թիւերու միջին գինն է:

Դիտելի կէտ մըն ալ սա է որ, քանի մը թուղթերու համար եռամսեայն աւելի սուղ է քան թէ կարճատեը: Ասոր պատճառն ալ, այդ թուղթերուն ստորագրութեանց առաջնակարգ ըլլալն է, որուն շնորհիւ թուղթերն իրենց վճարելի երկիրներուն մէջ շատ փնտռուած են զբամի գործածութեան նպատակաւ, և հետեւաբար փոքր սակով կը զեղչուին: Ահա այս զեղչի սակին տարբերութիւնն է որ Բարիզ իր գիներուն մէջ կը զգացնէ. որովհետև հասկնալի է, որ թուղթ մը որ իր հայրենիքին մէջ կը վայելէ բազդատաբար փոքր սակ մը, նոյն համեմատութեամբ ալ աւելի կ'արժէ իր գնուած երկրին մէջ ալ: Մասնաշնչենք կէտ մըն ալ որ Սպանիոյ կը վերաբերի: Դիներն, ինչպէս տեսնեք, առ հասարակ փոփոխակի գրութեամբ (incertain) գրուած են և բաց ի Անգլիայէն որուն համար մեկ Սթէրլինի փոխարէնը նշանակուած է, միւս աւերութեանց համար իրենց գրամական միութենէն 100 հատի փոխարէնը արձանագրուած է: Սպանիան սակայն, այնպիսի գիներով նշանակուած է, որ կարծես թէ ոչ մէկ անշուքիւն չ'ունի իր երկրին գրամական միութեան՝ Բէզէթասի հետ: Արդ՝ ստիկա, հին սովորութիւն մ'է որ աւանդաբար կը շարունակէ տեւել, որուն համաձայն Սպանիոյ գիները 100 Սպան. Դահեկանի փոխարէնը կ'ար-

ձանագրութիւն, և որովհետեւ 1 Դահեկանն արդի 5 Բէզէթասի հաւասար է, ուստի հարկ է կա՛մ Բարիզի գինը համարել 500 Բէզէթասի փոխանակագինը կամ զայն 5ով բաժնել և քանորդը նկատել իսկական Սպանիական փոխանակագինը :

Վերջապէս պարագայ մ'ալ կայ, որ միայն Լոնտոնի գնոյն կը վերաբերի, այն ալ հետեւեալն է. ծախսողը գնողին պարտի վճարել անգլ. դրոշմի արժէքը և շնորհիք երեք օրերուն ( trois jours de grâce ) տոկոսը : Շնորհիք օրեր կը կոչուին այն օրերն որ, պայմանաժամն հասնելէ ետքը, կը շնորհուին փոխանակագիր մը վճարող անձին, իր պարտքը վճարելու համար, և որոնց ընթացքին կարելի չէ թուղթը բողբոխի ենթարկել : Բարիզի սակացոյցին հետ լաւադոյն ևս ընտելանալու համար աւելորդ չ'ըլլայ գուցէ քանի մը օրինակներ մէջ բերել օտար դրամները ֆրանսականին և վերջինն ալ օտար դրամի վերածելու համար :

Օտար փոխանակագիրը տեղականի վերածելու համար, անոննք վերոյիշեալ սակացոյցը ( cote ) որ Բարիզի է. Տէֆօսէ և Ֆասթ Եզրարց հրատարակածն է : Այս թերթը որուն պարզապէս « Տէֆօսէ » ալ կ'ըսեն պանքաներու մէջ, պաշտօնական սակացոյցէն աւելի կը գործածուի, իր կազմին յարմարութեանը պատճառաւ :

Իբրև փոխանակագին պիտի ընարենք երկրորդ սիւնակին ( չէֆ, վճարում, կարճ քուղբ ) գիներուն միջին թիւը :

ԼՈՆՏՈՆ. — Այս անուան դիմաց կը տեսնենք 25.13 և 25.16 որով միջին գինն է Ֆր. 25.14 $\frac{1}{2}$  մէկ Սթէրլինի համար :

Անոննք հիմա ո՛ր և է գումար մը, օրինակ՝ 155

Սթէրլ. 15 Շիլլին և 6 բէնս(զոր կը գրեն £ 155 Sh.15 d 6\*) կամ կրճատեալ £ 155<sup>15</sup>/<sub>6</sub>) և վերածենք Ֆրանքի: Նախ տեսնենք թէ՛ ի՞նչպէս պիտի գործէինք տեսականօրէն, յետոյ տանք կարճ ձևը:

Տեսականօրէն.— Նախ կը վերածեն Սթէրլինները, յետոյ Շիլլինները և ամենէն վերջը Բէննինները, հետեւեալ խորհրդածութեամբ.— Եթէ 1 Սթէրլինը արժէ Ֆր. 25.145, 155ը պիտի արժէ այդքան աւելի, ուստի եթէ 155ը բազմապատկենք փոխանակագլինին հետ, արտադրեալը Ֆր. 3,897.47 կը ներկայացնէ Սթէրլիններու համապատասխան գումարը: Գալով Շիլլիններուն գիտենք որ, մէկ Շիլլինը Սթէրլինին 20րդ մասն է, ուստի եթէ 15 Շիլլինը բազմապատկենք փոխանակագլինով և արտադրեալը բաժնենք 20ով, ստացած քանորոշիս (Ֆր. 18.85) կը ներկայացնէ Շիլլիններու համապատասխան Ֆրանքները զոր աւելցնելով նախորդ՝ 3,897.47ի վրայ, կ'ունենանք Ֆր. 3,916.32: Այժմ՝ կը մնայ գտնել Բէննիններու փոխարժէքը. գիտնալով որ 1 Բէննին՝ Շիլլինին 12րդ մասն է և աս ալ Սթէրլինին 20րդ մասը, կը հետեւցնենք որ 1 Բէննին Սթէրլինին 240րդ մասն է: Ուրեմն մեզ կը մնայ 6 Բէնսը փոխանակագլինով բազմապատկել և 240ով բաժնել և քանորոշը (0.62) աւելցնել նախորդ գումարին (3,916.32) վրայ վերջնական արդիւնքը ունենալու համար, որ է Ֆրանք 3,916.94:

Այս՝ այսպէս է տեսականին մէջ. հիմա տեսնենք գործնականը, աւելի կարճը:

(\*) d, denier բառին սկզբնատուն է եւ կը գործածուի Բէննիները նշանակելու:

Գործնականօրէն .— Հաշիւը կը սկսի վերինին պէս , այսինքն , Սթէրլինը փոխանակագինին հետ բազմապատկելով , միայն թէ նախ պէտք է Շիլլինները Սթէրլինի տասնորդական կոտորակին վերածել :

Գիտենք որ , 1 Շիլլինը Սթէրլինին  $\frac{1}{20}$ ն է , կամ ինչ որ միեւնոյնն է , անոր  $\frac{5}{100}$ ը , հետեւաբար՝

2 Շիլլին = Սթէրլին	$\frac{2 \times 5}{100} = \frac{10}{100}$	
3 " = "	$\frac{3 \times 5}{100} = \frac{15}{100}$	
4 " = "	$\frac{4 \times 5}{100} = \frac{20}{100}$	վերջապէս
19 " = "	$\frac{19 \times 5}{100} = \frac{95}{100}$	

Ասկից կը հետեւցնենք որ ,

Շիլլինը Սթէրլինի տասնորդական կոտորակին վերածելու համար , բաւական է 5ով բազմապատկել եւ 100ով բաժնել :

Գալով Բէննիներու , որովհետեւ 1 Բէննին հաւասար է Սթէրլինի 240րդ մասին , եւ որովհետեւ 1 Սթէրլինն ալ արժէ Յրանք 25 , ասկից կը հետեւի որ 1 Բէննին կը հաւասարի 25 Յրանքին 240րդ մասին կամ 9 Սանդիմի : Արդ, ընդհանրապէս ընդունուած է հաշիւներու մէջ 1 Բէննի 10 Սանդիմ համարել զիւրութեան համար , որ թէպէտեւ մաթեմատիքօրէն ճիշտ չէ , բայց տարբերութիւնը այնքան անզգալի է որ խնայուած ժամանակը լիովին կը վարձատրէ այդ չնչին կորուստը :

Վերի օրինակը , կրճատեալ ձեւով լուծելով կը ստանանք  $\text{£ } 155^{\frac{15}{20}} = 155.75 \times 25.145 = 3,916.33$  որուն վրայ աւելցնելով 6 Բէնի փոխարէն 10ական Սանդիմէ 60 Սանդիմ , կ'ունենանք վերջնական արդիւնքը Ֆ. 3,916.93 :

երկու ձեւերու մէջն առաջ եկած տարբերութիւնը՝  
1 Սանդիմ, տարակոյս չկայ թէ արհամարհելի քանակութիւն մ'է:

ԳԵՐՄԱՆԻԱ.— Փոխանակագիւններն են  $122^{11}/_{10}$  և  $122^{15}/_{10}$  որով, միջին գինն է Ֆրք.  $122^{13}/_{10} = 122.8125$  հարիւր Մարքի համար:

Ա.— Ֆրանքի վերածել 1500 Մարքը՝ փոխանակագինը  $122^{13}/_{10}$  էն: Գործողութիւնը պարզ երից կանոնով մը կը լուծուի այն է՝

$$\frac{1,500 \times 122,8125}{100} = 1,842.19$$

Բ.— Մարքի վերածել Ֆր. 1,842.19 փոխանակագինը  $122^{13}/_{10}$  էն: Գործողութիւնը դարձեալ երից կանոնով կը լուծուի հակառակ ուղղութեամբ.

$$\frac{1,842.19 \times 100}{122.8125} = \text{Մարք } 1,500$$

ՊԵՆՏԻՆԱ.— Փոխանակագիւններն են  $99^{1}/_{8}$  և  $99^{1}/_{4}$  և միջին փոխանակագինը  $99^{1\frac{1}{2}}/_{8} = 99.1875$  այսինքն 100 Պելժիական Ֆրանքը արժեն  $99.1875$  որով տարբերութիւն մը կայ ի վնաս Պելժիոյ  $\frac{6^{1}/_{2}}{8} \%$  կամ  $0.8125 \%$ :

Ա.— Ենթադրելով 1,600 Պելժիական Ֆրանք վերածելիք Գազդիականի  $\frac{6^{1}/_{2}}{8} \%$  կորուստով, պիտի ունենանք 1,600 նուազ,  $0.8125 \%$  կորուստը

$$\left( \frac{1,600 \times 0.8125}{100} = 13 \text{ Ֆր.} \right), \text{ որով կը մնայ արդիւնք}$$

1,587 Ֆրանք:

Բ.— Եթէ հակառակ պարագան ըլլար, այսինքն՝

1,600 Ֆրանք Դաղղիական. քանի՞ Պելժիական ըլլալը հարկ ըլլար գիտնալ, այն ատեն սոյն տարբերութիւնը (13 Ֆրանք) պիտի աւելցնէինք և պիտի ունենայինք 1,613 Ֆրանք Պելժիական:

ՏԱՆԻՄԱՐՔԱՆ. ՇՈՒԿՏ, ՆՈՐՎԷԿԻԱ.— Փոխանակագիրներն են  $137 \frac{3}{4}$  և  $138 \frac{3}{4}$  որով միջին զին Ֆրանք  $138 \frac{1}{4} = 100$  Քրօնօր:

Ա.— Ֆրանքի վերածել 1,500 Քրօնօր.—

$$\text{Պատասխան} \cdot \frac{1,500 \times 138,25}{100} = 2,073.75 \text{ Ֆրանք:}$$

Բ.— Քրօնօրի վերածել 2,073.75 Ֆրանք.—

$$\text{Պատասխան} \cdot \frac{2,073,75 \times 100}{138,25} = 1,500 \text{ Քրօնօր:}$$

ՍՊԱՆԻԱ.— Փոխանակագիրները՝  $476 \frac{1}{2}$  և  $481 \frac{1}{2}$  միջին զին 479 Ֆրանք, այսինքն 479 Ֆրանք 100 Սպանիական Դահեկանի (500 Բէզէթասի) համար:

Ա.— Ֆրանքի վերածել 3,500 Բէզէթաս 479 էն.— Ինչպէս արդէն տեսանք, Բարիզի սովորութիւնը փոխանակագիրը 100 Սպանիական Դահեկանի համար տալ է, ուստի պէտք է կա՛մ 3,500 Բէզէթասը 5 ով բաժնել և յետոյ երկոց կանոնի դիմել  $\frac{3500 \times 479}{5 \times 100} =$  Ֆրանք 3,353 և կամ աւելի կարճը, փոխանակագիրը 2օվ բազմապատկել և արտադրեալէն ստորակէտը թուանշան մը դէպ ի ձախ տանիլ և յետոյ ուղղակի Բէզէթասներու հետ բազմապատկել ըստ սովորականին. այսպէս  $479 \times 2 = 958$  ստորակէտը  $\frac{95,80}{100}$  ձախ տանելով կ'ունենանք 95.80 հետևարար  $\frac{95,80 \times 3,500}{100} = 3,353$  Ֆրանք:

Բ. — Եթէ ընդհակառակը, հարկ ըլլար օրինակ՝ 3,353 Ֆրանքը Բէզէթասի վերածել, պիտի գործէինք հակառակ ուղղութեամբ, այսինքն՝  $\frac{3,333 \times 5 \times 100}{479} =$  Բէզէթաս 3,500 և կամ  $\frac{3333 \times 100}{95,80 (*)} = 3500$  Բէզէթաս:

ՀՈՒԱՆՏԱ. — Փոխանակագին 207  $\frac{3}{8}$  և 207  $\frac{7}{8}$  որով միջին գին 207  $\frac{5}{8} = 207.625$  Ֆրանք 100 Ֆիօրինի համար: Ա. — Ֆրանքի վերածել 2,500 Հոլանտական Ֆիօրինը 207  $\frac{5}{8}$  էն. —

$$\text{Պատասխան} \frac{2,500 \times 207,625}{100} = \text{Ֆրանք } 5,190.62$$

Բ. — Հոլանտական Ֆիօրինի վերածել 5,190.62

$$\text{Ֆրանք} \cdot 207 \frac{5}{8} \text{ էն. —}$$

$$\text{Պատասխան} \cdot \frac{5,190.62 \times 100}{207,625} = \text{Ֆիօրին } 2500$$

Իտալիոյ և Զուիցերիոյ համար, որոնք Ֆրանսայի հետ միեւնոյն գրամական գրութիւնն ունին, միեւնոյն խորհրդածութիւնը կայ ընելիք, ինչ որ տեսանք վերև Պելժիոյ համար:

ՆԻԻ - ԵՕՐՔ. — 513  $\frac{1}{4}$  և 516  $\frac{1}{4}$ : Միջին գին 514.75 Ֆրանք 100 Տոլարի համար:

Ա. — Ֆրանքի վերածել 2,000 Տոլարը 514  $\frac{3}{4}$  էն. —

$$\text{Պատասխան} \cdot \frac{2000 \times 514.75}{100} = \text{Ֆրանք } 10,295$$

Բ. Տոլարի վերածել 10,295 Ֆրանքը 514  $\frac{3}{4}$  էն. —

(\*) Այսինքն փոխանակագինն կրկինը, ստուակէք դէպ ի ձախ փոխադրուած:

$$\text{Պատասխան՝ } \frac{10,295 \times 100}{514.75} = \text{Տուար } 2,000$$

ՓՈՐԹՈՒԿԱԿԱՆՆԵՐ .— 479 և 489 : Միջին գին 484 , որ է 484 Ֆրանք 100 Միլլէյսի համար :

Ա .— Ֆրանքի վերածել 550,000 Րէյս 484 էն .—

$$\text{Պատասխան՝ } 550,000 \text{ Րէյս} = \frac{530,000 \times 484}{100 \times 1000} = \text{Ֆր. } 2,662$$

Բ .— Րէյսի վերածել 2,662 Ֆրանքը 484 էն .—

$$\text{Պատասխան՝ } \frac{2662 \times 100 \times 1000}{484} = 550,000 \text{ Րէյս}$$

ԲԵՂՐՈՒՄՆԵՐ .— 262  $\frac{1}{4}$  և 264  $\frac{1}{4}$  : Միջին գին Ֆրանք 263.25 = 100 Րուպլի :

Ա .— Ֆրանքի վերածել 5,000 Րուպլի 263  $\frac{1}{4}$  էն .—

$$\text{Պատասխան՝ } \frac{5,000 \times 263.25}{100} = \text{Ֆրանք } 13,162.50$$

Բ .— Րուպլի վերածել Ֆր. 13,162.50 փոխանակագինը 263,25 էն .—

$$\text{Պատասխան՝ } \frac{13,162.50 \times 100}{263.25} = \text{Րուպլի } 5,000$$

ՎԻԵՆՆԱԿԱՆՆԵՐ .— 104 և 104  $\frac{1}{4}$  : Միջին գին 104  $\frac{1}{8}$  էն կամ 104.125 Ֆրանք հարիւր Քրոնէի համար :

Ա .— Ֆրանքի վերածել 10,000 Քրոնէ 104  $\frac{1}{8}$  էն .—

$$\text{Պատասխան՝ } \frac{10,000 \times 104.125}{100} = \text{Ֆրանք } 10,412.50$$

Բ .— Քրոնէի վերածել Ֆր 10,412.50ը 104  $\frac{1}{8}$  էն .—

$$\text{Պատասխան՝ } \frac{10,412.50 \times 100}{104.125} = \text{Քրոնէ } 10,000$$

Բարիդի Սակացոյցին համար բաւ համարելով այսօր քանը, Եւրոպական միւս սակացոյցներու քննութեան չի ձեռնարկած, ընդհանուր գիտողութիւն մը ունինք ընկելք՝ Զանազան սակացոյցերը քննած ատեննիս՝ պիտի տես-

նենք որ անոնցմէ ոմանք փոփոխակի դրութիւնն ունին ( donner l'incertain ), ոմանք ալ անփոփոխ ( certain ) . կան ալ, ինչպէս Լոնտոնինը, որ քանի մը տէրութեանց հանդէպ անփոփոխ, ուրիշներու համար ալ փոփոխակի դրութիւնը կը գործածեն: Այս սովորութեանց պէտք է լաւ տեղեակ ըլլալ, որովհետեւ անոնք հարաչափութեանց ( parités ) և շահադիտութեանց ( arbitrage ) հիմը կը կազմեն:

Ըսենք ամիջնպէս որ սակացոյցները երբեմն ի սես, երբեմն ալ երկար աշխնքն 8, 14, 30, 60 կամ 90 օրուան թուղթերու մասին գիններ կը յայտնեն: Արդ՝ հարթաչափութեան կամ շահադիտութեան հաշիւներու համար անհրաժեշտ է նախ ամէն գիները հարթել, հաւասարեցնել, աշխնքն ի տես վճարելի թղթոց գնոյն վերածել: Գալով սոյն գործողութեան անիկա շատ հեշտ է. բաւ է գիտնալ թէ տուեալ սակարանը փոփոխակի թէ՛ անփոփոխ դրութիւն ունի: Առաջին պարագային՝ համասպասական երկրին զեղչի սակովը, սակացոյցի նշանակած օրերուն տոկոսը պէտք է գտնել և գինին վրայ աւելցնել: Իսկ երկրորդ պարագային՝ նոյնպէս տոկոսը գտնել և սակացոյցի գինէն հանել:

Պարզենք օրինակով մը

Ներքև դրուած Պերլինի սակացոյցին մէջ կը տեսնենք որ Բարիզի համար հետեւեալ արձանագրութիւնները կը պարունակէ՝

100	Ֆրանք	8 օր	81.15
100	„	2 ամիս	80.80

Սա կը նշանակէ թէ նոյն օրը Բարիզի վրայ 100 Ֆրանքնոց փոխանակագիր մը, որուն վճարօրին 8 օր

Ճնացած էր, կ'արժէր Պերլինի մէջ մարտ 81.15: Նոյնպէս 100 Ֆրանքնոց փոխանակազիր մը, որուն վճարօրին 2 ամիս կար տակաւին, կ'արժէր Պերլինի մէջ մարտ 80.80:

Այս գիները հարթելու համար նախ կ'առնենք Մարք 81.15 և անոր վրայ կ'աւելցնենք (քանի որ Պերլին փոփոխակի դրութիւն կը գործածէ) 8 օրուան տոկոսը Բարիզի սակով որ է  $3\frac{1}{10}$  (0.054) և այսպէստով կ'ունենանք ի տես վճարելի թուղթի գինը, այն է Մարք 81.204: Նմանապէս եթէ առնենք Մարք 80.80 և աւելցնենք հարիւրին 3էն երկու ամսուան տոկոսը, դարձեալ կը ստանանք Մարք 81.204 իբրև ի տես վճարելի թուղթի գինը:

Հակառակ գործողութիւնը պիտի ընէինք եթէ սակարանը անփոփոխ դրութիւնը ունենար: Օրինակ՝ ենթադրենք որ Լոնտոնի սակացոյցը Բարիզի համար նշանակէր հետեւեալ գինը,

Սթէրլին 1, երեք ամիս, ֆր. 25.37

Նախ վերը յիշուած ձևով տոկոսը պիտի գտնէինք հարիւրին 3էն երեք ամսուան համար (0.19) և 25.37էն. պիտի հանեինք և ունենայինք ի տես թղթոյն գինը 25.18: Ուրեմն երբ փոփոխակի է սակացոյցի դրութիւնը, հարկաւոր է յաւելում, երբ անփոփոխ է՝ հանում: Այս տարազը լաւ պէտք է միտք պահել որովհետև ան հիմը կը կազմէ շահագիտութեան հաշիւներուն:

Պէտք է գիտնալ որ շահագիտութիւնը անպատճառ գիտումնաւոր չըլլար. երբեմն մարդ՝ առանց կասկածելու, առանց անդրադառնալու, շահագիտութիւն կ'ընէ:

Իսկապէս երբ մէկը արտասահման պարտք ունենայ, քանի՞ միջոց ունի հատուցանելու: Դիտաւոր երեք կերպ կայ պարտքի հատուցման:

Ա. — Կրնայ՝ իր երկրէն, պահանջատիրոջ գտնուած տեղւոյն վրայ փոխանակագիր գնել և դրկել իրեն որպէս զի զայն գանձէ կամ եթէ վճարօրը հասած չէ՝ վաճառէ։ Այս եղանակը կը կոչուի փոխանակագրով հատուցում (faire des remises)։

Բ. — Կրնայ՝ պահանջատէրը արտօնել իր վրայ փոխանակագիր քաշելու։

Գ. — Վերջապէս կրնայ՝ փոխանակագիր գնել ո՛ր և է երկրի, մինչև անգամ պահանջատիրոջ քաղքէն տարրեր տեղւոյ մը վրայ և վերջնոյս դրկել որ ծախելով գանձէ իր առնելիքը։

Այս երեք ձևերը կը ծառայեն նոյնպէս պահանջատիրոջ իր առնելիքը գանձելու համար։

Դժուար չէ հասկնալ որ, ինչ ալ ըլլայ պարտատիրոջ ընտրած միջոցը իր պարտքին հատուցման համար, պահանջատէրը ոչինչ ունի ստարկելու, բաւ է որ ան ամբողջովին ստանայ իր պահանջը։ Նմանապէս պահանջատէրը կրնայ ինքը թելագրել պարտատիրոջ, պարտքը հատուցանելու եղանակը, պայմանաւ որ վերջինս իր տալիքէն աւելի դրամ վճարելու չի ստիպուի։

Տարակոյս չկայ որ, եթէ պարտատէրը ընտրէ իր պարտքին հատուցման կերպը, ան պիտի գործէ այնպէս որ պահանջատիրոջ առնելիքը լիովին վճարելով հանդերձ, իրմէ նուազ դրամ ելլայ։ Իսկ եթէ պահանջատէրը ընտրէ գանձման եղանակը, ան ալ բնականաբար պիտի ջանայ այնպէս մը ընել որ իր առնելիքէն աւելի գանձէ առանց պարտատիրոջ շահերուն զպշելու։ Ինչպէս կը տեսնենք, այսպէսով թէ՛ մին և թէ՛ միւսը շահադիտութիւն ըրած պիտի ըլլան անուղղակի կերպով։

Բացատրենք օրինակով մը. — Կ. Պոլսոյ վաճառական մը 10,000 Մարքի պարտք մը ունի Պերլին վճարելի. ինչ պէտք է ընէ որ թէ պահանջատէրը իր դրամը ստանայ և թէ ինքը օգուտ մը քաղէ վճարման եղանակէն: Ան պիտի գնէ Պոլսոյ մէջ փոխանակագիրներ (կամ արժեթուղթեր կամ ուրիշ ս. և է ապրանք) որոնք Պերլինի մէջ ծախուելով տան ուղիղ 10,000 Մարք, բայց ինքը պիտի ջանայ զանոնք ձեռք ձգել Պոլսոյ մէջ ըստ կարելւոյն աժան գնով:

Պերլինի վաճառականն հակառակ ուղղութեամբ պիտի գործէ (եթէ գանձման եղանակը ինքը ընտրէ): Ան իր Պոլսոյ պարտատէրէն պիտի խնդրէ իր հաշւոյն գնել ս. և է տեղւոյ վրայ փոխանակագիրներ (կամ արժեթուղթեր և կամ ուրիշ ապրանք), վճարելով ուղիղ 10,000 Մարք և ինքը զանոնք Պերլինի մէջ ծախելով պիտի ջանայ ձեռք բերել այդ գումարէն աւելին:

Ահա շահադիտութեան պարզ օրինակներ: Բայց պէտք չէ կարծել որ փոխանակագրերու շահադիտութիւնը միմիայն պարտքի հատուցման կամ պահանջի գանձման կը ծառայէ. ո՛չ: Շահադիտութիւնը կը զբաղի մանաւանդ զանազան սակարաններու մէջ ընդունուած փոխանակագրոց առուծախովը: Օրինակներու մէջ բերումը հետագային ձգելով, տեսնենք այժմ Դերմանիոյ և զըլխաւորապէս Պերլինի սակացոյցը որ արդի պատերազմի միջոցին ուրիշ ս. և է սակարանէ աւելի իր ցոյց տուած սովորութեամբ և ճկունութեամբ աշխարհիս կարեւորագոյններէն մին կրնայ համարուիլ:

## ՊԵՐԼԻՆԻ ՍԱԿԱՅՈՅՑ

Գ Ա Մ Պ Ի Օ			
Ամսօրսամ, Բօքօրսամ	100 Ֆիօրին	8 or	169.15
»	» 100 »	2 ամիս	168.55
Պրիստէ, Անվէս	100 Ֆրանկ	8 or	81.10
»	» 100 »	2 ամիս	80.85
Պոստօր	100 Քրօնէ	8 or	—
»	» 100 »	2 ամիս	—
Քրիստիանիս	100 Քրօնօր	10 or	112.25
Իսպանական հրապարակ	100 Լիրէ	10 or	81.10
»	» 100 »	2 ամիս	80.55
Քօրէնհակ	100 Քրօնօր	8 or	112.25
Լիզպօն, Օբօրօ	1 Միլրէյս	14 or	3.50
»	» 1 »	3 ամիս	—
Լոնսոն	1 Սքէրլին	ի սես	—
»	»	8 or	20.445
»	»	3 ամիս	20.345
Մաւրիս, Պարգէլօնս	100 Քէզէրսս	14 or	62.05
»	» 100 »	2 ամիս	—
Նիւ - Եօր	100 Տոյար	ի սես	419.50
»	» 100 »	2 ամիս	—
Բարիզ	100 Ֆրանկ	8 or	81.15
»	» 100 »	2 ամիս	80.80
Բեդրոկրաս	100 Բուպլի	8 or	215.80
»	» 100 »	3 ամիս	213.30
Զուիցերիս	100 Ֆրանկ	8 or	81.10
»	» 100 »	2 ամիս	80.75
Սթօհօլմ	100 Քրօնօր	10 or	112.25
Վարսօվս	100 Բուպլի	8 or	215.85
Վիեննս	100 Քրօնէ	8 or	85.10
»	» 100 »	2 ամիս	84.60

Զեզի սակ, Ամսօրսամ 2,50, Պրիստէ 3, Օյ պաւսօնական 2,75, Պրիստէ 3, Լոնսոն 2,50, Բարիզ 3, Բեդրոկրաս 5,50, Վիեննս, 3,50, Իսպիս 5, Զուիցերիս 4, Սկանսինսկիս 5, Մաւրիս 4, 50, Լիզպօն 4 :

Տեսանք արդէն որ, Պերլինի մէջ 81,204 Մարքով կարելի է գնել Բարիզի վրայ, ի տես վճարելի, 100 Ֆրանքնոց փոխանակագիր մը: Հիմա տեսնենք ինչքան Ֆրանք պիտի ստանայինք, եթէ 100 Մարք ծախսէինք: Այս գտնելու համար, հարկաւոր է հետեւեալ համեմատութիւնը ընել՝

$$81.204 : 100 :: 100 : \text{Ք}$$

այսինքն Մարք 81,204 այնպէս կը համեմատի 100 Ֆրանքի, ինչպէս 100 Մարքը՝ Ք. Ֆրանքի:

Այս համեմատութիւնը կարող ենք հետեւեալ ձեւով ալ շարել՝  $\frac{81,204}{100} = \frac{100}{\text{Ք}}$  ուսկից կը հետեւի որ,  
 $\text{Ք} = \frac{100 \times 100}{81,204} = \text{Ֆր. } 123,15$  այսինքն, Պերլինի մէջ 100 Մարք վճարելով, պիտի ստանանք Բարիզի վրայ, ի տես վճարելի, Ֆրանք 123,15: Այս արդիւնքն է ահա, որ կը կոչուի Պերլինի և Բարիզի մէջի հարաւայտիք (parité):

Տեսնենք այժմ Պերլինի սակացոյցի և միւս Պետութեանց մէջ գտնուող հարթաչափերը.

ԱՄՄԹԷՐՏԱՄ, ՌՌԹԹԷՐՏԱՄ. — 100 Ֆիօրին 8 օր 169,15

» » 100 » 2 ամիս 168,55

Այս գիւները հարթելով, այսինքն առաջինին վրայ ութը օրուան և կամ երկրորդին վրայ երկու ամսուան,  $2\frac{1}{2}$  օրէն տակօսը աւելցնելով կ'ունենանք ի տես վճար

րելի թղթոյն գինը 169,25: Այս կը նշանակէ որ, եթէ իտես վճարելի 100 Հոլ. Թիօրինոց փոխանակագիր մը կամ չե՛ք մը զրկենք Պերլին, պիտի ստանանք Մարք 169,25 և կամ ուրիշ խօսքով, եթէ Պերլինի մէջ ուղուի Հոլ. ի տես վճարելի փոխանակագիր մը գնել և Ամսթէրտամ զրկել, իւրաքանչիւր 100 Թիօրինի համար հարկ պիտի ըլլայ վճարել Մարք 169,25:

Ենթադրենք թէ, մէկը ցանկայ Պերլին Հոլ. Թիօրին զրկել և փոխարէնը Բարիզի վրայ Ֆրանք ստանալ ինչպէս պիտի գործէ: Գիտենք որ, 100 Հոլ. Թիօրին հաւասար է Մարք 169,25 և 100 Ֆրանքն ալ հաւասար է Մարք 81,204ի: Արդ՝ եթէ 100 Ֆր. արժէ Մարք 81,204, մէկ Ֆրանքը պիտի արժէ 100 անգամ նուազ այսինքն  $\frac{81,204}{100} = 0,81204$ : Այս Ֆրանքի համապատասխան գումարը (0,81204), որքան անգամ որ պարունակուի Թիօրինի համապատասխան գումարին մէջ (169,25) այնքան Ֆրանք պիտի ըլլայ արդիւնքը: Ուստի, բաւ է բաժնել 169,25ը 0,81204ով և քանորդը (Ֆր. 208,42) կը ներկայացնէ մեր փնտոած 100 Հոլ. Թիօրինի, Պերլինի մէջ առաջ բերելիք Ֆրանքներուն գումարը: Ուրիշ խօսքով Պերլինի և Ամսթէրտամի միջև Ֆրանքի փոխանակագրական հարթաչափն է (parité du change) 208,42: Տարակոյտ չկայ որ գատելու և գործելու եզանակը միեւնոյնը պիտի ըլլար եթէ փոխանակ Ֆրանքի ուրիշ երկրի մը զրամական միութիւնն ընտրէինք. օրինակ՝ Սթէրլինը կամ Բուպլին:

ՊՐԻԻՖԱԼԷ, ԱՆՎԷՐՍ .— 100 Ֆր. 8 օր 81,10

» » 100 » 2 ամիս 80,85

Այս գիները հարթելու համար, ինչպէս արդէն գիտենք, հարկաւոր է կամ առաջինին 8 օրուան և կամ երկրորդին 2 ամսուան  $3\frac{0}{10}$  էն տոկոսը աւելցնել և կ'ունենանք 81,154 այսինքն իւրաքանչիւր 100 Պելժիական Ֆրանքի փոխարէն Պերլինի մէջ պիտի ստանանք Մարք 81,154: Եթէ փոխարէնը Բարիզի վրայ չեք ուզենք, վերի օրինակին մէջ բացատրուած ոճով 81,154ը բաժնելով 0,81204 ով պիտի գանենք 99,94 այն է Պերլինի և Պելժիոյ միջև Ֆրանքի փոխանակազրական հարթաչափը:

ՎԻԵՆՆԱ, ՊՈՒՏԱԲԵՇԹ .— 100 Քրօնէ 8 օր 85,10

» » 100 » 2 ամիս 84,60

Այս գիները հարթելով, այսինքն կամ առաջինին ութ օրուան կամ երկրորդին 2 ամսուան  $3\frac{1}{2}$   $\frac{0}{10}$  էն տոկոս աւելցնելով, կ'ունենանք, 85,166, զոր բաժնելով 81,204ով կը ստանանք Պերլինի և Աւստրիոյ միջև Ֆրանքի հարթաչափը 104,88:

ՍԿԱՆՏԻՆԱԻԻԱ. ( Քրիստիանիա, Քօթենիակ, Սթոնիոյմ )

100 Քրօնօր 10 օր 112,25

Նախ կը հարթենք, հարիւրին 5 էն տասը օրուան տոկոսը աւելցնելով և կ'ունենանք 112,406, այսինքն 100 Քրօնօրի Պերլինի մէջ յառաջ բերելիք Մարքերու գումարը, զոր բաժնելով ըստ սովորականին, 81,204ով կը ստանանք Բարիզի վրայ չեքի գումարը, այն է Ֆրանք 138,42

ԻՏԱԼ. ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ. — 100 լիրէ 10 օր 81,10  
 » » 100 » 2 ամիս 80,55

Հարթելով կ'ունենանք 81,21, զոր բաժնելով 81,204 ու  
 կը ստանանք Պերլինի և Իտալիոյ միջև Ֆրանքի  
 հարթաչափը ( 100,01 ) :

ԼՈՆՏՈՆ. — 1 Սթէրլին 8 օր 20,445  
 1 » 3 ամիս 20,345

Հարթելով կ'ունենանք 20,456 զոր բաժնելով ըստ  
 սովորութեան 81,204 ու կը ստանանք Ֆր. 25,20 այն է  
 Պերլինի և Անգլիոյ միջև Ֆրանքի հարթաչափը :

Միեւնոյն տրամաբանութեամբ դործելով, պիտի գրա-  
 նենք Նիւ-Եօրքի համար 516,60, Բեզրոկրատի համար  
 266,28, Վարչաւայի համար 266,13, Զուխցերիոյ համար  
 99,96 և չն :

Անցնինք այժմ Լոնտոնի սակացոյցին քննութեան :

Պէտք է գիտնալ որ, Լոնտոնի սակարանը համաշ-  
 խարհային գործողութեանց համար աւագ կարեւորութիւն  
 ունի, որովհետև չի կայ երկիր մը որ սոյն մայրաքաղաքի  
 հետ առեւտրական յարաբերութեան մէջ չի գտնուի, հե-  
 տեւարար բոլոր այն պետութիւնները որոնք իրարու հետ  
 ուղղակի հաղորդակցութեան մէջ չեն գտնուիր, իրենց  
 փոխանակազրական գործողութիւնները Լոնտոնի հրապա-  
 րակի միջոցաւ կը կատարեն :

## ԼՈՆՏՈՆԻ ՍԱԿԱՅՈՅՑ

ՀԻՐԱՊԱՐԱԿԻ	ՎՃԱՐՈՒՄ		ԵՌԱՄՍԵԱՑ		ՍԱԿԻ
Գաղղիա	25.18	25.23	25.38	25.43	3 ‰
Ալժերիա	25.18	25.28	25.48	25.58	4 ‰
Պելժիա	25.20	25.25	25.40	25.45	3 ‰
Զուլիցերիա	25.21	25.31	25.46	25.56	3 ‰
Իսպիա	25.15	25.20	25.40	25.50	4 ‰
Գերմանիա	20.44	20.49	20.63	20.73	3 ‰
Հոլանդա	12.07	12.12	12.20	12.25	2 <sup>1</sup> / <sub>2</sub> ‰
Աւստրիա	24. —	24.10	24.25	24.35	3 <sup>1</sup> / <sub>2</sub> ‰
Ռուսիա	25 <sup>9</sup> / <sub>16</sub>	25 <sup>1</sup> / <sub>16</sub>	25. —	24. <sup>1</sup> / <sub>2</sub>	5 ‰
Փորթուկալ	50.50	49.50	50. —	49. —	4 ‰
Սպանիա	36.25	35. —	35.75	34.75	4 <sup>1</sup> / <sub>2</sub> ‰
Սկանսինաւիա	18.17	18.27	18.45	18.55	4 ‰

Անգլիոյ Գրամսան պաշտօնական զեղչի սակ  
2.50 ‰, Արսաբոյ Գրամսան զեղչ ( hors  
banque ) 2.25 ‰ :

Լճնտանի սակացոյցին մէջ ուշադրութեան արժանի կէտ մը կայ: Հոս Թուսիոյ, Փորթուկալի և Սպանիոյ գիւնները փոփոխակի գրութեամբ արձանագրուած են, այսինքն օտար Դրամական Միութեան փոխարէնը տեղական գրամով արտայայտուած է, իսկ միւս ինը տէրութեանց փոխանակագիւնները անփոփոխ գրութեամբ, այսինքն՝ 1 Սթէրլինը հաստատուն պահելով, փոխարէնը օտար գրամով նշանակուած է: Հետեւաբար եռամսեայ թուղթերը, ի ճեսի վերածելու համար, մինչդեռ վերոյիշեալ երեք պետութեանց հանդէպ համապատասխան զեզչի սակով՝ տոկոսը պիտի աւելցնենք փոխանակագիւնին. միւս ինը տէրութեանց վերաբերմամբ պարտինք հաճել փոխանակագիւնէն: Իւրաքանչիւր սիւնակի առաջին գիւնը՝ սակարանի վերջաւորութեան գնողին առաջարկածն է, իսկ երկրորդը՝ ծախողին պահանջածը: Մենք մեր հաշիւներուն համար անոնց միջին գիւնը պիտի առնենք:

ԳԱՂՂԻՆ. — Վճարում միջին գին 25.20  $\frac{1}{2}$

„ „ „ „ 25.40  $\frac{1}{2}$

Նկատելի է որ, Գաղղիոյ վճարման հարթաչափը (parité) գտնելու համար, ու է հաշիւի պէտք չի կայ, որովհետեւ Լճնտանի և Բարիզի գիւնները իրարու հանդէպ միեւնոյն գրութեամբ կը գրուին, ուստի Լճնտան գրիւած իւրաքանչիւր Սթէրլինի փոխարէն պիտի ստանանք Ֆրանք 25.20  $\frac{1}{2}$  որ է, նոյն ինքն Ֆրանքի հարթաչափը:

Գալով Նոամսեայի գնոյն, զայն ի տես վճարելի այսինքն չե՛լի կամ վճարումի վերածելու համար, եթէ

միջին գինէն, այն է 25.40  $\frac{1}{2}$  էն հարիւրին 3 էն երեք ամսուան տոկոսը զեղչենք, կը ստանանք Ֆրանք 25.215 որ փնտռուած հարթաչափն է:

Ա.Լ.Ժ.Բ.Ի.Ա. — Վճարում միջին գին 25.23

Նոամսեայ " " 25.53

Այս հարթաչափը գտնելու համար, պէտք է վերի գիները բաղդատել Բարիզի վճարումի գնոյն հետ և պիտի տեսնենք որ, Լոնտոնի մէջ մէկ Ալժէրիոյ ստանալու համար հարկաւոր է հոն զրկել Ալժէրիոյ վրայ քաշուած փոխանակագիր 25.23 Ֆրանքնոց, մինչդեռ եթէ Բարիզի վրայ քաշուած փոխանակագիր մը զրկենք Ֆրանք 25.21 բաւական է: Ուստի Ալժէրիոյ հարթաչափը գտնելու համար հետեւեալ խորհրդածութիւնը կ'ընենք՝

Ֆր. 25.23 Ալժէրիոյ վրայ = 25.21 Բարիզի վրայ,

" 1.— " " = 25.23 անգամ նուազ

և " 100.— " " = 100 " աւելի

որով եթէ 25.21ը բաժնենք 25.23 ով և քանորդն ալ բաղմատապատկենք 100 ով կը ստանանք Ալժէրիոյ վրայ չեֆի գինը: Այսինքն Ֆրանք 100՝ չեֆ Ալժէրիոյ վրայ

$$= \frac{25.21 \times 100}{25.23} = \text{Ֆրանք } 99.90 \text{ չեֆ Բարիզի վրայ:}$$

Գալով Նոամսեայ թուղթին միջին գնոյն, զայն հարթելու համար, անկից կը հանենք երեք ամսուան 4  $\frac{0}{10}$  էն տոկոսը որով կ'ունենանք 25.28, յետոյ կ'ընենք միւսնոյն

գործողութիւնը ինչ որ ըրինք Ալժէրիոյ չեֆին համար՝  
 100 Ֆրանք Եռամսեայ Ալժէրիոյ վրայ հաւասար է  

$$\frac{25.21 \times 100}{25.28} = \text{Ֆրանք } 99.72 \text{ չեֆ Բարիզի վրայ:}$$

Միեւնոյն կերպով կը հարթուին վերոյիշեալ ինը տէրութեանց փոխանակագիները:

Գալով այն երեք պետութեանց, որոնց զիները, ինչպէս ըսինք, փոփոխակի դրութեամբ արտայայտուած են, ահա թէ ինչպէս պէտք է վարուիլ:

ԲՈՒՍԻԱ. — Վճարում միջին զին  $25 \frac{5}{10} = 25.3125$   
 Եռամսեայ " " 25.25

Սա կը նշանակէ՝

Վճարում կամ չեֆ՝ Բէնս  $25.3125 = 1$  Րուպլի

Եռամսեայ թուղթ " 25.25 = 1 "

Հարթաչափը գտնելու համար հարկաւոր է հետեւեալ խորհրդածութիւնն ընել:

Լոնտոն գրկուած խրաքանչիւր Րուպլիի համար պիտի ստանանք Բէնս 25.3125 և խրաքանչիւր Ֆրանք 25.21ի համար, զոր պիտի ստանանք Բարիզի վրայ, պիտի վճարենք 1 Սթէրլին կամ 240 Բէնս. ուստի՝

$1 \text{ Րուպլի} : 25.3125 :: \text{Ֆրանք } 25.21 : 240$  այս համեմատութիւնը կարող ենք հետեւեալ կերպով ալ շարել՝  

$$\frac{\text{Րուպլի } 1}{25.3125} = \frac{25.21}{240} \text{ որով Րուպլի } 1 = \frac{25.21 \times 25.3125}{240} = \text{Ֆր. } 2.66$$

Գարով եռամսեայի հարթման, որովհետև փոփոխակի դրութեամբ է արձանագրութիւնը, պէտք է փոխանակագինին աւելցնենք երեք ամսուան  $5\%$  էն տուցոր որով կ'ունենանք 25.565 յետոյ կը շարունակենք, վճարումի կամ չեփի պարագային եղածին պէս, այսինքն՝

$$1 \text{ Րուպլի եռամսեայ ի Լոնտոն} = \frac{25.565 \times 25.21}{240} \text{ հաւասար}$$

չեփ Բարիզ Ֆրանք 2.68:

Փորթուկալի և Սպանիոյ համար, գործելու եղանակը միեւնոյնն է, եթէ դիտելի կէտ մը կայ, այն ալ սա է թէ՛ Սակացոյցի գիները նշանակուած են առաջնոյն համար 1000 Րէյսի փոխարէն, իսկ երկրորդին համար 5 Բէզէթասի կամ 1 Դահեկանի փոխարէն. այսպէս օրինակ՝

Փորթուկալ՝	50 Բէնս	1000 Րէյսի համար
Սպանիա՝	36 "	5 Բէզէթասի համար:

Լոնտոնի սակացոյցին մասին վերջացնելէ առաջ քանք որ Արսաֆոյ Դրամասան (hors banque) կամ ոչ պաշտօնական (privé) զեղչի սակ կ'ըսուի այն սակը, որով առաջնակարգ և եռամսեայ փոխանակագիրներ կը զեղչուին զանազան դրամատուններու կողմէ և որ շատ անգամ պաշտօնական սակէն նուազ է:

Այս է պատճառը որ, շատ անգամ տեղական պանքաներ ի վիճակի են Կ. Պոլսոյ մէջ ալ, Անգլիոյ վրայ քաշուած փոխանակագիրերը պաշտօնական սակացոյցի գիներէն աւելի ձեռնառու պայմանաւ գնելու, որովհետև անոնք՝ անկից կորսնցուցած գոյզն տարբերութիւնը Լոնտոնի ոչ պաշտօնական սակի տարբերութենէն կը շահին:

## Վ Ի Ե Ն Ն Ա Յ Ի Ս Ա Կ Ա Ց Ո Յ Ց

		Պահանջ	Առաջարկ
Ամսփոստ	100 Հոլ. Ֆիորին, ի սեւ	199.—	199.10
Պրիւֆուկլ	100 Ֆրանկ	—	—
Գերմանիա	100 Մարկ	117.35	117.55
Լոնսոն	10 Սթերլինգ	240.45	240.65
Նիւ-Եօրֆ	100 Տոլար	—	—
Իսպիա	100 Լիրէ	95.35	95.55
Գաղղիա	100 Ֆրանկ	—	—
Բարիզ	100 „	95.30	95.40
Բեղրոկրաս	100 Բուլղի	—	—
Ռուսիա	100 „	—	—
Զուիցերիա	100 Ֆրանկ	95.10	95.25
Յիւրիխ	100 „	95.10	95.25

Դիտելի է որ այս սակացոյցը փոփոխակի դրու-  
թիւնը կը դորձածէ և բոլոր գիններն ալ ի տես փոխա-  
նակազգիներու համար են: Հետեւաբար հարթաշափերը

գտնելու համար ի տե՛սի վերածելու պէտք չկայ: Ֆրան-  
քի Վիեննայի մէջ հարթաչափը գտնելու համար հաշիւը  
միեւնոյնն է, ինչ որ տեսանք Պերլինի համար, այսինքն՝  
եթէ Վիեննայի մէջ, Բարիդի վրայ 100 Ֆրանքնոց  
չե՛ք մը առնելու համար, հարկ պիտի ըլլայ Քրօնէ 95.35  
ծախսել, ի՞նչքան Ֆրանք պիտի ստանանք Բարիդի մէջ  
եթէ 100 Քրօնէ ծախսենք:

Պատասխան  $95.35 : 100 :: 100 : \text{Ք}$

$$\text{Ք} = \frac{100 \times 100}{95.35} = \text{Ֆր. } 104.876$$

ԱՄՄԹԷՐՏԱՄ. — Միջին գին 199.05

Այս կը նշանակէ որ եթէ Վիեննա 100 Հոլ. Ֆիո-  
րին զրկենք, պիտի ստանանք Քրօնէ 199.05: Եթէ սա-  
կայն փոխարէնը Ֆրանք ուղենք Բարիդի վրայ, հե-  
տեւեալ խորհրդածութիւնը պիտի ընենք. եթէ

Քրօնէ 95.35 = 100 Ֆրանք

» 1 = 95.35 անգամ նուազ

» 199.05 = 199.05 անգամ աւելի

որով  $95.35 : 100 :: 199.05 : \text{Ք}$

$$\text{կամ } \text{Ք} = \frac{100 \times 199.05}{95.35} = 208.76 \text{ Ֆրանք}$$

Պարզապէս յիշած ըլլալու համար, զնենք Բեդ-  
րոկրատի սակացոյցն ալ որուն միջազգային նշանակու-  
թիւնը նախորդներուն չի հասնիր թէպէտ, բայց և այն-  
պէս կարեւոր գործողութիւններու տեղի կուտայ մանա-  
ւանդ Բարիդի, Լոնտոնի և Պերլինի հետ:

## Բ Ե Դ Բ Ո Կ Բ Ա Տ Ի Ս Ա Կ Ա Ց Ո Ց Ց

	ԳՆՈՂ,	ԾԱԽՈՂ,	ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ		
	Ե Ռ Ա Մ Ս Ե Ա Ց			Ի Տ ԵՍ	
Լոնսոն	93.85	93.95	93.95	94.50	4
Ամսթերսամ	—	—	—	—	3
Պերլին	45.87	45.95	45.92	46.25	4
Բարիզ	37.25	37.32	37.30	37.50	3
Պելժիա	—	—	—	—	3

Չոր պէտք է հետևեալ կերպով կարգալ՝

ԼՈՆՏՈՆ	ի տե՛ս	94.50	10	Սթէրլինի համար
ԱՄՍԹԷՐՏԱՄ	”	—	100	Հոլ. Ֆիորինի ”
ՊԵՐԼԻՆ	”	46.25	100	Մարքի համար
ԲԱՐԻԶ	”	37.50	100	Ֆրանքի ”
ՊԵԼՃԻԱ	”	—	100	Պելժ. Ֆր. համար

Այս գլուխը պատշաճ կերպով վերջացնելու համար մեզ կը մնայ խօսիլ Շղթայի կանոնի (Règle conjointe) վրայ այսինքն այն կանոնի՝ որ կը ծառայէ շահադիտութեանց հաշիւները լուծելու, մանաւանդ այնպիսի խնդիրներ լու-

ծելու որոնց մէջ շատ մը տարրեր միանգամայն կը մտնեն:

Գործելու եղանակը խիստ պարզ է, բայց բաղդատութեան եզրներու շարադրութիւնը մասնաւոր ուշադրութեան կը կարօտի:

Ահա թէ ինչ բանի մէջ կը կայանայ Շղթայի կանոնը: Նախ՝ կը գրուի անձանօթը, որու զիմաց կը գրուի ծանօթ գումարը: Այս հաւասարութեան տակ կը գրուի երկրորդ հաւասարութիւն մը որուն առաջին եզրը միեւնոյն միութեանէն ըլլայ ինչ որ նախորդ հաւասարութեան երկրորդ եզրը: Ասոր ալ տակը կը գրուի, եթէ կայ, երրորդ հաւասարութիւնը որուն առաջին եզրը իր նախորդին երկրորդ եզրին միութիւնը պէտք է ունենայ, այսպէս շարունակաբար մինչև որ վերջին հաւասարութեան երկրորդ եզրը վերի անձանօթի միութեանէն ըլլայ:

Այսպէսով երկու սիւնակ կը ստանանք մին ձախ և միւսն ալ աջ կողմը: Արդ՝ եթէ աջ կողմի եզրները իրարու հետ բազմապատկենք և արտադրեալը բաժնենք ձախ կողմի եզրներու արտադրեալին հետ, քանորդը՝ մեր փնտռած անձանօթը կուտայ: Շղթայի կանոնով կը զըտնենք, տարակոյս չի կայ, միեւնոյն արդիւնքը ինչ որ մեր օրինակներուն մէջ պարզ տրամաբանութեամբ տեսանք:

Օրինակ՝ Անննք Պերլինի և Բարիզի համար մեր ընտրած գործողութիւնը.

Մարք 81.204=100 Ֆրանք և փնտռենք 100 Մարքի փոխարէնը Շղթայի կանոնով. նախ դնենք առաջին հաւասարութիւնը Ֆրանք Ք=100 Մարք. ասոր ներքեւը դնենք մեզի ծանօթ երկրորդ հաւասարութիւնը որ, ինչպէս գիտենք, պէտք է սկսի վերի հաւասարութեան երկրորդ եզրէն ուստի՝

## Մարք 81.204=100 Ֆրանք

Աջակողման կզրները իրարու հետ բաղմապատկելով կ'ունենանք 10,000: Ներկայ օրինակին մէջ, ձախակողմանները բաղմապատկելու պէտք չի կայ քանի որ մէկ կզր մը կայ միայն. ուստի աջակողման արտադրեալը եթէ բաժնենք ձախակողման 81.204ի հետ կ'ունենանք իբրև քանորդ՝ Ֆրանք 223.15 այսինքն այն ինչ որ արդէն պարզ դատողութեամբ գտած էինք, Բարիզի մասին խօսած ատեննիս:

Անենք ուրիշ օրինակ մ'ալ Բեդրոկրատի սակացոյցէն:

Հոս կը տեսնենք, որ Բարիզի վրայ չեմք արձանագրուած է Բուպլի 37.50, Ֆրանք 100ի համար և Լոնտոն-չեմք Բուպլի 94.50, Սթէրլին 10ի համար:

Լուծենք Շղթայի կանոնով հետեւեալ խնդիրը:

Եթէ 10 Անգլիական սկիլի չեմ մը գրկենք Բեդրոկրատ և ուզենք փոխարէնը Բարիզի վրայ չեմ մը ստանալ, քանի՞ Ֆրանքնոց չեմ պիտի տան մեզի:

Ֆրանք           Ք = 10 Սթէրլին:

Սթէրլին       10 = 94.50 Բուպլի:

Բուպլի       37.50 = 100 Ֆրանք:

Աջակողման կզրներու բաղմապատկութեան արդիւնքը եթէ բաժնենք ձախակողման կզրներուն արտադրեալին հետ պիտի ստանանք Ֆրանք 252, որ է մեր փնտռած անձանօթը:

Անճնք վերջապէս հետեւեալ օրինակը: Եթէ 1250 Բրօնէնոց ի սեւ փոխանակագիր մը, զրկենք Պերլին և ուղենք փոխարէնը Լոնտոնի վրայ չեմ մը ստանալ, քանի Սթէրլիննոց չեմ պիտի տայ մեզի մեր Գերմանիոյ Դրամամատունը:

Շարենք ըստ Շղթայի կանոնի՝

Ք Սթէրլին = Բրօնէ 1250 :

Բրօնէ 100 = Մարք 85.166 ի տես


Մարք ի տես 20.456 = Սթէրլին 1

Պատասխան £ 52.042 = £ 52.0.8

ԾԱՆՕԹ.— 1. Շղթայի կանոնի դրութեամբ ինչպէս նաեւ պարզ սրամաքանութեամբ շահադիտութեան հաշիւները լուծելու ասէն *անհրաժեշտ է բոլոր բուլքերը ի սեւ վճարելի վերածել* :

2. Շահադիտութեան հաշիւներուն մեջ նկատի առնուելիք տարբեր կան ինչպէս են դրում, տուրք, միջնորդչեք, յանձնարարագին, տկոս, հեռագրական ծախքեր եւ այլն, որոնք երկրէ երկիր կը տարբերին եւ որոնց մասին երկարելը մեզ շատ հեռուները պիտի տանք, առանց անմիջական անհրաժեշտութեան. ուստի կը բաւականանանք միմիայն մասնանշելով զանոնք :





Ժ.

ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹԻ ԳՈՐԾԵՐ (Affaires Documentaires)

ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՍՏԱՏԵԱԿ, ՊԱՐԶ ԵՒ ԱՊԱՀՈՎԵԱԿ ՎԱՐԿԵՐ—

ՎԱՐԿԱԳԻՐ (Lettre de Crédit) ԵՒ ԻՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

---

Դրամատուններուն, ըլլայ զեղչի համար, ըլլայ պարզ գանձման համար, ընդունած մուրհակներուն մէջ անսակ մը թուղթեր կան որոնց Վաւերաթուղթի փոխանակագրեր կ'ըսեն (effets documentaires) այն վաւերաթուղթերուն պատճառաւ որ կ'ընկերանան սոյն մուրհակներուն: Վաւերաթուղթ ըսելով, կը հասկնանք այս պարագային, ապրանքի անասին ու գինը ցուցնող կամ անոր ցամաքային թէ ծովային ճամբով առաքումը արտայայտող և կամ ճանապարհի արկածներու դէմ անոր ապահովագրութիւնը պարունակող թուղթեր, որոնք են. Վաճառագիր (facture), Բեռնագիր (connaissance) Փոխադրագիր (lettre de voiture) Ի պահանջել հարկին, Նաւու Վարձագիր (charte - partie) և Ապահովագիր (police d'assurance) և կամ ասոնց համարժէք ուրիշ թուղթեր:

Ասոնցմէ ամենաանհրաժեշտը և ամենէն ստեպ հանգիստածը, ներկայ նխութին առարկայ գործողութեանց համար, Բեռնագիրն է :

Բեռնագիրը՝ գրութիւն մ'է զոր շոյենաւային ընկերութիւնք կուտան ապրանքը բեռնողին և որուն մէջ, շոգենաւային նաւապետը կը յայտարարէ ընդունած ըլլալ, հոն յիշուած ապրանքները, որոշեալ նաւահանգիստ մը փոխադրելու համար : Բեռնագրին գործածութիւնը այնքան բազմաթիւ է և զրամատան համար այնքան կարեւոր՝ որ կ'արժէ անոր մասին քիչ մը ծանրանալ :

Ըստ Օսմանեան Օրինագրքի, բեռնագիրը կարող է յօրինուած ըլլալ, որոշ անձի մը անուան կամ անոր հրամանին և կամ ի նպատակ կրողին : Այս վերջի պարագային՝ սեփականութիւնը կը փոխանցուի առանց ու է է ձեւակերպութեան պարզապէս թուղթը ձեռքէ ձեռք անցունելով : Երկրորդ պարագային՝ սեփականութիւնը երրորդի մը կը արուի փոխանցմամբ այսինքն բեռնագրին ետեւի կողմը ստորագրելով, ճիշտ այնպէս՝ ինչպէս տեսանք ջեներու կամ փոխանակագիրերու համար : Իսկ առաջին պարագային այսինքն կրը անուանական է, միայն այն անձը կարող է ապրանքը քաշել որուն անուան որ արձանագրուած է բեռնագիրը :

Բեռնագիրը կը պարունակէ հետեւեալ մանրամասնութիւնները :

1<sup>0</sup>) Փոխադրելիք առարկաներուն որակն ու քանակը ինչպէս նաև անոր տեսակները :

2<sup>0</sup>) Բեռնատիրոջ (Chargeur) անունն ու մականունը :

3<sup>0</sup>) Այն անձին անունը՝ որուն համար ապրանքը յատկացուած է :

4<sup>0</sup>) Նաւապետին անունն ու բնակավայրը :

5<sup>0</sup>) Նաւուն անունը, տարողութիւնը (Tonnage) և ազդութիւնը ինչպէս նաև մեկնումի և ժամանումի նաւահանգիստները :

6<sup>0</sup>) Նաւավարձքի (Frêt) գինը :

7<sup>0</sup>) Փոխադրելի ապրանաց վաճառանիշն (marque) ու թուանշանները :

Իւրաքանչիւր բեռնագիր չորս օրինակ կը պատրաստուի, որոնք բեռնատիրոջ և նաւատիրոջ կողմէ ստորագրուած պէտք են ըլլալ, ապրանքի բեռնումէն ամենաուշը 24 ժամ ետքը : Ասանցմէ մին՝ բեռնատիրոջ, երկրորդը ապրանքները բնդունելիք անձին, երրորդը նաւապետին իսկ չորրորդն ալ նաւատիրոջ կը արուին :

Աւրիշ փաստաթուղթ մ'ալ, որ գրեթէ միշտ կ'ընկերանայ վաւերաթուղթի մուրհակներուն, Ապահովագիրն է : Ան՝ ինչպէս անունն ալ կը վկայէ, գրութիւն մ'է որուն միջոցաւ Ապահովագրական էնկերութիւնը կը ստանձնէ, որոչ ապահովագլինի մը փոխարէն, ինքը տուժել, ճանապարհորդութեան ատեն պատահելիք արկածներու հետեւանքը :

Ապահովագիրը կը պարունակէ ի միջի այլոց հետեւեալ գլխաւոր կէտերը՝

1<sup>0</sup>) Իր ստորագրուած օրուան թուականը, ինչպէս նաև նոյն օրուան կէս օրէն առաջ կամ վերջը ըլլալը :

2<sup>0</sup>) Ապահովագրել տուող անձին անունն ու բնակավայրը, ինչպէս նաև վերջինիս իրրև սեփականատէր թէ իրրև յանձնակատար գործելը :

3<sup>0</sup>) Նաւուն անունն ու նկարագիրը :

4<sup>0</sup>) Նաւապետին անունը :

5<sup>0</sup>) Այն վայրը ուսկից ապրանքը բեռնուած է կամ պիտի բեռնուի :

6<sup>0</sup>) Այն նաւահանգիստը ուսկից նաւը մեկնած է կամ պիտի մեկնի :

7<sup>0</sup>) Ապահովագրուած նիւթերուն տեսակն ու արժէքը :

8<sup>0</sup>) Ապահովագրման սկիզբը ու վախճանը բնորոշող ժամանակամիջոցը :

9<sup>0</sup>) Ապահովագրեալ գումարը :

10<sup>0</sup>) Ապահովագիներ ( Prime d'assurance ) :

11<sup>0</sup>) Անհամաձայնութեան պարագային խնդիրը իրաւարարութեամբ լուծելու սրտումը կամ այլ ու է երկուստեք ընդունուած պայմաններ :

Ապահովագրութիւնը երբեմն փոխանակ ստանձին փաստաթուղթի ձևով ըլլալու, բեռնագրին մէջն իսկ յիշատակութեամբ տեղի կ'ունենայ, երբ օրինակի համար՝ Շոգենաւային Անկերութիւնը ինքը ստանձնած ըլլայ իր փոխադրած ապրանքներուն ապահովագրութեան հոգը :

Պանքաները՝ իրենց առած տնօրէնութեանց համա-  
ձայն Վաւերացիութի մութնակներուն ընկերացող այս վե-  
րոյշեալ թուղթերը կը յանձնեն պարտատիրոջ (tiré),  
կամ մութնակի գումարին հատուցման փոխարէն, և կամ  
վերջնոյն ընդունադրութեամբ (acceptation)։ Ամէն պարագայի մէջ Դրամատան պարտականութիւնն է սոյն թղթ-  
թոց կանոնադրութիւնը ստուգել, գործի ձեռնարկելէ ա-  
ռաջ, անխափր թէ զեղչելու պարագային և թէ գանձման  
համար ստացած ատեն։ Թէպէտ և պանքաները իրենց ընդ-  
հանուր պայմանները հրապարակած ատեն այս վաւերա-  
ցիութիւնը ինչպէս նաև ապրանքներու վերաբերմամբ  
ո և է պատասխանատուութիւն կը մերժեն ստանձնել,  
բայց և այնպէս, վաւերացիութի մութնակի մը կրողին  
պարտականութիւնները ինքնին այնքան կարեւոր են որ  
պանքան՝ այդ պարզ յայտարարութեամբ չի կրնար  
վտանգէ զերծ մնալ։

Ըսինք որ, սոյն վաւերացիութիւնը պարտատիրոջ կը  
յանձնուին, կամ մութնակը ընդունագրել տալով կամ փո-  
խարէնը վճարել տալով։ Առաջին պարագային ընդունա-  
դրեալ մութնակը, կրողին ձեռքը կը մնայ պարզ փոխա-  
նակագրի ձեւին տակ։ Երկրորդ պարագային, այսինքն  
երբ դրամատուներ պայմանաժամին, մութնակին փոխա-  
րէնը գանձելով միայն պարտաւոր ըլլայ յանձնել, ան՝  
մասնաւոր պարտականութիւններ ունի կատարելիք .  
որ պարտի հսկել շոգենտին ժամանման, ապրանքը  
չտնտարան դնել տալ, ազանովագրել, եթէ ավարի կայ  
զայն հաստատել տալ. այս բոլորը, տարակոյս չի կայ,  
ապրանքի տիրոջ հաշւոյն։

Առևտուրը կը ձգտի միշտ ձեւակերպութիւնները ըստ կարելւոյն կրճատել. հոս ալ շատ անգամ պանքան բեռնազրկերը կը ստանայ պարզապէս որոշ գումարի փոխարէն այսինչին յանձնելու խնդրանօք: Այս պարագային, դրամատան դերը կը կայանայ իւր թղթակցին կամ յաճախորդին հրամանները ճշգրիտ ըմբռնելուն, և ի դէպս, զանոնք ճշտել տալուն մէջ: Օրինակ՝ կարող է պատահիլ որ ապրանքը ընդունելիք անձը ժամանակին չի վճարէ տուեալ գումարը այն ատեն ի՞նչ պէտք է ընել. ընդունած հրամանները այնպէս մը մեկին պէտք է ըլլան ամէն մէկ պատահականութեանց դէմ որ, պանքան ո՛ր և է պարագայի պատասխանատուութեան կամ վնասի չ'ենթարկուի:

Հակառակ գործողութիւնն ալ կարող է պատահիլ. այսինքն դրամատունէն կարելի է որ խնդրեն, բեռնազրկ մը կամ զանազան ուրիշ վաւերաթուղթեր, ընդունիլ երրորդէ մը որոշ գումար մը վճարելով. այս պարագային հարկ անհրաժեշտ է, որ այնպիսի հրաման մը տուող յաճախորդը ամենակատարեալ ճշգրտութեամբ և մեկին ոճով արտայայտուած ըլլայ, թէ՛ պահանջուելիք թղթոց մասին և թէ՛ անոնց յիշատակած ապրանքներու մասին: Պանքան ալ ի հարկէ ստիպեալ է, այդ ուղղութեամբ գործել և հսկել որ վաւերաթուղթերը լիովին համապատասխանեն յաճախորդին պահանջած պայմաններուն: Ահա թէ ի՞նչ ստափճան զգուշութիւն և անշարժութիւն կը պահանջեն այս տեսակ գործերը, որոնք ամէն դրամական հաստատութեանց մէջ պատասխանատու և փորձառու պաշտօնէից ձեռքը պէտք է յանձնուին:

Անոյնինք այժմ վարկային գործոց մեկնութեան:

Վարկային գործերը գրամատան ամենահիմնական գործողութիւններուն կարգին կը պատկանին: Ասիկա այն աստիճանի ճիշտ է որ պակեա և վարկային հաստատութիւն հոմանիշ բառեր կը համարուին և շատ մը գրամական ընկերութիւններ, իրենց գոյութեան նպատակը արտայայտելու ամենացայտուն բացատրութիւնը վարկ (Crédit) բառին մէջ գտած են. ինչպէս *Crédit Lyonnais*, *Crédit Foncier Egyptien*, *Société Générale de Crédit* և այլն և այլն:

Վարկի գործողութիւնները բազմաթիւ են և բազմազան: Ամենապարզ բայց ամենապարզապէս ձևը կը կայանայ, յաճախորդին արամադրութեան ներքեւ գնել, իր գործին կարեւորութեան և հրապարակի վրայ ունեցած զիրքին համապատասխան, որոշ գումար մը՝ ընթացիկ հաշիւի ձևով:

Էնդիրը այս ձևին տակ՝ կը վերածուի փոխառութեան մը, որուն միակ երաշխաւորութիւնը փոխառութիւնը գրամական կարողութեան մէջ (solvabilité) կը կայանայ:

Տարակոյտ չի կայ թէ, գրամատունը այս ձևին տակ վարկ մը բանալէ առաջ, պէտք եղած լեզակութիւնները կը հաւաքէ և հարկաւոր դատած զգուշութիւնները ձեռք կ'առնէ:

Այս վերջիններէն է ահա, ի միջի այլոց, այն պայմանագրութիւնը զոր յաճախորդին ստորագրել կը արուի և որ մօտաւորապէս հետեւեալ խմատով խմբագրուած է:

## ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Կ. Պոլիս

Պարոնայք ,

Ներկայ գրութեամբ կը հաստատեմ որ , Դուք իմ դիմումիս վրայ , այսօր ինձի ընթացիկ հաշուոյ վարկ մը բացիք , հետեւեալ պայմաններով զոր կ'ընդունիմ կատարելապէս :

Այս վարկը բացուած է սարին — % տկոսով , որ ամէն երեք ամիսը մէյմը պիտի հաշուուի եւ պարսփին վրայ պիտի աւելցուի :

Դուք իրաւունք պիտի ունենաք ուզած ասեցնիդ հաշիւս փակելու եւ շնորհուած վարկին վերջ տալու , Ձեր այդ որոշումը ինձի պարզ նամակով մը յայտնելով : Եւ ես՝ Ձեր զեկոյցը ստանալէս ամենաուշ — or վերջը , իմ բոլոր պարսփս տկոսներովը հանդերձ վճարելու ստիպեալ եմ :

Կը յայտարարեմ որ բնակավայրս (Կ. Պոլիս) է , Ձեր դրամատան հանդեպ ունենալիք բոլոր պարսփերուս համար եւ բնակավայրիս սարքեր տեղ ըլլալէն առաջ գալիք ո եւ է անձեռնհասութեան խնդիր յարուցանելու իրաւունք պիտի չ'ունենամ :

Յարգանքով

( Թուական , ստորագրութիւն 10 դրուցնոյ մազքու դրումի վրայ )

Այս ձևով, այսինքն՝ առանց ս' և է երաշխիքի տեղի ունեցած փոխառութեան, բաց վարկ (crédit en blanc կամ crédit à découvert) կ'ըսեն:

Երբեմն կը պատահի որ, գրամատուներ թէպէտ և տրամադիր է վարկ բանալ տուեալ վաճառականի մը, բայց վերջնոյս կարողութեան վրայ կատարեալ համոզում գոյացուցած չէ: Այն ատեն յաճախորդը գրամատան երաշխաւոր մը կուտայ յանձին այնպիսի մէկու մը, որուն կարեւորութիւնը և գրամական ուժը պանքային համար ս' և է կասկածէ վեր ըլլայ:

Երաշխաւորը ինքն ալ, իր պաշտպանած անձին պայմանադրէն անջատ՝ մանաւանդ թէ զայն լրացնելու համար, թուղթ մը կը ստորագրէ երաշխաւորութեան քուղը (acte de garantie) անուամբ, որ մտաւորապէս հետեւեալ ձևէն ունի:

---

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԹՈՒՂԹ

Ստորագրեալս, (անուն, մականուն) կը յայտարարեմ որ Առեւտրական Գրամատան Տ. (այսինչ) ին բացած ընթացիկ հաշուի ձեւով վարկին շնորհիւ (որուն պայմանագրին այսօրուան քուականով Տիար (այսինչ) ի կողմէ ստորագրուելուն տեղեակ եմ) ըլլալիմ մինչեւ ——— ոսկիի պարսֆը վճարելու համար համեմատեալ եւ միաբան երաշխաւոր եմ:

Կ'երաշխաւորեմ նոյնպէս միաբանօրէն եւ հա-

մեծաբար ( conjointement et solidairement ) բոլոր տկոսները , ծախքերը եւայլն, զոր կարող է պարտի Տիար ( այսինչ ) Առեւտրական դրամասան վերոյիշեալ վարկին հետեւանօք :

Հետեւաբար, ստիպեալ եմ ամիջապէս հասուցանել Առեւտրական Գրամասան իր առաջին պահանջին, առանց որ նա պարտաւոր ըլլայ գլխաւոր պարտաւոր հետապնդելու , քբոլոր այն գումարները զոր Տիար ( այսինչ ) կարող է պարտական ըլլալ վերոյիշեալ իմ երաշխաւորած, վարկի բերմամբ : Առեւտրական Գրամասունը իրաւունք պիտի ունենայ Տիար ( այսինչ ) եւ ունեցած իւր առնելիքին ամբողջութիւնը մեր իւրաքանչիւրէն պահանջելու եւ մեզմէ միոյն ըրած դիմումովր , միւսին հանդէպ հետապնդումի իրաւունքէն չի պիտի զրկուի :

Ներկայ երաշխաւորութեան բուղքը այն գործողութիւններու համար է, որոնք տեղի պիտի ունենան այսօրուրեւ սկսեալ—————ամսուան ժամանակամիջոցի մէջ. ինչ ալ ըլլայ անոնց պայմանաժամը եւ վնարօրը: Տարակոյս չի կայ որ, այս—————ամսուան ժամանակամիջոցը մեր պատասխանատուութեան տեւողութիւնը չի նշանակեր, որք միմիայն պիտի դադրի, կամ պարտի հասուցմամբ կամ օրինական կանխագրաւումի պահուն ( *prescription* ):

Ներկայ երաշխաւորութեան բուղքը, տարուան մը համար նորոգուած պիտի համարուի, երբ պայմանաժամէն ամիս մը առաջ գրաւոր կերպով մը չ'արտայայտեմ զայն ջնջելու ցանկութիւնս: Առանց այս

գեկոյցին, իմ երաշխաւորութիւնս պիտի շարունակե՛ս եւել նաեւ այն գործողութեանց համար եւս, որ տեղի պիտի ունենան սոյն նոր տարուան մէջ ալ: Միեւնոյն բանը պիտի պատահի շարունակաբար ամէն տարի մինչեւ որ վերոյիշեալ գրաւոր գեկոյցը տամ, վախճանեն ամիս մը առաջ:

Կը յայտարարեմ որ բնակավայրս ( Կ. Պոլիս ) ե իմ ներկայ յանձնառումներուս կատարման համար եւ բնակավայրիս տարբեր տեղ ըլլալէն առաջ գալիք ո եւ ե անձեռնհասութեան խնդիր յարուցանելու իրաւունք պիտի չ'ունենամ:

( Թուական եւ ստորագրութիւն 25 դանկեանց Մաքու դրոճի վրայ՝ երէ գումարը 40,000 դանկեանէն վերէ, համեմատական դրոճի վրայ, երէ երաշխաւորեալ գումարը անկից վար է:

*Կայ տեսակ մ'ալ ընթացիկ հաշուով վարկեր, որոնց մէջ յաճախորդը, փոխանակ ուրիշ անձ մը ներկայացնելու իրրեւ երաշխաւոր, արժէքաւոր իրեղէններ կը ձգէ իրրեւ ապահովութիւն, օրինակ՝ արժեթուղթեր, մուրհակներ, ապրանք եայլն: Ասոնց մասին փոխատուութեանց զլուխներուն մէջ արդէն խօսած ըլլալով հաս պիտի չի կրկնենք, այլ պիտի գոհանանք պարզապէս յաճախորդին ստորագրել արուած վաւերաթուղթերէն մէյմէկ նմոյշ գնելով, որով և սոյն գործողութեանց զանազան մանրամասնութիւններն ալ յիշած կ'ըլլանք:*

ԱՐԺԵԹՈՒՂԹԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՈՒԱՆՏ ԸՆԹԱՅԻԿ-ՀԱՇԻԻ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

Պարոնայք ,

Ներկայիւս կը խնդրեմ ինձի վարկ մը բանալ ,  
 \_\_\_\_\_ ոսկւոյ համար , բնբացիկ հաււոյ ձեւով  
 եւ հետեւեալ պայմաններու ներքեւ , զոր Ձեր կողմէ ո-  
 ռոշուած եւ իմ կողմէս կատարեալապէս ընդունուած են :

Ինձի ըլլալիք ո եւ է կանխավճար , պիտի երաւ-  
 խաւորուի անմիջապէս , Ձեր հանուրիւնը ստացած ար-  
 ժեքուղիներով . զոր պիտի յանձնեմ Ձեզ իմ միակ պա-  
 տասխանատուութեանս ներքեւ :

Այս արժեքուղիները , ինչպէս նաեւ ուրիշ ո եւ է  
 արժեքուղի կամ դրամ առհասարակ , որ Ձեր տով կը  
 գտնուի , կամ կրնայ գտնուիլ . ո՛ր եւ է ասեմ իմ անուանս ,  
 Ձեզի իբրեւ ապահովութեան գրաւ պիտի ծառայեն ,  
 ոչ միայն Ձեր կանխավճարներուն փոխարէն , այլ բո-  
 յոր այն գումարներուն որ Ձեզ կը պարտիմ կամ կր-  
 նամ պարտիլ յառաջիկային ինչ պատճառաւ որ ըլլայ  
 եւ իբրեւ գրաւական օրինաւոր վախճանին բոլոր մեր  
 մէջ եղող , գործողութեանց ինչպէս նաեւ իմ Ձեզի  
 հանդէպ ունեցած կամ ունենալիք յանձնառումներուս  
 փոխարէն :

Իմ Ձեզի հանդեպ ունենալիք պարսֆս պէտք չէ երբեք իմ Ձեր Բով բողած արժեքուղբերուս , ըստ Ձեր գնահատման , փոխարժեքին ( այսքան առ հարիւր ) եւն աւելի ըլլալ :

Դուք՝ ուզած ասեցնիդ իրաւունք պիտի ունենաք իմ գրաւ դրած արժեքուղբերէս այս կամ այն մեծութիւն կամ պահանջելու որ անոնց տեղ ուրիշներ բերեմ . եւ ես՝ ստիպուած եմ զանոնք փոխելու կամ իմ պարսֆս նոյն համեմատութեամբ պակսեցնելու :

Երբ իմ բնթացիկ հաւուոյս տնտղութեանը միջոցին արժեքուղբերու գիները իյնան , ստիպեալ եմ ամիջապէս անկման համապատասխան ֆանակութեամբ ըլլայ դրամով , ըլլայ Ձեր հանած արժեքուղբերով տարբերութիւնը ամբողջացնել , այնպէս որ , միտք իմ պարսֆիս եւ արժեքուղբերուս մեջի որոշեալ համեմատութիւնը անվրար մնայ : Թողոց գներու բարձրացման պարագային , սակայն , իրաւունք պիտի չ'ունենամ գրաւէս մաս մը ետ պահանջելու , կամ պարսֆիս ֆանակը աւելցնելու :

Իմ հաւուոյս պարսֆին զտնտղող զուամարներու համար Ձեզի ի նպաստ տկոս մը պիտի հաշուէք , որուն սակը Անգլիոյ Դրամատան պատշտակեան զեղչի սակէն հարիւրին ( այսինքն ) աւելի պէտք է ըլլալ եւ անոր ելեւեջներուն պիտի հետեւի առանց սակայն երբեք հարիւրին ( այսինքն ) եւն պակաս ըլլալու : Դուք սակայն , այս սակը ուզած ասեցնիդ փոփոխելու իրաւունք պիտի ունենաք :

Բաց ի սակից, Ձեզի իմ պարսֆիս ամբողջութեան վրայ (այսֆան) % յանձնարարագին մը պիտի վնարեմ:

Իրաւունք պիտի ունենամ, առանց սակայն պարսական ըլլալու, գանձելու իր ժամանակին իմ հաւույս, Ձեր սովորական յանձնարարագինը առնելով, արժեքդրեալս կտրօնները, ինչպէս նաեւ պարգեւները (*lots*), կամ հասուցումները (*remboursement*) Դուք բնաւ ստիպեալ չեք հսկելու վիճակահանութեանց, ստորագրութեանց, արժեքդրոց հաստեալ վերածման (*conversion*) փոխանակման (*échange*), վնարմանց հրաւերներու (*appels de fonds*) եւլն.ի վրայ:

Այս բնթացիկ հաշիւին ոչ մէկ պայմանաժամ դրուած է, եւ Դուք ամեն պարագային, ուզած ասեցնիդ, անոր վերջ կրնամ դնել. հետեւաբար ես ալ պարսական եմ Ձեր առաջին պահանջին ամիջապէս պարսֆս հասուցանել տկոսներով եւ ուրիշ ծախքերով միասին:

Բացայայտ կերպով համաձայն եմ, որ իմ հաշիւս հնչուն դրամ Յամ. ոսկիի բացուած ըլլալով, միշտ պարսֆերուս հասուցումը պէտք եմ բնել հնչուն դրամ Յամ. ոսկիով եւ երբեք ուրիշ կերպով: Նքէ սակայն, ինծի զանազան դրամներով, մէկ կամ մէկ քանի հաշիւներ բանամ, ըլլայ իմ խնդրանքովս, ըլլայ մեր բնելիք պատահական գործողութեանց բերմամբ, այս հաշիւներուն իւրաքանչիւրը այն դրամով պէտք է հասուցուի, որ դրամով որ բացուած է. եւ այս բոլոր հաշիւները, ի պահաջել հարկին, համակշռուելով մէկ եւ անբաժան հաշիւ մը պիտի կազմեն, որ իմ Ձեր հով

ունեցած բոլոր արժեքուղբերովս ապահովուած պիտի ըլլան:

Վերջապէս մեր միջեւ անհամաձայնութեան մը պարագային ըլլայ ընթացիկ հաշուոյ ըլլայ արժեքըրոց վերաբերմամբ, այժմէն կը յայտարարեմ, որ միմիայն Ձեր տոմարներն են որ իբրեւ փաստ պիտի ծառայեն:

Երէ Ձեր կողմէ արժեքուղբերը փոխելու կամ պարսֆս հասուցանելու եւ կամ գիններու անկման պարագային՝ համեմատութիւնը վերականգնելու համար եղած պահանջին անմիջապէս չի հնազանդիմ Ձեր վերոյիշեալ նամակով որոշած պայմանաժամին մէջ, Գու՛ք իրաւունք պիտի ունենամ ծախելու ո եւ է ասեն Ձեզ մօտ գրաւ գտնուող արժեքուղբերը, եւ ես՝ այժմէն Ձեզի ազատ կը կացուցանեմ ո եւ է պարտականութենէ որպիսիք են, հնազանդելու վերջնագոյն հրաւեր մը (mise en demeure) զրկել, դատարանի արտօնութիւն ձեռք բերել կամ ուրիշ ո եւ է ձեւակերպութիւն : Այս վանառումէն առաջ գալիք դրամով, Գու՛ք առանձնաւորօրէն իրաւունք պիտի ունենամ ուրիշ ո եւ է մէկէն առաջ, Ձեր պահանջը ստանալու տոկոսներով եւ ծախսերով միասին : Գու՛ք այս վանառումը պիտի կատարեմ Ձեր յարմար դատած միջոցով, գինով եւ պայմաններով եւ ես՝ երբեք իրաւունք չի պիտի ունենամ առայդ ո եւ է առաւելութիւն ընելու, ոչ միայն, այլ եւ սխալեալ եմ բացարձակապէս եւ ամէն պարագային Ձեզի տարբերութիւնը հասուցանել երէ թղթոց վանառման արդիւնքը ամբողջութեամբ չի ծածկէ պարսֆս հանդերձ տոկոսներով եւ ծախսերով :

Վերոյիշեալ պարագաներուն բերմամբ գրաւիս վանառման համար, Ձեր սնօրէններն Տիարք (այսինչները) իմ անդառնալի պատուիրակներս կամ *վիճիլ սկիւրիյիներս* կը կարգեմ ըստ Օսմանեան օրինաց :

Տարակոյս չի կայ, գրաւիս վանառումը Ձեզ համար պարտաւորիչ չի եւ ես երբեք իրաւունք պիտի չ'ունենամ գանգասելու թէ ի՞նչու չի վանառեցիք եւ կամ թէ ի՞նչու աւելի ձեռնու պայմաններով չի ծախեցիք :

Բաց ի ասկից, ո եւ է գումար, որ Ձեր փոլ կրնայ գտնուիլ իմ անուանս, ուրիշ ո եւ է հաշիւի մեջ, պիտի կարենայ գրաւուիլ Ձեր կողմէ՝ ի հասուցումն Ձեր կանխավնարներուն :

Ներկայ յանձնառումներուս համար, բնակավայր ընտրած եմ Կ. Պոլիս :

( Թուական, ստորագրութիւն 10 դահեկանի մաքուր դրոսի վրայ ) :

ՄԱՆՕԹ. — *Յաճախորդին ստորագրութեան վրայ իր ձեռքովը « Յես ընթերցման հաւանած եմ » ( lu et approuvé ) նախադասութիւնը գրել կուտան :*



ՄՈՒՐՀԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՓՈՒՍՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱՅԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Կ. ՊՈՒԼՍ

Պարոնայք,

« Դուք այսօր ինձի վարկ մը բացիք մութհակնե-  
րով ապահովուած, հետեւեալ պայմաններով զոր կ'ընդու-  
նիմ կատարելագէտ» :

« Այս վարկը ինձ շնորհուած է տարին հարիւրին  
( այսքան ) տոկոսով, վերջինս ալ ամէն երեք ամիսը  
մէյմը հաշուելի» :

« Ուզած ատեննիդ իրաւունք պիտի ունենաք այս  
հաշուոյն գործողութիւնները դադրեցնելու և այսպէսով  
սոյն վարկին վերջ տալու, Ձեր սրտումը պարզ նամակով  
մը ինձ տեղեկացնելով : Ձեր զեկոյցի թուականէն ամէ-  
նաուշք ————— օր վերջը ևս ստիպեալ եմ հասու-  
ցանել, պարտքս հանդերձ տակոսով» :

« Այս ընթացիկ հաշուոյ վարկի բերմամբ Ձեր ը-  
րած բոլոր կանխավճարները ( avance ), պիտի երաշխա-  
ւորուին Ձեր հաճութեան արժանացած փոխանակագրերով,  
զոր Ձեզի պիտի փոխանցեմ « փոխարժեք երաշխաւո-  
րութեան համար » ( valeur en garantie ) արձանագրու-  
թեամբ : Ձեր բացած վարկը ամէն պարագային, Ձեզի  
զբաւ զբաւած մութհակներու դումարին հարիւրին ( այս-  
քանը ) չի պիտի անցնի :

« Այս մուրհակները կը յատկացնեմ նմանապէս իբրև երաշխիք իմ ունեցած կամ ունենալիք բոլոր պարտուցս համար թէ Չեզի և թէ Չեր մասնաճիւղերուն ինչ պատճառաւ և ինչ գործողութեան բերմամբ ալ որ ըլլայ և ի մասնաւորի Չեր քով գտնուած և իմ ստորագրութիւնս կրող մուրհակի կամ տոմսի մը անվճար մնալուն հետեանօք :

« Այս գրաւ դրուած մուրհակներու վճարօրերուն գանձուած գումարները իմ հաշւոյս պահանջին պիտի անցնին :

« Կ'երաշխաւորեմ Չեզ որ իմ տուած մուրհակներուս մէջ թերութիւն, անկանոնութիւն, անճիշդ կամ կեղծ արտայայտութիւն չի կայ և Չեզ զերծ կը կացուցանեմ այժմէն, պայմանաժամին ո՛ր և է մուրհակի մը անվճար մնալու պարագային, ինձ համար ո և է զատական ձեւակերպութիւն կատարելէ, ի մասնաւորի բողոքագրելէ ( lever protêt ), բողոքք ինձի զեկուցանելէ և ին. օրովհետև Չեր առաջին գիմումին՝ անմիջապէս յանձն կ'առնեմ հատուցանել, անվճար մուրհակի փոխարէնը հանդերձ տոկոսով և ծախքերով և Դուք՝ պարտական չէք միւս ստորագրողները հետապնդելու :

« Այսու հանդերձ, զատական ձեւակերպութիւններ չի կատարելու իրաւասութիւնը Չեզ համար պարզ իրաւունք մ'է միայն, զոր ուզէք կը գործադրէք ուզէք ոչ :

« Բացի ասկից, յանձն կ'առնեմ ամբողջովին վճարել Չեր առաջին պահանջին, և վճարօրէն առաջ իսկ, ո՛ր և է

մութհակ որուն մէկ ստորագրողը սնանկ հռչակուած կամ իր վճարումները դադրեցուցած ըլլայ:

« Եթէ ետ չ'առնեմ հատուցմամբ կամ Ձեր հաճած ուրիշ պօսիօներով փոխանակելով, անվճար մնացած կամ վճարօրը հասած (échu) այն մութհակները որոնց, ստորագրողներէն մին սնանկ հռչակուած կամ վճարումները դադրեցուցած է, 'Դուք՝ իրաւունք պիտի ունենաք, այս ներկայ վարկի շնորհիւ իմ ունեցած ամբողջական պարտքս միանուագ պահանջելու, զոր պարտիմ վճարել անմիջապէս առանց վերոյիշեալ պայմանաժամէն կարենալ օգտուելու: »

« Կը ճանչնամ Ձեր իրաւունքը, զրաւ գրուած բոլոր մութհակներու զանձուումները Ձեր միջոցաւ կատարելու: »

« Կը յայտարարեմ որ բնակավայր ընտրած եմ (Կ. Պոլիս) Առեւտրական Դրամատանդ հանդէպ ունեցած բոլոր պարտուցս հատուցման և ի մասնաւորի ներկայ յանձնատուումներուս կատարման համար, և երբէք իրաւունք պիտի չ'ունենամ բնակավայրիս այլուր գտնուելուն պատրուակաւ դատարանի անձեւնհասուիթեան խընդիր յարուցանելու: »

(Թուական եւ ստորագրութիւն 10 զանեկաննց մաքրու դրամի վրայ:)

Ապրանքի վրայ փոխատուութեան ձեւն ալ մօտաւորապէս արժեթուղթերու գրութիւնն է, սա տարբերութեամբ որ, զրաւ գրուած ապրանքները դրամատան առանձին շտեմարաններուն մէջ կը գատուին և կամ, եթէ պանքան մասնաւոր տեղ չ'ունի, Հանրային Շտեմարաններու կամ Ծովահամբարներու (docks) մէջ կը գրութիւն պանքայիս անուան: Պարտատէրը իր պէտքերուն համա-

ձայն վճարումներ կ'ընէ գրամատան, որ անոնց համապատասխան ապրանք կը յանձնէ իրեն և կամ աւելի ճիշդը, Յանձնման Հրամանագիր մը ( bon de livraison ) կուտայ յաճախորդին, որուն միջոցաւ նա՝ կ'երթայ Շանմարանէն կը ստանայ իր ապրանքը, հանելու ծախքերը տարակոյս չի կայ, ինքը վճարելով: Ապրանքներու տէրը բացի սովորական տոկոսէն և յանձնարարագինէն կը վճարէ նաև պահավարձք ( droit d'emmagasinage ):

Այժմ, քննենք վարկի գործողութեանց միւս ձևերը:

Հոս մասնաւորապէս պէտք է նկատի ունենալ Օսմանեան Առևտրական Օրինագրքի 69րդ. յօդուածը որ կը արամադրէ ի միջիայլոց, թէ առևտրական համաձայնութիւնները պարզ համակազրութեամբ ալ կարող են կ'աքուիլ: Այս կէտը կը շեշտենք, որովհետև սովորաբար այս վերջին ձևով տեղի կ'ունենան այն գործողութիւնները որոնց մեկնութեան կ'ուզենք ձևանարկել ստորև:

Գիտենք որ, գրամատուները ըստ կարելոյն կը ձգտին իրենց գրամազրուիները անշարժութեան մասնելէ զգուշանալ. ասոր պատճառն ալ տեսանք իր կարգին: Այս նպատակաւ է որ իրենք Մնատուկի միջոցաւ ըլլալիք կանխավճարներուն կը նախընտրեն ուրիշ գործողութիւն մը, որ իրենց աւելի ձեռնառ ըլլալով հանդերձ միևնոյն արգիւնքը կուտայ. ընդունագրութեանց հաշիւներուն է ( comptes acceptation ) որ կ'ակնարկենք, որոնց մասին թէպէտ և մի քանի խօսք ըրինք փոխանակագիրներու գլխուն մէջ, բայց և այնպէս աւելորդ չ'ըլլայ գուցէ հոս՝ անգամ մ'ալ շեշտել: Ահա թէ ինչ բանի մէջ կը կայանայ այս տեսակ վարկի բացումը:

Գործողութեան պայմանները նամակով կ'որոշուին և յաճախորդը դրամատան վրայ փոխանակագիր մը կը քաշէ, որ սովորաբար եռամսեայ է և զոր վերջինս յանձն կ'առնէ ընդունագրել (accepter)։ Այս ընդունագրուած փոխանակագիրը այլուր զեղչելով՝ յաճախորդը կը ստանայ իրեն պէտք եղած դրամը։ Վճարօրին՝ յաճախորդը կը հատուցանէ դրամատան իր ընդունագրած փոխանակագրին փոխարէնը և գործողութիւնը այսպէսով վերջ կը գտնայ։

Ինչպէս կը տեսնենք, ասիկա՝ պանքային կողմէ դրամի փոխատուութիւն մը չէ, որովհետեւ նա, այս պարագային դրամ չէ որ վարձու կուտայ այլ՝ իւր վարկը։ Իսկապէս այս ընդունագրութեան յարգին, այսինքն այս ստորագրութեան չնորհիւ է որ յաճախորդը իւր փոխանակագիրը աւելի կամ նուազ նպաստաւոր կերպով կըրնայ զեղչել։ Դիւրահասկնալի է որ, ամէն սեղանաւոր ի վիճակի չէ այս ձեւով վարկեր բանալու որոնք միմիայն առաջնակարգ դրամատուներուն մատչելի գործեր են։ Դրամատուները այս տեսակ վարկերը բացած ատեն, միեւնոյն զգուշութիւնները ձեռք կ'առնէ, ինչ որ վերը տեսանք, այսինքն եթէ ուզէ բացէն կուտայ իր ստորագրութիւնը, եթէ ոչ, երայխաւորութիւն մը կը պահանջէ, որ կրնայ ըլլալ թէ ուրիշ անձի մը միջամտութեամբ և թէ արժեթուղթ, մուրհակ կամ ասպրանք գրաւ դնելով։

Բայց որովհետեւ դրամի նիւթական փոխատուութիւն չէ որ տեղի կ'ունենայ, անոր համար ալ տոկոսի խօսք չի կրնար ըլլալ, այլ դրամատուներ իւր այս գործողութեան իրրև վարձք՝ յանձնարարագին մը կը գանձէ

որ կը կոչուի բնդուեագրութեան յանձնարարագիւն (commission d'acceptation) : Կայ տեսակ մ'ալ վարկ՝ զոր դրամատունները նոյնպէս սովոր են բանալ, և որ կը կոչուի հաստատեալ վարկ (crédit confirmé) : Այս վարկերուն բացումը ինչպէս անունն ալ կը վկայէ, կը հաստատուի նամակով մը այն անձին՝ որուն ինպաստ բացուած է, ինչպէս նաև այն դրամատան կամ դրամատանց, որոնց քով որ բացուած է : Այս հաստատման նամակին շնորհիւ բացուած վարկը անդառնալի (irrévocable) է այսինքն զայն բացող դրամատունը ստիպեալ է անվրէպ կերպով հպատակիլ անոր պայմաններուն վարկի բոլոր տեւողութեանը միջոցին :

Առանց այս հաստատման նամակին, բացուած վարկը կը կոչուի պարզ վարկ (crédit libre կամ accreditif) :

Այս ուրիշ բան չէ, բայց եթէ դրամատան կողմէ իւր թղթակցին քով տրամադրուած դրամ մը ինպաստ յաճախորդին զոր վերջինս կը ստանայ իր իսկութիւնը հաստատել տուող փաստաթուղթերը ներկայացնելով :

Վարկի բացումը երբեմն ապահովուած է փոխարէն ստանալիք վաւերաթուղթերով, որոնք ինչպէս արգէն տեսանք, վաճառագիրէ, բեռնագիրէ և ապահովագիրէ կը բաղկանան. այն ատեն սա կը կոչուի ապահովեալ վարկ (crédit documentaire) : Սա ալ իր կարգին, կ'ըլլայ պարզ և հաստատեալ նայած թէ՛ վարկին բացումը առանձին նամակով զեկուցուած է դրամը ընդունելիք անձին թէ ոչ :

Ի պահանջել հարկին, վերոյիշեալ բոլոր վարկերն ալ հետագրով կարելի է բանալ :

Վարկի մասին տւելի ևս շոշափելի գաղափար մը տալու համար, ստորև երկու օրինակ կը գնենք, մին ի տես վճարելի վարկի՝ միւսն ալ պայմանաժամով կամ ինչպէս արդէն տեսանք, ընդունադրութեան փոխարէն բացուած վարկի մասին: Այս օրինակները, որ իրական գործողութեանց ցոլացումն են, սա նուազն հինգ մասերէ կը բաղկանան: Ա. — Նամակ մը՝ որով յաճախորդը կը խնդրէ զբամատունէն, իրեն արտասահման վարկ մը բանալ: Բ. — Դրամատան յաճախորդին տուած պատասխանը, որուն մէջ կը հաստատէ սոյն վարկին բացումն և պայմանները: Գ. — Այն նամակը՝ որով պանքան իր թղթակցին մօտ կը բանայ յիշեալ վարկը: Դ. — Թղթակցին նամակը՝ որուն մէջ սա կը հազորդէ վճարման կատարումն: Ե. — Այն նամակը՝ որով պանքան իր յաճախորդին կը զեկուցանէ, իւր կարգին, գործողութեան կատարումը և կը պարտագրէ զայն ( *débite* ) վճարուած գումարին համար:

Առաջին օրինակ. — Ա. Մաս:

Կ. Պոլիս, 1 Ապրիլ 1914

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

Պարոնայք,

« Տիարք Յրէնջ ԵՒ ՍՄԻԹ ի Լիւրբուլ, պիտի յանձնեն՝ մեր հաշւոյն, Ձեր Լճնտանի թղթակցին՝

1<sup>0</sup> Բեռնազիր մը՝ Տասը Տակառ Անազի համար, նաւավարձը վճարելու:

2<sup>0</sup> Ապահովագիր մը և ապրանաց ծագման վկայագիր մը ( *certificat d'origine* ):

3<sup>0</sup> Վաճառագիր՝ ապրանքներու արժէքը արտայայտող: Հաճեցէք ընդունիլ այս վաւերաթուղթերը պարզապէս, այսինքն առանց ստուգելու ոչ բեռնուած կամ վաճառագրուած ( *facturé* ) ապրանքները և ոչ ալ ապահովագրին կամ բեռնագրին պարունակած պայմանները:

« Այս վաւերաթղթոց (զոր կարող էք Ձեր անուան փոխանցել) պարզ յանձնման փոխարէն ամենաուշը մինչև յառաջիկայ Մայիսի վերջը, հաճեցէք վճարել տալ Տիարց ՅԲԼԵՁ ԵՒ ՍՄԻԹԻ, վերոյիշեալ վաճառագրի գումարը մինչև շուրջ Սթէրլին 197 ( հարիւր իննըսուն և եօթը ):

« Մենք ալ մեր կարգին, սոյն վաւերաթղթոց փոխարէն և Ձեր առաջին պահանջին վրայ, յանձն կ'առնենք հատուցանել Ձեզ, Ձեր Տիարց ՅԲԼԵՁ և ՍՄԻԹԻ ի Լիվրուէ, վճարած գումարը, հանդերձ տարեկան (7<sup>0</sup>/<sub>0</sub>) տոկոսով Ձեր վճարման թուականէն մինչև մեր հատուցման օրը գանուող ժամանակամիջոցի համար, ինչպէս նաև  $\frac{1}{4}$  <sup>0</sup>/<sub>0</sub> յանձնարարագին մը: Մեր սոյն յանձնառումէն զատ, մենք պարտաւոր ենք Ձեզ տեղեկացնել ապրանքին ժամանումը և զայն ապահովագրել մաքսատան մէջ գանուած օրերուն համար, Ձեր անուան և մեր ծախքերովը: Եւ որովհետև վերոյիշեալ ապրանքը և զայն ներկայացնող բեռնագիրը Ձեզի գրաւ տրուած են, Ձեր պահանջին իրրև երաշխաւորութիւն, բացարձակապէս կը յայտարարենք որ, այժմէն Ձեզի իրաւասութիւն

( mandat ) կուտանք , մեր յանձնառումներուն անկատար մնալուն պարագային , ապրանքը անպաշտօն կերպով ծախելու , ըլլայ վաւերաթուղթերու միջոցաւ , ըլլայ ապրանքը քաշելէ և շտեմարան դնելէ վերջը և այդ՝ Ձեր հրապարակի վրայ գտած գինովը , առանց դատական օ և է ձեւակերպութեան զիմելու և առանց ստիպեալ ըլլալու մեզի օրինական օ և է ազդարարութիւն զրկելու :

« Վաճառման արդիւնքը՝ պիտի պահէք իբրև հատուցում Ձեր պահանջին հանդերձ տոկոսներովը , և եթէ գումարը չի բաւէ Ձեր առնելիքը ծածկելու , մենք՝ բնականաբար ստիպեալ ենք տարբերութիւնը լրացնելու ինչպէս նաև , Դուք մեզի պիտի վերադարձնէք եթէ սոյն վաճառումէն , մեր պարտքէն գուրս օ և է գումար մը աւելնայ , եթէ սակայն ուրիշ օ և է պատճառաւ մեզ հանդէպ պահանջուր չի գտնուիք . այս վերջին պարագային տարակոյս չի կայ , այդ աւելցած գումարն ալ պիտի ծառայէ մեր միւս պարտքին հատուցման :

« Այն իրաւասութիւնը , որ ներկայիւս կուտանք Ձեզի , Ձեր շահերուն ի պաշտպանութիւն արուած ըլլալով , անգառնալի է : Այս իրաւասութիւնը սակայն , արգելք մը չի կրնար ըլլալ , որ Դուք՝ ուրիշ օ և է միջոցներով ալ մեզմէ պահանջէք Ձեր առնելիքը , առանց ապրանքը ծախելու կարողութենէն զրկուած ըլլալու . կարողութիւն՝ որ Ձեզ համար իրաւունք մ' է և ոչ թէ պարտականութիւն :

« Հետեւաբար , ոչ մի կերպով պատասխանատու չէք այս վաճառման յապագման պարագային և ապրանք

քին մաքսատան մէջ գտնուած ժամանակամիջոցի բոլոր տեւողութեան ծախքերը և հետեւանքները մեր վրայ պիտի ըլլան :

« Ապահովագրական լ'նկերութենէն, ծովային արկածի կամ հրդեհի հետեւանօք, գանձուելիք ու է գումար՝ Ձեր կողմէն պիտի գանձուի ի վճարումն Ձեր պահանջին. բայց եթէ ցանկութիւն յայտնէք, այս պարագային ալ ստիպուած պիտի ըլլանք, Ձեզ մեր պարտքին ամբողջութիւնը վճարել և ապահովագրական ընկերութեանց հետ գործերը մենք կարգադրել :

« Կը յայտարարենք որ մեր բնակավայրն է Կ. Պոլիս ( ալիսնէ ) փողոց, սոյն յանձնատուներու կատարման համար և բնակավայրի տարբեր տեղ գտնուելուն պատճառաւ ու է անձեռնհասութեան խնդիր յարուցանելու իրաւունք պիտի չ'ունենանք երբէք :

Յարգանօք

Ս. ԱՄԱՐ ԵՒ ԸՆԿ.

---

Առաջին օրինակ.- Բ. Մաս:

Կ. Պոլիս, 1 Ապրիլ 1914

ՏԻԱՐԲ Ս. ԱՄԱՐ ԵՒ ԸՆԿ.

Կ. ՊՈԼԻՍ

Տխարք,

« Ձեր այսօրուան նամակին համաձայն, մենք այսօր մեր Լոնտոնի մասնաճիւղին մօտ վարկ մը բացինք ի նպաստ Տխարց ՖԻԷՆՉ ԵՒ ՍՄԻԹԻ Ի Լիվրբուլ, շուրջ Սթէրլին 197 ( հարիւր իննըսուն եօթը ) :

« Այս վարկը, որ բացուած է Ձեր ստորագրութիւնը կրող, մեր սովորական պայմաններուն համաձայն, վաւերական է մինչև 1914 Մայիսի վերջը :

« Հաճեցէք ընդունիլ, Տիարք, մեր յարգանաց հաւաստիքը :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Առաջին օրինակ.- Գ. Մաս:

Կ. Պոլիս, 1 Ապրիլ 1914

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Լոնսոնի Մասնաճիւղ

Վարկ թիւ 1906

ԼՈՆՏՈՆ

Պարտնայք,

« Տիարք Ֆրէնշ ԷԻ ՍՄԻԹ Ի Լիվրբուլ, պիտի յանձնեն Ձեզ, մեր քաղաքի Տիարց Ս. ԱՄԱՐ ԷԻ ԸՆԿ. հաշւոյն .

1<sup>0</sup> Բեռնազիր մը ( մեր հրամանին ) 10 Տակառ Անագի համար, նաւավարձը վճարեալ :

2<sup>0</sup> Ապահովազիր մը հանդերձ ծագման վկայագրով :

3<sup>0</sup> Վաճառազիր մը ապրանսաց արժէքը արտայայտող :

« Սոյն վաւերաթուղթերու փոխարէն, զոր պիտի հաճիք զրկել մեզ, վճարեցէք մեր հաշւոյն Տիար Ֆրէնշ

եի ՍՄԻՔԻ որ ի Լիվրբոււլ, շուրջ Սթէրլին 197 (հարիւր ինըսուն և եօթը) :

Ներկայ վարկը վաւերական է մինչև 1914 Մայիսի 31 ը որմէ ետքը զայն չեղեալ և անվաւեր պէտք է նկատել :

Յարգանօք

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ,

Կ. Պոլսոյ Մասնաճիւղ

---

Առաջին օրինակ.- Դ. Մաս :

Լոնտոն, 8 Ապրիլ 1914

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ,

Կ. Պոլսոյ Մասնաճիւղ

Կ. ՊՈԼԻՍ

Պարոնայք,

Կը հաստատենք մեր այսօրուան գրութիւնները :

Կը պարտագրենք զՁեզ ( débitons ),

£ 192.13.8 այսօրուան արժեզինով,

վճարման մը համար Տ Տ. Ֆրէնշ եի ՍՄԻՔԻ ի Լիվրբոււլ, Ձեր քաղաքէն Ս. ԱՄԱՐ եի ԸՆԿ. հաշւոյն և ըստ Ձեր վարկագրին՝ թիւ 1906 : Եւ փոխարէնը ստացանք՝

1 վաճառագիր, 1 բեռնագիր, 1 սպահովագիր հանդերձ ծաղման վկայագրով,

10 Տակառ Անագի համար, SGC  $\frac{1}{10}$  վաճառանիշով, որ դրկուած է ի Կ. Պոլիս, Պավարիա շոգենաւով.

Վաւերաթուղթեր՝ զոր ներփակեալ կը յղենք Ձեզ և Ձեր պարտքին կ'անցնենք՝

£ — .1. — Մեր մինիմում յանձնարարագինը՝

Յարգանօք

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Լոնտոնի Մասնաճիւղ

Առաջին օրինակ.- Ե. Մաս:

Կ. Պոլիս, 14 Ապրիլ 1914

Տխարք Ս. ԱՄԱՐ ԵՒ ԸՆԿ.

Կ. ՊՈԼԻՍ

Տխարք,

Պատիւ ունինք ծանուցանելու որ, Ձեր 1/14 Ապրիլ նամակով խնդրած վարկագրին բերմամբ, ի նպաստ Տ Տ. ՖՐԷՆՉ ԵՒ ՍՄԻԹ ի Լիվրբուլ, մենք վճարեցինք իրենց £ 192.13.8 և ստորև դրուած մանրամասնութեանց համաձայն պարտագրեցինք ձեզ £ 192.14.8 Ապրիլ 3 ի արժեզինով, Ձեր « ի սես վճարելի Սրերլին » հաշւոյն մէջ.

Վաւերաթուղթերը՝ Ձեր տրամադրութեան տակ կը պահենք մեզ մօտ:

Յարգանօք

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

ՏԵՍՕՐԵԱՅ ՎԱՐԿ ( *accréditif à vue* )

			Օսմ. Ո.	Դն.
£ 192	13	8		
—	1	—		
—	—	—		
£ 192	14	8		

ԵՐԿԱՐԱՏԵԻ ՎԱՐԿ ( *accréditif long* )

Երկրորդ օրինակ.— Ա. Մաս:

Կ. Պոլիս, 21 Ապրիլ 1914

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Կ. ՊՈԼԻՍ

Տիարք,

Տ Տ. ՆՕՐՑ ԵՒ ԸՆԿ. Ի Հաւր կամ Տ Տ. ՔԱՄԹՐՕ  
ԵՒ ՍԻԼՎԱ Ի ՐԻՍ տէ Ժանէյրօ, պիտի յանձնեն Ձեր  
Լոնտոնի թղթակցին մեր հաշւոյն՝

1<sup>o</sup> 3 բեռնագիր, նաւավարձքը վճարեալ կամ ոչ,  
Խրաքանչիւրը 125 Պարկ Սահուէի համար:

2<sup>o</sup> 1 վաճառագիր՝ ապրանքին արժէքը արտայայտող:  
Հաճեցէք այս վաւերաթուղթերը ընդունիլ, առանց

ստուգելու ոչ բեռցուած կամ վաճառագրուած ապրանքը  
 ոչ ալ բեռնագրին կամ ապահովագրին պայմանները :

Ամենաուշը մինչև Յունիսի վերջը յանձնելի, այս  
 թղթոց փոխարէն, զոր կարող էք Ձեր անուան փոխան-  
 ցել տալ, հաճեցէք ընդունագրել տալ ֆ 1200 նոց վե-  
 րոյիչեալ երկու Տուներէն միոյն ստորագրութիւնը կրող  
 փոխանակադիր մը, տեսօրէն 90 օր վերջը վճարելի :

(Նամակին մնացեալ մասը Ա. օրինակին յար եւ  
 նմանն է, միայն հոս՝ յանձնարարագիրը աւելի բարձր  
 կ'ըլլայ սովորաբար) :

( ստորագրութիւն )

Գ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Երկրորդ օրինակ.- Բ. Մաս:

Կ. Պոլիս, 21 Ապրիլ 1914

Տիար Գ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

Տիար,

Ընդունեցանք Ձեր այսօրուան թուականով նամա-  
 կը, որուն համաձայն հրաման տալինք մեր Լոնտոնի  
 մասնաճիւղին ընդունագրել տեսօրէն 90 օր ետքը վճա-  
 րելի մինչև 1200 Սթէրլինի փոխանակադրեր ՆՕՐՑ ԵՒ  
 ԸՆԿ. Ի Հալք կամ ՔԱՍԹՐՕ ԵՒ ՍԻԼՎԱ Ի Րիօ 375  
 Պարկ Սահուէի վերաբերեալ վաւերաթուղթերու փոխա-  
 րէն : Այս վարկը որ մեր սովորական պայմաններով բա-

ցուած է, վաւերական պիտի մնայ մինչև յառաջիկայ  
Յունիսի վերջը :

Յարգանք

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Կ. Պոլսոյ Մասնաճիւղ

Երկրորդ օրինակ.- Գ. մաս:

Կ. Պոլիս, 21 Ապրիլ 1914

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Լսնոնի Մասնաճիւղ

ԼՈՆՏՈՆ

Երկարատև վարկ, թիւ 1920

Պարոնայք,

Տ Տ. ՆՕՐՑ ԵՒ ԸՆԿ. Ի Հալբ կամ ԲԱՍԹՐՕ ԵՒ  
ՍԻԼՎԱ. Ի Բիօ տէ Ժանէյրօ պիտի յանձնեն Ձեզ, մեր քաղ-  
քէն Տիար Գ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ հաշտոյն՝

1<sup>0</sup> 3 բեռնազիր (մեր հրամանին) 375 Պարկ Խահուէի  
վրայ, այսինքն խորաքանչիւրը 125 սպրկի համար, նա-  
ւավարձքը վճարեալ կամ ոչ :

2<sup>0</sup> Վաճառազիր մը ապրանքին արժէքը արտայայտող :

Այս վաւերաթուղթերու փոխարէն, զոր կը խնդրենք  
յղել մեզ, հաճեցէք ընդունազրել մեր հաշտոյն, վերոյիշեալ  
Տուներէն միոյն, տեսօրէն 90 օր վերջը վճարելի փոխա-

նակագրերը մինչև £ 1200.— այսինքն իւրաքանչիւր  
125 պարկի փոխարէն 400 Սթէրլին (չորս հարիւր) :

Այս վարկը վաւերական է միմիայն մինչև յառա-  
ջիկայ Յունիսի վերջը :

Յարգանք  
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Երկրորդ օրինակ.- Գ. մաս :

Լոնսոն, 28 Մայիս 1914

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Կ. Պոլսոյ Մասնաճիւղ

Կ. ՊՈԼԻՍ

Պարոններ,

Կը պարտագրենք զՁեզ,

£ 580.13.4 Օգոստոս 28 արժեզինով,

Տ Տ. ՔԱՍԹՐՕ ԵՒ ՍԻԼՎԱԻ փոխանակագրի մը  
համար, զոր ընդունագրեցինք՝ Ձեր թիւ 1920 վարկագրին  
համաձայն և Տիար Գ.ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ հաշւոյն որ ի  
Կ. Պոլիս.

Ի փոխարէն ստացանք հետեւեալ վաւերաթուղ-  
թերը, զոր ներփակեալ կը յղենք Ձեզ՝

1 վաճառագիր, 2 բեռնագիր և ծագման վկայա-  
գիր (certificat d'origine)

CDC 409/411 125 Պարկ Խահուէ «Ալժէրի» Շ/ն

» 412/414 125 » » »

Թրանզիթ ի Մուտանիա

Յարգանք  
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Լոնսոնի Մասնաճիւղ

Երկրորդ օրինակ.- Ե. Մաս:

Կ. Պոլիս, 2 Յունիս 1914

**Տիար Գ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ**

Կ. ՊՈԼԻՍ

*Տիար,*

Պատիւ ունինք ծանուցանելու Ձեզ, որ Ձեր 21 Ապրիլի բանալ տուած ՆՕՐՅ ԵՒ ԸՆԿ. ի նպատակ վարկին հիման վրայ, մենք ընդունագրեցինք իրենց £ 290.6.8 նոց փոխանակագիրը, որուն համար կը պարտագրենք զՁեզ ըստ հետեւեալ հաշուի £ 291. 9. 5 Սեպտեմբեր 2ի արժեզինով, Ձեր « Եռամսեայ Սթէրլին » հաշույն մէջ:

Վերոյիշեալ վաւերաթուղթերը մեր քով են, Ձեր տրամագրութեան տակ:

Յարգանք

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴԻԱՄԱՏՈՒՆ

**ԵՐԿԱՐԱՏԵԻ ՎԱՐԿ**

			Օսմ. Ո.	ԴՏ.
£ 290	6	8	Փոխանակագիր 125 Պարկ Խահուէի « Լակոլ » Ե/Ա	
1	1	9	Յանձնարարագրին $\frac{3}{8}$ %	
—	1	—	Նամակի եւ հեռագրի ծախք	
£ 291	9	5		

Երկրորդ օրինակ.- Զ. մաս :

Լոնսոն, 28 Մայիս 1914

**ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ**

Կ. Պոլսոյ Մասնաճիւղ

Կ. ՊՈԼԻՍ

Պարոններ,

Կը պարտագրենք զՁեզ

£ 290.6.8 Սեպտեմբեր 7 արժեզինով,

SS. ՆՕԲՅ ԵՒ ԸՆԿ. փոխանակագրի մը համար, զոր ընդունագրեցինք Ձեր թիւ 1920 վարկագրի համաձայն և Տիար Գ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ հաշուոյն: Ի փոխարէն ստացանք հետեւեալ վաւերաթուղթերը, զոր ներփակեալ կը յղենք Ձեզ՝

1 վաճառագիր, 1 Բեռնագիր 125 Պարկ Սահուէի համար NC 375/77 վաճառանիշով զրկուած « Լակօլ » Շ/ն Ի Կ. Պոլիս:

Յարգանօք

**ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ**

Լոնսոնի Մասնաճիւղ

Երկրորդ օրինակ.- Է. մաս:

Կ. Պոլիս, 11 Յունիս 1914

**ՏԻԱՐ Գ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ**

Կ. ՊՈԼԻՍ

Տիար,

Պատիւ ունինք ծանուցանելու Ձեզ, որ Ձեր 21 Ապրիլ նամակով SS. ՔԱՍԹՐՕ ԵՒ ՍԻԼՎԱԻ Ի նպաստ

բանալ տուած վարկին հիման վրայ մենք ընդունագրեցինք իրենց £580.13.4 նոց փոխանակագիրը, որուն համար կը պարտագրենք զՁեզ, ըստ հետևեալ հաշուի, £ 582.17.11 Սոստոս 23 ի արժեզինով, Ձեր « Եռամսեայ Աթէրլին» հաշույն մէջ:

Այս վաւերաթուղթերը Ձեր տրամադրութեան տակ պահելով մնամք՝

Յարգանք

ԱՒԵԻՏՐԱԿԱՆ, ԴՐԱՄԱՏՈՒՆ,

ԵՐԿԱՐԱՏԵԻ ՎԱՐԿ (accréditif long)

			Փամ. Ո.	Գճ.
£ 580	13	4	Փոխանակագիր 125 Պարկ Խահուէի « Ալթէրի » շ.ն	
2	3	7	Յանձնարարագիրն $\frac{3}{8}$ %	
—	1	—	Նամակի եւ հետագրի ծախս	
£ 582	17	11		

Վարկի տեսակ մ'ալ կայ, Վարկագիր՝ ( lettre de crédit ) որ ի մասնաւորի ճանապարհորդներու գործածութեան յատկացուած է: Ան՝ ինչպէս անունն ալ կը վկայէ, նամակ մ'է որ կը տրուի ճանապարհորդ յաճախորդին ձեռքը և որուն միջոցաւ վերջինս կարող է զրամ ստանալ պանքայի թղթակիցներէն միոյն, մի քանիսին, կամ բոլորին մօտ:

Վարկագիրը երեք դասակարգի կը բաժնուի. Պարզ (simple), Հաւաքական (collective) և Շրջարեական (circulaire):

Առաջին տեսակը՝ նայմակ մ'է ուր միայն մէկ թըղթակցի անունը նշանակուած է վճարումներ հատուցանելու իր ճամբորդ յաճախորդին, որ այս պարագային միայն մէկ քաղաքի մէջ դրամի պէտք ունի:

Հաւաքական կ'ըսուի այն վաւերագիրը, ուր նշանակուած են մի քանի թղթակիցներու անուններ զանազան քաղաքներու մէջ, ուսկից յաճախորդը մտադիր է անցնիլ, իր ճամբորդութեան ատեն: Այս պարագային իւրաքանչիւր թղթակից՝ իր վճարած դրամին քանակը կ'արձանագրէ վարկագրին մէջ, որպէսզի վճարումները, նամակին սահմանած գումարէն անդին չ'անցնին: Թղթակիցները, որ առանձին նամակով մը արգէն տեղեկացած են իրենց վրայ քաշուած սոյն վարկագիրներու մասին, իրենց վճարումները երկու ստացագրի փոխարէն կը կատարեն որոնցմէ մին՝ իրենց մօտ կը պահեն և միւսը կը դրկեն վարկագիրը արտադրող գրամատան:

Իսկ վերջին վճարող թղթակիցը, որ տարակոյս չի կայ, վարկագրին մէջի բոլոր վճարումներու և մայր գումարին տարբերութիւնը միայն կը վճարէ, վարկագրին ալ ետ կ'առնէ յաճախորդէն և կը վերագարձնէ արտադրող գրամատան:

Երկրորդ տեսակը, այսինքն շրջաբերական վարկագիրը առաջին երկուքին պէս, և միևնոյն պարունակութեամբ նամակ մ'է ուր մասնաւոր թղթակցի մը անուն չ'արձանագրուիր, այլ ճանապարհորդ յաճախորդին կը արուի գրքոյի մը, պանքային աշխարհիս մէջ ունեցած բոլոր թղթակից-Նրամատուններուն հասցէներով որոնք՝ առանձին համաձայնութեամբ, յանձնատու եղած են իրա-

բու վարկագիրները վճարելու և որոնց, վարկագրի տէրը կրնայ դիմել անխափր, ուր և երբ որ ցանկայ: Ասոնք ալ իրենց վճարումները երկու ստացագրի փոխարէն կը կատարեն, որոնցմէ մին կը զրկեն արտագրող զբամատան, զայն պարտագրելով թէ՛ վճարման գումարին և թէ՛ յանձնարարագիրին համար, (եթէ սակայն յաճախողէն գանձած չեն այս վերջինը, ըստ վարկագրի արամադրութեան): Վերջին վճարողը հոս ալ, վարկագիրը չի վերադարձնէր յաճախողին, այլ, զայն իր թղթակցին կը զրկէ, վրան իր վճարումներն ալ արձանագրելէ ետքը:

Դրամատուհները, ինչպէս միշտ, հոս ալ, ամէն միջոց ձեռք առած են վճարումները սխալ կամ անպարկեշտ ձեռքերու մէջ չի կատարելու համար: Ասորև կը դնենք վարկագրի նմոյշ մը:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

### ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՎԱՐԿԱԳԻՐ

Վստեռական է մինչեւ

թիւ 13488

Գումարն է

4 Հոկտեմբեր 1915

Ֆրանկ 10,000

Տեարժ սեղանաւորք, որոնց անունը միւս կողմը նշանակուած է .

Պարոնայք,

Պատիւ ունինք ներկայացնելու Ձեզ եւ յանձնարարելու Ձեր բարեացակամ բնդուցելուրեան նամակաբերս Տիար ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ

Ձեր բոլորիդ մօտ հաւաքաբար վարկ մը կը բանանք ի նպաստ իրեն 10000 Ֆրանկի (Տասը հազար Գաղ. Ֆրանկի): Մինչեւ սոյն գումարը հանեցեք վնարել իրեն, սաքագրի փոխարէն ինչպէս որ պահանջեք, Ձեր ծախքերը իրեն գանձելով (*ստանց գանձելու*): Հանեցեք Ձեր վնարումները արձանագրել ներկայ վարկագրիս ետին, մեզ յղել սաքագրին երկրորդ օրինակը եւ Ձեր պահանջը վերստանալու համար մեր Բարիզի Մասնաճիւղին վրայ չեք մը փաշել:

Այս վարկը վաւերական է մինչեւ 4 Հոկտեմբեր 1915: Մեր յանձնարարեալին համար Ձեր բնեւիժ բնգունելուրեան համար մեր կանխիկ շնորհակալութիւնները յայտնելով մնամք՝

Յարգանօք

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ, ԴՐԱՄԱՏՈՒՆ,

Կ. Պոլսոյ Մասնաճիւղ

Կ. Պոլիս, 4 Յուլիս 1915

*Վարկագրին փոխարէնը, սովորաբար, դրամատունը կանխիկ կը գանձէ յաճախորդէն, հանդերձ իւր յանձնարարագրինով, և վերագործին եթէ անվճար մնացած մաս կայ, ան ալ ետ կը հատուցանէ: Երբեմն սակայն՝ յաճախորդը ընթացիկ հաշիւ կ'ունենայ պանքային մէջ և վերջինս իր թղթակցէն ստացագրիները ընդունած ատենը միայն կը պարտագրէ սոյն ընթացիկ հաշիւը՝ հանդերձ ծախքերով: Վերջապէս, կարելի է, որ սոյն վարկագիրը արուած ըլլայ առանց ս եւ է երաշխաւորութեան, իրրեւ բաց վարկ, այն ատեն նոյնպէս յաճախորդին ընթացիկ հաշիւը կը պարտագրուի կատարուած վճարումներու համաձայն, միայն թէ այս պարագային, ամէն ծախքերէ զատ տակոս մ'ալ կը գանձուի:*

Պարզ վարկագիրներուն շատ կը նմանին իրենց յատկութեամբը վճարման հրամանները և շեքերը: Ենթադրենք կ' Պոլսոյ վաճառական մը, որ իր գործերու բերմամբ Վիեննա կը մեկնի: Գացած ատեն իր առած վարկագիրը անբաւական ըլլալով, իւր այստեղի մասնաճիւղէն կամ ազգականէ մը կը խնդրէ իրեն 10000 Գրօնէ ևս զրկել. ի՞նչ պիտի ըլլայ գործելու եղանակը:

Սոյն ազգականը կը դիմէ զրամատուն և կը գնէ 10000 Գրօնէնոց շեք մը Վիեննայի վրայ բացակայ յաճախորդին անուանը, և զայն կը յղէ վերջնոյս, եւ կամ անոր հասցէն կը յայտնէ զրամատան և կը խնդրէ իր թղթակցին միջոցաւ վճարել տալ սոյն գումարը նամակով, և եթէ պէտքը ստիպողական է՝ հեռագրով:

Այս երեք պարագային ալ՝ զրամատունը օրուան փոխանակագինով Գրօնէ է որ կը ծախէ, ուստի սակացոյցի գինով հաշուելով, կը գանձէ Գրօնէներու փոխարժէքը ինչպէս նաև իւր յանձնարարագիրը և հեռագրական ծախքերը: Առաջին պարագային՝ շեքը կը յանձնէ յաճախորդին, որ ինչպէս իւր կարգին տեսանք, վճարման հրաման մ'է իր թղթակցին ուղղուած (զոր կը զեկուցանէ արդէն առանձին նամակով): Երկրորդ եւ երրորդ պարագային ալ պարզ ստացագիր մը կուտայ յաճախորդին, գումարը ստանալուն համար, և ինքը իր թղթակցին հանդէպ կը կատարէ պէտք եղածը, նամակով կամ հեռագրով:

Հեռագրական ծախուց ըստ կարելւոյն խնայման համար, կրճատեալ ձեւերու միջազգային բառգիրքներ կան

( codes ), զոր երբեմն գրամատուներն ալ կը գործածեն : Բայց վերջիններս՝ գրեթէ միշտ, իրենց յատուկ գաղանի լեզուն ունին հեռագրական հաղորդակցութեանց համար, զոր իրերու բնականոն վիճակի մէջ եղած ժամանակ, կը գործածեն : Այս գրութիւնը թէ՛ կրճատման կը ծառայէ, և թէ՛ հեռագրին իսկական ըլլալը կը հաստատէ, թէպէտ և գրամատուները այսչափով ալ չի գոհանալով, իրենց հեռագրին սկիզբը թուանշան մը ( chiffre de repère ) կը դնեն, երկուստեք որոշուած ձևով հաշիւներու վրայ հիմնուած, որու շնորհիւ այս գործողութեանց մէջ պատահական զեղծումները իրենց միևնախօսման վերածուած են :



ԺԱ .

ՄԻ ՔԱՆԻ ԵՕՍԻ ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ —

ԸՆԹԱՅԻԿ ՀԱՇԻՒՆԵՐ —

ԳՈՅՔԻ ԵՒ ՊԱՐՏՔԻ ՀԱՇԻՒՆԵՐ —

Թէպէտ և Տոմարակալութիւնը ինքնուրոյն ճիւղ մ'է աշխարհն ընդարձակ, որ մեր անցուկ շրջանակին մէջ անկարելի է, նոյն իսկ խտացեալ ձեռով անոր մասին գազափար մը տալ, բայց և այնպէս հարկաւոր էր գոնէ երկտող մը նուիրել պարզապէս յիշած ըլլալու համար սոյն հսկայ աղղակին գոյութիւնը դրամատան մէջ :

Տոմարակալութիւնը գիտութիւն մ'է որ կը սորվեցնէ հաշիւները բռնելու ձևը : Նա ցոյց կուտայ թէ ու է առեւտրական ձեռնարկի մը գործողութիւնները ի՞նչ կերպով գիրքերուն մէջ պէտք է անցունել որ, ու է ժամանակ, կարելի ըլլայ անմիջապէս տեսնել հաստատութեան կացութիւնը . այն է՝ դրամադաշտը, ուրիշներու հանդէպ ունեցած պարտքը և ուրիշներէն գանձուելիք պահանջը, մէկ խօսքով տոմարակալութեան հորիւ պէտք է վայրկենապէս և յստակօրէն տեսնուի թէ ձեռնարկ մը շահարէր է թէ ոչ :

Տոմարակալութիւնը երկու տեսակ է՝ պարզ և կրկնակի :

Պարզ Տումարակալուրիւնը կը կայանայ՝ դանձուած գումարները ու է տետրակի մը Մուտքին և վճարուածներն ալ ելքին կողմը գրելուն մէջ և կը գործածուի միմիայն սկզբիկ և աննշան խանութպաններու կողմէն :

Կրկնակի կամ Իսալական Տումարակալուրիւնը, որ կը գործածուի անխափր բոլոր լուրջ հաստատութիւններու, հետեւաբար և Դրամատուններու մէջ, կը տարբերի առաջինէն անով՝ որ դանձուած և վճարուած գումարներու արձանագրութիւնը, կրկին անգամ տեղի կունենայ. այսինքն՝ մէյ մը գրամը ընդունող անձին մուտքին, մէյ մ'ալ գրամը տուող անձին ելքին, որ է ըսել՝ մէկ հաշու պարսփին և միւսին պահանջին :

Այնպէս որ, զիտնալու համար թէ որքան գրամ դանձած ենք ուրիշներէն, այսինքն՝ որքան գրամ մենք կը պարսինք անոնց և որքան ուրիշներ առած են մեզմէ այսինքն՝ որքան ուրիշները կը պարսին մեզի, մենք մեր գիրքերուն մէջ երկու հաշիւ կը բանանք՝ Մեր հաշիւը և Իրենց հաշիւը : Երբ ու է գրամ դանձնեք, զայն նախ մեր հաշուոյն Մուտքին կ'անցընենք, կամ մեր հաշիւը կը պարսագրենք ( débiter ), և միւսին ժամանակ այն անձին հաշուոյն ելքին մէջ կ'անցունենք, որը գրամը տուած մեզի, այսինքն այդ անձին հաշիւը կը պահանջագրենք ( créditer ) :

Երբ, ընդհակառակը, մենք ուրիշի գրամ տանք, այն ատեն զայն կ'անցընենք մեր հաշուոյն ելքին ( կամ մեր հաշիւը կը պահանջագրենք ) և գրամը ընդունող անձին մուտքին ( կամ անոր հաշիւը կը պարտագրենք ) :

Ասկից կը հետեւի բնականաբար, որ Պարտքը միշտ

հաւասար է Պահանջին . այսինքն՝ պարտքի կողմը արձա-  
նագրուած գումարներու ընդհանուրը հաւասար պէտք է  
ըլլայ, պահանջի կողմի գումարներու ընդհանուրին :

Իսկապէս, քանի որ Պահանջը կը ներկայացընէ  
Պահանջատէրը, այսինքն գրամը տուող անձը և պարտքն  
ալ կը ներկայացնէ Պարտատէրը այսինքն գրամը ընդու-  
նողը, անկարելի է որ պահանջը պարտքէն աւելի կամ  
նուազ ըլլայ : Որովհետեւ, եթէ պահանջը պարտքէն ա-  
ւելի ըլլար, այդ պիտի նշանակէր, որ պարտատէրը աւել-  
ի քիչ գրամ ստացաւ քան այն՝ ինչ որ տուաւ պահան-  
ջատէրը և եթէ պահանջը պարտքէն նուազ ըլլար, այդ  
ալ պիտի նշանակէր, որ պարտատէրը աւելի շատ գրամ  
ստացաւ՝ քան այն ինչ որ տուաւ պահանջատէրը . բան  
մը որ նիւթակամայէս անկարելի է :

Ուստի, եթէ պարտքի կողմը գումարներու ընդհա-  
նուրը յանկարծ չի հաւասարի պահանջի կողմի գումար-  
ներուն, այդ կը նշանակէ պարզապէս, որ գրութիւնները  
սխալ անցած են :

Այսինքն՝ կամ այն է որ պահանջին կամ պարտքին  
կողմը մոռցուած է գումար մը անցունել և կամ այն է որ,  
գրութիւն մը փոխանակ պահանջի կողմը՝ պարտքին  
անցած է . ուստի անհրաժեշտ է եղած սխալը փնտռել և  
անմիջապէս սրբագրել :

Հոս է ահա Իտալական Տոմարակալութեան առա-  
ւելութիւնը, որուն շնորհիւ ամենաջնջին սխալ մը իսկոյն  
երևան կ'ելլէ :

Բայ ի սակից, կայ ուրիշ պատճառ մ'ալ որ կը հար-  
կագրէ գրութիւնները կրկնակի կատարել : Ինչպէս վերը

տեսանք, դրամատուհնը իր գործերու բերմամբ կարող է պարտիլ ուրիշներուն, ինչպէս որ ուրիշներ կարող են պարտական ըլլալ իրեն: Ուստի հարկ անհրաժեշտ է որ հաստատութիւնը բռնէ, թէ՛ իր հաշիւը և թէ՛ ուրիշներունը, որպէսզի կարելի ըլլայ տեսնել թէ՛ որքան ինքը պարտի ուրիշներուն և որքան ալ աննկիւք ունի անոնցմէ:

Դրամատուհնէն դրամ առնող, կամ անոր դրամ տուողներուն թիւը խիստ շատ է. և վճարումներու և գանձումներու տեսակը գործողութեան համեմատ իրարմէ շատ տարբեր կրնան ըլլալ: Օրինակ. Զեղչեալ մուրհակներու փոխարէնը կամ գրաւ դրուած արժեթուղթերու փոխարէն արուած դրամը կամ պարզապէս աւանդ դրուած գումարի մը վերադարձը ևլն: Տարակոյս չի կայ որ, պանքան չի կրնար գոհանալ բոլոր իւր ընդունած և վճարած գումարներուն, ընդհանուր հաշիւ մը բանալով: Նա ստիպուած է բանալ այնքան հաշիւ, որքան են իր գործողութիւններուն տեսակները, իւրաքանչիւր հաշուոյն տալով ուրոյն յորջորջում: Օրինակի համար. Նա կը բանայ «Զեղչեալ Մուրհակաց հաշիւ» (effets escomptés), ուր կը գրէ իր յաճախորդներուն զեղչած մուրհակներու փոխարժէքը ինչպէս անոնց վճարօրին կատարուած գանձումները:

« Արժեքուղբերու վրայ փոխառուութեան հաշիւ » (avances sur titres), ուր կ'արձանագրուին գրաւ դրուած արժեթղթոց փոխարէն արուած կանխավճարները, ինչպէս նաև պայմանաժամին վերադարձուած գումարները ևլն. ևլն:

Իւրաքանչիւր գործի վերաբերեալ վճարում՝ համա-

պատասխան հաշւոյն պարտքին կողմը կ'արձանագրուի, այսինքն այդ հաշիւը կը պարտագրուի և խրաքանչիւր գանձում համապատասխան հաշւոյն պահանջին կողմը կը գրուի, այսինքն այդ հաշիւը կը պահանջագրուի:

Պարսֆ (débit) կը նշանակէ պարսիլ, այսինքն գումար մը ընդունած ըլլալ, որով դրամը ընդունողին հաշւոյն մէջ կը ցուցնէ մուտքի կողմը: Դրամը ընդունողն ալ կը կոչուի պարսաքս (débiteur):

Պահանջ (crédit) կը նշանակէ առնելիք, այսինքն արուած դրամ, և այդ դրամը տուողին հաշւոյն մէջ կը ցուցնէ ելիլի կողմը: Դրամ տուողն ալ կը կոչուի պահանջաքս (créditeur):

Պանքան իւր կատարած գործողութեանց խրաքանչիւրին համար զատ զատ հաշիւներ կը բանայ զիրքի մը մէջ, որ կը կոչուի Մայր - Տոմար (Grand Livre):

Այս տոմարի ձախ կողմը, այսինքն պարտքի կողմը նա կը գրէ նոյն գործողութեան պատճառաւ իր վճարած գումարները, և պահանջին կողմն ալ՝ գանձումները, առանց յիշատակելու այն անձանց անունները, որոնց եղած են վճարումներ՝ և կամ որոնցմէ եղած են գանձումներ:

Մայր - Տոմարէն միշտ կարելի է տեսնել թէ, որքան պանքային կը պարտին յաճախորդները, ամէն մէկ գործողութեան համար, և որքան ալ պանքան պարտի անոնց: Բայց հարկաւոր է նաև գիտնալ թէ՛ խրաքանչիւր յաճախորդ առանձին առանձին, որչափ պարտական է դրամատան որոշ գործողութեան մը համար, ինչպէս նաև ո՛ր յաճախորդին, և որքան պարտի նոյն ինքն զըրամատունը նոյն գործողութեան համար:

Ասոր համար Դրամատուներ իւր գործոցը համաձայն Մայր - Տոմարին մէջ հաշիւները բացած ասին, միեւնոյն ժամանակ նա կը բանայ ուրիշ (օժանդակ) գիրքերու մէջ ուրոյն հաշիւ մը ևս, իւրաքանչիւր յաճախորդին անուան և իւրաքանչիւր գործողութեան յատուկ:

Գրութիւնները Մայր-Տոմար չ'անցուցած Հաշուակալը (comptable) կ'արձանագրէ բոլոր գործողութիւնները ուրիշ Տետրի մը մէջ, որ Օրագիր (journal) անունը կը կրէ:

Օրագիրը, ինչպէս անունէն ալ կը հասկցուի, տոմար մ'է, որ օրը օրին պէտք է բանել անպատճառ: Նա կը բաղկանայ երկու օժանդակ մասերէ. Զեռատետրէ (prima nota) և Արկղատետրէ (caisse): Առաջինը ապառիկ, իսկ երկրորդը կանխիկ գործողութեանց յատկացեալ:

Տեսանք արդէն, որ Դրամատան գործողութիւնները երկու դասակարգի կը բաժնուին կանխիկ և ապառիկ. այսինքն գործողութիւններ, որոնց փոխարէնը իսկոյն և եթ կը վճարէ կամ կը գանձէ, և անոնք, որոնց փոխարէնը ի հաշիւ կանցունէ իր տոմարներուն մէջ մերձաւոր կամ հեռաւոր ապագայի մը վճարելու կամ գանձելու համար:

Մեկնենք այժմ օրինակով մը.

Վաճառական Տիար Յովսէփ Թոլայեան չեք մը ունի 1000 ոսկինոց Զմիւռնիոյ Վինէր Պանքայի, Պոլսոյ մասնաճիւղին վրայ քաշուած: Նա կը ներկայանայ Պանքա և կը գանձէ զայն ամբողջովին: Այս գործողութիւնը ահա կանխիկ է, որովհետև դրամատուներ հնչուն դրամ վճարեց:

Արևելքի վաճառականը սոյն դրամը գանձելէ վերջը ցանկութիւն կ'ունենայ նոյն դրամատան մէջ աւանդ ձգել զայն իր անուան և 1000 ոսկին եղածին պէս կրկին Դրամարկղին կը յանձնէ որուն փոխարէն կը ստանայ յատուկ ստացագիր մը :

Այս գործողութիւնն ալ, վերինին նման, կանխօրէի է, որովհետեւ դրամատունը հնչիւն դրամ ստացաւ :

Այս օրինակներէն կը տեսնենք որ պանքան երկու գործողութիւն ըրաւ. 1<sup>0</sup>— Իր վրայ քաշուած 1000 ոսկինոց չէք մը վճարեց. 2<sup>0</sup>— Տխար Թոլայեանէ 1000 ոսկի աւանդ ընդունեցաւ, բայց և այնպէս իր դրամարկղին պարունակութիւնը անփոփոխ մնաց, այսինքն՝ ոչ աւելցաւ և ոչ ալ պակսեցաւ :

Արդ, ենթադրենք որ վերոյիշեալ վաճառականը իւր 1000 ոսկինոց չէքը ներկայացուցած ատեն, յայտնէր որ ինքը այս գումարը գանձել չ'ուզեր այլ կը փափաքի ձգել հոն իր անուանը :

Պանքան այն ատեն փոխանակ դրամ տալու իրեն, և վերստին ետ առնելու, ուղղակի իրեն անուան ստացագիր մը կը յանձնէ : Այս գործողութիւնն ալ, կը կոչուի ապառիկ, որովհետեւ տեղի ունեցաւ առանց դրամարկղի անմիջական միջամտութեան :

Տեսնենք թէ՛ պանքան ինչպէս կը գործէ այս երկու պարագաներուն :

Առաջին պարագային. — Ընդհանր Տոմարին մէջ գլուխ մը բացուած է « Պանքային վրայ քաշուած չէկերու հաշիւ » անուան տակ ուր կ'արձանագրուին դրամ-

մատան վրայ քաշուած բոլոր չեփերը իրենց վերաբերեալ նամակներու հասած օրը :

Վերոյիշեալ 1000 ոսկին վճարուած ատեն պանքան սոյն հաշիւը կը պարտագրէ 1000 ոսկի և « դրամարկդի հաշիւը » կը պահանջագրէ նոյնչափ :

Իբրև աւանդ 1000 ոսկի ընդունելուն ալ՝ « դրամարկդի հաշիւը » կը պարտագրէ և « Պայմանաժամով աւանդներու հաշիւը » կը պահանջագրէ :

Երկրորդ պարագային .— Երբ Տխար Թուրքիան՝ իր չեփը ներկայացնելով փափաք յայտնէ անոր փոխարժէքը աւանդ թողուլ, դրամատունը, նախ չեփի ետևը ստորագրել կուտայ ի վնար (pour acquit), որով չեփը վճարուած կը նկատուի և հետևաբար « պանքայի վրայ փաշուած չեփերու հաշիւը » կը պարտագրուի, բայց այս անգամ Դրամարկդը չի պահանջագրուիր, քանի որ նա դրամ չի հանեց իր մէջէն : Այլ որովհետև չեփի փոխարէնը եղածին պէս իբրև աւանդ ձգուեցաւ, շիտկէ շիտակ կը պահանջագրուի « Պայմանաժամով Աւանդներու հաշիւը »

Ինչպէս կը տեսնենք, երկու պարագային ալ հետևանքը միևնոյնը եղաւ, այսինքն՝ « պանքային վրայ քաշուած չեփերու հաշիւը » 1000 ոսկի պակսեցաւ և « պայմանաժամով աւանդներու հաշիւը » նոյնչափով աւելցաւ :

« Դրամարկդի » հաշիւին գալով, երկու պարագային ալ անփոփոխ մնաց, որովհետև երկրորդ պարագային բնաւ չի միջամտեց, իսկ առաջինին՝ միևնոյն գումարի չափով պարտագրուած և պահանջագրուած ըլլալով պարունակութիւնը նոյնը մնաց, բնականաբար :

կանխիկ գործողութիւնը կը կոչուի նաև Դրամարկ-  
զային իսկ ապառիկն ալ՝ Զեռատեարի գործողութիւն:

Վերջնոյս գլխաւոր առաւելութիւնը անոր մէջ կը  
կայանայ որ, աշխատութիւնը զգալապէս կը կրճատէ,  
մանաւանդ դրամի տաղտկալի գործողութիւնները կը չնչ  
այսպէսով՝ նուազեցնելով նոյնպէս փորձանքներու և  
սխալումներու թիւը:

Բաց ի ասկից, պանքաները ստիպուած են շատ ան-  
գամ ձեռատեարի միջոցաւ գործելու և ոչ թէ դրամարկի:

Օրինակ՝ Ենթադրենք որ Դրամատան Գոնիայի  
թղթակիցը, որուն զանազան մուրհակներ զրկուած էր  
զանձման համար, 50 ոսկինոց մուրհակ մը կը զանձէ և  
փոխանակ թղթատարով յղելու այդ գումարը, նամակով  
մը կ'իմացնէ, որ այդ դրամը պանքային պահանջին  
կ'անցունէ:

Ինչպէս կը տեսնենք այս օրինակէն, պանքային  
անկարելի է սոյն գործողութիւնը դրամարկզային կամ  
կանխիկ դրութեամբ անցունել, քանի որ դրամարկզին  
մէջ ստակ չի մտաւ. ուստի ստիպուած է ձեռատեարի  
արձանագրութեամբ անցնել հետեւեալ կերպով:

Պանքայի թղթակցէն 50 ոսկւոյ զանձման նամակը  
ստացուելուն պէս՝ այդ թղթակցին հաշիւը կը պարտա-  
գրուի, և որովհետև անոր ստացած գումարը, զեղչուած  
մուրհակի մը վճարում մ'էր « Զեղչեալ Մուրհակներու »  
հաշիւը կը պահանջագրուի:

Գլխաւոր գիրքերը, որոնց գործածութիւնը պարտադրուած է օրէնքով, հետեւեալներն են :

- 1.- Օրագիր ( Journal )
- 2.- Դրամարկղ ( Caisse )
- 3.- Մայր Տոմար ( Grand Livre )
- 4.- Ընդօրինակութեան Տոմար ( Պանքայի կողմէն զրկուած, բոլոր թղթակցութեանց ճշգրիտ պատճէնը ընդօրինակելու ծառայող գիրք ) :

Այս չորս գլխաւոր գիրքերը, օրէնքի պահանջած ձեւով կը բռնուին, մնացեալ բոլոր գիրքերը, որ իւրաքանչիւր դրամատուն իրեն պէտքերուն և ցանկութեան համաձայն կը բռնէ, կը կոչուին Օժանդակ գրքեր :

Իժարողարար, ոչ գլխաւոր և ոչ ալ օժանդակ տոմարներու մեկնութեան պիտի չի կարենանք ձեռնարկել, վերոյիշեալ պատճառաւ, և պիտի բաւականանանք միայն օժանդակ գիրքերէն ընթացիկ հաշիւներու Տոմարը բանալ և անկէ էջ մը փրցնելով ցոյց տալ պարզապէս ի գիտութիւն :

Ընթացիկ Հաշիւ կը կոչուի այն հաշիւը, որ դրամատուն մը կը բանայ իւր յաճախորդին կամ պաշտօնակցին, ըլլայ անոր վճարումները կամ գանձումները արձանագրելու, ըլլայ անոր հետ կատարուած գործողութեանց արդիւնքն անցունելու : Ընթացիկ հաշիւը երկու տեսակ կրնայ ըլլալ :

Ա. — Յաճախորդը իր բրած վճարումներուն կամ գործողութեանց հետեւանօք պանքային քով դրամ կրնայ ունենալ :

Բ.— Յաճախորդը, իրեն բացուած վարկի մը բերմամբ զրամատան պարտական կրնայ ըլլալ:

Առաջին պարագային՝ զրամատունն է որ որոշ չափով տոկոս մը կուտայ պահանջւոր (créditeur) յաճախորդին, եթէ հաշիւը առանց տոկոսի բացուած չէ սակայն: Իսկ երկրորդ պարագային՝ յաճախորդն է որ կը վճարէ իր պարտքերուն համապատասխան տոկոսը և որուն սակը, ինչպէս զխտենք, նախորդէն զգալապէս բարձր է:

Այն օրը, ուսկից կ'սկսի բանիլ տոկոսը կը կոչուի արժեզիւն (valeur):

Երկու գլխաւոր կերպ կայ, ընթացիկ հաշիւ բռնելու՝ Գերմանական (Methode Progressive) և Գաղղիական (Méthode Retrograde):

Առաջինը կը կայանայ, տոկոսները, գումարի արժեզինէն մինչև հաշւոյն փակման օրը հաշուելուն մէջ: Երկրորդը՝ որ իր յարմարութեան համար աւելի յաճախ կը գործածուի պանքաներու մէջ, տոկոսները կ'աճնէ հաշւոյն սկիզբէն մինչև յաջորդ գրութեան արժեզինը: Այսինքն՝ տոկոսը, իւրաքանչիւր գործողութեան և իր նախորդին արժեզինին մէջի ժամանակամիջոցի համար կը հաշուուի:

Հոս (\*) կը դնենք միմիայն Գաղղիական գրութեամբ ընթացիկ հաշիւ մը, ուր վերոյիշեալ երկու տեսակներն ալ, այսինքն՝ թէ՛ պարտաւոր և թէ՛ պահանջւոր հաշիւները միանգամայն կարելի է զետեղել, ոչ միայն՝ այլ և տարբեր սակերով և զանազան ատեններ տեղի ունեցած սակի փոփոխութիւններն ալ կարելի է հաշուի առնել:

(\*) Ընթացիկ հաշուոյ նմոյք տես յաւելուած էջ 251

Դրամատան գործառնութեանց հաշուետուութիւնը պէտք է այնպէս մը կատարել, որ ամէն բոլոր որոշակի երևայ կացութիւնը: Կացութիւն ըսելով կը հասկնանք:

Ա.— Նախ և առաջ, ինչ ստացուածք ունի պանքան տուեալ բոլորին, և ի՞նչ կը բաղկանայ. ս՞րքան դրամ, ս՞վ և ի՞նչ պատճառաւ պարտի դրամատան, և ի՞նչով երաշխաւորուած են այդ պարտքերը, և ս՞ր պայմանաժամին գանձելի են անոնք: Միով բանիւ, ի՞նչ է դրամատան ԳՈՅՔԷԸ ( Actif ):

Բ.— Ս՞րքան և ս՞րու կը պարտի պանքան, և ի՞նչ գործողութեան հետեւանօք, ինչպէս նաև այդ պարտուց վճարման պայմանաժամը, այսինքն՝ դրամատան ՊԱՐՏՔԷԸ ( Passif ):

Ասկից զատ, պէտք է որ կարելի ըլլայ տեսնել գործունէութեան արդիւնքը ըստ կարելւոյն, այսինքն՝ շահ կայ թէ՞ վնաս, և առհասարակ իւրաքանչիւր գործողութեան ձեռնտու կամ անյաջող ըլլալը, և այլն:

Պանքայի մը պարտքը, անոր ուրիշներու հանդէպ ունեցած յանձնառումները կամ տալիքներն են. այնպէս որ, նա՛ իր պարտքի հաշիւներուն մէջ արձանագրած գումարները իւր գոյլի գործողութեանց կը գործածէ, բայց պարտի օր մը վերադարձնել զանոնք իրենց տէրերուն:

Մինչդեռ պանքայի մը գոյլը, կը բաղկանայ ուրիշներու՝ իրեն հանդէպ ունեցած յանձնառումներէ կամ պարտքերէ:

Այս պատճառաւ ալ, իր գործողութիւնները անցու-

ներու համար դրամատան բացած հաշիւներն ալ երկու մասի կը բաժնուին ՊԱՐՏՔԻ և ԳՈՅՔԻ հաշիւներ (Comptes passifs & comptes actifs)։ Առաջինները կը ներկայացնեն հաստատութեան պահանջատէրերը, իսկ վերջինները՝ անոր պարտատէրերը։

Հետեւաբար պարսփի հաշիւներ կրնան ըլլալ միայն այն հաշիւները, որոնց մէջ ի սկզբան, գանձումներ եղած են, այսինքն՝ պահանջադրուած են պանքային յանձնուած գումարներու համար։ Օրինակ՝ Աւանդի հաշիւներ։

Իսկ գոյփի հաշիւներ են միայն անոնք, որոնց համար սկիզբէն վճարումներ եղած են, այսինքն՝ դրամատան կողմէ ուրիշ անձանց արուած դրամներու համար պարտագրուած են։ Օրինակ՝ « Զեղչեալ Մուրհակաց Հաշիւ » կամ « Արժեթղթոց Փոխատուութեան Հաշիւ »։

Երբոր պարսփի հաշիւ մը՝ գանձուած դրամի մը համար կը պահանջագրուի, նա՛ կ'աւելնայ. այսինքն՝ դրամատան ուրիշներու հանդէպ պարտքը կը շատնայ։ Օրինակ՝ երբ յաճախորդը դրամ աւանդ դնէ։ Իսկ երբ պարսփի հաշիւ մը՝ վճարուած դրամի մը համար կը պարտագրուի, նա՛ կը նուազի. այսինքն՝ դրամատան ուրիշներու հանդէպ ունեցած պարտքը կը պակսի։ Օրինակ՝ երբ յաճախորդը իր աւանդ դրամ գումարէ մաս մը կամ ամբողջը ետ առնէ։

Երբ գոյփի հաշիւ մը եղած վճարման մը համար կը պարտագրուի, նա կ'աւելնայ այսինքն ուրիշներու դէպի պանքան ունեցած պարտքը կը շատնայ։ Օրինակ՝ երբ յաճախորդի մը դրամ արուի, զեղչեալ մուրհակի փոխարէն։ Իսկ եթէ գոյփի հաշիւ մը գանձման համար կը պահանջագրուի, նա կը պակսի այսինքն՝ ուրիշներու

դէպի դրամատուն ունեցած պարտքը կը նուազի։ Օրինակ՝ երբ զեղչեալ մուրհակի փոխարէն դրամ առնող յաճարողը վճարօրին վերագարձնէ զայն։

Գիտնալու համար թէ՛ պանքան իւրաքանչիւր գործողութեան հետեւանօք որքան պարտի իւր պարսեով և որքան առնելիք ունի ուրիշներէն իւր, զոյժով հարկ է հետեւեալ կերպով վարուիլ։

Իւրաքանչիւր պարսփի հաշւոյ ելքի կողմը առանձին առանձին գրուած գումարներու ընդհանուրը կ'առնուի և ասկից կը հանուի Մուտքի կողմը գրուած գումարներու ընդհանուրը, անոնց տարբերութիւնը ( մնացորդ - solde ) ցոյց կուտայ պանքային այդ հաշիւէն, այդ գործողութեան պատճառաւ, իր՝ ուրիշներուն ունեցած պարտքին քանակը։

Նոյնպէս իւրաքանչիւր զոյժի հաշւոյ Մուտքի կողմը գրուած գումարներու ընդհանուրը կ'առնուի և ասկից կը հանուի ելքի կողմի գումարներուն ընդհանուրը, և մնացորդը կը ներկայացնէ այդ հաշուէն այսինքն՝ այդ գործողութեան պատճառաւ ուրիշներու, իրեն ունեցած պարտքին քանակը։

Այսպէսով իւրաքանչիւր Գոյժի և Պարսփի հաշիւներու համար մեր ստացած մնացորդներով ի վիճակի կ'ըլլանք, պանքայի բոլոր գործառնութեանց համար տեղեկութիւն ստանալ։

Հարկ է դիտել, որ բոլոր Պարսփի հաշիւներու մնացորդաց գումարը պարսի հաշիւներով Գոյժի հաշւոց մնացորդներու գումարին և թէ՛ այդպէս չ'ըլլայ, դա կը նշանակէ որ գրութեանց մէջ սխալ մը կայ, զոր պէտք է անմիջապէս փնտսել և սրբագրել։

Ստորե կուտանք պանքայի Գոյժի և Պարսփի հաշիւներու ցանկը, որ գրեթէ միեւնոյնն է բոլոր դրամատանց մէջ։

## Գ Ո Յ Ք Ի Հ Ա Շ Ի Ի Ն Ե ր

---

- 1<sup>0</sup>) Դրամարկդի հաշիւ : (Այս հաշւոյն մէջ ցոյց կը տրուին Սնտուկին մէջ գանուած հնչուն զրամի քանակը) :
- 2<sup>0</sup>) Ուրիշ զրամատանց մօտ իր ունեցած ընթացիկ հաշիւները :
- 3<sup>0</sup>) Երկու ստորագրութեամբ մուրհակներու զեղչ :
- 4<sup>0</sup>) Թղթակիցներու մօտ գանուած զեղչեալ մուրհակք :
- 5<sup>0</sup>) Առեւտրական վաւերաթուղթերով կամ հողային կալուածներով ապահովուած, մէկ ստորագրութեամբ մուրհակներ ( Solowechsel ) :
- 6<sup>0</sup>) Զեղչեալ ամօրթի արժեթղթոց և ընթացիկ կարօններու հաշիւ :
- 7<sup>0</sup>) Առեւտրական մուրհակներով ապահովուած մասնաւոր ընթացիկ հաշիւ :
- 8<sup>0</sup>) Արժեթուղթերով ապահովուած մասնաւոր ընթացիկ հաշիւ ( On Call ) :
- 9<sup>0</sup>) Ապրանքի վրայ պայմանաժամով փոխատուութիւն :
- 10<sup>0</sup>) Բեռնագրի, փոխադրագրի և այլն փոխարէն կարծատե փոխատուութիւն :
- 11<sup>0</sup>) Դրամատան սեփականութիւնը եզոզ ոսկեղէն և արծաթեղէն, ըլլայ իրրե ձոյլ (lingot) ըլլայ իրրե օտար երկիրներու զրամ :

- 12<sup>0</sup>) Արտասահմանի վրայ փոխանակագրեր :
- 13<sup>0</sup>) Պահեստի դրամազլխին պատկանող արժեթուղթք :
- 14<sup>0</sup>) Դրամատան սեփականութիւնը եզոզ արժեթուղթք :
- 15<sup>0</sup>) Յաճախորդաց հրամանաւ գնուած և ծախուած արժեթուղթք :
- 16<sup>0</sup>) Թղթակիցներու հաշիւ ( Loro ) : ( Այսինքն՝ իրենց հրամանաւ եղած գործողութիւնք ) :
- 17<sup>0</sup>) Թղթակիցներու հաշիւ ( Nostro ) : ( Այսինքն՝ պանքային հրամանաւ եղած գործողութիւններ ) :
- 18<sup>0</sup>) Բողոքագրեալ մուրհակաց հաշիւ :
- 19<sup>0</sup>) Պայմանաժամը անցած կանխաւճարներու ( advance ) հաշիւ :
- 20<sup>0</sup>) Փոխադրելի հաշիւներ ( comptes d'ordres ) :
- 21<sup>0</sup>) Լնթացիկ ծախքերու հաշիւ :
- 22<sup>0</sup>) Յառաջիկայ տարուան ծախքերու հաշիւ :
- 23<sup>0</sup>) Վերստին գանձուելիք ծախքերու հաշիւ :
- 24<sup>0</sup>) Հիմնարկութեան և կազմակերպութեան հաշիւ :
- 25<sup>0</sup>) Անշարժ կալուածներու հաշիւ :
- 26<sup>0</sup>) Գանձման համար ընդունուած մուրհակներու և ուրիշ վաւերաթուղթերու հաշիւ :
- 27<sup>0</sup>) Գանձման համար ընդունուած, և այդ նպատակաւ թղթակիցներու դրկուած մուրհակներու հաշիւ :
- 28<sup>0</sup>) Շահու և Վնասի հաշիւ : ( Այս հաշիւը Գոյքի մէջ կ'արձանագրուի, եթէ տարեշրջանը վնասով փակուի ) :

## Պ Ա Ր Տ Ք Ի    Հ Ա Շ Ի Ի Ն Ե Ր

---

- 1<sup>0</sup>) Դրամագլխի հաշիւ :
- 2<sup>0</sup>) Պահեստի դրամագլուխի հաշիւ :
- 3<sup>0</sup>) Մասնաւոր պահեստի դրամագլուխի հաշիւ :
- 4<sup>0</sup>) Անշարժ կալուածներու գլխավճարի (Amortissement) հաշիւ :
- 5<sup>0</sup>) Ընթացիկ հաշիւներ :
- 6<sup>0</sup>) Պայմանաւոր ընթացիկ հաշիւներ :
- 7<sup>0</sup>) Մասնաւոր ընթացիկ հաշիւներու պահանջատէրերու հաշիւ (Créditeurs des Comptes On Call) :
- 8<sup>0</sup>) Պայմանաժամով աւանդներու հաշիւ :
- 9<sup>0</sup>) Առանց պայմանաժամի աւանդներու հաշիւ :
- 10<sup>0</sup>) Յաճախորդաց մուրհակներու ( ուրիշ ելմտական հաստատութեանց մէջ ) վերադեղման հաշիւ :
- 11<sup>0</sup>) Մուրհակներով, արժեթուղթով կամ ապրանքով ապահովուած մասնաւոր ընթացիկ հաշիւ :
- 12<sup>0</sup>) Թղթակիցներու հաշիւ (Loro) :
- 13<sup>0</sup>) Թղթակիցներու հաշիւ (Nostro) :
- 14<sup>0</sup>) Պանքայի վրայ քաշուած շեքերու և փոխգիրերու հաշիւ :

15<sup>0</sup>) Ապրանաց վաճառման համար յանձնարարութիւն տուող յաճախորդներու հաշիւ :

16<sup>0</sup>) Գանձման համար մուրհակ կամ այլ վաւերաթուղթ տուող յաճախորդաց հաշիւ :

17<sup>0</sup>) Պանքայի կողմէն յաճախորդաց վճարուելիք զանազան տոկոսներու հաշիւ :

18<sup>0</sup>) Գործողութեանց համար զանձուած տոկոսներու հաշիւ :

19<sup>0</sup>) Յանձնարարագիրնի հաշիւ ( Commission ) :

20<sup>0</sup>) Իրրի վնաս անցած նախորդ պահանջներէ եղած դանձումներու հաշիւ :

21<sup>0</sup>) Յառաջիկայ տարուան անցունելիք տոկոսներու հաշիւ :

22<sup>0</sup>) Փոխադրելի հաշիւներ :

23<sup>0</sup>) Զանազան պետական տուրքեր :

24<sup>0</sup>) Շահու ե վնասի հաշիւ : ( Այս հաշիւը պարսէի մէջ կ'արձանագրուի եթէ տարեշրջանը Շահով փակուի ) :





ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԱՆ մօտ, Վիսկոյա 31 Դ

Թուական		ԴՈՐՄՈՂՈՒԹԻՒՆ	ՊԱՐՏԲ		ՊԱՀԱՆՋ	
			օ. ո.	դ ֆ	օ. ո.	դ ֆ
<b>1914</b>						
Յուշիս	14	Նախորդ վեցամսեային մնացորդ	739	20		
"	"	վճարում իւր չիֆին քիւ 210	29	80		
"	"	" " " " 211	5	68		
"	"	" " " " 212	4	79		
"	22	Իւր պարգեւաւոր քրորոց ապահովագրութեան		53		
"	28	Վանառում զանազան արժեքորոց			430	—
Օգոսոսու	4	Վճարում իւր չիֆին քիւ 213	5	—		
"	6	Գնում զանազան արժեքորոց	95	10		
"	29	Վանառում " "			400	10
Հոկտեմբեր	10	" " "			194	—
"	14	Գանձում իրմէ			70	—
Դեկտեմբեր	1	Վճարում իւր չիֆին քիւ 214	14	—		
"	31	Տոկոս 8 % քիւ 36133 ի վրայ	8	02		
"	"	" 2 % քիւ 17712 ի վրայ				98
"	"	Դրում		01		
"	"	Հաշուեկէիւ (solde)	192	95		
			<u>1,095</u>	<u>08</u>	<u>1,095</u>	<u>08</u>

Տոկոսի Պարսփ

8 0/0

Էջ 251

Տոկոսի Պահանջի

2 0/0

Եսևննարարագիև

—

Կկտեմբեր 1914

Տոկոսի Պահանջի

ՕՐԱԿԱՆ ՄՆԱՅՈՐԳԻՔ				Արժեզիև		ՍՐՆՈՒ	Թ Ի Ի	
ՊԱՐՏՔ		ՊԱՀԱՆՋ					ՊԱՐՏՔ	ՊԱՀԱՆՋ
Օ. Ո.	Պ Ի	Օ. Ո.	Պ Ի					
				<b>1914</b>				
739	20			Եսևնիս	30	13	9,607	
769	—			Եսևնիս	14			
774	68			"	"			
779	47			"	"	8	6,236	
780	—			"	22	6	4,680	
350	—			"	28	7	2,450	
355	—			Օգոստոս	4	2	710	
450	10			"	6	28	10,350	
50	—			"	29	42	2,100	
		144	—	Հոկտեմբեր	10	4		1,440
		214	—	"	14	48		10,272
		200	—	Դեկտեմբեր	1	30		6,000
		191	98				36,133	17,712
		192	96					
		192	95					



—\*— | ՅԱՆԿ ՆԻՒԹՈՅ | —\*—



## Յ Ա Ն Կ Ն Ի Ի Փ Ո Յ



Յառաջաբան

էջ

7

### Ք Լ Ո Ւ Խ Ա .

Դրամասունք եւ Դրամ — Անոնց դերք եւ  
ազդեցութիւնը — Դրամասան գործերը:

13

### Ք Լ Ո Ւ Խ Բ .

Դրամի աւանդ — Չեքր եւ իր յատկութիւն-  
ները — Չեքի տեսակները — հաշուեյարդա-  
րութեան սենեակ — Փոխարէն կամ պաշար:

20

### Ք Լ Ո Ւ Խ Գ .

Արժեքուղիք — Հասարուղք , Բաժնե-  
քուղք , Պարտքուղք եւ անոնց տեսակները  
— Բաժնետէք — Շահաբաժին — Պահանջա-  
տէք — Տոկոս եւ իր տեսակները — Երեւուն  
պարտք:

35

### Ք Լ Ո Ւ Խ Դ .

Արժեքուղիքերու սպասարկութիւն

54

## ԳԼՈՒԽ Ե.

Սակարանք — Բարիգի Սակարանք — իր  
կազմութիւնը եւ իր դերը — Արժեքուղբի  
գործակալ: 59

## ԳԼՈՒԽ Զ.

Սակարանի գործողութեանց սպասարկութիւն 86

## ԳԼՈՒԽ Ե.

Զեղչ — Փոխանակագիրքը իբրեւ գիշի  
առարկայ — Պարսամուքիակի. — Թամանեան  
եւ Գաղղիական օրինաց բաղդասուրիւն: 97

## ԳԼՈՒԽ Ը.

Զեղչը դրամասան մեջ — Մուրհակներու  
վրայ փոխասուութիւն — Արսափն եւ  
ներփն զեղչում: 117

## ԳԼՈՒԽ Թ.

Պարսուց փոխանակութիւն կամ *Քանկո* -  
Ոսկեչափ — Աւելագին — Զանազան եր-  
կիրներու դրամական դրութիւնը 139

## ԳԼՈՒԽ Ժ.

Վաւերաբուղբի գործեր — Վարկային  
գործեր — Հաստատել, պարզ եւ ապահով-  
եալ վարկեր — Վարկագիր եւ իր տեսակները: 192

## ԳԼՈՒԽ ԺԱ.

Քանի մը խօսք Տոմարակալութեան վրայ -  
 Ընթացիկ հաշիւներ — Գոյքի եւ պարսփի  
 հաշիւներ:

233

Յաւելուած՝ նմոյշ մը ընթացիկ հաշուոյ:

251



